

ԷԶՄԻԱԾԻՆ



Դ
2007



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Ա պ ր ի լ
2007

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՊԱՏԳԱՄԸ
 (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ., ապրիլի 8)

«Յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ
 զմահ կոխեաց եւ Յարութեամբն Իւրով մեզ
 զկեանս պարգեւեաց»:*

Միրելի բարեպաշտ հաւատացեալ ժողովուրդ.

Վերստին մեծ ուրախութեամբ տօնում ենք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնը: Փառաբանութիւն եւ օրհներգութիւն է այսօր մեր հոգիներից բարձրանում երկինք, գոհաբանական աղօթք՝ առ Տէրը, Ով յաղթական Իր Յարութեամբ շնորհեց մեզ փրկութիւն եւ կեանք: Այսօր խնդրութեամբ ողջունում ենք միմեանց քրիստոնեաներիս համար անհունօրէն բաղձալի «Քրիստոս յարեալ ի մեռելոց» աւետիսով:

Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը կատարուած ու վկայուած իրադարձութիւն է: Իւղաբեր կանայք եղան առաջինները, ովքեր կիրակի առաւօտեան թափուր գտան իրենց խաչեալ Վարդապետի գերեզմանը, եւ մինչ զարմացած էին, լսեցին հրեշտակի աւետիսը. «Չէ աստ, այլ՝ յարեալ» (Դուկ. ԻԴ. 6): Քրիստոսի Յարութեան վկայութիւնն է եւ մեր հաւատը, ի սփիւռս աշխարհի հաւատացեալներով լեցուն Քրիստոսի Յարութիւնն օրհնաբանող եկեղեցիները, Յարուցեալ Փրկչի Էջքի վկայ այս Սուրբ Տաճարը: Քրիստոսի Յարութեան վկայութիւնը նաեւ այդ հաւատով ու փրկութեան յոյսով գողգոթաներից դէպի կեանք ընթանալու մեր ժողովրդի հրաշագործ ուժն է:

Միրելի եղբայրներ եւ քոյրեր, դարերի հոլովոյթում երկրի վրայ մարդկային շատ արին է թափուել, սակայն աշխարհում հեղուած արեան ոչ մի կաթիլ այնքան չի ազդել մարդկութեան պատմութեան, մարդկային մտքի ու հոգեւոր ներաշխարհի վրայ, որքան Քրիստոսի հեղած Սուրբ եւ Կենարար Արիւնը: Աստուածորդին աշխարհի փրկութեան համար Իր կեանքը տուեց որպէս փրկագին, եւ Քրիստոսի գոհաբերութիւնը դարձաւ մարդկութեան հանդէպ աստուածային սիրոյ մեծագոյն ապացոյցը: Իր գոհաբերութեամբ ու Յարութեամբ Քրիստոս մարդկութեանը պարգեւեց ազատութիւն չարի իշխանութիւնից, մեղքի ու մահուան գերութիւնից: Քրիստոս ընծայեց մեզ ազատութիւն, որ վեր է այդ հասկացութեան մարդկային սովորական ըմբռնումներից, ազատութիւն, որ շնորհ է՝ ընթանալու դէպի վերածնունդ կեանք, արդարութեամբ, խաղաղութեամբ նորոգուած կեանք եւ այնքան բաղձալի ու փնտրուած յաւիտենութիւնը կեանքի:

Քրիստոնէական բոլոր եկեղեցիների զանգերի հետ Զատկական հոգեւորոգ այս խորհուրդն է տարածուում այսօր աշխարհում: Հովուապետ, առաջնորդ եւ հովիւ եկեղեցիների սուրբ սեղանների առջեւ Պատարագ են մատուցում, աղօթք բարձրաց-

նում երկինք, «Քրիստոս յարեալ» աւետիսով ողջոյն փոխանցում քրիստոնէայ աշխարհին եւ խաղաղութեան ու սիրոյ պատգամը՝ համայն մարդկութեանը, որ խնամուի ու անխաթար պահպանուի արարչագործութիւնը Աստուծոյ, գնահատուի եւ կարեւորուի մարդը այնպէս, ինչպէս Աստուած սիրեց մարդուն: Կոչուած ենք Տիրոջից եւ ժամանակի հրամայականների առջեւ պարտաւորուած՝ միաւորելու մեր ջանքերը յանուն աշխարհում ազատ ու երջանիկ կեանքի, յանուն մարդասիրութեան արժէքների, որոնք օրինեալ պարգէն են Աստուծոյ:

Աշխարհին, աւա՛ղ, այսօր էլ տագնապով են լցնում Քրիստոսի Յարութեան լոյսից հեռացող ընթացքները: Մեր օրերում էլ տարածուում են յուդայական համբոյրներն ու նիւթապաշտութիւնը: Պիղատոսեան օրինակով շատերը լուանում են իրենց ձեռքերը՝ ոտնահարելով արդարութիւնը սեփական բարօրութեան համար: Այսօր էլ խաղաղաբեր Քրիստոսին մերժելու եւ աւագակ Բարաբբային ընտրելու օրինակին են հետեւում մարդիկ՝ իրենց խաբէութիւններով ու բռնութիւններով, սպանութիւններով եւ սեփական շահերի համար այլոց ոտնակոխ անելու մոլուցքով: Խաչի մօտ սգացող Աստուածածինը այսօր ողբում է որդեկորոյս մայրերի հետ պատերազմներում զոհուած զաւակների համար, սգում է չարագործութիւններով իրենց խաչողների համար եւ աշխարհը վշտերով լցնող բազում անարդարութիւնների, նեղութիւնների, աղքատութեան ու կարօտութեան համար:

Աշխարհի այս իրադրութեան մէջ շարունակուում են փորձութիւնները եւ մեր ժողովրդի: Տակաւին ստիպուած ենք պայքարել Լեռնային Ղարաբաղի հայութեան ազատ ու ապահով ապրելու աստուածաշնորհ իրաւունքի համար, Յեղասպանութեան համընդհանուր դատապարտութեան համար, հայ հոգեւոր եւ մշակութային արժէքների, մեր սրբութիւնների ու սրբավայրերի պահպանութեան եւ փրկութեան համար հարեւան երկրներում:

Յեղասպանութեան փաստը մերժող քաղաքականութիւնը պատճառ է ֆիզիկական, մշակութային, հոգեբարոյական նոր ցեղասպանութիւնների: Անպատիժ ոճրագործութիւնները անխուսափելիօրէն ծնում են նորերը: Հայոց Յեղասպանութեանը հետեւեց Հոլոքոստը, նաեւ՝ Ռուանդայի, Դարֆուրի եւ այլ ցեղասպանութիւններ: Բուլղարական արձանների կործանմանը Աֆղանստանում հետեւեց Նախիջեւանի հազարաւոր հնագոյն խաչքարերի ոչնչացումը Ադրբեջանի զինուորների կողմից: Օրեր առաջ, երբ տակաւին մեր ժողովրդի հոգում չի սպիացել վերքը Հրանտ Դինքի սպանութեան, թուրքական իշխանութիւնները, աւարտելով Աղթամարի Մուրբ Խաչ եկեղեցու նորոգումը, հայկական դարաւոր սրբավայրը վերածեցին թանգարանի: Յեղասպանութեան օրերից եկեղեցին կանգնած էր աղօթական լռութեամբ, այսօր նորոգուած եկեղեցում արգելուած է աղօթքը: Արդարեւ, այսպիսին չեն կարող լինել կրօնների եւ մշակոյթների երկխօսութեան այս նոր դարի ոգին եւ ժողովուրդների համերաշխ գոյակցութեան ձգտումները:

Աստծուն ապաւինած՝ մեծ է մեր յոյսը արդարութեան, ազատութեան, խաղաղութեան յաղթանակի, եւ կենդանի է մեր հաւատը, որով պիտի կերտենք մեր կեանքի նոր յաղթանակները, պիտի կանգնեցնենք աղօթախօս նոր խաչքարեր, լուսեխորան նոր տաճարներ ու բարձրացնենք յաղթութեան նոր կոթողներ յարութեան շնորհի այն ուժով, որ պարգեւում է մեզ Ամենախնամ Փրկիչ մեր Տէրը:

Միբելի հաւատացեալ զաւակներ Մեր, կրկին կենարար աւետիսն ենք բերում ձեզ. «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ գնահ կոխեաց եւ Յարութեամբն Իւ-

րով մեզ զկեանս պարգեւեաց»: Մարդկանցից խաչուածը յարութիւն է առել, աստուածային զօրութեամբ բացուել է վէմը գերեզմանի, եւ մեր սրտերում տէրունաշնորհ փրկութեան ցնծութիւնն է: Փրկչի Յարութեան բիւր շնորհներով թող որ զօրանան մեր հոգիները՝ հաւատքի վեմի վրայ հաստատուած գործերով բարօր եւ լուսաշող դարձնելու մեր Հայրենիքի, մեր ժողովրդի ու Եկեղեցու վերագարթօնքի ուղին: Նորոգուած այս հաւատով անցկացնենք խորհրդարանական առաջիկայ ընտրութիւնները, նախանձախնդրութեամբ, ապագայի հանդէպ վստահութեամբ ու պատասխանատւութեամբ: Թող Յարուցեալ Քրիստոսի բիւր ողորմութեանց ներքոյ լինի մեր Հայրենիքը, աշխարհը համայն, եւ ազգեր ու ժողովուրդներ ապրեն ազատ վշտերից ու նեղութիւններից, միմեանց հանդէպ սիրով, եղբայրութեամբ ու խաղաղութեամբ:

Ողջունաբեր այս օրը Քրիստոսի Յարութեան բերկրալի աւետիսով եւ եղբայրական սիրով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մովսէսեանին, Քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին: Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու բարեջան բոլոր սպասաւորներին եւ հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի:

Բերկրաշատ եւ յուսառատ հոգով Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին, հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Ողջոյն ենք յղում Զատկական հոգեւորոգ ու տօնական այս օրերին Երեւանում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 100-ամեակը նշելու նպատակով աշխարհի տարբեր կողմերից Մայր Հայրենիքում համախմբուած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Բարեգործական Ընդհանուր Միութեան բարերարներին, Միութեան Նախագահի գլխաւորութեամբ՝ Կենտրոնական Վարչութեան ու մասնաճիւղերի ներկայացուցիչներին:

Շնորհառատ այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, միասնական մեր աղօթքը բարձրացնենք երկինք, որ Տիրոջ փրկութեան պարգեւը աւելի ու աւելի առատանայ աշխարհում, օգնելով մարդկանց ընթանալու դէպի Աստուծոյ բարերար Կամքը, դէպի մարդկութեան բարի ապագան՝ այսօր եւ միշտ եւ յաւիտեան. Ամեն:

***Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի***

**ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱԳՐԵՐԸ**

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐՆՈՒՂԻՄԵՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղաթի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՇԵՆՈՒԴԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Թևադոս Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԻԼՈՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին
Սրբություն

ԴԻԴԻՄՈՍ Ա (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պապ և Պատրիարք,
Նորին Գերաշնորհություն
ԹԵՈԴՈՐՈՍ Բ (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Ուղղափառ Պատրիարք,
Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՌՈՈՒԱՆ ՎԻԼՅԱՄՍ (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն
ԻՐԵՆԻՈՍ (Երուսաղեմ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԱՔՍԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԽՐԻՍՈՍՏՈՍՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԽՐԻՍՏՈՂՈՒԼՈՍ (Աթենք)

Վարշավայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՄԱՎՎԱ (Վարշավա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ, Համայն Բելառուսի Պատրիարքական
փոխանորդ,
Նորին Գերաշնորհություն
ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՅՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ (Հելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդի Նախագահ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱՂԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս-Պատրիարք

ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*

* *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն

ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Ստամբուլ)

Հայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից ու համայնքներից:

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուք

ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծահարգ

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծահարգ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուք

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 1-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Ծաղկազարդը՝ Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը: Ծաղկազարդի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նաև հռչակված է որպես մանուկների օրհնության օր:

Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում առավոտյան կատարվեց հանդիսավոր ժամերգություն, որի ավարտին Մայր Տաճարի առջև, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ բազում մեծահասակ ու մանուկ հայորդիների, կատարվեց անդաստանի արարողություն, որի ընթացքին օրհնվեցին աշխարհի չորս կողմերը, ապա՝ ուռենու ճյուղերը:

Անդաստանի արարողության ավարտին ներկա բոլոր մանուկները խմբվեցին Վեհափառ Հայրապետի շուրջը. կատարվեց մանուկների օրհնության հատուկ կարգ, ապա՝ Նորին Սրբությունը, շնորհավորելով ու իր օրհնությունը բաշխելով ամենքին, մանուկներին տոնի առիթով հանձնեց նվերներ:

Այնուհետև շուրջ 250 մանուկներ մասնակցեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կամարի առջև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ հովանավորությամբ գործող Հայորդյաց տների հոգևոր տեսուչ Տ. Խաղ քահանա Ղազարյանի և Հայորդյաց տների տնօրենությունների ջանքերով կազմակերպված կավճանկարի մրցույթին: Ազգային երաժշտության հնչյունների ներքո երեխաները կամարի առջև գտնվող հարթակն ամբողջությամբ ծածկեցին ազգային, եկեղեցական տարբեր թեմաներով կատարված իրենց գունագեղ ստեղծագործություններով: Նման մի մրցույթ նույն օրը, հավարտ Սուրբ Պատարագի, տեղի ունեցավ նաև Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հարևանությամբ:

Տոնին Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազյանը, ով տոնի խորհրդին անդրադարձավ իր քարոզում:

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբության հանդիսապետությամբ վերստին կատարվեց մանուկների օրհնության կարգ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵՑ ՈՏՆԼՎԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 5-ին՝ Ավագ Հինգշաբթի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսվեցին Ավագ Շաբաթվա հիմնական արարողությունները:

Առավոտյան Մայր Տաճարում, հավարտ ժամերգության, կատարվեց ապաշխարության կարգ, այնուհետև, ժամը 10.30-ին, ի հիշատակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի և Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովհաննես աբեղա Մայիլյանը:

Հետմիջօրեին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Ոտնլվայի արարողությունը: Սուրբգրային ընթերցումներից և օրվա խորհրդին նվիրված շարականների երգեցողությունից հետո Վեհափառ Հայրապետը օրհնեց յուզը, որն արարողությունից հետո բաշխվեց հավատացյալներին: Ըստ ավանդության, այն գործածվում է հիվանդությունների ժամանակ կամ խառնվում տանն ունեցած յուղին:

Այնուհետև, Տիրոջ օրինակով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը լվաց և յուզով օծեց Հայոց Եկեղեցու նվիրապետական տարբեր աստիճանների տասներկու ներկայացուցիչների և ճեմարանականների ոտքերը:

Երեկոյան, մինչև ուշ գիշեր, կատարվեց Խավարման կարգը, որը հիշատակն է Հիսուս Քրիստոսի չարչարանաց և խաչելության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 8-ին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնն առանձնահատուկ խնդությամբ նշվեց աշխարհասփյուռ հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Տոնի առիթով Մայր Աթոռի և ՀԲԸՄ-ի Հայրորդաց տները կազմակերպել էին թափուրեր: Առավոտյան Սուրբ Հռիփսիմե վանքի մոտից հարյուրավոր երիտասարդներ շարականների երգեցողության և թմբուկների ձայների ներքո շարժվեցին դեպի Մայր Աթոռ, ուր Տրդատա կամարի առջև դիմավորեցին Հայրապետական թափուրը:

Առավոտյան ժամը 10.30-ին Մայր Տաճարի ողջունաբեր զանգերի ներքո հոգևորականների թափուրը Վեհաբանից ամպհովանիով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջնորդեց դեպի Միածնաեջ Սուրբ Տաճար: Տիրոջ Հարության տոնի առիթով Նորին Սրբությունը մատուցեց Սուրբ և Անմահ Պատարագ և Հայրապետական իր պատգամը հղեց համայն հայ ժողովրդին: Պատարագին Վեհափառ Հայրապետին որպես առնթերականներ սպասավորում էին Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր հովիվ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը և Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Գերաշնորհ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

«...Աստվածորդին աշխարհի փրկության համար Իր կյանքը տվեց որպես փրկագին, և Քրիստոսի զոհաբերությունը դարձավ մարդկության հանդեպ աստվածային սիրո մեծագույն ապացույցը: Իր զոհաբերությամբ ու Հարությամբ Քրիստոս մարդկությանը պարզեց ազատություն չարի իշխանությունից, մեղքի ու մահվան գերությունից: Քրիստոս ընծայեց մեզ ազատություն, որ վեր է այդ հասկացության մարդկային սովորական ըմբռնումներից, ազատություն, որ շնորհ է՝ ընթանալու դեպի վերածնված կյանք, արդարությամբ, խաղաղությամբ նորոգված կյանք և այնքան բաղձալի ու փնտրված հավիտենությունը կյանքի»,- ասվում է Հայրապետական ուղերձում (տե՛ս էջ 3):

Նորին Սրբությունը խոսեց նաև աշխարհի՝ Քրիստոսի Հարության լույսից հեռացող ընթացքների մասին՝ նշելով, որ այսօր էլ տարածվում են հուղայական համբույրներն ու նյութապաշտությունը, սեփական բարօրության համար ոտնահարվում է արդարությունը, մերժվում է խաղաղաբեր Քրիստոս, հասարակության մեջ տեղ են գտնում խաբեությունը, բռնությունները, սպանությունները, նեղությունները, աղքատությունն ու կարոտությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև հայ ժողովրդի փորձություններին՝ ընդգծելով, որ տակավին ստիպված ենք պայքարել Լեռնային Ղարաբաղի հայության ազատ ու ապահով ապրելու աստվածաշնորհ իրավունքի համար, Ցեղաս-

պանության համընդհանուր դատապարտության համար, հայ հոգևոր և մշակութային արժեքների, սրբությունների և սրբավայրերի պահպանության և փրկության համար հարևան երկրներում:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Ս. Հարության շնորհներով զորանան մեր հոգիները՝ հավատքի վեմի վրա հաստատված գործերով բարօր և լուսաշող դարձնելու մեր Հայրենիքի, մեր ժողովրդի և Եկեղեցու վերագարթոնքի ուղին: Վեհափառը պատգամեց այդ հավատով, նախանձախնդրությամբ, ապագայի հանդեպ վստահությամբ ու պատասխանատվությամբ անցկացնել նաև առաջիկա խորհրդարանական ընտրությունները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ամենայն Հայոց Հայրապետն իր ողջույնը հղեց Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին, ինչպես նաև քույր Եկեղեցիների հոգևոր պետերին: Նորին Սրբությունն իր սերն ու օրհնությունը փոխանցեց եկեղեցականաց ողջ դասին և հավատավոր համայն հայ ժողովրդին:

Սուրբ Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանը, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, ՀՀ կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀԲԸՄ 100-ամյակի տոնախմբության առիթով ՀՀ-ում գտնվող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Բարեգործական Ընդհանուր Միության բարերարներ, Միության նախագահ Պերճ Մեղրակյանի գլխավորությամբ՝ Կենտրոնական Վարչության ու մասնաճյուղերի ներկայացուցիչներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, կրթության, արվեստի և մշակույթի գործիչներ:

Սուրբ Պատարագից հետո Վեհաբանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսով ներկաներին ուղղեց Հայրապետական իր բարեմաղթանքները Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Ապրիլի 24-ին՝ 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնի ոգեկոչման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Ծիծեռնակաբերդում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա անմար կրակի մոտ, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն 1915 թ. նահատակների համար:

Արարողությանը ներկա էին ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, պետական այրեր:

*

* * *

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռի միաբան, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր հովիվ Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պատարագի ավարտին Մայր Տաճարի հարևանությամբ գտնվող Աղոթքի և ուխտի խաչքարի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Սուրբ Պատարագ: Հընթացս Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն ՀՀ հանգուցյալ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հոգու խաղաղության համար:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Անդրադառնալով հոգեկույս վարչապետի վաստակին՝ Սրբազան Հայրն իր խոսքում մասնավորաբար նշեց. «...Անդրանիկ Մարգարյան մարդը իր բոլոր պաշտոններով հանդերձ մնաց նույնը՝ հոգածու վերաբերմունք ցույց տալով բոլորին: ...Իր կյանքի ամեն հանգրվանին իր հավատը դույզն-ինչ չափով չկորցրեց. հավատ, որն առավել զորացրեց իրեն և հույս ու կորով տվեց՝ շարունակելու իր ծառայությունը հայ ժողովրդին և հայոց պետականությանը:

...Այսօր վարչապետ Անդրանիկ Մարգարյանը մեկնել է մեզանից և բռնել այն ճամփան, որ տանում է դեպի հավիտենականություն, դեպի Աստված: Մենք վստահ ենք, որ նա իր արդար գործերով, բարի համբավով և այն սիրով, որով լցված էր իր նմանների նկատմամբ, պիտի վաստակի այն, ինչին արժանի է ամեն մի քրիստոնյա»:

Սուրբ Պատարագին ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, հանգուցյալ վարչապետի ընտանիքը, ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ Կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, բարեհիշատակ Անդրանիկ Մարգարյանի մերձավորներ և կուսակիցներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԳԻՐԸ ՀՌՈՍԻ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ ՊԱՊԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Հռոմի Պապ Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ-ին՝ ծննդյան 80-ամյա տարեդարձի առիթով:

«Մենք վստահ ենք, որ Ձեր առաջնորդությամբ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին իր բազմադարյա առաքելության ներկայիս ժամանակագրության մեջ կարձանագրի նոր հաջողություններ, և ջերմ ու եղբայրական հարաբերությունները Հայաստանյայց Առաքելական և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև կշարունակեն զարգանալ: Մեր աղոթքն է, որ մեր Եկեղեցիների միջև համագործակցությունն ու բարեկամությունը առավել ամրապնդվեն այս նոր դարաշրջանում՝ մեր հավատացելոց սրտերում քրիստոնեական սիրո և եղբայրության ոգու զորացմամբ»,- ասված է Վեհափառ Հայրապետի շնորհավորական ուղերձում:

Նորին Սրբությունը մաղթել է 80-ամյա Սրբազան Քահանայապետին քաջառողջություն և արդյունաշատ գահակալություն՝ ի մխիթարություն հավատավոր իր հոտի և ի պայծառություն Կաթոլիկ Եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՋԻՄ ԵՎ ՍԱՆԴՐԱ ԼԱՅԹՆԵՐՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՋԻՄ ԵՒ ՍԱՆԴՐԱ ԼԱՅԹՆԵՐ,
ՈՐ Ի ՆԻՒ ՋԵՐՄԻ, ԱՄՆ**

Հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ող-
ջյունն ու օրհնությունն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր
զաւակներիդ, եւ վերստին խնդազին գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղե-
ցաշէնն ու ազգօգուտ գործունէութեանը:

Սիրելի Տէր եւ Տիկին Լայթներ,

Տիրոջ կամքով ուրախ առիթ ենք ունեցել անձնապէս ճանաչելու Ձեզ, հաղորդ
դառնալու Ձեր գոհողութեան ոգուն եւ բազում տարիների եկեղեցանպաստ արգա-
սաւոր գործունէութեանը: Անդամակցելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի Սրբոց Ղե-
ւոնդեանց եկեղեցու Ծուխին, Դուք Ձեր անմնացորդ ջանքերն ու նիւթական կարողու-
թիւնները սիրով ի սպաս էք բերում եկեղեցու հովանու ներքոյ հայորդեաց հոգևոր եւ
ազգային կեանքի բարգաւաճմանն ի խնդիր: Ձեր ազնիւ գործերը, որոնք մեծապէս
նպաստում են համայնքային կեանքի աշխուժացմանը, վկայութիւնն են Ձեր աստո-
ւածսիրութեան եւ մեծ եկեղեցանուիրումի: Միացեալ Նահանգներ Մեր այցելութիւն-
ների ընթացքին ուրախութեամբ ականատես ենք եղել Ձեր հանդէպ բարեպաշտ հա-

յորդեաց յարգանքին ու սիրուն, որ վաստակել էք Ձեր աստուածահաճոյ կեանքի եւ գործունէութեան շնորհիւ:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում առ Սուրբ Էջմիածինը Ձեր անկեղծ նուիրումին ու նախանձախնդրութեանը եւ Հայաստանում Ձեր ազնիւ իրագործումներին: Հաւատաւոր ամուլիդ ազգանուէր ոգու եւ բարեգործութեան շնորհիւ նոր շունչ պիտի առնի Գիւմրի քաղաքի նորոգուած Հայորդեաց Տան գործունէութիւնը՝ նպաստ բերելով երիտասարդ հայորդեաց կրթութեանն ու հոգեւոր դաստիարակութեանը եւ նրանց շնորհների ու ստեղծագործական կարողութիւնների զարգացմանը: Կրթօջախի սաները մշտապէս երախտագէտ հոգով յիշելու են Ձեզ՝ աղօթք վերառաքելով առ Աստուած յանուն յարգարժան բարերարներիդ, որ անձնական օրինակով նրանց համար դաստիարակ էք բարի գործերի:

Ձեր հաւատաւոր ու ազգասէր ոգու եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակի բարձր գնահատանքով եւ ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միաձնի Իջման Սուրբ Մեղանի առջեւ Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենագորն Աստուած՝ հայցելով, որ Տէրը Ձեր կեանքը օրհնի երկնատուր բարիքներով եւ գործոց յարանորոգ յաջողութիւններով՝ Իր Ամենախնամ Աջի ներքոյ պահպանելով Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Ապրիլի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 382

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով ապրիլ ամսին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Ալիկ Մարգարյան (Արարատյան Հայրապետական թեմ)

Վերժինե Մատաճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Մայքլ Մատաճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Անդրանիկ Նալբանդյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Պեվլըրի Նալբանդյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Ավստրալիայի հայոց թեմի Պատգամավորական ժողովին

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Հոգևորականաց համագումարին

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Պատգամավորական ժողովին

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Ս. Վարդան Եկեղեցու Ծխական խորհրդին

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Հոգևորականաց համագումարին

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Տիկնանց միության համագումարին

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Պատգամավորական ժողովին

Կանադայի հայոց թեմի Տիկնանց համագումարին

Կանադայի հայոց թեմի Հոգևորականաց համագումարին

Կանադայի հայոց թեմի Պատգամավորական ժողովին

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՂԵՐԶ Է ՀՂԵԼ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ՝
ԱՎԵՏՄԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Սուրբ Ավետման տոնը տարիներ առաջ հռչակվել է որպես մայրության օրհնության օր: Ապրիլի 7-ին բոլոր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության հատուկ կարգ:

Սուրբ Աստվածածնի Ավետման և մայրության տոների առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել հայ կանանց: Հայրապետական ուղերձում մասնավորաբար ասվում է.

«Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում հավատավոր մեր ժողովրդին՝ Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի և կանանց՝ Մայրության տոնի առիթով:

Ամենօրինյալ Սուրբ Աստվածածինը առ Աստված իր մեծ հավատքով կատարյալ օրինակ է կանանց համար՝ արժեվորելու իրենց վեհ առաքելությունը ազգային և ընտանեկան կյանքում:

Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցիներում աստվածային օրհնությունն է բաշխվում մայրության բերկրանքին սպասող կանանց, աղոթք բարձրացվում երկինք, որ Ամենակալ Տերը պահապան լինի ապագա մայրերին՝ հաստատուն պահելով ընտանեկան սուրբ միությունը հավատավոր Մեր զավակներին:

Թող Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ Բարին Աստված օրհնի բոլոր մայրերին՝ ապրելու բարօր ու երջանիկ, դաստիարակելու արժանավոր զավակներ և երկնառաք բյուր շնորհներով զարդարի տիկնանց և օրհորդաց Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո»:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**ՄԵԿՆԱՐԿԵՑ 2007 ԹՎԱԿԱՆԻ «Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱՌՈՒՑԵՆՔ ՀԱՎԱՏՈՎ» ՏՆԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ԵՎ Ս 37 ՏՆԵՐ՝ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ**

Ապրիլի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դահլիճում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ 2007 թվականի «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կառուցենք հավատով» շինարարական ծրագրի բացման արարողությունը:

2006 թ. ապրիլի 20-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և «Միջազգային Հաբիթաթ» քրիստոնեական բարեգործական կազմակերպության միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի արդյունքում սկիզբ առավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան «Կառուցենք հավատով» ծրագիրը, որի շրջանակներում «Հայկական Հաբիթաթը» երեք տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի կկառուցի 37 տներ Հայաստանի տարբեր մարզերում տնագուրկ և կարիքավոր ընտանիքների համար: Անցյալ տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և աշխարհասփյուռ հայոց թեմերի թվի համեմատ արդեն կառուցվել և շահագործման են հանձնվել երեսունյոթ բնակարաններ, որոնց վերանորոգման աշխատանքներին մասնակցել են միջազգային կամավորներ, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի ներկայացուցիչներ և Մայր Աթոռի միաբաններ:

Արարողությունը բացվեց Տերունական աղոթքով, ապա ներկայացվեց Հաբիթաթի գործունեության, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ համագործակցության և «Կառուցենք հավատով» ծրագրերը: «Հայկական Հաբիթաթի» անունից Նորին Սրբությանն աջակցության համար խորին երախտագիտություն հայտնեց խորհրդի նախագահ Վարդան Թովմասյանը: Տիար Թովմասյանը նաև շնորհակալություն հայտնեց «Միջազգային Հաբիթաթի» Տնօրենների Խորհրդի անդամ Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանին՝ «Հայկական Հաբիթաթի» զարգացման գործում բերած կարևոր ներդրման համար, ինչպես նաև Հաբիթաթի տեղացի գործընկերներին, միջազգային աջակից կազմակերպություններին և կամավորներին:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ նաև Խոր Վիրապ գյուղի համայնքապետ Նորիկ Ոսկանյանը՝ կարևոր նկատելով Հաբիթաթի գործունեությունը՝ անապահով և երիտասարդ ընտանիքներին օգտակարություն բերելու գործում և նշելով, որ ծրագրի շրջանակում այս տարի գյուղի վեց ընտանիքներ կունենան նոր և հարմարավետ բնակարաններ:

«Հայկական Հաբիթաթի» հայաստանյան հովանավորներից Վիվա Սելլի շնորհիվ տնաշինական ծրագրի շրջանակներում տասն ընտանիքներ կապահովվեն նոր բնակարաններով: Կազմակերպության գործադիր տնօրեն Ռալֆ Հիրիկյանն իր խոսքում նշեց, որ կազմակերպությունը, հիմնված լինելով հայորդիների կողմից, հավատում է Հայաստանին՝ ասելով. «Մենք խաչքարի զավակներ ենք, դարերից ի վեր մենք հավատ ենք ունեցել և հավատ ունենք Հայաստանի հանդեպ..., և այս պատճառով մասնակցում ենք այս ծրագրին»:

«Վեհափառ Հայրապետը եղել է այն ուժը, որ մեզ քաջալերել է այս ծրագրի իրականացման գործում: Եկեղեցու առաքելությունն է մարդկանց օգնելը», - ասաց Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը՝ «Միջազգային Հաբիթաթի» և «Հայկական Հաբիթաթի» պաշտոնեության անունից շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝

անձնական գործուն աջակցության համար Հաբիթաթի գործունեությանը: «Այս ծրագիրը վկայում է, որ բարեսիրությունը կա և մնում է մեր Եկեղեցու գործունեության հիմնաքարերից մեկը», - նշեց ՀՀ նախագահի խորհրդական Սերգո Երիցյանը՝ ՀՀ նախագահի անունից գնահատանքով անդրադառնալով տնաշինական ծրագրի անհրաժեշտությանը և կարևորելով ծրագրի շարունակությունն ու ընդլայնումը:

Ծրագրի բացման արարողությունը եզրափակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: «Ողջունում ենք ամենքիդ Քրիստոսի Հրաշափառ Հարության սուրբ ավետիսով և բերում ենք ձեզ Մեր բարեմաղթանքները, օրհնությունն ու գնահատանքը, որ սիրով ու նախանձախնդրությամբ փարված եք աստվածահաճո այս գործին՝ կարիքավորին նեցուկ լինելու, նրա կողքին կանգնելու, նրա հոգսը, տառապանքը և ցավը, նրա երջանկությանը խանգարող վիճակները թեթևացնելու և Հարության լույսը, հույսը և լավատեսությունը մարդկանց հոգիներից և կյանքերից ներս բերելու: Մեզ համար այս իմաստով խորը գոհունակություն է, որ Հարության մեծ այս խորհրդի ներքո տեղի է ունենում Հաբիթաթի տնաշինական 2007 թվականի ծրագիրը, որ կրում է մեր անունը», - նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ այս ծրագիրն իրականացվում է ոչ միայն հայորդիների, այլև քույր Եկեղեցիների աջակցությամբ: «Մա աստվածահաճո գործ լինելուց զատ նաև միավորում է մեզ՝ տարբեր ազգերի ներկայացուցիչներին, պատասխանատվության զգացումով հանդեպ կարիքավոր մարդը՝ անկախ իր ազգային պատկանելությունից, անկախ իր դավանական համոզմունքներից: Մա գեղեցիկ մի օրինակ է բոլորիս համար և ճանապարհ դեպի մարդկության բարի, պայծառ և ապահով վաղվա օրը, խաղաղ ու երջանիկ օրը», - ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով ծրագրի բոլոր աջակիցներին, կազմակերպություններին և անհատներին, ովքեր իրենց ներդրումն են բերում ծրագրի հաջող իրագործմանը, ինչպես նաև Հաբիթաթում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանին և Հաբիթաթի հետ համագործակցող Տ. Թորգոմ վրդ. Տոնիկյանին:

Արարողությանը ներկա էին տեղական գործընկերներ և հովանավորներ, Միջազգային, Եվրոպական և Հայկական Հաբիթաթի ներկայացուցիչներ, դեսպանատների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ԱՄՆ կամավորների խումբը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ (1 ապրիլի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Օվսաննա ի բարձունս, ալէլուիա, օրհնեալ,
եկեալ անուամբ Տեառն, ալէլուիա»:*

(Շարական)

Սիրելի հավատացյալներ,

Այսօր ողջ աշխարհը կտոնէ Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Այսօրվա տոնը հայոց համար ունի յուրահատուկ անուն մը, և ողջ Քրիստոնյա Եկեղեցին այսօրվա տոնը կանվանէ Տյառն մերո շիսուսի Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, սակայն մեր Սրբազան Հայրերը զայն անվանած են Ծաղկազարդ: Ինչո՞ւ. որովհետև մեր նախնիները կապ մը գտած են Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտքի և բնության զարթոնքի հետ:

Ծաղկազարդ է այսօր, ողջ բնությունը վերակենդանացում կապրի՝ դիմավորելու համար իր Արարչին՝ Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Բազում տարիներ առաջ խաղաղատենչ և աստվածավախ մարդիկ կապասեին այս պահուն, երբ պիտի գար Մեսիան՝ Փրկիչը, փրկելու համար իրենց, առնելու և տանելու իրենց Իր հետ նստեցնելու համար Երկնավոր Հոր աջակողմը: Այսօր բնության հետ զարթոնք և վերածնունդ կապրի նաև քրիստոնյայի հոգին: Հոգին, որ վրդովյալ և խռովյալ վիճակէն դուրս գալով Քրիստոսի կողքին կգտնէ իր խաղաղությունն ու անդորրությունը, փառաբանելու համար իր հոգիի խորքէն և սրտով կաղաղակէ՝ ըսելով. «Օրհնյալ է Ան, որ կուգա Տիրոջ անունով»:

Այսօր Քրիստոսի հաղթական մուտքի օրն է Երուսաղեմ, Քրիստոսի հաղթական մուտքով ան հրաժեշտ կուտար մարդկության, որովհետև մի քանի օրեր ետք պիտի ձերբակալվէր, տարվէր դատարան, չարչարվէր և ապա խաչ բարձրացվէր: Քրիստոսի հաղթական մուտքով Երուսաղեմ այսօր հեղաշրջում մը տեղի կունենա մարդու հոգիէն ներս: Հեղաշրջում մը, որու հաջողությունը չէր պայմանավորված ո՛չ պատերազմով և ո՛չ ալ արյունահեղությամբ: Այդ հեղափոխությունը տեղի կունենար խաղաղությամբ, անշուշտ, եթէ մարդը հավատար Քրիստոսին և Անոր Ամենակարող զորությանը: Քրիստոս Իր հաղթական մուտքով Երուսաղեմ Իր հետևորդների հոգիները կազնվացնէ և կբյուրեղացնէ: Քրիստոս Իր հաղթական մուտքով Երուսաղեմ հետևորդներուն հնարավորությունը կուտա հետևելու Իրեն՝ երթալու համար դեպի հավիտենականություն: Քրիստոս Իր հաղթական մուտքով կհասնի Իր փառքի գագաթնակետին: Փառք մը, որուն ականատեսը կըլլան բոլոր ներկաները: Մարդը կտեսնի իր առաջին փառավորվիլը, փառք մը, որ Քրիստոս Աստված միայն կրնար ունենալ, փառք մը, զոր Քրիստոս ուներ Իր հետ, որ մարմին զգեցալ և աշխարհ եկալ փրկելու համար Իր իսկ ձեռքով ստեղծված մարդ արարածը:

Այսօր աստվածային փառքը, զոր Քրիստոսով կուգա աշխարհ, կհայտնվի մարդ արարածին: Ան հնարավորություն կունենա իր մահկանացուի աչքերով տեսնելու այդ մեծ փառքը: Երուսաղեմ քաղաքի մեջ Աստված ոչ միայն մարդացած երևաց մարդուն, այլ այնքան պարզվեցավ, որ տեսանելի դարձավ բոլորի կողմեն: Քրիստոս Երուսաղեմ կուգար Բեթանիայի կողմեն, Բեթանիա, որ կթարգմանվի արմավենիների տուն կամ արմավենյաց քաղաք, որպեսզի ծաղկած, գարնան ծնունդ առած արմավենիներով հաղթական մուտք գործեր հավերժ ծաղկած Երուսաղեմի տաճարեն ներս:

Քրիստոս երբ կուգար Երուսաղեմ, ուխտավորներու ամբոխի մեկ մասը իր ձեռքին ուներ արմավենյաց ճյուղեր, իսկ մյուսը՝ ձիթենյաց, կուղեկցեին Անոր՝ հասնելու համար ուխտատեղի: Կարծեք՝ այդ ամբոխը քայլող անտառ մը ըլլար: Անոնք, ունենալով իրենց ձեռքին բնության պտուղը, կհրամցնեին իրենց արարչին՝ ըսելով. «Զքոյս ի քոյոց Քեզ մատուցանեմք»: Ահա այդ վայրկյանին ողջ աշխարհը կգիտակցեր ու կհավատար, որ այն ավանակի վրա նստողը մարդ և մահկանացու մը չէր, մահկանացու մարգարե մը չէր Ան, որուն կիետներին, այլ Մեսիան, Փրկիչը, որ մարմին հագած հաղթական մուտք մը կգործե Երուսաղեմեն ներս: Ասոր համար է, որ ժողովուրդը կիետներ Իրեն: Նոյն Ինքը Մեսիան էր, Որուն գալով կատարվեցան մարգարեներու մարգարեությունները:

Երուսաղեմ մուտքով օրենքներու և բոլոր մարգարեներու լրումն է, որ տեղի կունենար: Ամբոխը բոլորն ալ անխտիր այս գիտակցությամբ և հավատքով է, որ կերգեին մեծ մարգարեի մարգարեությունը, թե՝ ուրախ եղիր, դուստր Սիոնի, զվարճացիր, Երուսաղեմ, ահա թագավորդ կուգա քեզի, արդար ու փրկիչ, հեզ ու խոնարհ:

Ծաղկազարդ է այսօր, Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Շուրջ երկու հազար տարիներ առաջ մարդը ականատես կըլլար այս բոլորին: Այսօր մարդ արարածին, սակայն, առիթ մը ևս կտրվի, հնարավորության դուռ մը կբացվի անոր առջև, որպեսզի մարդը վերանորոգե իր ուխտը, զոր Աբրահամ, Իսահակ և Հակոբ և անոնց բոլոր արդար զավակները կնքեցին Աստծո հետ:

Ծաղկազարդը ուխտի օր մըն է մեզ բոլորիս համար: Այսօր մենք որպես քրիստոնյա, երբ կդիմավորենք Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, մեզի ալ կտրվի այդ հնարավորությունը նորոգելու մեր ուխտը Աստծո հետ և այդպիսով այդ ուխտով մասնակցելու, ականատեսը ըլլալու այս սրբազան դեպքերուն, որոնք տեղի պիտի ունենան գալիք օրերուն, և երբ ականատեսը ըլլան, կլսեն հրեշտակի ձայնը, որ կուգար ավետելու՝ ըսելով. ինչո՞ւ կփնտրեք Անոր հոս, որովհետև չէ աստ, այլ հարություն առած է:

Սիրելի հավատացյալներ, պահն է վերանորոգելու մեր ուխտը Աստծո հետ, որպեսզի արդարացած, մաքրված և բյուրեղացած հոգիներով միացնենք մեր սրտի ձայները սաղմոսերգուին և ձայնակցելով անոր՝ փառաբանենք Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ՝ միաբերան գոչելով. «Օվսաննա ի բարձունս, ալելուիա, օրհնեալ, եկեալ անուամբ Տեառն ալելուիա»: Ամեն:

**Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

(15 ապրիլի 2007 թ.)

*«Հոգի Տեառն ի վերա Իմ, վասն որոյ եւ օծ
իսկ Զիս. ավետարանել աղքատաց առաքեաց
Զիս»:*

*«Աստուծո Հոգին Իմ վրա է, դրա համար
իսկ օծեց Բնձ, Բնձ ուղարկեց աղքատներին ա-
վետարանելու»:*

(Ղուկ. Դ 18)

Միբելի նորած քահանա Հայրեր,

Այսօր Տիրոջ Հոգին առատորեն կիջնէ ձեր կյանքի վրա, ձեր հոգիները, ձեր միտքը, սիրտը և ամբողջ էությունը կլեցվին Աստուծո ներկայությամբը, և դուք կկերպարնափոխվիք, որպես ծառա Հիսուսի Քրիստոսի ձեր կյանքը այսուհետև շարունակելու համար, որպես հովիվ բանավոր հոտին Աստուծո կողմեն ձեզի վստահված պարտականությունները լի ու լի կատարելու համար, դառնալու համար խոնարհ, հավատարիմ սպասավոր մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի, և հավատարիմ ծառայող Հայաստանյաց Առաքելական մեր մայր Սուրբ Եկեղեցվո:

Այսօր մանավանդ այս Սուրբ Խորանի վրա դուք հրավեր և կոչում կստանաք՝ ձեզ զգալու այնպես, ինչպես Քրիստոսի հետ Հակոբոս, Հովհաննես և Պետրոս: Երեք առաքյալները, Թաբոր լեռը բարձրանալով, այնուհետև իրենց հոգու մեջ զգացին, իրենց հոգու մեջ մնայունորեն արձագանքեց Պետրոսի ձայնը, երբ ըսավ՝ Տեր, բարվոք է մեզ աստ լինել: Այսուհետև դուք Աստուծո անդաստանի մեջ ծառայության եք կանչված: Տարիներ շարունակ ձեր հոգին, սիրտը, միտքը, էությունը սնուցանելով, լեցնելով մեր հայրերու հավատքի կյանքով, Ավետարանեն ճառագայթող Քրիստոսի պատգամներով, դուք աճեցաք, զարգացաք, ձեր մեջ սակավ առ սակավ խմորվեցավ քրիստոնյան, քահանան, հոգևորականը, ճշմարիտ հովիվը, որպեսզի այս պահեն սկսած դուք դառնաք ձեր կյանքով, նվիրյալ ձեր կյանքով հոգևոր մխիթարություն մեր Սուրբ Եկեղեցվո զավակներուն համար, ձեր կյանքը դառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կանթեղի մեջ նոր ձեթ, որպեսզի նոր լույս, ուրախություն, նոր խնդություն, հավատքի նոր երանգ, հավատքի նոր օգնականություն և զորություն դուք կարողանաք հաղորդել մեր ժողովրդի զավակներուն:

Այս տոնական առիթով, սիբելի նոր ձեռնադրյալ և նորած քահանա Հայրեր, մենք ձեզ կշնորհավորենք, կաղոթենք առ բարին Աստված, որ ինչպես Քրիստոսի հոգու մեջեն ճառագայթեց այսօրվա Ավետարանի մեջ կարդացված այն հատվածը,

ուր կըսվե, թե երբ Քրիստոս Աստվածորդին կըսեր. «Տիրոջ Հոգին Իմ վրա է, որով և օծեցիր զԻս, որպեսզի կյանքը դարձնեմ աղքատներու համար Ավետարանի քարոզչություն», դուք այդպիսի առաքելական կյանքով ներշնչված մեր ժողովրդի զավակներու հոգու մեջ արմատավորեք Քրիստոսի սերը, հույսը, լույսը, որոնք հիմքն են նաև յուրաքանչյուր հավատավոր կյանքի մեջ:

Մենք այս տոնական առիթով ձեզ շնորհավորելով այսօր սրտի պարտք կզգանք մասնավոր կերպով շնորհավորելու և մեր երախտագիտական զգացումները արտահայտելու և փոխանցելու ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Սուրբ Օծություն S. S. Գաբեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որուն սիրո և գուրգուրանքի և օրհնության ներքո ահավասիկ նոր սերունդ մը ևս կբացվի կյանքին, նոր սերունդ մը ևս, որոնք իրենց սրտի և հոգիի մեջ խոստում և ուխտ կկատարեն, որպեսզի Վեհափառ Հայրապետի օրհնությամբ անոնք դառնան մշակ առանց ամոթո Քրիստոսի բանավոր հոտին:

Մեր աղոթքն է առ բարին Աստված, սիրելի Վեհափառ, որ Ձեր Հայրապետական մականի ներքո սերունդներ, սերունդներ այս սրբազան և նվիրական օջախին մեջ այլակերպվին, պայծառակերպվին Քրիստոսի սիրով, Սուրբ Էջմիածնի խորհուրդով և իրենց կյանքովը դառնան նոր ներշնչում մեր ժողովրդի զավակներուն համար: Ձեր արտոնությամբ, սիրելի Վեհափառ Հայրապետ, մենք կուզենք նաև այսօր մեր բարի մաղթանքները և աղոթքը բարձրացնել նորած և նոր ձեռնադրյալ քահանա Հայրերու ծնողներու և դաստիարակներու համար, որոնք տարիներ շարունակ իրենց ծնողական սիրո խնամքի ներքո տվեցին այն, ինչ որ իրենք ունեին իրենց սրտի մեջ և իրենց հետ միասին դաստիարակներ և որ սնունդ բաշխեցին մեր նորած քահանա Հայրերուն, որպեսզի իրենք Քրիստոսանման կյանքով հավատարիմ ծառայությամբ իրենց կյանքը ընծայաբերեն Աստուծո Սուրբ Սեղանին:

Սիրելի նորած և նոր ձեռնադրյալ քահանա Հայրեր, այսօրվանեն ամեն օր և ամեն ժամ և ամեն վայրկյան ձեր հոգու մեջ թող արձագանք դառնա, պատգամ դառնա Քրիստոսի աղոթքը՝ Տիրոջ Հոգին Իմ վրա է, որով և օծեցիր զԻս, ահավասիկ կկանչվիմ ավետարանելու, քարոզելու աղքատներուն լույսի Ավետարանը, հույսի Ավետարանը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

«Շնորհք, սեր եւ խաղաղություն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանսդ. Ամեն»:

ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ

ԶԱՐԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԲԱՂՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՑ

Քրիստոնեական Եկեղեցու երկու գլխավոր տոներն են Սուրբ Ծնունդն ու Սուրբ Հարությունը, որոնք, սկսյալ քրիստոնեության վաղ դարերից, առանձնակի շուքով ու ցնծությամբ է տոնա մարդեղության խորհրդով, Աստված Ինքն է հայտնվում մարդկանց՝ Իր հետ բերելով խմբվել Ընդհանրական, այդ թվում նաև մեր Եկեղեցու կողմից: Հիսուսի ծնունդով, այսինքն Իր բարի պատգամները՝ երկրի վրա հիմնելու աստվածային թագավորությունը: Հովհաննես ավետարանիչը Հիսուսի ծնունդը անվանում է Աստվածային Բանի՝ խոսքի մարմնավորումը՝ գրելով. «Եւ Բանն մարմին եղել էւ բնակեաց ի մեզ» (Հովհ. Ա 14), այսինքն Աստծու խոսքը մարմնացավ ու մեր մեջ բնակվեց: Այս խոսքը հենց ինքը՝ Աստված է, «քանզի նրանով ամենայն ինչ եղավ, և առանց նրան չեղավ ոչինչ, որ եղել է: Կյանքը նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց լույս էր» (Հովհ. Ա 2-4):

Ուրեմն մարմին առնողը նույնինքն աշխարհի ստեղծողն էր, որի աշխարհ գալը պիտի լիներ «մեծ ուրախություն բոլոր ժողովուրդներին» (Ղուկ. Բ 10): Նա է լույսը՝ խավարում բնակվողների համար, Նա է ճշմարիտ Էմմանուելը, որ նշանակում է «Աստված մեզ հետ է» (Եսայի Է 14): Նա մարմին առավ Ս. Կույսից և մարդեղացավ որպես երկրորդ Ադամ, որպեսզի քավի առաջին Ադամի գործած մեղքը և նրա առջև բացի ճանապարհը երկնային արքայության:

Մեսրոպ Մաշտոց շարականագիր վարդապետը այսպես է ներկայացնում Հիսուսի սքանչելի ծննդյան խորհուրդը մեղուցյալ մարդկության համար. «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ առուր յայտնեցաւ»:

Ոչ ոք չգիտի Հիսուսի ծննդյան ճիշտ օրը: Հայաստանյայց Եկեղեցին այն տոնում է հունվարի 6-ին, Արևմտյան Եկեղեցին՝ դեկտեմբերի 25-ին: Աստված չի կամեցել հայտնել մեզ ծննդյան ճշգրիտ օրը, որպեսզի Տերը տևականորեն, հավիտենապես ծնվի մեր մեջ և վերանորոգի մեր բնությունը, խաղաղեցնի մեր խռովահույզ կրքերն ու խոհերը: Այդ հավիտենական ծնունդով է, որ նա միշտ մեզ հետ է:

«Ահաւասիկ ասեալաքանէմ ձեզ ուրախութիւն մեծ» (Ղուկ. Բ 10),- հրեշտակն այս բառերով է հովիվներին ավետում Հիսուսի ծնունդը: Ծնվում է Նա, ով մեզ համար դառնալու է մշտնջենական աղբյուր հոգևոր ուրախության, խաղաղության, լույսի ու ճշմարիտ կյանքի: Դրա համար էլ մենք մասնակցում ենք հրեշտակների ուրախությանը և ձայնակցում նրանց՝ կրկնելով. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Քրիստոնյա աշխարհի երկրորդ մեծ իրադարձությունը Հիսուսի Հրաշափառ Հարությունն է:

Սուրբ Գրքում մահը նկատի է առնվում որպես մեղքի վարձ, և ի հետևանս նախամարդու մեղանշումի՝ մահը աշխարհ եկավ իր սարսափազդու կերպարանքով: Մարդկային բազմաթիվ սերունդներ տառապեցին ի տես կյանքի շիջումին և զուր տեղը փնտրեցին հավիտենական կյանք ձեռք բերելու որևէ միջոց:

Համաշխարհային պատմության մեջ միայն մեր Տերն էր, որ ոչ թե խոսքերով պարզ մխիթարություն է պարգևում մահվան սարսափով տոգորված մարդկանց, այլև տալիս փրկության ավետիսը՝ ասելով. «Ես իսկ եմ հարությունն ու կյանքը»: Դրա համար էլ Նա Ինքը հարություն առավ որպես երաշխիք նաև մեր հարության:

Մեր ողջ հավատը հիմնված է Հիսուսի հարության իրողության վրա, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, և իզուր է մեր հավատը: Եվ Աստծու սուտ վկաներ կլինենք, քանի որ Աստծու մասին վկայեցինք, թե հարություն տվեց Քրիստոսին» (Ա Կորնթ. ԺԵ 14-15):

Հիսուսի հարությունը փառավոր հաղթանակ է չարի ու մահվան դեմ, ապացույց Փրկչի աստվածային զորության ու փառքի: Հարության փրկարար նշանակության մասին Հայաստանյայց Եկեղեցին ունի հետևյալ բանաձևումը. «Մահուամբ զմահ կռիւեաց եւ յարութեամբն Իրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Մեր Եկեղեցում ընդունված ավանդույթով Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվում է հայրապետական Ս. Պատարագ, և այս տոների պատգամն է աշխարհասփյուռ հայությանն ուղղում Հայոց Հայրապետը:

Մեր Հայրապետները, պայմանավորված այն հանգամանքով, որ իրենց գահակալության ընթացքում քանիցս անդրադառնում են Ս. Ծննդյան ու Ս. Հարության խորհուրդներին՝ ամեն անգամ դրանք ներկայացնում են տարբեր տեսանկյուններից, հարաբերելով Ժամանակի ազգային-եկեղեցական կյանքի և մարդկությանը մտահոգող խնդիրների հետ: Ասվածը լիովին վերաբերվում է նաև Գաբեգին Բ Կաթողիկոսի՝ Ս. Ծննդյան և Ս. Հարության պատգամներին:

Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան հայրապետական անդրանիկ պատգամը համընկավ Փրկչի ծննդյան 2000-ամյակի հանդիսություններին, և, ինչպես Նորին Սրբությունն է նշում, Ս. Ծննդյան հրեշտակաձայն ավետիսը 2000 տարի առաջ առաջինը լսեցին Բեթղեհեմի հովիվները:

Հայրապետական այս պատգամով մեր առջև զճագրվում է Բեթղեհեմի մսուրը, որտեղից մարդկության Փրկիչը անցնելու էր մինչև խաչելություն ու հարություն տանող ճանապարհը:

Քարոզների բնույթը որոշվում է նախ օրվա հոգևոր խորհրդով և այդ խորհրդի շրջանակներում ընտրված բնաբանով: Այս քարոզի համար Գաբեգին Բ Հայրապետը բնաբան է ընտրել Ս. Ծննդյան ավետիսը ներկայացնող «Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ» (Ղուկ. Բ 10) բառերը, և ամբողջ քարոզը հարաբերվում է այս տողի հետ, ու հոգևոր ուրախությունը շարունակ ներկայացվում է տարբեր անդրադարձումներով:

Քանի որ քարոզների երկրորդ մասում օրվա հոգևոր խորհուրդն արդեն հարաբերվում է Ժամանակի հիմնախնդիրների հետ, ուստի Ս. Ծննդյան անդրանիկ պատգամի այս հատվածում որպես մտահոգություն է հնչում այն հարցը, թե ո՞ր է Ս. Ծննդյամբ ավետված խաղաղությունը: Այս հարցադրումը այնուհետև լավատե-

սությամբ տոգորված հայրապետական հորդոր-մաղթանքի է փոխվում հաջորդող հետևյալ տողերում. «Թող Արդարության Արեգակի խավարացիր շողերը բացեն առավոտը նոր դարաշրջանի: Թող սիրո ավետաբերի օրհնության մեջ և խաղաղության իշխանի տնօրինության ներքո Երկիր մոլորակը շարունակի իր պտույտը հավերժ» («Էջմիածին», 2000, Ա, էջ 11):

1994 թ. մայիսին, Արցախի հիմնահարցի լուծման ճանապարհին հաստատված զինադադարից հետո, յուրաքանչյուր նոր տարվա սեմին անցնող տարվա կարևոր ձեռքբերումներից է համարվում հաստատված խաղաղության պահպանումը, ուստի թե՛ այս և թե՛ հաջորդող տարիների Ս. Ծննդյան պատգամներում հատուկ ընդգծվում է հաստատված խաղաղությունը շարունակելու կարևորությունը, արձանագրվում է այն ուրախալի փաստը, որ մեր ժողովուրդը ևս մեկ տարի անցկացրեց խաղաղ պայմաններում:

Նորին Սրբությունը այս համատեքստում կարևորելով նաև ներանձնական խաղաղությունը, որը մարդկային հոգին հեռու է պահում տարբեր կրքերից ու խռովության որոմից, միաժամանակ որպես հավաքական մի ամբողջություն նպաստելով մեր երկրի բարգավաճմանը և անխռով ընթացքին, խաղաղության այս հորդորը միաշաղախելով Բեթղեհեմյան աստղի շողով, գրում է. «Այսօր Հովվապետիս հայցն է առ Աստված ու խնդրանքը, որ թանկ ձեռք բերված խաղաղությունը լինի անբեկանելի, որ այն Բեթղեհեմի Լուսաստղի շողերով հաստատվի նաև յուրաքանչյուր հայտորդու կյանքում՝ բերելով հոգու անդորր, հաշտություն ու երջանկություն: Մեր աղոթքն ու մաղթանքն է նաև, որ Աստվածահայտնության 2000 թվականը նշանավորվի Սիրով՝ նվաճված հաղթանակներով և հռչակվի ու դառնա հաշտության և փոխադարձ վստահության տարի, որպեսզի մեր հոգիները փարատվեն անցնող դարաշրջանի ողբերգություններից, նախորդ տարվա տագնապներից, ներկա կյանքի անարդարություններով ու դժվարություններով ամբարված դառնություններից ու անհանդուրժողությունից, որպեսզի ողորմածությունը, գթասրտությունը, արիությունն ու արդարաստությունը, ճշմարտության ոգին լինեն մեր կյանքի ուղեկիցները՝ օգնելով Հայրենի հողի վրա և Սփյուռքում նորոգելու հարանց մեր հավատքը, զորացնելու հայրենապաշտ մեր ոգին, շեն ու բարգավաճ դարձնելու անկախացյալ մեր Հայրենիքը, միաբանվելու համազգային իղձերի շուրջ՝ որպես մեկ Ազգ, մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի՝ ի վկայություն և ի հաստատում, որ Աստվածահայտնությունը՝ Հիսուսի Սուրբ Ծնունդը, մշտապես իրական է մեր կյանքում»:

2001 թ. առանձնակիորեն հիշարժան տարեթիվ էր հայ ժողովրդի կյանքում որպես Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի տարի, և այն անցավ 1700-ամյակի խորհրդի ներքո: Բեթղեհեմի աստղի լույսը հայության համար դարեր շարունակ անդրադարձվել է Ս. Էջմիածնի լույսով, ասես Բեթղեհեմի քարայրն է եղել Ս. Էջմիածնի խանձարուրը, և Վեհափառ Հայրապետը Ս. Ծննդյան և Ս. Էջմիածնի խորհուրդների միահյուսմամբ 2001 թվականի Ս. Ծննդյան պատգամն է ներկայացնում որպես 1700-ամյակի կոնդակ: Զույգ խորհուրդների նույն միահյուսմամբ այս պատգամ-կոնդակի համար որպես բնաբան է ընտրել Ս. Էջմիածնի շարականի «Էջ Միածինն ի Հօրե եւ լոյս փառաց ընդ նմա» տողը: Ս. Ծննդյան աստղի բեթղեհեմյան էջքին է կարծես միախառնվում ի Հայաստան Միածնի էջքը և այդ էջքով իր լուսեղեն գծագրումը ստացած Վաղարշապատի Կաթողիկեն: Նման միահյուսմամբ է այս պատգամում

ներկայացվում Ս. Ծննդյան խորհուրդը մեր կյանքից ներս՝ դարերի հոլովությամբ: Վեհափառ Հայրապետը միաժամանակ շեշտում է, որ աշխարհում քրիստոնեությունը պետականորեն ընդունած ժողովուրդ լինելը նաև պարտավորեցնող իրողություն է. «Այսօր այն սոսկ հպարտության առիթ չպետք է լինի մեզ համար, այլ պատասխանատվության քաջալերող ու ոգեղեն կոչ», որ հավատարիմ մնանք մեր հայրերի ավանդներին և չթերանանք մեր հավատում, և որ մեր հոգում շարունակ հնչի մեր հավատի հոր՝ Լուսավորիչ Հայրապետի խոսքերը՝ «Եկայք շինեսցուք»:

2002 թ. Ս. Ծննդյան հայրապետական պատգամը նվիրված է Փրկչի ծննդյամբ մարդկությանը պարգևված շնորհին, իսկ քարոզի երկրորդ մասում արդեն ասվում է, թե ինչ շնորհների արժանացավ մեր ժողովուրդը առ Տերը դիմելով, և որ շարունակենք մնալ շնորհընկալներն այդ շնորհի:

2003 թ. պատգամի համար որպես բնաբան է ընտրված հրեշտակային փառաբանության «Փառք ի բարձունս...» խոսքերով սկսվող տողը (Ղուկ. Բ 14): Նույն ձևով այս բնաբանին համահունչ է Վեհափառի խոսքը, և այն կառուցված է «Փառք քեզ» խոսքերով սկսվող պարբերություններով: Խոսքը շարունակվում է խաղաղության և մարդկային համերաշխության պատգամով, ինչպես որ բնաբանի հրեշտակային օրհներգության մեջ է:

Վեհափառ Հայրապետը Ս. Ծննդյան հայրապետական պատգամների համար որպես բնաբան ընտրել է նաև ավետարանական և առաքելական թղթերից վերցրած այնպիսի տողեր, որոնք թեև ուղղակիորեն Ս. Ծնունդին չեն վերաբերում, սակայն կապվում են Փրկչի՝ աշխարհ գալու և մարդեղության խորհրդի հետ: Այսպես, 2005 թ. պատգամի բնաբանն է. «Եւ ծանիջիք զճմարտութիւնն եւ ճմարտութիւն ազատեսցէ զմեզ» (Հովհ. Ը 32) տողը և բնաբանին համահունչ ներկայացվում է մարդկության կողմից ճմարտության որոնումը, որը, սակայն, տրվելու և տարածվելու էր Բեթղեհեմյան այրից:

Անցնող տարիները մեր ազգային-եկեղեցական կյանքում նշանավորվեցին նաև տարբեր նշանակալից հոբելյաններով: Եվ քանի որ, ինչպես նշեցինք, Ս. Ծննդյան ավետիսը նաև սկսվող նոր տարին է ազդարարում, ուստի Նորին Սրբությունը հայրապետական իր այս պատգամներում անդրադարձ է կատարում նաև այդ հոբելյաններին: Դրանք առնչվելով մեր ազգային-եկեղեցական կյանքին, բնականաբար, կապված են նաև մեր հավատի, որով և Ս. Ծննդյան խորհրդի հետ, ուստի խոսքի աստիճանական զարգացմամբ կարծես Բեթղեհեմի այրից տարածվող լույսը հոգևոր տարբեր անդրադարձումներով հարաբերվում է այդ հոբելյանների հետ:

Ս. Հարության քարոզների հիմքում էլ, բնականաբար, նույն ձևով ընկած է Տիրոջ Հրաշափառ Հարության ավետիսի խորհուրդը: Եվ ինչպես Ս. Ծննդյան խորհրդանիշն է Բեթղեհեմյան այրն ու աստղը, այնպես էլ Ս. Հարության խորհրդանիշն է թափուր գերեզմանը, որը հայրապետական պատգամներում ներկայացվում է տարբեր անդրադարձումներով: Այսպես, Ս. Հարության՝ Գարեգին Բ Վեհափառի հայրապետական անդրանիկ պատգամում ասվում է. «Աստվածորդու թափուր գերեզմանից արարչական սիրո հաղթության լույսով աստվածային փառքն է ճառագում՝ մեր շուրթերից դեպի երկինք բարձրացնելով փառաբանության աղոթքը հոգեբուխ»:

Ս. Ծնունդը եթե ավետարանական պատմության սկզբնակետն էր, ապա Ս. Հարությունը՝ բարձրակետը: Այս հանգամանքը ևս իր արտացոլումն է գտել Ս. Հարության քարոզներում, ուր Ս. Ծնունդը ներկայացվում է որպես քրիստոնեության բեթղեհեմյան լույսով, իսկ Ս. Հարությունը՝ Փրկչի փառքով և ճառագայթմամբ սկսված արշալույս, որն էլ հնարավորություն է տալիս Ս. Հարության քարոզներում առավել ընդգրկուն կերպով ներկայացնել ավետարանական ընթացքը՝ Հիսուսի փրկչական տարբեր տնօրինություններին հանգամանալից անդրադարձով:

Հիսուսի Հրաշափառ Հարությունը մեր ժողովրդի հոգևոր մտածողության մեջ ուղղակիորեն կապվում է նաև հայ ժողովրդի վերածնության, եղեռնի արհավիրքներից հետո վերահառնելու գաղափարի հետ: Ինչպես Ս. Հարության 2000 թ. Հայրապետական պատգամում է ասվում, «Մեկ անգամ չէ, որ անցել ենք խաչելության ճանապարհը ու չափել մահվան գուրի խորությունը: Եվ ամեն անգամ մեր հոգու հույսի կայծը կրակ է դարձել ու բոցավառել՝ հառնելու մեր կամքը, հավերժի մեր ոգին» («Էջմիածին», 2000, Դ, էջ 5): Հոգևոր այս գուգահեռը նաև ժամանակային մի համընկնում ունի, քանի որ Ս. Հարության տոնը, ըստ Հայոց Եկեղեցու շարժական տոմարի, նախորդում է ապրիլի 24-ին և ժամանակային մերձավորությամբ է համընկնում Հայոց Գողգոթայի հետ: Ուստի Ս. Հարության տոնին ոգեկոչվում է և նահատակաց հիշատակը, իսկ ապրիլի 24-ին նրանց հիշատակը ոգեկոչում ենք Ս. Հարության խորհրդով:

Քարոզների երկրորդ մասում, ուր օրվա հոգևոր խորհուրդը հարաբերվում է մեր ազգային կյանքի հետ, Հարության փառաբանությամբ Տիրոջը գոհություն է մատուցվում, որ մեր ժողովուրդը ոչ միայն հառնել է՝ անցնելով բազում արհավիրքների միջով, այլև շարունակում է իր ընթացքը՝ կերտելով իր նորոգ պետականությունը: 2003 թ. Ս. Ծննդյան պատգամում ասվում է. «Սիրելի ժողովուրդ հայոց, խաչելության մեր երկար ճանապարհներն ավարտվել են Հարության առավոտով, և Հարության լույսի նոր լուսաբաց է ազատ մեր հայրենիքում ու ազգային կյանքում»: Հայաստան աշխարհն իսկ դիտարկվում է Ս. Հարության պատկերների տեսանկյունից, ինչպես, օրինակ՝ «Նայենք խաչքար դարձած մեր ժայռերին...» (2003 թ. պատգամից):

Ս. Հարության քարոզներում ևս անդրադարձ է կատարվում վերջին տարիների ազգային-եկեղեցական կյանքի նշանակալից իրադարձություններին: Եվ քանի որ Ս. Հարության խորհուրդը նաև հավատարմություն է քրիստոնեական հավատին, հենց քրիստոնեական վկայության, քրիստոնեական ավանդներին հավատարիմ մնալու տեսանկյունից են դիտարկվում այդ ամենը, և այն միտքն է շեշտվում, որ դարերի հոլովությամբ մեր լինելությունը պայմանավորված է առ Հարուցյալ Փրկիչն ունեցած մեր հավատով, որին շարունակ հավատարիմ ենք մնացել և մեր կյանքով իսկ վկայել. «Սիրելի ժողովուրդ հայոց. Իր օրհնաբեր ներկայութեամբ, Իր փրկագործ զօրութեամբ մեր կողքին է եղել Տերը, ուր էլ ուղղորդուել է մեր կեանքի նալը մեր պատմութեան դժուարին, թե՛ հեշտընթաց ուղիներում: Մեր կողքին է եղել եւ չի լքել մեզ Աստուած մահատեսիլ օրհասների մեջ, երբ մարդկանցից յոյսներս կտրած միայնակ ենք մնացել: Յարութեան լոյսն է մեր բոլոր Աւարայրներից ու Սարդարապատներից վեր, Յարութեամբ են լուսեպսակ հայոց Գողգոթաների ճանապարհները, որ սփռեցին մեզ աշխարհէ աշխարհ: Յարուցեալ է այսօր մեր պետականութիւ-

նը, եւ կեանքի բոլոր յանգրուաններում սպասում է մեզ Տէրը՝ սփռելու մեզ վրայ Իր լոյսն ու խաղաղութիւնը, օրհնելու, արդիւնատրելու մեր ջանքերն ու աշխատանքը»:

Վեհափառ Հայրապետի՝ Ս. Հարության պատգամներում համաքրիստոնեական ու համամարդկային հնչեղություն ունեցող հորդորն է հնչում առ այն, որ ինչպէս Փրկչի հարությամբ նորոգ կյանք սկսեց մեղուցյալ մարդկությունը և աշխարհը, այնպէս էլ այսօր թող վանվեն բոլոր մեղքերը, վերջ գտնեն աշխարհն ու մարդկանց ծվատող հակասությունները և չարությունը, և թող Խաղաղության Իշխանը թագավորի աշխարհում ու մեր հոգիներում:

Նորին Սրբությունը կոչ է անում գոտեպնդվելու, ինչպէս խաչելության ժամանակ Տիրոջը թողած աշակերտները հոգեպէս գոտեպնդվեցին Ս. Հարությունից հետո:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը հաջորդեց Տիրոջ ծննդյան 2000-ամյակի արարողություններին, որոնց շրջագծում Հայոց Հայրապետը Հայաստանի Հանրապետության նախագահի հետ ուխտավորաբար եղավ Տերունական սրբավայրերում, որտեղից հոգևոր ոսկեղենիկ ցոլքով Ս. Էջմիածին է հասնում հայոց հավատի լույսը: Մեր ազգային-հոգևոր ավանդական ըմբռնումներին համահունչ այն ճշմարտությունը, որ Ս. Ավետարանից է բխում հայոց հավատի լույսը, Ուխտավոր Հայրապետը արտահայտեց հետևյալ խոսքերով. «Բեթղեհեմյան կենարար աստղալույսով վառ է հայոց երկնքում Լուսավորչի կանթեղը»: Այս համեմատությունը նաև լուսավոր մի ուղի է գծում քրիստոնեության օրանի վրա փայլող Բեթղեհեմյան աստղի և հայոց երկնականարում շողացող մշտավառ կանթեղի միջև:

Իրենց անդրանիկ կոնդակներով Հայոց Հայրապետները ներկայացրել են այն խնդիրները, որոնք տվյալ ժամանակահատվածում առավել հրամայական են եղել մեր Եկեղեցու ու ժողովրդի համար և ըստ այդմ մատնանշել հայրապետական գործունեության առաջիկա և առաջնահերթ քայլերն ու ծրագրերը: Համանման ձևով Գարեգին Բ Կաթողիկոսն է հայրապետական իր անդրանիկ կոնդակում ներկայացնում այն առաջնահերթությունները, որոնց իրականացմանը Նորին Սրբությունը այնուհետ ձեռնամուխ էր լինելու իր գահակալության այս տարիների ընթացքում:

Անդրանիկ կոնդակում Հայոց Հայրապետը նախ կարևորում է մեր ժողովրդի հավատքի ամրությունը և Հայոց Եկեղեցու միասնականությունը՝ իր Նվիրապետական Աթոռներով, հոգևոր կյանքի բարեփոխման ու վերաշինության ճանապարհին առաջնային համարելով հետևյալ խնդիրները.

Ա. Հոգևորական նոր սերնդի պատրաստությունը.

Բ. Պատմական եկեղեցիների նորոգությունը և նորերի կառուցումը.

Գ. Հոգևոր քարոզչությունը և քրիստոնեական դաստիարակությունը.

Դ. Եկեղեցու՝ որպէս համազգային հաստատության միջոցով հայապահպանության իրականացումը Սփյուռքում.

Ե. Միջեկեղեցական հարաբերությունների առավել ընդլայնումը և սերտացումը.

Զ. Հայոց Եկեղեցու Սահմանադրության ընդունումը և հայ եկեղեցական ավանդույթի վրա խարսխված եկեղեցական բարենորոգությունը:

Նորին Սրբությունը քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի բարձրակետը և հոգևոր-նյութական մարմնավորումն է համարում Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու կառուցումը և հայրապետական իր անդրանիկ կոնդակն ավարտում է այն համոզմամբ, որ 1700-ամյակի հանդիսությունների օրերին Երևանի կենտրոնում վեր կիտյանա այն՝ խորհրդանշելով հայոց կենդանի հավատն ու հավատարմությունը իր 1700-ամյա քրիստոնեական ավանդույթներին:

Գարեգին Բ Հայրապետի գահակալության անցնող այս տարիները համընկան ազգային-եկեղեցական մի շարք նշանակալից հոբելյանների ու տարեդարձների հետ, որոնց նվիրված հայրապետական կոնդակներով Նորին Սրբությունը հոգևոր արժեքավորմամբ ու մեր Եկեղեցու հետ կապակցության շրջագծում ներկայացրեց այդ իրադարձությունները:

Այս շարքում, ըստ ժամանակային ընթացքի, առաջինը Նարեկի գրության 1000-ամյա հոբելյանն էր: Հայ մատենագրական ավանդույթի համաձայն, Նարեկի գրությունն ավարտվել է սկսվող հազարամյակի առաջին տարում՝ 1001 թ.: Եվ քանի որ 2001-ը նշանավորվեց 1700-ամյակի հանդիսություններով, ուստի հարմար նկատվեց Նարեկի 1000-ամյակը նշել 2003 թ.: Հայոց Հայրապետը հոգևոր խորհուրդ է գտնում այն իրողության մեջ, որ մինևույն՝ 2003 թվականին են նշվում Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման 1700 և Նարեկի գրության 1000-ամյակները:

Շեշտելով այն իրողությունը, որ Նարեկը նախ և առաջ հավատքով է գրվել որպես ի խորոց սրտի առ Աստված ուղղված խոսք, Վեհափառ Հայրապետը Նարեկի 1000-ամյակին նվիրված այս կոնդակի համար որպես բնաբան է ընտրել հետևյալ տողերը.

«Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝
Զհաւատոցն շինուած կացուցից» (բան ԺԲ):

Կոնդակի՝ Նարեկը բնորոշող տողերում ևս շեշտվում է այս հանգամանքը. «Հավատի տաճարն է վերակառուցում Նարեկա մեծ վարդապետը, աստվածատես տաճարը հոգու, որի խորանից անմար ճառագում է փրկության հույսի կանթեղը՝ լուսավորելով մեղքը մերժելու և դեպի Տերը ընթանալու ճանապարհը»:

Հայոց Դարձին հաջորդեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնումը, որի օծումը, համաձայն հայ մատենագրության վկայությունների վրա հիմնված տոմարագիտական հաշվարկների, կատարվեց 303 թ.՝ Ս. Աստվածածնի վերափոխման տոնին:

Մայր Տաճարի կառուցման 1700-ամյակին է նվիրված Վեհափառ Հայրապետի հաջորդ կոնդակը, որով 2003 թվականը հռչակվեց Ս. Էջմիածնի տարի: Բնչպես նշում է Նորին Սրբությունը, այս հոբելյանը վերստին մեր հայացքն ուղղում է դարերի խորքը՝ դեպ խորհրդավոր այն գիշերը, երբ Միածնի լուսեղեն էջքով գծագրվեց Վաղարշապատի կաթողիկեն՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, և այն կառուցվեց հաջորդող երկու տարիների ընթացքում: «Աստուած կնքեց մեր հողը, դրեց խարիսխ հաւատի ու կապեց կամար Սրբազան Ուխտի: Աստուծոյ Կամքին խոնարհեալ, Փրկչի Էջքի հաւատը շաղախ դարձրած՝ նորադարձ մեր սուրբ նախնիները հաստատեցին Աթոռն Ամենայն Հայոց Քահանայապետութեան եւ խնդալից փութով ու երկիւղածութեամբ 303 թ. կանգնեցրին առաջին շինուածքը Մայր Տաճարի: Կանգնեցրին գմբեթն Աստուածոտեսութեան՝ փրկարար ու պահապան խաչը վրան, որ վեր բարձրացաւ դեպի

Հայոց աշխարհին բացուած խորանաշատ դռները երկնքի» («Էջմիածին», 2003, Բ էջ 4):

Քրիստոնեական խորհրդաբանությամբ Հին Ուխտի Նոյյան տապանը Նոր Ուխտում դարձավ եկեղեցին, ուր հանգրվանողները արդեն փրկվում են աշխարհային ծովի մեղքերի ալիքներից, և տապանակիր Արարատի դիմաց վեր հառնող Ս. Էջմիածինը նույն այս համաբանությամբ մեր հայրերը համարել են մեր ժողովրդի Նոյյան տապանը:

Այս ըմբռնման հետևողությամբ, Գարեգին Բ Հայրապետը գրում է. «Նոյյան տապանի դիմաց հանգրվանեց հայ ժողովրդի փրկության տապանը՝ Հայաստանյայց Եկեղեցու Միածնաեջ Մայր Աթոռը»: Նորին Սրբությունը, կարևորելով Ս. Էջմիածնի հոգևոր խորհուրդն ու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, աշխարհասփյուռ հայության հոգևոր կենտրոնը անվանում է համայն հայությանը համախմբող լուսասփյուռ մի փարոս:

Հայոց Դարձից մեկ դար անց քրիստոնեության լույսով ծնվեց Հայոց Այբուրենը, և այս հանգամանքն է շեշտվում Գրերի Գյուտի 1600-ամյակին նվիրված կոնդակում: Քրիստոնեության ընդունումից հետո գրերի աստվածապարզն գյուտը համարելով երկրորդ օրհնությունը մեր ժողովրդին, Հայոց Հայրապետը այս կոնդակի համար բնաբան է ընտրել սաղմոսի «Յիշեաց մեզ Տեր եւ օրհնեաց զմեզ» (Սղմ. ՃԺԳ 12) տողը:

Ինչպես Գրերի Գյուտի 1600-ամյակի կոնդակն էր մեր առջև պատկերում Հայոց Դարձի խորախորհուրդ այն օրերը, երբ լուսեղեն տեսիլով գծագրվեց, ապա և վեր հառնեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, այնպես էլ այստեղ, Ս. Մեսրոպի վարքագիր Կորյունի հետևողությամբ, հոգևոր մեծ ներշնչմամբ ներկայացվում է Ս. Մեսրոպի վերադարձը Վաղարշապատ՝ նորագյուտ գրերով. «16 դար հեռուից մեր հոգու առջև պարզուրում է հայոց կեանքի այն երջանիկ օրը, երբ Մաշտոց Վարդապետը վերադառնում էր Վաղարշապատ՝ հայերենի նորագիտ Տառերը սեղմած սրտին՝ Հայաստանի համար, իր ազգի համար ցաւացող սրտին: Հեռաւոր ճամփորդութիւնից ուրախ էր վերադառնում. Աստուած ունկնդիր էր եղել նրա անդադրում աղօթքներին եւ օրհնել էր նրա տքնաջան աշխատանքը, օրհնել էր նրա առաքելութիւնը: «Այբ» եւ «Քէ» սկիզբն Արարիչ ու վերջը՝ Քրիստոս իմաստով ծնունդ էր առել 36 նշանագիր այբբենաշարը, որպէսզի հայ ժողովուրդը մայրենի լեզուով ընթերցի Աստուածաշունչը, «եւ բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկութիւնը», ճանաչելի լինեն իմաստութիւն եւ խրատ, իմանալի՝ հանճարների խօսքը» («Էջմիածին», 2005, Ա 15): Այնուհետև հոգևոր արժեւորման է ենթարկվում հայոց Ոսկեդարը և Թարգմանչաց շարժումը, որն էլ պայմանավորեց մեր հոգևոր-իմացական ընթացքը սկսյալ հինգերորդ դարից. «Մեր պատմութեան յետագայ բոլոր դարերն առաջնորդեց հայ մշակոյթի ոսկէ հունձքի սերունդը՝ Քրիստոսասէր ու հայրենապաշտ, ազնուահոգի, լուսաւորեալ ու մտաւորական այն սերունդը, որը փորձութեան ժամին չվարանեց կեանքով պաշտպանել հաւատն ու հայրենին: Հայրեր ու որդիներ, ովքեր անցողիկի մէջ յաւիտենականի ճանաչումով, մեր Տիրոջ սրբազնաստուրբ անունը իրենց շուրթերին, անցան ճանապարհը Աւարայրից Նուարսակ» («Էջմիածին», 2005, Ա 15-16):

Պատմական կոնդակների շարքում առանձնանում է Հայոց Մեծ Եղեռնի 90-ամյակի առիթով տրված կոնդակը: Այստեղ շեշտվում է այն միտքը, որ ինչպես Խաչե-

լությանը հաջորդեց Հրաշափառ Հարությունը, այնպես էլ Հայոց Գողգոթային՝ Մեծ Եղեռնին հաջորդեց հայության վերածնությունը՝ Հայաստանի անկախ Հանրապետության հռչակմամբ: Այդ առումով չափազանց խորախորհուրդ է կոնդակի համար ընտրված «Զի ինձ կեանք Քրիստոս է» բնաբանը (Փիլիպ. Ա 21):

Նույն այս ոգով կոնդակում ասվում է. «Քրիստոսի հետ հարության հույսով մահվան դեմ կյանքի հաղթության հավատով ապրեց ու ստեղծագործեց մեր ժողովուրդը»:

Ահա այսպես Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շարունակում է մեր երանաշնորհ Հայրապետների ավանդները՝ նաև քարոզխոսության և կոնդակագրության բնագավառում:

Նորին Սրբության՝ Ս. Ծննդյան և Ս. Հարության ամեն մի պատգամ մի հորդոր է, որ մեր հոգիներում վերստին ծնվի Քրիստոս և առ հարուցյալ Փրկիչը հավատը լուսավորի մեր կյանքի ընթացքը:

Հայոց Հայրապետը համանման ձևով մեր ազգային-հոգևոր նշանակալից իրադարձություններին նվիրված հոբելյանները առիթ է դարձնում վեր հանելու դրանց հոգևոր մնայուն խորհուրդը, այդ խորհրդի տեսանկյունից իմաստավորելու տվյալ հոբելյանը՝ մեր ժողովրդին պատգամելով հավատարիմ մնալ բազմադարյան այդ ավանդներին:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՅ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ԵՎ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՄԱՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԻՆ

1875-1876 թթ. թուրքական բռնապետության դեմ ապստամբություններ բռնկվեցին Բոսնիա-Հերցեգովինայում, Բուլղարիայում: Շուտով հակաթուրքական դաշինք կնքեցին Սերբիան ու Չեռնոգորիան: Բալկանյան քրիստոնյաների ապստամբությունը կրկին միջազգային դիվանագիտության սեղանին դրեց Արևելյան հարցը և «հիվանդ մարդու»՝ Օսմանյան կայսրության ճակատագիրը:

Կայսրությունը վերջնական փլուզումից փրկելու նպատակով Միդհատ և Հյուսնի Ավնի փաշաները պետական հեղաշրջում իրականացրին և տապալեցին սուլթան Ազիզին: Նրանց աջակցում էր անգլիական դեսպան Էլիոտը: 1876 թ. մայիսի 30-ին գահ բարձրացավ Մուրադ V-ը, որը մտավոր խանգարում ուներ: Օգոստոսի 31-ին Մուրադին ևս գահընկեց արեցին, և սուլթան հռչակվեց Աբդուլ Համիդ II-ը: Սակայն սուլթանի փոփոխությունը որևէ բարելավում չմտցրեց թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների ճակատագրում, քանի որ Աբդուլ Համիդը մտադիր չէր քրիստոնյաներին և մահմեդականներին հավասար իրավունքներ տալ:

1876 թ. դեկտեմբերին Կ. Պոլսում հրավիրվեց մեծ տերությունների դեսպանների կոնֆերանս: Դեսպանաժողովը սուլթանական կառավարությանն առաջարկեց բարելավել Բալկանյան ժողովուրդների վիճակը, սակայն թուրքերը մերժեցին: Դա առիթ դարձնելով՝ 1877 թ. ապրիլին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

Ռազմական գործողությունները ծավալվեցին Բալկաններում, Կովկասում և Սև ծովում: Պատերազմն արևմտահայության մեջ հույսեր արթնացրեց, որ կարող են վերջնականապես ազատվել թուրքական վայրագ տիրապետությունից:

Կովկասյան ճակատի ռուսական բանակը ղեկավարում էին նաև մի շարք հայ գեներալներ՝ Միքայել Լորիս-Մելիքովը, Գրիգոր Լորիս-Մելիքովը, Արշակ Տեր-Ղուկասովը, Հովհաննես Լազարևը, Բեհբույ Շելկովնիկովը, Հակոբ Ալխազովը, Ստեփան Քիշմիշը: Այդ փաստը ավելի էր ոգևորում հայերին, որի շնորհիվ ռուսական բանակին միացան մոտ 42.000 հայ կամավորներ¹:

Բոլոր ռազմաճակատներում ռուսները ջախջախեցին թուրքական բանակներին, մոտեցան մայրաքաղաք Կ.Պոլսին, գրավեցին Արևմտյան Հայաստանի զգալի մասը: 1878 թ. հունվարի 19-ին Ադրիանապոլսում ստորագրվեց զինադադարի պայմանագիր: Դրանով թուրքերը ռուսներին հանձնեցին Էրզրումը և պարտավորվեցին «Վարչական ինքնօրինություն տալ Կովկասի սահմանակից հայաբնակ գավառներ»:

¹ Ներսիսյան Ա., Հայերի մասնակցությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Երևան, 1958, էջ 93:

րուն»²:

Պատերազմում ռուսական բանակի հաղթանակից և Թուրքիայի պարտությունից հետո արևմտահայության առջև բացվեց ինքնավարություն ձեռք բերելու փայլուն հեռանկարը: Այս շրջանում մի շարք ռուսական թերթեր պահանջում էին հայերին ևս ինքնավարություն տալ³: Ռուս լրագրողներից մեկը նշում էր. «Մի՞թե հայերը պիտի չստանան քաղաքական իրաւունքներ, լոկ այն պատճառով, որովհետև նրանք տանջուել են, չարչարուել են, բայց համբերել են և չեն ապստամբուել»⁴: Թվում էր՝ եկել է դարեր շարունակ սպասված այն պահը, երբ արևմտահայությունը վերջապես ազատ շունչ կքաշեր՝ թոթափելով թուրք պաշտոնյաների, քուրդ բեկերի ու չերքեզների ճնշումներն ու հարստահարումները: Պետք է նշել, որ այդ շրջանում անկախության մասին որևէ խոսք չկար, և հայերի միակ ձգտումը ինքնավարություն ձեռք բերելն ու քաղաքացու համար տարրական իրավունքներ ապահովելն էր:

Կ. Պոլսի Պատրիարք Ներսես Վարժապետյանը հույս ուներ, որ եվրոպական երկրների աջակցությամբ Հայաստանին ինքնավարություն կտրվի: Այդ նպատակով նա դիմեց Կ. Պոլսի անգլիական դեսպան Հենրի Լեյարդին՝ սպառնալով, որ եթե եվրոպական տերությունները և հատկապես Անգլիան չօգնեն հայկական պահանջների բավարարմանը, ապա իրենք կդիմեն Ռուսաստանի աջակցությանը⁵:

Պատրիարքը միաժամանակ սկսեց շոշափել ռուս գործիչների կարծիքները հայկական հարցում: Ռուսական բանակի կողմից Ադրիանապոլսի գրավումից հետո Ներսես Պատրիարքի հանձնարարությամբ տեղի առաջնորդ Գևորգ վարդապետ Ռուսճուլյանը հանդիպում ունեցավ կոմս Նիկոլայ Իգնատևի հետ: «Կոմսը կը յայտարարէ թէ հայ ժողովուրդի մեծամասնութիւնը պիտի չկարենայ ազատութիւն գտնել, որովհետեւ Հայերը անպատրաստ գտնուեցան և Հայաստանի մէջ դարձած են մեռած տարր»⁶: Ն. Իգնատևը նաև կարծիք հայտնեց, որ գավառցիները անտարբեր և թշվառ վիճակի մեջ են, իսկ պոլսահայերը հակառուսական դիրքորոշում ունեն⁷:

Ինչպես տեսնում ենք, ռուս գործիչներն այնքան էլ հակված չէին հայերին ինքնավարություն տալու գաղափարին: Չնայած պատերազմի ժամանակ ռուսական բանակին էին միացել ավելի քան 40.000 հայեր, բայց Ն. Իգնատևը արևմտահայությանը համարում էր «մեռած տարր, անտարբեր կամ հակառուս»: Եվ դա այն դեպքում, երբ պոլսահայերը ոչ միայն մերժել էին կամավորներ տրամադրել, այլև զինվորագրվել թուրքական բանակին: 1877 թ. նոյեմբերի 27-ին սուլթանը հրովարտակ էր հրապարակել, որով թուրքական բանակ էին զորակոչվելու 17-45 տարեկան քրիստոնյաները, բայց Պոլսի Հայոց Ազգային Ժողովը մերժեց զինվորագրվելու առա-

² **Հարությունյան Գ.**, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2006, թիվ 2, էջ 31:

³ **Սարգսյան**, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 335-337:

⁴ Նույն տեղում, էջ 336:

⁵ **Գալոյան Գ.**, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878 թ. վեհաժողովին նախորդող շրջանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1996, թիվ 3, էջ 5:

⁶ **Գաբրիելյան Խ.**, Հայկական հարցը Արեւելեան հարցի մէջ (1860-1880), Պէրյուք, 1962, էջ 171:

⁷ Նույն տեղում:

ջարկը⁸:

1878 թ. փետրվարին գերինների փոխանակությամբ զբաղվելու պատրվակով Ադրիանապոլիս եկան Կ. Պոլսի Ազգային Ժողովի առաջին և երկրորդ ատենապետեր Ստեփան փաշա Ասլանյանը և Հովհաննես Նուրյանը: Նրանք գաղտնի հանդիպում ունեցան Ն. Իզնաստի հետ և ներկայացրին Պատրիարքի դիմումը, որպեսզի Ռուսաստանի աջակցությամբ հայերը ևս ինքնավարություն ստանան: Հայ պատվիրակները ցանկություն էին հայտնում ստանալ Լիբանանի կարգավիճակի նման ինքնավարություն: Մի քանի օրից Ն. Իզնաստը նրանց վստահեցրեց, որ կայսեր հավանությամբ հայերի խնդիրը ևս ներկայացվելու էր պայմանագրում⁹: Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, ռուսական ծրագրերն ու հայության ձգտումները բավականին հեռու էին իրարից:

Սան Ստեֆանոյի բանակցությունների նախօրյակին թուրք պատվիրակները հանդիպում ունեցան ռուսական Բալկանյան բանակի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչի հետ և խնդրեցին չքննարկել Հայկական հարցը: Սակայն իշխանը պատասխանեց, որ կայսրից հատուկ հրահանգ է ստացվել, և ինքը ոչինչ չի կարող անել¹⁰: Նիկոլայ Նիկոլանիչը ընդունեց նաև Պատրիարք Ներսես Վարժապետյանին, որը Սան Ստեֆանո էր մեկնել սուլթանի գիտությամբ: Պատրիարքը խնդրեց օժանդակել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու ծրագրին, բայց իշխանը չպաշտպանեց այդ գաղափարը¹¹: Պոլսի Ազգային Ժողովի մի խումբ պատգամավորներ Կաթողիկոսին ուղարկած ծրագրում առաջարկում էին Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալ Ռուսաստանի սահմաններում, իսկ ծայրահեղ դեպքում՝ բարենորոգումներ կատարել ռուսական գործերի ներկայության պայմաններում¹²:

Ռուսական կառավարությունը դեմ էր Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը, քանի որ այն հետագայում կարող էր արգելակել ռուսների կողմից այդ տարածքների նվաճման ծրագրին, միաժամանակ կարող էր վարակիչ ազդեցություն ունենալ արևելահայերի համար, որոնք նույնպես կձգտեին որոշակի ինքնավարության:

Պատրիարքը, Ս. Ասլանյանը և Հ. Նուրյանը ռուս գործիչների հետ բանակցությունների մեջ էին մտել սուլթանի գիտությամբ: Թուրքերը վախենում էին, որ ռուսական բանակի գրաված բոլոր տարածքները կմիացվեին Ռուսաստանին, այդ պատճառով էլ հայ գործիչներին ոչ միայն թույլատրել, այլև խորհուրդ էին տվել ինքնավարություն պահանջել Թուրքիայի սահմաններում: Դա թուրքական կողմի դիվանագիտական խաղն էր: Բնարկե, արևմտահայերը հասկանում էին թուրքերի նպատակը և փորձում էին օգտվել հարմար առիթից:

1878 թ. փետրվարի 13-ին Պոլսի Պատրիարքարանը 9 եպիսկոպոսների ստորագրությամբ խնդրագիր ուղարկեց Ալեքսանդր II կայսրին: Նրանք շնորհավորում էին ռուսական զենքի փայլուն հաղթանակը, մատնանշում էին, որ հայերը «խառնադանձ վայրենիներէ շրջապատեալ և Եւրոպայէն հեռի մի անկիւն նետուած, իրենց

⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 106:

⁹ Գաբիկեան Խ., նշվ. աշխ., էջ 172:

¹⁰ Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը ..., էջ 7:

¹¹ Նույն տեղում, էջ 8:

¹² ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 24, թ. 10:

տառապանքներն աւելի անգթաբար կը գործուին, քան թէ միւս քրիստոնէից, առանց իրենց աղաչանքներն լսելի լինելոյ» և խնդրում էին հովանավորել հայ ժողովրդին՝ ստանալու այնպիսի ինքնավարություն, ինչպիսին ձեռք էին բերում եվրոպական քրիստոնյաները¹³։ Սակայն ո՛չ թուրքական, ո՛չ ռուսական կողմը շահագրգռված չէին հայկական պահանջների բավարարման հարցում, և Սան Ստեֆանոյի պայմանագրում Հայաստանի ինքնավարության մասին նույնիսկ խոսք չկար...

1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3) Սան Ստեֆանոյում, հայազգի Տատյան բեյերի ապարանքում, ստորագրվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիր¹⁴։ Բանակցություններում ռուսական կողմը ներկայացնում էին Պոլսի նախկին դեսպան կոմս Նիկոլայ Իգնատևը և Ալեքսանդր Նելիդովը, իսկ թուրքական կողմը՝ արտգործնախարար Սաֆվետ փաշան, Բեռլինի դեսպան Սաադուլլա բեյը, քարտուղարն էր Սարգիս բեյ Համանյանը։

Սան Ստեֆանոյի պայմանագրով անկախացան և տարածքներն ընդարձակեցին Չեռնոգորիան, Սերբիան, Ռումինիան, ինքնավարություն ստացավ Բուլղարիան։ Արևմտյան Հայաստանի մեծ մասը մնալու էր թուրքական տիրապետության տակ։ Պայմանագրի 16-րդ հոդվածը նախատեսում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բ. Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ ու բարենորոգություններ, և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»¹⁵։ Ինչպես տեսնում ենք, 16-րդ հոդվածով նախատեսվող անորոշ բարենորոգումները չափազանց հեռու էին հայերի սպասած ինքնավարությունից։

Պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին էին միացվելու որոշ հայկական տարածքներ՝ Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և Ալաշկերտի հովիտը¹⁶։ 25-րդ հոդվածի համաձայն, ռուսական զորքերն Արևմտյան Հայաստանից դուրս էին գալու վեց ամսվա ընթացքում¹⁷։ Իսկ 17-րդ և 27-րդ հոդվածներով թուրքական կառավարությունը ներում էր շնորհում պատերազմի ժամանակ ռուսների հետ համագործակցած անձանց և պարտավորվում էր ցանկացողներին չարգելակել մեկնելու ռուսական տարածքներ¹⁸։

Ռուսական պատվիրակության ղեկավար գեներալ Ն. Իգնատևը Ռուսաստանի վարչապետ և արտգործնախարար Ա. Գորչակովին գրում էր. «16-րդ յոդուածով լիակատար բաւարարութիւն տրուած է Հայ ժողովուրդին։ Առաջին անգամ ըլլալով Հայաստան անունը կը յիշուի միջազգային դաշինքի մէջ, և այն յանձնառութիւնները, որ Բ. Դուռը ստանձնած է, իրաւունք կու տան մեզի մեր խնամատարութիւնը տարածելու Փոքր Ասիոյ քրիստոնէաներուն մեծամասնութեան վրայ։ Յօդուածը

¹³ Գաբիկեան Խ., նշվ. աշխ., էջ 326-328։

¹⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 83-98։

¹⁵ Նույն տեղում, էջ 92։

¹⁶ Նույն տեղում, էջ 93-94։

¹⁷ Նույն տեղում, էջ 96։

¹⁸ Նույն տեղում, էջ 92, 97։

ցոյց կու տայ որ Ռուսիա, առաջնորդւած մարդասիրութենէ, նպատակ ունի ապահովել բարեկեցութիւնը Թուրքիոյ քրիստոնէայ բնակչութեան: Թուրք լիազօրները յամառօրէն ընդդիմացան դաշինքի մէջ յիշատակել Էջմիածնի Կաթողիկոսի անունը՝ իբրեւ կրօնապետ Ամենայն Հայոց, մենք զգուշացանք չպնդել այդ մասին: Միջազգային մեծ կշիռ տալով Կաթողիկոսին՝ վարչական որոշ դժուարութիւն կրնայինք ստեղծել Կովկասի մէջ, որոշ ձգտումներ հրահրել Հայոց մէջ, մեր շահերուն անյարիր»¹⁹: Այսպիսով, ռուս դիվանագետները Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը նույնիսկ շատ էին համարում հայերի համար, և, նրանց կարծիքով, մեր ժողովուրդը պետք է գոհ լինէր, որ «առաջին անգամ ըլլալով Հայաստան անունը կը յիշուի միջազգային դաշինքի մէջ»:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը սառը ցնցուղ հանդիսացավ հայ գործիչների համար, սակայն չկարողացավ բավարար չափով սթափեցնել նրանց և հեռու պահել անիրատեսական ծրագրերից, որոնք հենվում էին այս կամ այն մեծ տերութեան բարի կամքի ու մարդասիրական զգացմունքների վրա: Աշխարհի հզորները ցանկություն ու ժամանակ չունեին զբաղվելու ամենավայրի հարստահարությունների ենթարկվող մի քրիստոնյա ժողովրդի փրկությամբ, որը դեռ պատրաստ չէր իր ազատության համար արյուն թափել:

Մեծ տերությունների ճնշման ներքո որոշվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայել Բեռլինում հրավիրված միջազգային վեհաժողովում: Դա նոր հույսեր արթնացրեց արևմտահայերի մէջ: Դեռ Սան Ստեֆանոյի պայմանագրի թանաքը չէր հասցրել չորանալ, երբ 1878 թ. մարտի 15-ին արևմտահայ գործիչները կայսր Ալեքսանդր II-ին ներկայացրին Հայաստանի ինքնավարության նոր նախագիծ.

1. Հայաստանում նշանակվելու էր հայ լուսավորչական ընդհանուր կառավարիչ, որը կոչվելու էր մարզպան և վալի, ունենալու էր մյուդիրի աստիճան: Նրան նշանակելու էր սուլթանը՝ Ռուսաստանի կայսեր հավանությամբ: 2. Հայաստանի կուսակալներն ու գավառապետները լինելու էին Հայոց Եկեղեցու հետևորդներ, ընտրվելու էին Հայաստանի Երեսփոխանական ժողովի և հաստատվելու Բ. Դռան կողմից: 3. Հայերն էին վերահսկելու երկրում կարգի պահպանմանը, և ոստիկանությունը կազմվելու էր հայերից: 4. Դատարանները գործելու էին քրիստոնյաների օրենքներով՝ հայ դատավորների նախագահությամբ: Լադիները և այլ կրոնական պաշտոնյաները մասնակցություն չէին ունենալու դատարանների աշխատանքին: 5. Վերացվելու էին քրդերի, չորբաջիների, դերբեյների արտոնությունները: 6. Հարկերի նոր և արդար բաշխում էր կատարվելու: 7. Վակֆի (մահմեդական հոգևորական կալվածքներ) բարեկարգում, կալվածական ու հողային հարցերի վերանայում: 8. Թուրքերի և Հայաստանի մնացած բնակչության զինաթափություն: 9. Պատրաստվելու էին երկրի կառավարման հատուկ կանոնագրեր, որոնք վավերացնելու էր սուլթանը՝ Ռուսաստանի հավանությամբ: 10. Զեյթունի դարավոր ինքնավարության երաշխավորություն²⁰:

Այդ ծրագիրը Պետերբուրգ տարավ Պեշկեթաշի արքեպիսկոպոս Խորեն Նարբեյը: Նա վայելում էր Պատրիարքի վստահությունը, տիրապետում էր մի շարք լեզուների, այդ թվում՝ ռուսերենին, ուներ ռուսամետ գործչի համբավ: Նարբեյը ռուսա-

¹⁹ Գաբիկեան Խ., նշվ. աշխ., էջ 330:

²⁰ Սարուխան, նշվ. աշխ., էջ 328-329: Նաև՝ Լեօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 61-62:

կան արքունիքին առաջարկեց Արևմտյան Հայաստանի նահանգապետ նշանակել գեներալ Մ. Լորիս-Մելիքովին: Նարբեյին մարտի 14-ին ընդունեց Ռուսաստանի վարչապետ և արտգործնախարար Ա. Գորչակովը, իսկ մարտի 18-ին՝ կայսրը: Ալեքսանդր II-ը բավարարվեց միայն բարեմաղթանքներ հղելով հայ ժողովրդին և հայկական ծրագիրը Բեռլինում պաշտպանելու խոստումներ չտվեց²¹:

Ինքնավարության մեկ այլ ծրագիր կազմվեց Եվրոպա ուղարկելու համար, որի հեղինակն էր պոլսահայ նշանավոր պետական գործիչ, օսմանյան սահմանադրության համահեղինակներից Գրիգոր Օտյանը: Այն կոչվում էր «Ծրագիր Կազմակերպական կանոնադրության Թրքական Հայաստանի համար»²²: Ըստ դրա, ինքնավար Հայաստանի մեջ էին մտնելու Վանի և Էրզրումի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը (Խարբերդի սանջակի արևելյան մասը, Արևանայի սանջակը, Սղերդի սանջակի հյուսիսային մասը), ինչպես նաև Ռիզե նավահանգիստը Սև ծովի ափին: Այն ունենալու էր հայ կառավարիչ, որը նշանակվելու էր սուլթանի կողմից, հինգ տարով և մեծ պետությունների հավանությամբ: Ընդհանուր կառավարչի նստավայրը լինելու էր Էրզրումը, նրա ձեռքում էր կենտրոնացվելու ամբողջ գործադիր իշխանությունը: Ոստիկանները լինելու էին տեղական բնակչության համամասնության համեմատ՝ հայ կամ նստակյաց մահմեդական: Տասանորդը փոխարինվելու էր հողային տուրքով, որի մի մասը հատկացվելու էր տվյալ շրջանի կարիքները հոգալուն (դպրոց, հիվանդանոց ևն): Դատական ու վարչական գործերում հավասարություն մահմեդականների ու քրիստոնյաների միջև: Շարիաթի դատարանները գործելու էին միայն մահմեդականների համար, իսկ քրիստոնյաների համար նոր օրենսգրքեր էին պատրաստելու: Վաչկատուն ցեղերից բնակչությանը պաշտպանելու համար տեղի մահմեդական ու քրիստոնյա ոստիկաններից կազմվելու էր 4.000-անոց ժանդարմերիա, որի ղեկավարը ենթարկվելու էր ընդհանուր կառավարչին: Հարկերի միայն 20%-ն էր գնալու օսմանյան գանձարան, իսկ 80%-ը օգտագործվելու էր տեղական կարիքների համար:

1878 թ. մարտի 18-ին Պոլսի Պատրիարքը հանդիպեց անգլիական դեսպան Հ. Լեյարդի հետ, սակայն չկարողացավ համոզել, որ Անգլիան պաշտպանի Հայաստանի ինքնավարության ծրագիրը: Ընդհակառակը, Հ. Լեյարդը իր կառավարությանն ուղարկած զեկուցագրում նշում էր, որ Անգլիայի շահերից չի բխում ինքնավարություն տալ Հայաստանին և հայկական պահանջները համարում էր Ռուսաստանի նախաձեռնության արդյունք²³: Պետք է նշել, որ այս վճռորոշ շրջանում Հ. Լեյարդի ընդգծված հակահայկական դիրքորոշումը բավական թանկ նստեց արևմտահայերի վրա: Սակայն, Անգլիայի քաղաքականությունը հաշվի չառնելով, պոլսահայերը մեծ հույսեր էին կապում նրա հետ:

Չնայած երկու գերտերությունների՝ Անգլիայի ու Ռուսաստանի բացասական տրամադրվածությանը, Պոլսի Պատրիարքարանը որոշեց Հայաստանի ինքնավարության հարցը բարձրացնել Բեռլինի վեհաժողովում:

Բեռլինում Հայկական հարցը ներկայացնելու համար կազմավորվեց Ազգային պատվիրակություն: Այն գլխավորելու էր Տարոնի արքեպիսկոպոս և Պոլսի նախկին

²¹ Մարտիան, նշվ. աշխ., էջ 329-332:

²² «Անահիտ», Փարիզ, 1907, թիւ 6-9, էջ 145-146:

²³ Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը ..., էջ 16:

Պատրիարք Մկրտիչ Խրիմյանը: Նա չէր տիրապետում որևէ եվրոպական լեզվի, չէր փայլում դիվանագիտական տաղանդով, սակայն որպես հայրենասեր ու ազնիվ գործիչ չափազանց մեծ հեղինակություն ուներ արևմտահայերի մեջ: Պատվիրակությանը պետք է Բեռլինում միանար Խորեն Նարբեյը, որը դիվանագիտական հանձնարարությամբ մեկնեց Պետերբուրգ: Պատվիրակության կազմում էին Ստեփան Փափազյանը և Մինաս Չերազը: Վերջինս պատվիրակության թարգմանիչն ու քարտուղարն էր: Մկրտիչ Խրիմյանը հույս ուներ աջակցություն ստանալ Անգլիայից, Խ. Նարբեյը՝ Ռուսաստանից:

Ներսես Պատրիարքը մարտի սկզբին Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանին ուղարկեց Էջմիածին՝ Գևորգ Դ Կաթողիկոսի մոտ, որպեսզի Վեհափառն իր հերթին ցարից խնդրի օգնել արևմտահայերին: Կաթողիկոսը, սակայն, կողմնակից չէր Պատրիարքարանի գործողություններին: Համաձայն չլինելով սուլթանի «ավելի լավ» լինելու Կաթողիկոսի մատնանշման հետ՝ պետք է արձանագրել, որ վերջինս լավ գիտեր ռուսական արքունիքի մոտեցումը Հայկական հարցում, այդ պատճառով էլ չդիմեց Ռուսաստանի կայսրին: Ապրիլի 12-ին Կաթողիկոսին դիմեց նաև ճանաչված հասարակական գործիչ Սերվիլենը (Սերովբե Վիչենյան), բայց նա ևս չկարողացավ փոխել Գևորգ Դ-ի դիրքորոշումը²⁴:

1878 թ. մարտի 20-ին Մկրտիչ Խրիմյանի պատվիրակությունը մեկնեց Եվրոպա: Մարտի 26-ին Հռոմում նրանց ընդունեց Իտալիայի արտգործնախարար կոմս Լ. Կորսին, որը խոստացավ Բեռլինի կոնֆերանսում պաշտպանել հայկական խնդիրը²⁵: Ապրիլի 6-ին Փարիզում հայ պատվիրակները հանդիպեցին տեղի գերմանական դեսպան իշխան Խ. Հոհենլոխեին: Վերջինս կասկած հայտնեց, որ հայերը կկարողանան զսպել Հայաստանի մահմեդական հրոսակներին, սակայն Մ. Խրիմյանը հավաստեց, որ կսանձահարեն, եթե իրենց զենք տրվի: Ապրիլի 5-ին Ֆրանսիայի արտգործնախարար, ճանաչված արևելագետ ու հնագետ Վ. Վադինգտոնը Մկրտիչ Խրիմյանի հետ հանդիպման ընթացքում հավաստիացրեց, որ կպաշտպանի հայերի շահերը, բայց պետք է ավելի իրատեսական ծրագիր ներկայացվի: Փարիզի անգլիական դեսպան լորդ Լայդնսը ևս նշեց, որ հայերը պետք է ավելի չափավոր պահանջներ ներկայացնեն: Մայիսի 10-ին Լոնդոնում Մկրտիչ Խրիմյանին ընդունեց Անգլիայի արտգործնախարար Ռ. Սոլսբերին, որը նույնպես Հայաստանի ինքնավարության հարցին հոռետեսորեն մոտեցավ և որևէ խոստում չտվեց: Լոնդոնի թուրքական դեսպան Մյուզյուրուս փաշան Մկրտիչ Խրիմյանին խորհուրդ տվեց հույս չդնել եվրոպական պետությունների վրա, քանի որ նրանք ուժ չունեն Գոքր Ասիայի մեջ²⁶: Բեռլինի վեհաժողովում ռուսական պատվիրակության ղեկավար, վարչապետ Ա. Գորչակովը նույնպես նշեց, որ ինքը չի կարող պաշտպանել հայերի ինքնավարության պահանջը²⁷:

Փաստորեն, հայկական պատվիրակությունը որևէ գործնական հաջողություն չարձանագրեց, քանի որ եվրոպական պետությունները շահագրգռված չէին Հայաստանի ինքնավարության հարցում: Չնայած որոշ եվրոպացի պետական գործիչներ համակրանքով արտահայտվեցին հայերի մասին, սակայն նրանք ևս նշեցին, որ

²⁴ Սարուխան, նշվ. աշխ., էջ 325-327:

²⁵ Մինաս Չերազ, Հայաստան և Իտալիա, Կ. Պոլիս, 1879, էջ 41:

²⁶ Գաբրիելյան Խ., նշվ. աշխ., էջ 197-202:

²⁷ Uras Esat, The Armenians in History and The Armenian Question, Istanbul, 1988, p. 482.

Պատրիարքարանի կազմած ինքնավարության ծրագիրն անիրագործելի էր տվյալ պահին, և խորհուրդ տվեցին չափավորել պահանջները: Նման պայմաններում բնական կլիներ, եթե հայկական պատվիրակությունը վերանայեր իր ծրագիրը և ավելի համեստ, բայց եվրոպական տերությունների համար ավելի ընդունելի պահանջներ ներկայացներ:

1878 թ. մարտի 31-ին Փարիզում Հայկական պատվիրակության ղեկավար Մկրտիչ Խրիմյանը հանդիպեց եգիպտահայ նշանավոր պետական գործիչ Նուբար փաշային: 1877 թ. Բուլղարական հարցի քննարկման ժամանակ Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը տերություններին առաջարկել էր Բուլղարիայի կառավարիչ նշանակել Նուբար փաշային, որը դրական արձագանք էր ունեցել, սակայն չիրականացավ ռուս-թուրքական պատերազմի սկսվելու հետևանքով²⁸: Այդ փաստը վկայում էր Նուբար փաշայի միջազգային բարձր վարկանիշի մասին: Վերջինս առաջարկեց իր միջնորդությունը և Հայկական հարցի լուծման սեփական տարբերակը: Նա քաջաձանոթ էր եվրոպական քաղաքականությանը և առաջարկում էր կոնֆերանսին չներկայանալ լայն ինքնավարության պահանջով, քանի որ տերությունները դա կմերժեին:

Նուբարը կազմեց հայկական պահանջների նոր ծրագիր²⁹: Այն կազմված էր բավականին գրագետ, հիմնված էր օսմանյան օրենքների, սուլթանների հայտարարությունների և միջազգային իրավունքի նորմերի վրա: 1. Հայկական նահանգների համար սուլթանը, մեծ տերությունների հավանությամբ, 6-7 տարով նշանակելու էր հայագլի ընդհանուր կառավարիչ: 2. Երկրամասի անդորրությունը ապահովելու և քրդական ավազակախմբերին սանձահարելու համար հայերից ու մահմեդականներից կազմվելու էր ոստիկանություն, որի հրամանատարներին նշանակելու էր ընդհանուր կառավարիչը: Օսմանյան բանակի գործառնները նույնպես դրվելու էին կառավարչի տրամադրության տակ, եթե ներքին կարգը պահելու խնդիր լիներ: 3. Արդարադատության համակարգը և դատարանները բարելավվելու էին: 4. Նահանգի ընդհանուր ժողովն էր որոշելու գանձվող հարկերի չափը:

Իր ծրագրում Նուբարը փորձում էր սիրաշահել թե՛ թուրքերին, թե՛ Անգլիային ու Ռուսաստանին, քանի որ նշված կողմերից որևէ մեկի լուրջ ընդդիմությունը կհանգեցներ Հայկական հարցի տապալմանը: Ա. Չոպանյանը այդ ծրագիրը բնորոշում է որպես «ճարպկութեան ու գործնականութեան գլուխ գործոց»³⁰: Իսկ Սարուխանը գրում է. «Նուպար փաշայի յիշատակագիրն իր պարզ և համոզիչ լեզուովն ապացուցումն էր միայն Հայաստանում բարենորոգումների անհրաժեշտությունն և մատնանիշ էր անում բարեկարգութիւնների այն minimum-ն, որ անխուսափելիօրէն կարևոր էր, երկրի մէջ խաղաղութիւն և հայոց վիճակի մէջ բարեփոխում մուծանելու համար»³¹:

Ինչպես տեսնում ենք, Պատրիարքարանի ծրագրի համեմատությամբ Նուբարի ծրագիրը բավականին համեստ էր: Այն նպատակ ուներ հավասար պայմաններ ստեղծել հայերի և մահմեդականների համար, բարելավել Արևմտյան Հայաստանի

²⁸ **Զարդարեան Վ.**, Նուպարեան գերդաստան, «Նոր Հայաստան» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1919, թիւ 6, էջ 90-91:

²⁹ «Անահիտ», 1907, թիւ 6-9, էջ 146-149:

³⁰ Նույն տեղում, էջ 152:

³¹ **Սարուխան**, նշվ. աշխ., էջ 447:

արդարադատության համակարգը, զարգացնել տնտեսությունը: Այդ դեպքում, Նուբարի կարծիքով, հայերը կարճ ժամանակում զարգացման տեմպերով առաջ կանցնեին մահմեդականներից և կհասնեին ինքնավարության, ինչպես նաև իրական հնարավորություններ կստեղծվեին Հայաստանի անկախության վերականգնման համար: Իր ծրագիրն առաջ քաշելիս Նուբարը հենվում էր եգիպտական փորձի վրա, երբ այդ երկրի արդարադատության համակարգում նրա իրականացրած բարեփոխումների շնորհիվ Եգիպտոսը բռնեց զարգացման ավելի արդյունավետ ուղի:

Այդ ծրագրին հավանություն տվեցին նաև երկու նշանավոր հայազգի պետական գործիչներ՝ գեներալ Մ. Լորիս-Մելիքովը և Լոնդոնում Իրանի դեսպան ու Բեռլինի կոնֆերանսում իրանական պատվիրակության ղեկավար Մելքոն խանը: Փարիզի անգլիական դեսպան լորդ Լայընսը այն հավանել ու ասել էր. «Ահա արեւելեան խնդրին բանալին», և անմիջապես իր կառավարությանն էր ներկայացրել, իսկ Փարիզում Գերմանիայի դեսպան կոմս Հոհենլոհեն, ծանոթանալով դրան, «սքանչացում հայտնած է»³²:

Մկրտիչ Խրիմյանը կողմ արտահայտվեց Նուբարի ծրագրին, սակայն Ներսես Վարժապետյանը կտրականապես մերժեց այն և պահանջեց հասնել Պատրիարքարանի ծրագրի ընդունմանը:

1878 թ. մայիսի վերջին հայ պատվիրակները հավաքվեցին Բեռլինում՝ հուսալով, որ վեհաժողովում քննարկվելու է Հայկական հարցը և հնարավոր է, որ Հայաստանին ինքնավարություն տրվի: Սակայն պատվիրակների միջև համաձայնություն չկար, թե ինչպիսի ինքնավարություն են պահանջելու: Ճիշտ է, նրանք պարտավոր էին ներկայացնել Պատրիարքարանի կազմած նախագիծը, բայց թե՛ Մկրտիչ Խրիմյանը, թե՛ Խ. Նարբեյը համոզված էին, որ այն կտապալվի:

Խ. Նարբեյը գտնում էր, որ պետք է բոլոր գործողությունները համաձայնեցնել Ռուսաստանի հետ, նպաստել, որ Արևմտյան Հայաստանում ուժեղանա Ռուսաստանի դիրքերը կամ այն մնա ռուսական գրավման տակ, իսկ այնտեղի ընդհանուր կառավարիչ նշանակվի տաղանդավոր ռազմական ու պետական գործիչ Մ. Լորիս-Մելիքովը: Խ. Նարբեյի կարծիքով, հայերը պետք է փորձեին ինքնավարություն ձեռք բերել Կիլիկիայում³³: Նա վստահ էր, որ ռուսները թույլ չեն տա Արևմտյան Հայաստանում ինքնավարություն ստեղծել, որպեսզի իրենց հետագա նվաճողական ծրագրերի իրականացմանը չխոչընդոտեր հայկական պատնեշը: Այդ ծրագրին հետևելու խորհուրդը տվել էր գեներալ Մ. Լորիս-Մելիքովը³⁴: Սակայն պատվիրակության մյուս անդամներն ու պոլսահայ գործիչները կտրականապես դեմ էին Արևմտյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ թողնելու և Կիլիկիայում ինքնավարություն պահանջելու գաղափարին:

Հարցին ավելի իրատեսորեն էր մոտենում Մկրտիչ Խրիմյանը: Նա համոզված էր, որ պետք է ներկայացնեին Նուբար փաշայի նախագիծը, իսկ վերջինիս հրավիրեին Բեռլին, որպեսզի անձամբ վեհաժողովին ներկայացնեի իր ծրագիրը: Մկրտիչ Խրիմյանը վստահ էր, որ Նուբարն ի վիճակի է հաջողությամբ պաշտպանել Հայկական հարցը, քանի որ ավելի կարող ու մեծ հնարավորություններ ունեցող անձ էր,

³² Ալաջոյաճեան Ա., Նուպար հայր եւ Հայկական խնդիրը, «Նոր Հայաստան» շաբաթաթերթ, Պոլիս, 1918, թիւ 3, էջ 36:

³³ «Անահիտ», 1907, թիւ 6-9, էջ 151:

³⁴ Նույն տեղում, թիւ 10-12, էջ 162:

քան պատվիրակությունն ու բոլոր պոլսահայ գործիչները: Դա էր պատճառը, որ Մ. Խրիմյանը բազմիցս փորձեց համոզել Պատրիարքին, որպեսզի թույլ տա Նուբար փաշային հրավիրել Բեռլին: Միաժամանակ Մկրտիչ Խրիմյանը ինքնավար Հայաստանի կառավարչի ամենաարժանի թեկնածու էր համարում Նուբարին, որը վարչական աշխատանքի մեծ փորձ էր ձեռք բերել Եգիպտոսում³⁵: Նուբարին Բեռլին հրավիրելու հարցում մեծ շահագրգռվածություն էր ցույց տալիս նաև Մելքոն խանը: Նա Բեռլինի կոնֆերանսի անմիջական մասնակիցներից էր և վստահ էր, որ հայանպաստ որոշումներ ընդունել տալու համար անհրաժեշտ է Նուբար փաշայի նման հմուտ դիվանագետի ներկայությունը:

Ա. Չոպանյանը, Նուբար փաշայի հետ համեմատելով պոլսահայ նշանավոր գործիչներին (Գ. Օտյան, Հ. Նուրյան, Ս. Ասլանյան, Սերվիչեն), գրում է. «Ատոնց մեջ ոչ մեկն ուներ Նուբարին յստակ, հեռատես, սուր միտքը, գործնական ոգին, մաթեմաթիքական հաշուազիտությունը, ծրագրի մը ի գործ դնելու համար ունեցած ճարպկութեան, անձնական հրապոյրի ու արդէն իսկ «երոպական մեծահռչակ անուն վայելող ազդեցիկ անձնատրութեան» առաւելութիւնները»³⁶:

Սակայն Պատրիարքը ոչ միայն մերժեց Նուբարի ծրագրին, այլև արգելեց նրան հրավիրել Բեռլին և պատվիրեց «մոռնալ Նուբարի անունն անգամ»³⁷: Մկրտիչ Խրիմյանը, չնայած համաձայն չէր Պատրիարքարանի հետ և բազմիցս անհաջող փորձեր արեց համոզելու, որ հաջողության հասնելու միակ հնարավորությունը Նուբարին Բեռլին հրավիրելն է, ի վերջո, ստիպված էր համակերպվել Պոլսի հրահանգներին:

Նուբար փաշան, տեսնելով, որ իրեն Բեռլին չեն հրավիրում, հունիսի 15/28-ին իր նախագիծն ուղարկեց վեհաժողովի անդամներին³⁸: Նուբարը այն հրատարակեց նաև Լոնդոնի «Նայթին սենչըրի» պարբերականում: Անգլիայի վարչապետ Բիքոնսֆիլդը, ծանոթանալով Նուբարի ծրագրին, նրան Բեռլինի վեհաժողովից հետո հրավիրեց Լոնդոն՝ քննարկելու Հայկական հարցը³⁹: Սակայն Բեռլինի պայմանագրի ստորագրումից հետո Նուբարի ծրագրի քննարկումը որևէ էական արդյունք չէր կարող ունենալ:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ Բեռլինում: Վեհաժողովին ամենահիմնավոր ձևով պատրաստվել էր Անգլիան: Մայիսի 30-ին Լոնդոնում վերջինիս և Ռուսաստանի միջև գաղտնի համաձայնագիր ստորագրվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման պայմանների մասին: Հունիսի 4-ին Կ. Պոլսում Անգլիան պաշտպանական պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ, որով պարտավորվեց զենքի ուժով պաշտպանել թուրքական սահմանները, իսկ դրա փոխարեն սուլթանը Անգլիային զիջեց Կիպրոսը⁴⁰: Հունիսի 6-ին Անգլիան և Ավստրո-Հունգարիան համաձայնության եկան Բեռլինի վեհաժողովում ընդհանուր քաղաքական գիծ վարելու մասին, որի արդյունքում վերջինս զավթեց Բոսնիա-Հերցեգովինան⁴¹: Այդ ամենի հետևանքով

³⁵ Նույն տեղում, թիւ 6-9, էջ 153:

³⁶ **Չոպանեան Ա.**, Ստեփան Փափագեանի յուշատետրը, «Անահիտ», 1907, թիւ 6-9, էջ 154:

³⁷ «Անահիտ», 1907, թիւ 10-12, էջ 163:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում, էջ 165:

⁴⁰ **Լեօ**, Հայոց հարցի վաւերագրերը, էջ 103-105:

⁴¹ **Գալոյան Գ.**, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում,

վեհաժողովում վճռական խոսքը պատկանում էր Անգլիային:

1878 թ. հունիսի 13-ին բացվեց Բեռլինի վեհաժողովը: Հունիսի 25-ին հայ պատվիրակները վեհաժողովի անդամներին ներկայացրին հայկական պահանջների հուշագիրը, սակայն այն չքննարկվեց, իսկ հայ պատվիրակներին այդպես էլ թույլ չտվեցին մտնել նիստերի դահլիճ: Վերջիններս տեղյակ չէին՝ ինչ էր կատարվում վեհաժողովում: Բեռլինում թուրքական դեսպանատան և պատվիրակության կազմում աշխատող հայերը (թուրքական պատվիրակության ծածկագրերի գծով քարտուղար Խաչիկ Օսյանը, պաշտոնական գրագրությունների գծով քարտուղար Կարապետ Գարագաշը, Բեռլինի դեսպանատան քարտուղար Հովհաննես Պաղտատյանը ևն) ոչ մի օգնություն ու տեղեկություն չտրամադրեցին Մկրտիչ Խրիմյանի պատվիրակությանը⁴²:

Հուլիսի 4-ին և 5-ին վեհաժողովն անդրադարձավ նաև Հայկական հարցին, և որոշվեց փոփոխության ենթարկել Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը: Հուլիսի 8-ին Ռ. Սոլսբերին վեհաժողովի մասնակիցներին ներկայացրեց հայկական բարենորոգումների վերաբերյալ բանաձևի տեքստը, որն ընկավ 61-րդ հոդվածի հիմքում: Այն նախապես համաձայնեցվել էր թուրքական պատվիրակների հետ⁴³:

1878 թ. հուլիսի 13-ին ստորագրվեց Բեռլինի պայմանագիրը⁴⁴: 58-րդ հոդվածով Ռուսաստանին անցան Կարսը, Արդահանը, Բաթումը, իսկ 60-րդ հոդվածով Ալաշկերտի հովիտը և Բայազետը վերադարձվեցին Թուրքիային: Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցավ 61-րդ հոդվածը, որը փոխարինել էր Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին: «Բ. Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Բ. Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցառումների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»⁴⁵:

Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն խոսք չկար «Հայաստան» երկրի մասին, այլ միայն հիշատակվում է «հայաբնակ մարզեր» հասկացությունը, որտեղ կատարվելիք անորոշ բարենորոգումների կատարման վերահսկողությունը դրվում էր եվրոպական մեծ տերությունների վրա, որոնք տարբեր շահեր ու նկատառումներ ունեին այս հարցում: Ի սկզբանե պարզ էր, որ 61-րդ հոդվածը ստեղծված էր քողարկելու հայ ժողովրդի արդարացի պահանջների մերժումը: Այսպիսով, հայերը ստիպված էին հրաժարվել ոչ միայն ինքնավարության գաղափարից, այլ նաև համակերպվել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անորոշ ու կասկածելի հեռանկարով:

Հուլիսի 13-ին, տեղեկանալով աննպաստ պայմանագրի մասին և համոզվելով, որ հայկական բաղձանքներն ու հույսերը տապալվել են, հայ պատվիրակները բողոքի հուշագիր ներկայացրին Բեռլինի վեհաժողովի որոշումների դեմ. «Մէկ քանի

«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1997, թիվ 1, էջ 10:

⁴² Նույն տեղում, էջ 12:

⁴³ Լեօ, նշվ. աշխ., էջ 106-109:

⁴⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 105-130:

⁴⁵ Նույն տեղում, էջ 128:

միլիոնե աւելի բաղկացած ազգ մը որ մինչեւ հիմա ոչ մէկ օտար քաղաքականութեան գործիք եղած չէ, որ չնայած աւելի հարստահարւած ըլլալուն Թուրքիոյ միւս քրիստոնէաներէն, ոչ մէկ նեղութիւն պատճառած է թուրք կառավարութեան և որ թէեւ եւրոպական մեծ պետութեան մը դաւանակից և ցեղակից չէ, ինչպէս Թուրքիոյ միւս քրիստոնէայ ժողովուրդները, այս մեր դարուն կարող է յուսալ թէ միեւնոյն պաշտպանութիւնը կը գտնէ ինչ որ միւսները: Մենք կարծեցինք թէ այսպիսի ժողովուրդ մը իրաւունք կը ստանայ հայկական հողի վրայ հայ պաշտօնեաներով կառավարուելու: Հայերը հասկցան թէ խաբուեր են, որովհետեւ խաղաղասէր են եղած և թէ իրենց նախնի Եկեղեցիի անկախութիւնը և ազգութիւնը պահելով ոչինչ չեն ձեռք բերած: Հայ ժողովուրդը երբեք պիտի չդադրի աղաղակելու մինչև որ Եւրոպա արդար գոհացում տայ իր պահանջներուն»⁴⁶:

Այստեղ, ինչպէս տեսնում ենք, արդեն երևում է Խրիմյանի «երկաթե շերտի» գաղափարը: Սակայն պետք է խոստովանել, որ հայ գործիչները անհրաժեշտ դասեր չքաղեցին Բեռլինի վեհաժողովից և հետագայում ևս շարունակեցին հույսեր կապել այս կամ այն տերութեան բարի կամքի դրսևորման հետ: Այդ անհրաժեշտ եզրակացությունների բացակայությունը հետագայում հանգեցրեց ավելի մեծ ողբերգության:

Մինաս Չերազը Բեռլինում պատմիրականության և Հայկական հարցի ձախողումը արդարացնելու համար Պոլսում փորձում էր ապացուցել, որ 61-րդ հոդվածն ավելին էր տալիս հայ ժողովրդին, քան Սան Ստեֆանոյի պայմանագիրը, և Անգլիայի օգնությամբ հնարավոր կլինի բարելավել արևմտահայերի վիճակը: «Պերլինի Վեհաժողովէն մի ոսկէհանք շահեցանք. մեզ անկ է խիզախել եւ հանել ոսկին»⁴⁷, գրում է նա: Իհարկէ, այդ տեսակետը կապ չունէր իրականության հետ, և մեր ժողովուրդը այդպէս էլ այդ ոսկէհանքից օգուտ չստացավ, այլ ընդհակառակը՝ մեծապէս տուժեց:

Հայ ժողովրդի ճակատագրում նոր ժամանակաշրջան սկսվեց, երբ Հայկական հարցը Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի միջոցով դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Այն ասպարեզ իջեցվեց արևմտահայությանը օգնելու պատրվակով, սակայն ոչ միայն որևէ բարելավում չնտրեց նրանց կյանքում, այլև ավելի վատթարացրեց վիճակը և դարձավ այն գլխավոր պատճառներից մեկը, որը հանգեցրեց Հայոց ցեղասպանությանը:

Հայկական հարցի սկզբնավորման փուլում հայ գործիչները հույս ունեին եվրոպական մեծ պետությունների օգնությամբ ազատվել թուրքական դժնդակ լծից, ստանալ ինքնավարություն, իսկ հետագայում, ինչու չէ, հասնել անկախության: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ մեր ժողովուրդը ճիշտ չէր կողմնորոշվում միջազգային բարդ ու խճճված հարաբերություններում, քանի որ պետականության երկարատև բացակայության պայմաններում չունեինք պատրաստված դիվանագետներ: Արևմտահայության հոգևոր և քաղաքական ղեկավարությունը ստանձնած Կ. Պոլսի Պատրիարքարանը դեմ էր հայերի զինված ելույթներին՝ հուսալով, որ «Օսմանյան հայրենիքին» ցուցաբերած հավատարմության և մեծ պետությունների աջակցության շնորհիվ հայ ժողովրդին կտրվի սպասված ինքնավարությունը, բայց

⁴⁶ Գաբրիէան Խ., նշվ. աշխ., էջ 235-236:

⁴⁷ Չերազ Մինաս, Թէ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն, Կ. Պոլիս, 1878, էջ 29:

չարաչար սխալվեցին:

Պատմաբան Է. Կոստանդյանը գրում է. «Անկախ այն հանգամանքից, թե ովքեր էին հայ պատմիրականության անդամները և ինչ ուղղությամբ էին ծավալում իրենց գործունեությունը, նրանք չէին կարող հասնել շոշափելի արդյունքների, որովհետև տվյալ պատմական պահին մեծ պետությունների միջև գործում էր շահերի հակամարտության օրենքը»⁴⁸: Մենք համամիտ չենք այդ տեսակետին և վստահ ենք, որ ցանկացած պատմական ժամանակաշրջանում հնարավոր է գտնել նպաստավոր լուծումներ: Այս շրջանում ամենամեծ բացթողումը Նուբար փաշայի ծրագիրը մերժելը և նրա դիվանագիտական կարողություններից ու անձնական կապերից օգտվելուց հրաժարվելն էր: Ոչ ոք չի կարող վստահորեն ասել, թե ինչ զարգացումներ կունենար Հայկական հարցը, եթե Նուբարն իր ծրագրով ներկայանար Բեռլինի կոնֆերանսին, սակայն շատ մեծ է հավանականությունը, որ արևմտահայությունը կփրկվեր հետագա ջարդերից ու Մեծ Եղեռնից:

Բեռլինի վեհաժողովից երկու տասնամյակ անց Նուբարը ցավով էր հիշում, որ չի կարողացել օգտակար լինել իր ժողովրդին. «Քսան տարի, ես գիտեմ թե ինչ ըրած կ'ըլլայի այն երկիրը քսան տարուան մեջ»⁴⁹: Պատրիարքի կողմից իր ծրագրի մերժումն ու Հայկական հարցի ձախողումը Նուբար փաշան ծանր տարավ: Այդ մասին Ա. Չոպանյանը նշում է. «Իր կեանքին մեծ ցուր եղած էր այդ անհասկացողությունը զոր ցուցուցեր էր Հայ ազգը: Քսան անգամ դարակէ հանած է իր ծրագրին դեղնած տետրակիկը, և գուրգուրանքով, տրտմութեամբ և խանդավառութեամբ կարդացած է գայն ինծի»⁵⁰:

Կարծում ենք, Հայկական հարցի սկզբնավորման և զարգացման փուլերում թույլ տրված բացթողումներն ու սխալները, պատմական զարգացումների ճիշտ, անկողմնակալ վերլուծությունն ու գնահատումը անհրաժեշտ նախադրյալներ են մեր ժողովրդի ներկան ու ապագան ճիշտ հունով տանելու համար:

⁴⁸ Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 260:

⁴⁹ «Նոր կեանք», 1899, 1 փետրուար, էջ 41:

⁵⁰ Ալպոյաճեան Ա., Նուպար հայ եւ Հայկական խնդիրը, «Նոր Հայաստան» շաբաթաթերթ, 1918, թիւ 3, էջ 36:

ԱՐԱՄՄԱՅԻՍ ԲԱԼՈՅԱՆ

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ
1913-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԻՏԱԼԱԿԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին եվրոպական տերությունները դարձյալ իրենց արտաքին քաղաքականության մաս դարձրին Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտության մասին հարցը: Ռուսաստանի նախաձեռնությամբ 1912 թ. վերջից սկսված այս գործընթացը բավականին հետաքրքիր զարգացումներ ունեցավ՝ ամբողջությամբ ի ցույց դնելով Օսմանյան կայսրության հետ առնչվող եվրոպական տերությունների քաղաքականությունը: Ձևավորված երկու խմբավորումները՝ Եռյակ համաձայնությունը և Եռյակ դաշինքը, որոնցից առաջինի կազմի մեջ էին մտնում Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, իսկ երկրորդի մեջ՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, ունենալով ընդհանուր շահեր, ամեն դեպքում հետապնդում էին նաև իրենց երկրի առանձին շահեր, քանի որ ողջ Արևելքում ընթանում էր նրանց հետաքրքրությունների և ազդեցությունների ոլորտների վերաձևումը: Միջազգային հարաբերությունների ահա այսպիսի մթնոլորտում էին ընթանում հայկական բարեփոխումների ծրագրի մշակման բանակցությունները, երբ պետության չգոյության պայմաններում այդ խրթին միջավայրում հայ ժողովրդի շահերի և նպատակների կենտրոնացման ու ներկայացման ողջ ծանրությունը դարձյալ իր վրա վերցրեց Հայ Առաքելական Եկեղեցին:

1912 թ. հոկտեմբերին Գևորգ V Կաթողիկոսը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ հանդիպման ժամանակ իր և հայ ժողովրդի հավատարմությունը հայտնեց ռուսական գահին և խնդրեց, որպեսզի անհապաղ սկսեն զբաղվել Օսմանյան կայսրության հայերի ճակատագրով: Նոյեմբերին Թիֆլիսում հավաքված Ռուսաստանի հայ համայնքի կարկառուն ներկայացուցիչներն իրենց աջակցությունը հայտնեցին Կաթողիկոսի նախաձեռնությանը:

Դժվար էր հատկապես Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի խնդիրը, քանզի, գտնվելով Օսմանյան կայսրության մայրաքաղաքում, ստիպված էր դիվանագիտական խորը հմտություններ կիրառել՝ եվրոպական տերությունների դեսպանատների հետ հարաբերվելու և միառժամանակ Թուրքիայի հայ բնակչության անվտանգության երաշխիքներն ապահովելու համար:

Այս հողվածում կանդրադառնանք միայն Իտալիայի դեսպանատան հետ հարաբերություններին, քանզի մեր տրամադրության ներքո են Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական-դիվանագիտական արխիվի վավերագրերը:

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնին Իտալիայի Արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին 1913 թ. հունվարի 25-ին գրած թիվ 406/103 հե-

ռազմում գրում է¹. «Մի քանի օր առաջ ընդունեցի Հայ Առաքելական Եկեղեցու Պատրիարքարանի երկու ներկայացուցիչների՝ հայ աշխարհիկ խորհրդի նախագահ պարոն Ստեփան Կարայանին և նույն խորհրդի անդամ դոկտոր Թորգոմյանին, որոնք եկել էին ինձ ներկայացնելու Ասիայում բնակվող հայ ժողովրդի վիճակը:

Այս պարոններն ինձ ներկայացրին, թե որքան տխուր է իրենց կրոնակիցների պայմանները: Իրենց գոյությանը սպառնացող վտանգի վախից նրանք ստիպված չեն հեռանում բնակեցված կենտրոններից: Ուստի չեն կարողանում մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին և ապրում են ծայր աղքատության մեջ, որն օր օրի ավելի է սրվում:

Պատրիարքարանը, տեսնելով մուսուլման բնակչության գրգռվածությունը, կոչ է արել հայերին դիմանալ ամեն տեսակ անարդարություններին՝ բախումներից խուսափելու համար: Չնայած դրան, հաստատվում են Անատոլիայում ամեն շաբաթ 6 կամ 7 քրիստոնյաների սպանության մասին լուրերը, որոնք մնում են անպատիժ: Դեպքերի նման ընթացքը չի կարող ձգվել այսպես անորոշ, քանզի հայ ժողովուրդը կենսական անհրաժեշտությունից ստիպված կլինի հեռանալ բնակեցված կենտրոններից, սակայն դրանով ավելի կհեշտացնի ոճրագործների գործը: Սակայն յուրաքանչյուր ժողովրդի համբերություն սահման ունի, և հնարավոր է, որ հայ համայնքը չկարողանա անվերջ լռել և զլխիկոր մնալ բոլոր այն անարդարությունների առջև, որի զոհն է դարձել:

Սրանք այն պատճառներն են, եթե դրանց իհարկե չավելանան այլ պատճառներ, որոնք Անատոլիայում շուտով կհանգեցնեն մեծ անկարգությունների: Անատոլիայի բնակչությունը գրեթե ամբողջությամբ զինված է, և նրանք դարձյալ կհուզվեն այն տանջանքներից, տարածքային այն զգալի կորուստներից, որ կրեցին կայսրության կողմից այս պատերազմում, որն այդ շրջաններում համարվում է խաչի և կիսալուսնի պայքար: Մուսուլմանական շատ ընտանիքներ մեծ կորուստներ կունենան այդ պատերազմում, որն էլ քրիստոնյաների հանդեպ ատելության մի նոր առիթ կհանդիսանա: Օսմանյան կառավարությունը, որ վերջին շրջանում փորձում էր խուսափել ջարդերից և անկարգություններից՝ վախենալով, որ դրանք իրենց արձագանքները կգտնեն Թուրքիայի եվրոպական շրջաններում, սակայն կորցնելով եվրոպական տարածքները, այժմ նա այդ կապանքից էլ է ազատված: Հայոց Պատրիարքարանը ապագան տեսնում է ճնշումներով լի և վախենում է, որ այս պատերազմից հետո Հայաստանում տեղի կունենան ծանր իրադարձություններ:

Պատրիարքարանի ներկայացուցիչները եկել էին իմանալու, թե Եվրոպան ի՞նչ է մտադիր անել իրենց համար, քանզի հայկական հարցը իր արտացոլումն էր գտել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում, և 1895 թվականից Կոստանդնուպոլսի դեսպանները պատրաստում էին բարենորոգումների մի ծրագիր՝ այդ տարածքներում իրականացնելու համար:

Ներկայացուցիչները հայտարարում էին, որ որևէ հավատ չի ներշնչում օսմանյան կառավարության կողմից մշակվող բարենորոգումների ծրագիրը, եթե, իհարկե, դրանք չիրականացվեն տերությունների հսկողության ներքո: Միաժամանակ կոչ արեցին, որ եթե թուրքերն ուզում են պահպանել ասիական տարածքները, ապա

¹ Իտալիայի Արտաքին Գործերի Նախարարության Պատմական Դիվանագիտական Արխիվ՝ այսուհետ՝ ԻԱԳՆԴԴԱ, Թուրքիայի Դեսպանատուն 1829-1937 թթ., թղթապանակ 161:

պետք է մի շարք բարեփոխումներ կատարեն՝ բացառապես Եվրոպայի հսկողությամբ: Ավելացրեցին նաև, որ հայերի պահանջերը շատ չնչին են, նրանց անհրաժեշտ է կյանքի և գույքի ապահովություն:

Պարոն Կարայանին և Թորգոմյանին պատասխանեցի, որ օտար տերության ներկայացուցիչը շատ զգույշ պետք է լինի մեկ այլ պետության ներքին խնդիրներին խառնվելիս: Նրանց վստահեցրի սակայն, որ եթե հայկական հարցը քննարկվի Եվրոպայում, հայերը կարող են վստահ լինել, որ իտալացի ժողովուրդը այնպիսի դիրքորոշում կունենա, որով հարգված կլինեն հայերի զգացմունքները, ազատության ավանդույթները, հավասարությունն ու առատաձեռնությունը: Սա է վերոհիշյալ պարոնների հետ ունեցած զրույցիս համառոտ նկարագիրը, որ ներկայացնում եմ Ձերդ Գերագանցության ուշադրությանը, քանզի կարծում եմ, որ շատ շուտով հայկական հարցը նորից բարձրացվելու է և պահանջելու է վերջնական լուծում:

Ի պատասխան այս հեռագրին, նախարար Սան Ջուլիանոն 1913 թ. փետրվարի 7-ի իր թիվ 06247/67 հեռագրում գրում է². «Շնորհակալություն եմ հայտնում Ձերդ Գերագանցությանը ս. թ. հունվարի 25-ի թիվ 103 հեռագրի համար, որով ինձ տեղյակ եք պահում հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչների այցի և Ասիայում հայերի վիճակի մասին նրանց նկատառումների մասին: Ըստ այդ ներկայացուցիչների, նման պայմաններ տիրում են վաղուց, այժմ դրանք ավելի են վատացել և կարող են առավել ծանրանալ մոտ ապագայում:

Այդ կապակցությամբ առիթ եմ ունեցել վերջերս մի նամակ ուղարկել Նորին Գերագանցություն վարչապետին, որի կրկնօրինակը կից ուղարկում եմ Ձեզ: Այդ նամակում իմ արտահայտած սկզբունքները համընկնում են այն տեսակետներին, որ Ձերդ Գերագանցությունը ներկայացրել է իր զրուցակիցներին:

Հաստատելով այդ զրույցում Ձեր արտահայտած մտքերը, ավելացնում եմ, որ այս պահին մեր հետաքրքրությունների մեջ չի մտնում հայկական հարցի բարձրացումը միջազգային մակարդակի: Նման բարձրացումը այս պահին կարող է առիթ հանդիսանալ միաժամանակ լուծելու նաև Թուրքիայի ասիական տարածքների հետ առնչվող շատ այլ հարցեր ևս, իսկ մեզ անհրաժեշտ է, որպեսզի կայսրության այդ հատվածի տարածքային ամբողջականությունը քննարկման նյութ չդառնա առնվազն մի քանի տարի, մինչև մեր կողմից կավարտվեն նախապատրաստական այն աշխատանքները, որոնք կերաշխավորեն խնդրի լուծման մեջ մեր դերակատարությունն ու որոշ առավելությունները: Բայց որպեսզի այս ամենը ստացվի, անհրաժեշտ է, որ օսմանյան կառավարությունը գիտակցի և ամենայն պատասխանատվությամբ մոտենա կրկնվող այն բողոքներին, որ ստացվում են Փոքր Ասիայի հայ համայնքների կողմից: Այս իմաստով Ձերդ Գերագանցությունն ամեն դեպքում կարող է սեփական նախաձեռնությամբ, երբ պատեհ առիթ հանդիսանա, Օսմանյան կայսրության Արտգործնախարարությանը դիմելու, որպեսզի նա որքան հնարավոր է՝ շուտ խաղաղություն հաստատի իր իշխանության այդ կարևոր շրջաններում:

Սան Ջուլիանո

Առդիր

² ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937 թթ., թղթապանակ 161:

Բտալիայի Արտաքին Գործերի Նախարար Սան Ջովիանոն

Բտալիայի Նորին Գերագանցություն Վարչապետին

Հռոմ, 28 հունվարի 1913 թ.

Տեղեկացնում եմ, որ ս. թ. հունվարի 16-ին Սոֆիայի նախարարը³ երկու հուշագիր է ուղարկել՝ մեկը՝ Նորին Գերագանցություն թագավորին, մյուսը՝ Ձերդ Գերագանցությանը, Սոֆիայում հավաքված հայերի խորհրդի կողմից, որոնք խնդրում են Բտալիայի միջամտությունը Փոքր Ասիայում բնակվող հայ ժողովրդի վիճակի բարելավման գործում:

Այս կապակցությամբ, կարծում եմ, օգտակար կլինի ավելացնել, որ Հռոմի արքայական համալսարանի պրոֆեսոր կոմս Անջելո դե Գուբերնատիսի միջոցով վերջերս ինձ հասավ մի հայ հրատարակչի՝ պարոն Առաքելյանի դիմումը: Նա մաս է կազմում հայոց Պատրիարքի կողմից նշանակված այն պատվիրակության, որը Բեռլինի համաձայնագիրը ստորագրած եվրոպական տերությունների կառավարությունների մոտ ներկայացնում է թուրքահպատակ հայ ժողովրդի իրավիճակը: Դիմումում նա ցանկանում էր իմանալ, թե ե՞րբ կարող եմ ընդունել այդ պատվիրակությանը:

Կոմս դե Գուբերնատիսին պատասխանեցի, որ արքայական կառավարությունը լիովին տեղյակ է թուրքահպատակ հայերի իրավիճակին, քանզի նրանցով բնակեցված շրջաններում խոսվում է բարենորոգումների մասին, և վատ չէր լինի, որ այդ կապակցությամբ տերությունները քննարկումներ կազմակերպեին՝ քննության առնելով այդ խնդիրը՝ հաշվի առնելով, սակայն, մեր բարեկամական հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ: Նրան ասացի, որ ավելին չեմ կարող վստահեցնել այդ կապակցությամբ, նույնիսկ եթե այդ պատվիրակությունը ժամանի Հռոմ, ապա իմ հայտարարությունները ոչնչով չեն տարբերվի արդեն ասվածից:

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանը նաև թուրքական իշխանություններին է կոչ անում կայսրության հայաբնակ շրջաններում բարեփոխումներ անցկացնել, սակայն, պահպանելով զգուշավորությունը, պնդում է, որ հայերը չեն ցանկանում դուրս գալ կայսրության ենթակայությունից: Այս մասին վկայում է նախարար Սան Ջովիանոյին ուղղված դեսպան Գարրոնիի 1913 թ. մայիսի 13-ի թիվ 2832/500 հեռագիրը⁴, որում ասվում է. «Պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ հայկական պատվիրակությունը, որը գլխավորում էր Պատրիարքը, երեկ մի հուշագիր է ներկայացրել Մեծ Վեզիրին, որում ներկայացնում են հայերի ցավալի վիճակը, հայկական նահանգներում տիրող վախի մթնոլորտը և այլն:

Հուշագիրը հետաքրքիր մի փաստաթուղթ է, որը ստեղծված իրավիճակում չափազանց կարևոր դեր կարող է խաղալ հայ համայնքի և թուրքական կառավարության հարաբերություններում: Հուշագրում հստակ նշվում է, որ հայ ժողովուրդը չի ցանկանում անջատվել Օսմանյան կայսրությունից, սակայն անհրաժեշտ է համարում դեռևս 1878 թ. Բեռլինի կոնգրեստով խոստացված բարեփոխումների իրականա-

³ Բտալիայի արքայական տան արտգործնախարարությունում որպես դիվանագիտական աստիճան եղել է նաև նախարար աստիճանը, որը տրվում էր արտերկրում Բտալիայի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին:

⁴ ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916 թթ., թղթապանակ 332:

ցումը, որպեսզի հստակ երևան հայերի կյանքի և ունեցվածքի ապահովության երաշխիքները»: Այնուհետև դեսպան Գարրոնին նույն հեռագրում հետևություն է անում, որ «...Օսմանյան կառավարությունը եթե այս անգամ էլ անտեսի այս կոչը, որը, երևում է, վերջինն է, և անհապաղ չարգելի նոր խոշտանգումները, նոր ջարդերը, նոր հետապնդումները, ապա Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը չեն կարող իրենց հայացքը չուղղել դեպի իրենց այն կրոնակիցները, որոնք հանգիստ ապրում են Ռուսաստանում, և նույնիսկ, եթե անկախությունն այնտեղ անհնար լինի, կգերադասեն ապրել մոսկովյան ցարի, քան Կոստանդնուպոլսի սուլթանի իշխանության ներքո...»:

Չնայած Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի ջանքերին, ամեն դեպքում հայկական շրջանակներում ձևավորվում էին նաև այնպիսի խմբեր, որոնք փորձում էին անկարգություններ հրահրելով հասնել իրենց նպատակին: Սակայն խոհեմ հայ հոգևորականները, որոնք քաջ գիտակցում էին, որ ցանկացած անկարգություն հիանալի առիթ կդառնա թուրքական իշխանությունների ձեռքին նոր ջարդեր կազմակերպելու համար, շարունակում էին հայ բնակչությանը հանդարտվելու և միավորվելու կոչեր հնչեցնել: Դեսպան Գարրոնին նախարար Սան Ջուլիանոյին հղած նույն հեռագրում, հենվելով Կոստանդնուպոլսի հայոց նախկին Պատրիարք Օրմանյանի վկայությունների վրա՝ գրում է. «... Բնչպես ինձ տեղեկացրեց հայերի նախկին Պատրիարք Օրմանյանը, Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների այս նախաձեռնությանը հավանություն են տալիս բնակչության բոլոր շերտերը: Նույնիսկ Փարիզում գործող հայկական պատվիրակությունը ցանկանում է քրդերին ևս մասնակից դարձնել այս գործում՝ հայերին թողնելով, անշուշտ, գլխավոր դերը: Օրմանյանն ինձ ասաց նաև, որ հայերն այսօր բաժանված են երկու խմբի՝ մի խումբն ուզում է Փարիզում գտնվող հայկական պատվիրակության միջոցով շարժել եվրոպական տերությունների հետաքրքրությունը հայկական հարցի շուրջ, իսկ մյուս խումբը ցանկանում է տեղական հայկական կոմիտեների միջոցով սադրանքներ և խժոժություններ իրականացնել: Ներկայումս կան երկու ապստամբական կենտրոններ. մեկը՝ Զեյթունում, որ հունական կառավարության հետ սերտ կապի մեջ է և գտնվում է նրա ազդեցության տակ, մյուսը՝ Վանում: ... Հայկական շարժման կենտրոնը գտնվում է Եգիպտոսում: Դրա դեկավարը հայտնի հեղափոխական Դամադյանն է: Հայկական կոմիտեներն աջակցություն են ստանում Հունաստանից և թվում է, թե այնտեղից զենք և զինամթերք են ներկրում: Երզնկայում տեղի ունեցած պայթյունը ցույց է տալիս, որ այնտեղ բավականին շատ զինամթերք է կուտակված եղել: Հայերի առավել խոհեմ մասը քննադատում է այդ շարժումը: Հայոց Կաթողիկոսը փորձում է սանձել հայկական բոլոր կուսակցությունների ծայրահեղական թևերի գործողությունները: Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքը Եգիպտոս է ուղարկել օսմանյան բանկի աշխատակից պարոն Փափագյանին և վստահելի մեկ այլ անձնավորության՝ Դամադյանին սաստելու համար ...»:

Հայկական շրջանակների այս երկատվածության պատճառները որքան էլ օբյեկտիվ լինեին, կան նպատակներին հասնելու համոզմունքների տարբերություններ, սակայն ակնհայտ է, որ դրա առկայության հիմնական պատճառ կարող է լինել նաև ժողովրդին համախմբող մարմնի՝ այս պարագայում Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի թուլությունը: Որքան էլ շատերիս համար անընդունելի լինի

այս կարծիքը, քանզի իրոք պետք է ճիշտ պատկերացնել այն պայմանները, որում գործում էր Պատրիարքարանը, սակայն ժողովրդի մոտ նման կարծիք ցավալիորեն ձևավորվել էր, և դեսպան Գարրոնին շարունակելով իր հեռագիրը՝ նախարարին գրում է. «...Վստահելի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, Ջատկի տոներից հետո հայոց Պատրիարքի և Բարձր Դռան հարաբերություններում սրում է նկատվում, որը շուտով ճգնաժամ կառաջացնի Պատրիարքարանում, քանզի ներկա Պատրիարքը չի կարողանում վերահսկել իրավիճակը: Այդ պաշտոնում առավել նպատակահարմար թեկնածու է համարվում Դիարբեքիի արքեպիսկոպոս Ջավենը: Պատրիարքի պաշտոնագրվումը ազգային ներքին անհրաժեշտություն է, որով արտահայտվում է հայերի բողոքն ընդդեմ առկա իրավիճակի: Պատրիարքական ճգնաժամը կազդանշի դիվանագիտական միջամտության սկիզբը...»:

Հայկական բարեփոխումների շուրջ քննարկումները շարունակվում էին տերությունների միջև, ճշտվում էին նրանց մոտեցումները, իսկ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանը շարունակում էր իր ազգանվեր գործունեությունը՝ եվրոպական տարբեր դեսպանների մոտ առաջ քաշելով հայ ժողովրդի խնդիրները: Դեսպան Գարրոնին, Իտալիայի արտգործնախարար Սան Ջովիանտյին 1913 թ. սեպտեմբերի 9-ի իր թիվ 689 հեռագրում⁵ հայկական բարեփոխումների բանակցային գործընթացին ծանոթացնելով, գրում է նաև. «...Այս օրերին ինձ մոտ եկավ հայոց Պատրիարքարանի առաջնորդը և ասաց, որ հայ բնակչությունն անհամբերությամբ է սպասում բարեփոխումների խոստմանը: Նրա ուշադրությունը հրավիրեցի այն փաստի վրա, որ բարեփոխումների բանակցային գործընթացը չունի ցանկալի ընթացք, քանի որ իրարանցում ու շփոթություն է առաջացրել ռուսական հատուկ միջամտությունը: Նրան ասացի, որ հայերի համար առավել նպատակահարմար է անմիջական բանակցություններ սկսել թուրքական կառավարության հետ, և այդ դեպքում տերություններն ավելի հանգիստ կարող են աջակցել նրանց՝ բարեփոխումների և անհրաժեշտ հսկողություն սահմանելու հարցում:

Ինձ թվաց, որ առաջնորդը ավելին քան համոզվեց իմ մեկնաբանություններից, սակայն այն տպավորությունը ստացա, որ նրա այս այցը համաձայնեցված էր ռուսական կողմի հետ...»:

Տարաձայնությունները հայկական շրջանակների մեջ շարունակվում էին: Որոշակի խնդիրներ էին առաջ եկել նաև ներհայկական կյանքում Հայ Առաքելական Եկեղեցու և հայ կաթողիկե համայնքի ներկայացուցիչների միջև հայ հոգևոր երկու միավորների՝ հայ առաքելականների և հայ կաթոլիկների միջև: Բոլորը սպասում էին Կոստանդնուպոլսի նոր պատրիարքի ընտրությանը, և շատերը հուսով էին, որ նրան կհաջողվի հարթել առկա տարաձայնությունները:

Տրապիզոնում Իտալիայի գլխավոր հյուպատոս Գարրոնին 1913 թ. նոյեմբերի 17-ին Արտաքին գործերի նախարար Սան Ջովիանտյին հղած թիվ 1357/139 հեռագրում⁶ անդրադառնալով հայոց նոր պատրիարքի՝ Կոստանդնուպոլսի ուղևորմանը՝ գրում է. «Պատիվ ունեմ Ձերդ Գերազանցությանը տեղեկացնելու, որ երեկ թուրքական «Գուլ Ջեմալ» շոգենավով Կոստանդնուպոլիս ուղևորվեց Նորին Օծություն

⁵ ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 569:

⁶ ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916 թթ., թղթապանակ 332:

Պատրիարքը, որին անվանում են նաև «հայոց պատրիարք»: Նրան ճանապարհ դրեցին զինվորական հանդեսով՝ հայկական համայնքի, հայկական դպրոցների աշակերտների ու հոծ բազմության ներկայությամբ:

Այլ հյուպատոսների և բարձրաստիճան պաշտոնյաների հետ միասին ես ևս նաև բարձրացա՝ ողջունելու Նորին Օծությանը, նա չափազանց շոյված էր: Արարողությանը մասնակցում էին նաև հունական պատրիարքը, բողոքական միսիոներները և շատ մուսուլմաններ:

Արդեն բավական երկար ժամանակ այստեղի հայ առաքելականների և հայ կաթոլիկների միջև առկա էին խորը տարաձայնություններ: Հայկական երկու Եկեղեցիները մշտապես կշտամբում ու սպառնում էին միմյանց, թե կքանդեն ու կփակեն մյուսի դպրոցները:

Սրբազանը ջանք չխնայեց լուծելու այս խնդիրները, և տարաձայնությունները Հայ Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների միջև վերջնականապես վերացան: Այս ամենն անշուշտ չի կարելի վերագրել նրան, սակայն տեղի ունեցան հենց նրա ներկայության պայմաններում՝ որպես արդյունք իր տված հորդորների:

Սրբազանը տեղի հարուստ հայերից նաև հսկայական նվիրատվություններ ստացավ: Ինձ ասաց, որ գումարը հասնում է երեք հազար թուրքական լիրի, այսինքն՝ մոտ 70 հազար ֆրանկի, որոնցով նա կգնի Մայր Տաճարը և կամրապնդի առաքելական համայնքին պատկանող այլ հաստատությունները:

Սրանք են տեղական բնույթի վերջին նորությունները, որ մեծ վստահություն և հույսեր են ներշնչել հայ բնակչությանը: Ինչ վերաբերում է Սրբազանի այն մտադրություններին, որ Բարձր Դռան հետ հանդիպման ժամանակ կկարողանա ինչ-որ կոնկրետ արդյունքի հասնել հայկական բարեփոխումների և հայերի ու քրդերի միջև խաղաղության հաստատման հարցերում, ապա այստեղ դրանց արդյունքի վերաբերյալ իմ կանխատեսումները դրական չեն: Շատ կցանկանայի, որ Բարձր Դուռը Բարի կամք դրսևորեր և իրոք լուծում տար այն հարցերին, որոնց դրական լուծմանն այնքան կասկածում են հայերը: Մյուս կողմից, շատ կցանկանայի, որ իր վսեմաշուրջ գրասենյակի գործունեությամբ, ամենօրյա դժվարությունների հաղթահարման ու պայքարի գործում Սրբազանը կարողանար այնպիսի նրբություն, դիվանագիտական այնպիսի հմտություն և համբերություն դրսևորեր, որ բոլոր նրանք, ովքեր նրա այս կարճ այցելության ժամանակ շփվեցին նրա հետ, սխալ դուրս գային իրենց անարդար կանխատեսումներում, որոնցով Սրբազանին գուշակում էին կարճ պաշտոնավարում և Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների վատացում:

Հայոց նորանշանակ Պատրիարքը սկսեց ակտիվ հարաբերություններ հաստատել նաև Կոստանդնուպոլսում հավատարմագրված օտարերկյա դեսպանների հետ: Հաշվի առնելով անցյալի դասերը, հայոց Պատրիարքը քաջ գիտակցում էր, որ օտար երկրներին հայկական խնդիրներում շահագրգռելու համար անհրաժեշտ է նրանց համար տնտեսական հետաքրքրությունների ոլորտ ստեղծել: Այդ նպատակով հայոց Պատրիարքը այցելում է Կոստանդնուպոլսի իտալական դեսպանատուն: Այցի մանրամասների մասին տեղեկություն ենք ստանում Կոստանդնուպոլսում Բուալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիգոյի 1913 թ. դեկտեմբերի 6-ին Բուալիայի Արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին գրած թիվ 940 հե-

ռազմից⁷, որում հանձնակատարը գրում է. «Այս առավոտ հայերի նոր Պատրիարքն իր առաջին այցելությունը կատարեց ինձ մոտ: Ասաց, որ հայերն անհամբերությամբ են սպասում բարեփոխումների իրականացմանը, և նրանից խնդրել են, որ պեսզի, որքան հնարավոր է, պնդի, որպեսզի դրանք շուտ իրականանան, քանզի այլևս հնարավոր չէ ապրել ստեղծված պայմաններում: Ավելացրեց, որ բարեփոխումների արդյունավետ իրականացման համար եվրոպական վերահսկողությունն անհրաժեշտություն է: Նրան պատասխանեցի, որ ցանկանում եմ, որպեսզի բարեփոխումների անցկացումը Հայաստանի բարեկեցիկ դարաշրջանի սկիզբը լինի, քանզի արքայական կառավարությունը միշտ հիացել է այն առաջադիմությամբ, որ առկա է կայսրության հայերով բնակեցված շրջաններում: Վերջում ավելացրեցի, որ նա հայկական ազդեցիկ շրջանակներում քաջալերի Բտալիայի տնտեսական մուտքը Փոքր Ասիա: Պատրիարքը պատասխանեց, որ այդ կապակցությամբ կարգադրություններ կտա Կոնիայի արքեպիսկոպոսին, որն այժմ Կոստանդնուպոլսում է գտնվում»:

Կոստանդնուպոլսի հայոց նորանշանակ Պատրիարքն անմիջապես բուռն գործունեություն ծավալեց՝ փորձելով հարաբերություններ հաստատել նաև թուրքական կառավարության հետ: Թուրքիայում մոտենում էին խորհրդարանական ընտրությունները, և հայ հոգևորականները ցանկանում էին ներկայացված լինել Թուրքիայի խորհրդարանում: Այդ նպատակով երաշխիքներ ստանալու համար հայոց Պատրիարքը մի շարք նամակներ է ուղարկում թուրքական իշխանություններին, որոնցից մեկի մասին տեղեկություն ենք ստանում Կոստանդնուպոլսում Բտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիգոյի 1913 թ. նոյեմբերի 24-ին Բտալիայի Արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին գրած թիվ 913 հեռագրից⁸, որում հանձնակատարը գրում է. «Հայկական հարցը որոշ ժամանակ է, դարձյալ գտնվում է օրակարգում: Մոտենում են խորհրդարանական ընտրությունները, և նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսված են:

Հայերի Պատրիարքը նամակ է ուղարկել տեղի արդարադատության նախարար պարոն Թաքիրին, որով նրանից երաշխիքներ է պահանջում, որպեսզի խորհրդարանում հայերը, համապատասխան թվով պատգամավորներ ունենալուց բացի, ունենան նաև հոգևոր ներկայացուցիչ»:

Հոգևորականների ներկայության շուրջ բանակցություններն ի սկզբանե դատապարտված էին անհաջողության, քանզի, թուրքական սահմանադրության համաձայն, անթույլատրելի էր նրանց ներկայությունը: Սակայն հայոց Պատրիարքարանի կողմից նման պահանջը, կարծում եմ, մտածված էր, այն առումով, որ նման պահանջ ներկայացնելով կարելի էր փոխզիջման արդյունքում հայերի քաղաքացիական անդամների ներկայության երաշխիքներ ստանալ: Այդ գործընթացը կարծես տալիս էր իր պտուղները, քանզի Կոստանդնուպոլսում Բտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիգոն 1913 թ. դեկտեմբերի 13-ին Բտալիայի Արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին գրած թիվ 5622/1077 հեռագրով⁹ տեղեկացնում է. «Ձեզ արդեն տեղյակ եմ պահել, թե ինչպես էր հայոց Պատրիարքը երաշխիքներ

⁷ ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 596:

⁸ ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937 թթ., թղթապանակ 161:

⁹ ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937 թթ., թղթապանակ 161:

պահանջել, որպեսզի հայ հոգևորականները ևս ներկայացված լինեն թուրքական նոր խորհրդարանում: Բարձր Դուռը պարզապես մերժեց այդ առաջարկը, իսկ պարոն Թաքիրը հայտարարեց, որ այն հակասահմանադրական է: Օսմանյան կառավարությունն ավելի ուշ, սակայն, մեղմ դիրք գրավեց հարցի առնչությամբ, քանզի Թալեաթ Բեյը համոզված էր, որ տվյալ պայմաններում չպետք է հայերին բողոքի առիթ տալ: Այդժամ գաղտնի բանակցություններ սկսվեցին, որոնք, ինձ հասած տեղեկությունների համաձայն, ավարտվել են համաձայնության ձեռք բերումով, ըստ այդմ հայկական ազդեցիկ շրջանակները պետք է ամեն ինչ անեն, որպեսզի հայերը խնդիրներ չստեղծեն թուրքական կառավարության համար, իսկ կառավարությունն էլ իր հերթին հնարավորինս կանի, որ հայերը մոտ քսան տեղ ունենան խորհրդարանում: Նման մոտեցումն իրոք կարելի է ձեռքբերում համարել, սակայն, բացի այս խնդրից, բաց էր մնում նաև նահանգային խորհրդարաններում ներկայության ապահովման հարցը, և բարեփոխումների շուրջ անմիջական բանակցող կողմերը՝ եվրոպական տերությունները, մշտապես կանգնում էին այն խնդրի առջև, թե որ ցուցակներով պետք է կատարվեն ընտրությունները, և ինչպիսի համամասնություն պետք է պահպանվի: Այս առնչությամբ տեղեկություններ են պահպանված Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիի 1914 թ. հունվարի 22-ին Իտալիայի Արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին գրած թիվ 30 հեռագրում¹⁰, որում ասվում է. «Հայկական բարենորոգումների հարցում մշտապես առկա են տարաձայնությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Առաջինը շարունակում է պնդել, որ մինչև նոր մարդահամարի անցկացումը վիլայեթների խորհուրդներում տեղերը հավասարապես բաշխվեն մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև: Թուրքիան այս սկզբունքն ընդունելի է համարում միայն Վանի և Բիթլիսի վիլայեթների համար՝ ցանկանալով, որպեսզի մյուս վիլայեթներում տեղերը բաշխվեն ըստ իրական թվաքանակի՝ հիմք ընդունելով տարբեր եկեղեցիների կողմից կազմված ցուցակները, մինչ, որ կանցկացվի նոր մարդահամար: Գույկենիչն¹¹ ինձ գաղտնաբար տեղեկացրեց՝ հայտարարելով, որ իր այս նախաձեռնությունը որևէ կերպ չպետք է արձանագրվի դիվանագիտական շրջաբերականներում, որ իր լիազորությունների մեջ է մտնում պակասեցնել պահանջները և ընդունելի համարել տեղերի հավասար բաշխումը միայն Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում: Սակայն այս հարցի շուրջ վարվող բանակցությունները Բարձր Դռան հետ նրան հուսալուքիչ առիթ են տալիս»: Այս հարցի շուրջ բանակցությունները ձգձգվեցին, քանի որ Ռուսաստանը ցանկանում էր, որպեսզի Վանի և Բիթլիսի վիլայեթների խորհուրդներում տեղերի հավասար բաշխման սկզբունքը կիրառվեր նաև Էրզրումի վիլայեթում: Սակայն տարաբնույթ քննարկումներից հետո որոշվեց, որ Էրզրումի վիլայեթում համամասնությունը հնարավոր կլինի միայն անցկացվելիք մարդահամարից հետո: Ձեռք բերված համաձայնության մասին վկայում է Պետերբուրգում Իտալիայի դեսպան Կառլոտիի 1914 թ. փետրվարի 9-ին Իտալիայի Արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին գրած թիվ 55 հեռագրից¹², որում կարդում ենք. «Սազոնովն ինձ ասաց, որ հայկական բարեփոխումների հարցը վերջապես լուծվեց, ինչ

¹⁰ ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916 թթ., թղթապանակ 332:

¹¹ Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանատան հանձնակատար:

¹² ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916 թթ., թղթապանակ 332:

վերաբերում է էրզրումի վիլայեթում նահանգային ներկայացուցիչների խնդրին, ապա այն կլուծվի մարդահամարի անցկացումից հետո: Նա շատ ուրախ էր, քանզի, ինչպես ասաց, Ռուսաստանը ցանկանում է համաձայնության և հաշտության մեջ ապրել Բարձր Դռան հետ և, ի տարբերություն եվրոպական այլ տերությունների, նրանից պահանջում է միայն իր սահմանին մոտ շրջաններում խաղաղության երաշխիքներ և Թուրքիայում եվրոպական հավասարակշռության պահպանում:

Հայկական բարեփոխումների շուրջ համաձայնությունը և պայմանագրի կնքումը տեղի ունեցավ 1914 թ. փետրվարի 8-ին, որի մասին վկայում է Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝ 1914 թ. փետրվարի 8-ին Իտալիայի Արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին գրած իր թիվ 51 հեռագրում¹³. «Ռուսաստանի դեսպանատան հանձնակատարն այսօր ինձ գաղտնաբար տեղեկացրեց, որ հայկական բարեփոխումների հարցի շուրջ վերջնական համաձայնություն է կնքվել իր կառավարության և Բարձր Դռան միջև»:

Այսպիսով, 1914 թ. փետրվարի 8-ին Մեծ Վեզիր Սայիդ Հալիմի և ռուսական գործերի հանձնակատար Գովկևիչի միջև, որը լիազորված էր տերությունների կողմից, կնքվեց երկար սպասված պայմանագիրը, որով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր բարեփոխումներ անցկացնել հայկական շրջաններում: Այդ նպատակով ստեղծվելու էին երկու գոտիներ՝ առաջինն ընդգրկելու էր Տրապիզոնի, Սվազի և Էրզրումի, իսկ երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքի և Խարբերդի վիլայեթները: Յրվելու էին համիդյան խմբերը՝ ձևավորելով պահեստային հեծելազորը, քրիստոնյաներն ու մուսուլմանները հավասար էին ճանաչվելու օրենքի առջև, հայկական դպրոցների առջև սահմանափակումներ չէին լինելու, հայոց լեզուն ընդունելի էր լինելու դատարաններում և վարչական մարմիններում, ստեղծվելու էր հայ-թուրքական ընդհանուր ոստիկանություն՝ առանց քրդերի մասնակցության: Ապրիլին ստեղծված շրջաններում բարեփոխումների իրականացումը հսկելու նպատակով վերահսկիչներ են նշանակվում հոլանդացի Լ. Վեստենենկն ու նորվեգացի Ն. Հոֆֆը: Այս պայմանագիրը, չնայած իր բոլոր թույլ կողմերին, ամեն դեպքում լավ հնարավորություն կտար՝ բարելավելու Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի վիճակը, եթե սկսված աշխարհամարտը չկասեցներ դրա իրագործումը:

Բանակցային այս ողջ ընթացքում Հայոց Առաքելական Եկեղեցին իր գործունե մասնակցությամբ կարողացավ իր նպաստը բերել հայ ժողովրդի վիճակը բարելավելուն ուղղված եվրոպական տերությունների նախաձեռնությանը:

¹³ ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916 թթ., թղթապանակ 332:

ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՎԱԾ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության տարածքում և հատկապես նրա արևելյան շրջաններում՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Էրզրումի, Խարբերդի և Սվազի հայկական նահանգներում, երիտթուրքական կառավարության կարգադրությամբ և անմիջական մասնակցությամբ իրականացվեց արևմտահայության նախօրոք մշակված և իր նախադեպը չունեցող ցեղասպանության ծրագիրը: Միաժամանակ, կոմկապյան ռազմաճակատում ռուսական զորքերի մի շարք նահանջների և հատկապես հայ ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան ահավոր գաղթի հետևանքով, ողջ մնացած արևմտահայերից շատերը ծվարեցին աշխարհի տարբեր անկյուններում:

Պատերազմի տարիներին արևմտահայ գաղթականությունը մի շարք ներգաղթերի հետևանքով, բացի Վան-Վասպուրականից, ապաստանեց նաև Արևմտյան Հայաստանի ռուսական բանակի կողմից գրավված մյուս շրջաններում:

Մինչև 1916 թ. փետրվարը Կոմկապյան բանակի շտաբն արգելում էր գաղթականների վերադարձը *Էրզրում* և նրա շրջակայք¹: Սակայն ռուսական բանակի կողմից Էրզրումի գրավումից հետո (1916 թ. փետրվարի 2) նահանգի հայ գաղթականության համար նորից հնարավորություններ ստեղծվեցին հայրենիք վերադառնալու համար: Կոմկապյան բանակի հրամանատարությունը, թույլատրելով գաղթականների վերադարձը և ելնելով իր պետական շահերից, նպատակ ուներ նրանց էժան բանվորական ուժն օգտագործել գյուղատնտեսական աշխատանքների համար: Հայկական գյուղատնտեսական ընկերության նախագահ Ա. Սահակյանը 1916 թվականի մարտի 19-ի իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ «նրանց (գաղթականների - Ավ. Հ.) անհետաձգելի ուղարկումը հիշյալ շրջաններ (տվյալ դեպքում՝ Էրզրումի շրջան - Ավ. Հ.) գյուղատնտեսական աշխատանքների համար... թելադրվում էր ամենից առաջ պետական շահերից ելնելով»: Միննույն ժամանակ Ա. Սահակյանն ավելացնում էր, որ գաղթականներին գյուղատնտեսական աշխատանքներին մասնակից դարձնելով կառավարությունը հնարավորություն կունենար նույն թվականի աշնանը բավականին կրճատել գաղթականների համար կատարվող պետական ծախսումները (տարեկան 30 միլիոն ռուբլի)²:

Էրզրումի անկումից հետո փոխվեց թուրքական կառավարության քաղաքականությունը քրիստոնյաների նկատմամբ: Արևելյան Անատոլիայում ռուսական բանա-

¹ Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 26, նան՝ **Լեռ**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 342:

² Центральный Государственный Исторический Архив Республики Грузии (ЦГИА Р. Гр.), ф. 520, оп. 1, д. 40, л. 42.

կի առաջխաղացման դեպքում, քրիստոնյաների աջակցությունը ստանալու նպատակով, թուրքական կառավարությունը հանդիսավորությամբ հայտարարեց, որ բոլոր քրիստոնյաները գտնվում են օրենքի հովանավորության ներքո, իսկ հայկական նահանգներում սկսեց վարել հայերին «սիրաշահելու» քաղաքականություն³։ Սակայն այս հարցում արևմտահայությունն ավելի հեռատես գտնվեց։

Մինչև 1916 թվականի փետրվարը 215000 հայ ազգաբնակչություն ունեցող Էրզրումի և Բիթլիսի նահանգներում ջարդվել կամ տեղահան էին արվել հայերի մոտ 98%⁴։ Միայն Էրզրումի գրավման ժամանակ քաղաքի 18000 հայկական բնակչությունից փրկվել էին ընդամենը 16 աղջիկներ, որոնք թաքնվել էին ամերիկյան հյուպատոսարանում⁵։

Աստիճանաբար Էրզրումի նահանգ էին վերադառնում Կովկասի տարբեր անկյուններում ծվարած Էրզրումցի, ինչպես նաև խարբերդցի, ակնեցի և սվազցի գաղթականներ։ 1916 թվականի մայիսին Էրզրումի նահանգում կար մոտ 11 հազար բնակիչ, որից 9554-ը թուրքեր էին և եկել էին շրջակայքից, 503-ը հայեր էին՝ Մամախաթունից, Դերջանից, Քդիի շրջանից և Աշկալայի շրջակայքից, 527-ը տեղաբնիկ գյուղացիներ էին, իսկ 400-ը՝ առևտրով զբաղվող Էրզրումցի հայեր⁶։

1916 թվականի հուլիսի 6-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերությանն (ԿՀԲԸ) ուղղված իր հեռագրում նույն ընկերության լիազոր Ջամոնը նշում էր, որ գաղթականության վիճակը Էրզրումում անտանելի էր, որ բացակայում էին ամեն տեսակի անհրաժեշտ պարագաները, չկային ցորեն և անասուններ։ Նա խնդրում էր Էրզրում գործուղել բժշկական խումբ և ուղարկել 5 հազար ռուբլի դրամ⁷։ Անտանելի էր քաղաքի սանիտարական վիճակը⁸։

Էրզրումի գրավումից հետո քաղաքում ստեղծվեց հայ գաղթականական կոմիտե, որն իր իսկ կանոնադրության համաձայն զբաղվում էր նահանգի համայնական բոլոր գործերով։ Այն նպաստում էր գաղթականների տեղափոխությանը և բնակեցմանը, անց էր կացնում նրանց հաշվառում, զբաղվում էր գաղթականների խնամքով, ցույց էր տալիս բժշկական և իրավաբանական օգնություն և բաժանում էր պետական նպաստներ⁹։ Կոմիտեի աշխատանքներին գործուն մասնակցություն էր ցույց տալիս դաշնակցական հայտնի գործիչ բժիշկ Հ. Ջավրիևը¹⁰։

Էրզրումի տեղական գաղթականական կոմիտեի ջանքերով կառավարությունը հայերի տներից դուրս հանեց ապօրինաբար այնտեղ հաստատված թուրքերին և վերոհիշյալ տները հատկացրեց գաղթականներին։ Երբ գաղթականական առաջին քարավանը, բաղկացած 424 հոգուց և 112 որբերից, հասավ Էրզրում, կոմիտեի առաջին գործը եղավ անմիջապես նրանց տեղավորել այդ նպատակով առանձնացված տներ-

³ «Վան-Տոսպ», 1916 թ. փետրվարի 28, թիվ 14։

⁴ Նույն տեղում։

⁵ ՀԱՄ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 5, նաև՝ «Армянский вестник», 1917 թ., № 1, նաև՝ **Զ. Կիրակոսյան**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 405։

⁶ «Армянский вестник», 1916 թ. մայիսի 22, նո. 26, նաև «Հորիզոն», 1916 թ. հուլիսի 31, թիվ 169։

⁷ ՀԱՄ, ֆ. 28, ց. 1, գ. 404, (2-րդ մաս), թ. 312։

⁸ Public record office of England, FO 371/70371/2768, file (161096), p. 412.

⁹ ՀԱՄ, ֆ. 57, ց. 2, գ. 1261, թ. 4, նաև գ. 421, թ. 56-57։

¹⁰ ЦГИА Р. Гр., ф. 520, оп. 1, д. 37, л. 165.

րում, և զբաղվել գաղթականների նյութական օժանդակության հարցերով¹¹: Գաղթականական կոմիտեի տվյալներով, Էրզրումի շրջանի 850 գաղթականներ տեղավորվել էին 31 հայկական գյուղերում, իսկ քաղաքում, օգոստոսի 9-ի տվյալներով, իրենց գրանցումն էին ստացել 750 գաղթականներ, այդ թվում՝ 200 որբեր¹²: Զրկված լինելով նյութական միջոցներից, կոմիտեն 1916 թվականի օգոստոսին դադարեց գոյություն ունենալուց, որով, փաստորեն, փակուղու առջև կանգնեցվեցին գաղթականական գործերն ընդհանրապես¹³: Կողոպտվեցին հայերին պատկանող խանութներում մնացած ապրանքները: Անտարբերության մատնվեցին ազգային կալվածքները, որոնք կարող էին նահանգի բնակչությանը տարեկան 15-20 հազար ռուբլու եկամուտ տալ: Կասեցվեց կոմիտեի անունով փոխադրված դրամների վճարումը: Առանց կոմիտեի համապատասխան վկայականների Քաղաքների միությունը ժամանակավորապես դադարեցրեց աղքատ գաղթականների նպաստի բաժանումը¹⁴:

Մի կողմից գաղթականական կոմիտեի վերացումը, մյուս կողմից տիրող ապրանքների թանկությունը (հացի ֆունտը՝ 25 կոպեկ, մի պարկ ալյուրը՝ 60-70 ռուբլի) և առաջին անհրաժեշտության առարկաների բացակայությունը շրջանի գաղթականությանը կանգնեցրել էին աղետաբեր հետևանքների առջև: 1916 թվականի սեպտեմբերի 26-ին Էրզրումի հայ գաղթականական կոմիտեի ատենապետը Հայկական կենտրոնական կոմիտեին ուղղված իր զեկուցագրում նշում էր, որ «Կարնո հայ գաղթականների վիճակը խիստ աննախանձելի է, կենսամթերքները գնալով թանկանում են, մասնավորապես՝ հացը: Անհրաժեշտ է, որ Կովկասից շուտով որոշ քանակությամբ ալյուր հասցնեք մեզ...»¹⁵: Նահանգի տարբեր շրջաններում հողի հսկայական տարածություններ ցանված էին ցորենով: Կառավարությունը թույլատրել էր հավաքել դաշտերի բերքը՝ պայմանով, որ բերքի կեսը տրամադրվեր բանակի կարիքների համար: Սակայն գաղթականները բերք հավաքելու համար չունեին անգամ աշխատանքի անհրաժեշտ գործիքներ:

1916 թվականի վերջերին Էրզրում եկան 4000 նոր գաղթականներ, որոնք տառապում էին սովից և զուրկ էին ամեն տեսակի օգնությունից¹⁶: Նոր ժամանող գաղթականների մասին վերևում հիշատակված զեկուցագրում նշվում էր, որ «...Երզնկայից ու այլ շրջաններից ամեն օր նորանոր գաղթականներ են գալիս՝ գրեթե մերկ, այս առթիվ հանձնաժողովը Հայոց Եկեղեցուց վերցրած ապրանքները սկսեց բաժանել, բաժանված է մոտ 630 ձեռք զգեստ: Նոր եկող գաղթականների տեղավորման համար դժվարության հանդիպեցինք. սրանից մի քանի շաբաթ առաջ կարգադրություն եղավ, որ այն թուրքերը, որոնք հայերի տներում են բնակվում, դուրս գան: Ամեն օր Դերսիմից Էրզնկա են գալիս նորանոր գաղթականներ՝ քրդերի առաջնորդությամբ: Այդ փախստականները հետզհետե Կարին են տեղափոխվում...»¹⁷:

Էրզրում-Երզնկայի շրջանում գործում էին նաև գաղթականների հարցով զբաղվող այլ կազմակերպություններ: Այսպես, համառուսաստանյան Քաղաքների միութ-

¹¹ «Հորիզոն», 1916 թ. հոկտեմբերի 4, թիվ 221:

¹² ЦГИА Р. Гр., ф. 520, оп. 1, д. 37, л. 165.

¹³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1261, թ. 4:

¹⁴ «Համբավաբեր», 1916 թ. հոկտեմբերի 9, թիվ 41:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 47:

¹⁷ «Համբավաբեր», 1916 թ. հոկտեմբերի 9, թիվ 41:

յան գաղթականական բաժինը, որը 1916 թվականին գործում էր Կարմիր խաչի դրոշի ներքո, Էրզրում-Երզնկայում կառավարվում էր Կենտրոնական կոմիտեի կողմից, որը գտնվում էր Սարիղամիշում¹⁸: Քաղաքների միության Էրզրումի բաժանմունքը գաղթականներին մատակարարում էր ամեն տեսակի անհրաժեշտ պարագաներ, այդ թվում՝ սննդամթերք, հագուստեղեն և կոշիկեղեն: Բացի դրանից, կենտրոնական գրասենյակը յուրաքանչյուր ամիս գաղթականների համար բաց էր թողնում 30-40 հազար ռուբլի դրամ¹⁹: Դրամական նպաստի փոխարեն հիշյալ շրջանի մի շարք վայրերում՝ Մամախաթունում, Բայբուրթում, Մելիկանեում, Քդիում և Էրզրումում, գոյություն ունեին նաև այլուրի մատակարարման կետեր, որտեղ օգնություն էին ստանում մոտ 2 հազար կարիքավոր գաղթականներ: Քաղաքների միության Էրզրումի բաժանմունքի տրամադրության տակ գործում էին՝ ա) 40 մահճակալով հիվանդանոց և ամբուլատորիա, որտեղ օրական հաճախում էին 20-30 հիվանդներ, բ) արհեստանոց, գ) որբանոց, որը բացվել էր 1916 թվականի նոյեմբերի 27-ին և ուներ 9-16 տարեկան 45 որբեր, դ) «թռուցիկ» (սպիցփոփ) ջոկատ, որը փնտրում և գտնում էր կորած հայ որբերին և իրավաբանական օգնություն ցույց տալիս գաղթականներին: Իր գործունեության ընթացքում ջոկատին հաջողվել էր փրկել 91 կորած երեխաների: Ջոկատը միաժամանակ 8 հազար փութ ցորեն էր բաժանել Տրապիզոնի (4000 փութ) և Էրզրումի (4000 փութ) շրջաններում²⁰:

Մոսկվայի Հայկական կոմիտեի 4-րդ բժշկասանիտարական բաժինը, որը գտնվում էր վերոհիշյալ Կարմիր խաչի համառուսաստանյան ընկերության հովանավորության ներքո, Էրզրումում գործում էր 1916 թվականի մարտից և ղեկավարվում Մոսկվայում գտնվող Կենտրոնական կոմիտեի կողմից²¹: Մոսկվայի Հայկական կոմիտեի շրջիկ ջոկատը նախ և առաջ կազմակերպեց Էրզրումի նահանգի բազմաթիվ գաղթականների և որբերի որոնումը և նրանց տեղափոխումն ու բնակեցումը նահանգի գյուղերում: Ժամանակակիցների վկայությամբ, այն ժամանակ Դերսիմի լեռներում քրդերի մոտ ապաստանել էին շուրջ 5-10 հազար գաղթական հայեր²²: Դերսիմի 60 հազար քրդերը, հաշվի առնելով ռուսական բանակի առաջխաղացումը, բարյացակամ վերաբերմունք էին ցույց տալիս հայերի նկատմամբ: Եվ պատահական չէ, որ Երզնկայի գրավումից հետո ազդեցիկ քուրդ բեկերի միջոցով կազմակերպվեց գաղթականների վերադարձը: Այլ էր վիճակը թուրքերով բնակեցված շրջաններում: Թուրքերը չէին ցանկանում վերադարձնել իրենց մոտ հանգրվանած հայերին: Սակայն կազմակերպված հետախուզական լայն ցանցի միջոցով ջոկատին հաջողվեց հունիսի 24-ից մինչև հոկտեմբերի 1-ը գերությունից ազատել և փրկել 4671 գաղթականների, այդ թվում՝ 4-12 տարեկան 450 որբերի: Դրանցից 1475-ը ժամանակավորապես բնակեցվեցին Երզնկայի շրջակա գյուղերում: Կազմակերպվեց գաղթականների սիստեմատիկ փոխադրում Դերջանի (3000 հոգի) և Էրզրումի (2550 հոգի) շրջաններ²³:

Մոսկվայի Հայկական կոմիտեի ջոկատը կազմակերպեց դաշտերում մնացած հա-

¹⁸ ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 66:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 66-67:

²⁰ ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 66-67:

²¹ ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 66-67:

²² ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 5:

²³ «Армянский вестник», 1917 г., № 4.

ցահատիկի հավաքումը: Այդ նպատակով Դերսիմի լեռներում ապաստանած 1475 գաղթականներ բնակեցվեցին նահանգի անմարդաբնակ գյուղերում՝ տալով նրանց անասուններ և գյուղատնտեսական գործիքներ: Գյուղատնտեսական աշխատանքների հետևանքով հավաքվեց շուրջ 10000 փ. հացահատիկ²⁴:

1916 թ. հունիսի 25-ին բացվեց 500 հոգու համար նախատեսված Մոսկվայի Հայկական կոմիտեի ջոկատի սննդատու կետը, որը սեպտեմբերի 18-ին ընդարձակվեց 1200 հոգու համար: Ջոկատը կազմակերպեց նաև օգնություն հագուստեղենով և կոշկեղենով: Սակայն այդ հարցում նա ի վիճակի էր օգնել միայն փոքրահասակ գաղթականներին²⁵: Մոսկվայի Հայկական կոմիտեն Էրզրումում պահում էր հիվանդանոց, որբանոցներ և դպրոցներ: Մարտին բացված հիվանդանոցն ուներ 50 մահճակալ՝ չնայած որոշ դեպքերում հիվանդների թիվը հասնում էր 100-ի: Մինչև հոկտեմբերի 20-ը հիվանդանոցում ապաքինվել էին 579, իսկ ամբուլատոր բուժում էին ստացել 3409 գաղթականներ: Երթնեկ հիվանդների թիվն ամսական կազմում էր 300-400 հոգի²⁶:

Էրզրումում բացված որբանոցը կրում էր ժամանակավոր տեղավորման բնույթ, որտեղ հավաքագրելով հայ և քուրդ որբերին՝ հետագայում նրանց տեղափոխում էին Կովկաս: Սեպտեմբերի վերջին որբերի տեղափոխումը դադարեցվեց: Նոր որբանոցներ բացվեցին Էրզրումում և Զիթոդ գյուղում (1915 թվականի հուլիսի 25-ին), որոնցից երկուսը գտնվում էին Նպաստամատույց ընկերության, իսկ մյուս երկուսը՝ Մոսկվայի Հայկական կոմիտեի հոգատարության և խնամատարության ներքո: Նպաստամատույց ընկերության որբանոցներում զետեղված էին 4-15 տարեկան 72 որբեր, որոնց բժշկական կարիքները հոգում էր Քաղաքների միության հիվանդանոցը: Մինչև հոկտեմբերի 1-ը Մոսկվայի Հայկական կոմիտեի տեղական բաժանմունքի խնամակալության տակ էին գտնվում 723 որբեր, որոնցից հետագայում Կովկաս տեղափոխվեցին 395-ը, ծնողներին հանձնվեցին՝ 54-ը, իսկ հիվանդությունից մահացած՝ 37-ը: Այնպես որ 1916 թ. հոկտեմբերին որբանոցում կային ընդամենը 237 որբեր²⁷: Մինչև 1917 թ. հոկտեմբերը այս երկու որբանոցներում հանգրվանել և Անդրկովկասի տարբեր շրջաններ էին ուղարկվել մոտ 1050 որբեր²⁸:

Յուրաքանչյուր որբանոց ուներ իր առանձին դպրոցը, որտեղ ավանդում էին գրաձանաչություն, հայերեն, ռուսերեն, թվաբանություն, իրավագիտություն, աշխարհագրություն, երաժշտություն, կրոն, գեղագրություն, ձեռագործ և այլ առարկաներ:

Բացի որբանոցներին կից գործող դպրոցներից, նպատակահարմար գտնվեց նաև դպրոցներ բացել Էրզրումի շրջանի 4 խոշոր գյուղերում (Օձնիում, Ումուդում, Զիթոդում և Չիֆլիկում)՝ 420 աշակերտների համար²⁹: 1916 թ. նոյեմբերի 15-ից դպրոցներ բացվեցին նաև Երզնկայի շրջանի 9 գյուղերում, որտեղ սովորում էին 450 երեխա-

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

²⁶ ՀԱՍ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 66-67, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. սեպտեմբերի 25, թիվ 214, նաև «Армянский вестник», 1917 г., № 1.

²⁷ ՀԱՍ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 66-67, նաև՝ «Պահակ», 1917 թ. օգոստոսի 3, թիվ 57, նաև «Армянский вестник», 1917 г., № 1.

²⁸ «Աշխատանք», 1917 թ. հոկտեմբերի 4, թիվ 43:

²⁹ «Армянский вестник», 1917 г., № 1.

ներ³⁰:

Բացի Քաղաքների միությունից և Մոսկվայի Հայկական կոմիտեի անմիջական աջակցությունից, գաղթականներին նյութական և դրամական օգնություն էր ցույց տալիս նաև ԿՀԲԸ-ը, որին կից կազմված Կենտրոնական կոմիտեն 1916 թ. հոկտեմբերի վերջերին հնարավորություն ունեցավ էրգրումում հիմնել պահեստ՝ գաղթականությանը էժան գներով կենսամթերքներ բաժանելու համար:

Ընդհանրապես էրգրումի շրջանի գաղթականությանը օգնելու նպատակով դրամական նպաստներ էին ստացվել գաղթականության գլխավոր լիազոր Թամամշից (1917 թ. մարտի 14-ին՝ 17090 ռ.), գաղթականությանը նպաստող Ընկերությունների միությունից (60000 ռ.), զեներալ-կոմիսարից՝ (1917 թ. օգոստոսի 30-ին՝ 35000 ռ.՝ լծկանների համար, 1917 թ. սեպտեմբերի 5-ին՝ 35000 ռ., և 1917 թ. դեկտեմբերի 31-ին՝ 150000 ռ.՝ սերմացուի համար), պատերազմից վնասված հայ գյուղատնտեսության վերականգնման կոմիտեից (1915 թ.՝ 47610 ռ., 1916 թ.՝ 39939 ռ., 1917 թ.՝ 1500 ռ.), հայ մեծահարուստ Լ. Մանթաշյանից (30000 ռ.՝ կոռպերատիվների համար) և նախկին փոխարքայի դիվանից (350000 ռ.՝ պարենավորման գործի համար)³¹:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում գաղթականների հոգևոր-կրոնական պահանջմունքների բավարարման և եկեղեցական գույքի պահպանման վրա:

1916 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներգաղթի հետ կապված էրգրումի շրջանի գաղթականության թիվը պակասեց՝ հասնելով 7000-ի: Նրանցից 2000-ը տեղավորված էին էրգրումում, իսկ 5000-ը՝ շրջանի գյուղերում³²: 1916 թ. դեկտեմբերին էրգրումի ամբողջ նահանգն ուներ մոտավորապես 29-30 հազար գաղթականներ, որոնք տեղաբաշխված էին հետևյալ շրջաններում. էրգրում քաղաքում՝ 1900-2000 հոգի, էրգրումի շրջանի 24 գյուղերում՝ 2000 հոգի, Բասենի շրջանի 33 գյուղերում՝ 13000 հոգի, Բաբերդ քաղաքում և շրջակա գյուղերում՝ 700 հոգի, Դերջանի շրջանում՝ 2500 հոգի, Երզնկա քաղաքում և շրջակա մի քանի գյուղերում՝ 1500 հոգի, Քղիում՝ 400 հոգի, Խնուս քաղաքում և շրջակա գյուղերում՝ 7000 հոգի³³:

Ըստ ազգությունների, 1917 թ. մայիսին էրգրումի շրջանը ներկայացնում էր հետևյալ պատկերը.

	Հայեր	Մահմեդականներ	քրդեր	և այլն
Մինչև 5 տարեկան երեխաներ	70	221		
Մինչև 16 տարեկան երեխաներ	106	531		
Մեծահասակներ՝ 15-60 տարեկան	559	545		
Ծերեր՝ 60 տարեկանից բարձր	10	142	6	164
Ընդամենը՝	745	1439	6	164³⁴

1917 թ. հուլիսի 1-ին էրգրումի գաղթականների թիվը հասավ 2430-ի³⁵: 1917 թ. գաղ-

³⁰ ՀԱՍ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 7:

³¹ ՀԱՍ, ֆ. 32, ց. 1, գ. 13, թ. 107:

³² ՀԱՍ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 42, նաև՝ «Армяне и война», 1917 г., январь-февраль, № 12.

³³ ՀԱՍ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 9:

³⁴ ՀԱՍ, ֆ. 239, ց. 1, գ. 3, թ. 71:

թականության թվաքանակի մեծացումը պայմանավորված էր այն իրողությամբ, որ ռուսական բանակի նահանջից հետո, սննդամթերքի բացակայության և ուրիշ այլ պատճառների հետևանքով, գաղթականական բնակչությունը գյուղական վայրերից տեղափոխվեց շրջանի խոշոր կենտրոններ, որի հետևանքով էրզրումի և նրա շրջակայքի գաղթականության թիվը գնալով մեծացավ:

Ռուսական բանակի կողմից *Երզնկայի* գրավման նախօրյակին շրջանի հայ գաղթականությունն ապաստանել էր ռազմաճակատի սահմանամերձ բնակավայրերում, ինչպես նաև՝ Դերսիմում, տեղացի քրդերի մոտ: 1916 թ. հուլիսի 12-ին, ռուսական զորքերի կողմից Երզնկայի գրավումից անմիջապես հետո, հայ գաղթականությունը հանգրվանեց Երզնկայի շրջանի գյուղերում: Օրական Երզնկա էին ժամանում 40-50 գաղթականներ, որոնք Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից գաղթած հայեր էին: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք և երեխաները: Ռուսական բանակի առաջին կորպուսի հրամանատար Կալիտինի վկայությամբ, իր կորպուսի շրջանում բացի հայերից այլ ազգությունների գաղթականներ չկային³⁶: Բուն քաղաքի և դաշտի մեջ գտնվող 31 հայաբնակ գյուղերի 15000 բնակչությունից հայրենիք վերադարձան 1500 հոգի՝ Դերսիմից (ընդ որում, 1200 հոգի ապաստան էին գտել Երզնկայի շրջակայքի և Դերջանի հովտի հայկական գյուղերում), 850 հոգի՝ Էրզրումի շրջանից, և 250 հոգի՝ Բաթումից³⁷: Երզնկայի շրջանից ամբողջությամբ փրկվել էին հիմնականում Ագրակ և Կեզլիձե գյուղերի բնակիչները՝ թերևս այն միակ պատճառով, որ հիշյալ գյուղերը ավելի մոտ էին գտնվում Տավրոսյան լեռնաշղթային, իսկ մնացած 29 գյուղերի բնակիչներից ազատվել էին առանձին անհատներ³⁸:

Երզնկա քաղաքը բաժանվում էր երկու մասի. արևելյան մասում հաստատվել էին թուրքերը, իսկ արևմտյանում՝ հայերը, շուրջ 1500 տուն³⁹: Հայկական տարածքը մեծ մասամբ ավերված էր: Փրկվել էին միայն այն շինությունները (անհատական և ազգապատկան), որոնք հայերի տեղահանությունից հետո գրավվել էին թուրքերի կողմից՝ ծառայելու համար հասարակական պետքերին:

Հայկական առաջին հրաձգային գումարտակի հրամանատար Բեժանբեկի նախաձեռնությամբ Երզնկայում կազմվեց գաղթականական կոմիտե, որը գաղթականներին ցույց էր տալիս պարենային և ֆինանսական օժանդակություն⁴⁰: Երզնկայի գրավումից անմիջապես հետո քաղաքում հաստատվեց Մոսկվայի Հայկական կոմիտեի տեղական բաժանմունքը, որը բաժանում էր հաց և կերակրում շրջանի 1000-ից ավելի կարոտյալներից միայն 250 հոգու: Երզնկայում, ի տարբերություն գաղթականական մյուս շրջանների, տիրում էր առաջին անհրաժեշտության առարկաների առատություն⁴¹, սակայն տիրում էր նաև կենսամթերքների թանկություն⁴²:

Համապատասխան միջոցների ձեռնարկվեցին գերության մեջ գտնվող հայ գաղթականներին փրկելու ուղղությամբ: Մոսկվայի Հայկական կոմիտեի կազմակերպած

³⁵ Նույն տեղում:

³⁶ ՀԱԱ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 18:

³⁷ «Համբավաբեր», 1916 թ. օգոստոսի 21, թիվ 34, նաև՝ հոկտեմբերի 4, թիվ 221:

³⁸ ՀԱԱ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 18:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 14:

⁴¹ Նույն տեղում:

⁴² «Գաղափար», 1916 թ. հոկտեմբերի 9, թիվ 82:

խուզարկու խմբերի շնորհիվ թուրքական և քրդական գերությունից ազատվեցին շուրջ 200 հայ կանայք, աղջիկներ և երեխաներ:

1916 թ. հուլիսի 25-ին Երզնկա ժամանեց Մոսկվայի Հայկական կոմիտեի ներկայացուցիչ դոկտոր Ասրիևը, որը գործող գաղթականական կոմիտեին հատկացրեց 1600 ռ. դրամ⁴³: Միննույն ժամանակ, Ասրիևը միջնորդեց ռուսական բանակի առաջին կորպուսի հրամանատարին՝ թույլ տալու համար Երզնկա եկող գաղթականներին վերաբնակեցնել շրջակայքի դատարկված հայկական գյուղերում՝ բերքը հավաքելու և այն ռազմական իշխանությունների հետ կիսելու նպատակով: Այդ միջնորդության հետևանքով 1916 թ. օգոստոսի 12-ից շրջանի 7 գյուղերում (Ագրակ, Գյուլջա, Էրկան, Մոլլապյուղ, Գելենցիկ, Ուրում-Ակրակ և Մեգուցիխ) տեղավորվեցին 1200 գաղթականներ: Բացի դրանից, Երզնկա ուղարկվեցին նաև կանանց և երեխաների գաղթականական երեք խմբեր՝ բաղկացած համապատասխանաբար 292, 215 և 700 հոգուց⁴⁴:

1916 թ. հուլիսի 30-ի տվյալներով Երզնկայում կային շուրջ 2500 գաղթականներ⁴⁵: 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին վերջիններիս թվաքանակը, տեղացիների հետ միասին, կազմում էր 3000-3500 հոգի:

Գաղթականության շահերից ելնելով և վերջիններիս անվտանգությունն ապահովելու առումով, 1917 թ. մայիսին ստեղծվեց Երզնկայի շրջանի «Եփրատ» գաղթականական կոմիտեն, որը բաղկացած էր 130 անդամներից: Կոմիտեի նպատակն էր՝ ստեղծել մի այնպիսի կազմակերպություն, որը հավանական որևէ նահանջի դեպքում կարողանար ժողովրդին անվտանգ փոխադրել ռուսական տարածք: Թշնամու հարձակմանը դիմակայելու նպատակով, կոմիտեն անկուսակցական հողի վրա ստեղծեց «Վտանգի պատնեշ» խմբակցությունը: 1917 թ. ստեղծվեց նաև Երզնկացիների միությունը, որի նպատակն էր՝ բարոյական և նյութական օգնություն հասցնել վերադարձող երզնկացիներին:

Էրզրումի գրավումից հետո Բասենի շրջանի գաղթականները, որոնք ճակատագրի բերումով ապաստանել էին Անդրկովկասի տարբեր շրջաններում, հնարավորություն ստացան վերադառնալ իրենց հայրենի գյուղերը: Սակայն սկզբնական շրջանում զինվորական իշխանություններն արգելափակում էին նրանց վերադարձը: 1916 թ. մարտի վերջերին սկսված ներգաղթի հետևանքով իրենց բնակության նախկին վայրեր վերադարձան Կաղզվանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Լոռիում, Բորչալուի և այլ շրջաններում, ինչպես նաև հարևան 20 քրդաբնակ գյուղերում ապաստանած 5 հազար բասենցի գաղթականներ⁴⁶: Բասենում բնակություն հաստատեցին նաև այն գաղթականները, որոնք տարբեր ժամանակներում, խուսափելով թուրքական պետության դաժան քաղաքականությունից, անցել էին սահմանը և դարձել ռուսահպատակներ: Գաղթականների մի մասը տեղավորվեցին իրենց նախկին գյուղերում, իսկ մյուս մասը հանգրվանեց Բասենի քրդական և թուրքական շրջաններում: 1916 թ. զարնանը Բասենի շրջանում կար 80 գյուղ՝ մոտ 12 հազար բնակչությամբ, որից մոտ 3 հազարը (17-50 տարեկան) տղամարդիկ էին, 3 հազարը՝ կանայք, իսկ 6 հազարը՝

⁴³ «Հորիզոն», 1916 թ. հոկտեմբերի 28, թիվ 241:

⁴⁴ ՀԱՍ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 15:

⁴⁵ «Վան-Տոսպ», 1916 թ. օգոստոսի 21, թիվ 39:

⁴⁶ ՀԱՍ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 5, նաև՝ «Համբավաբեր», 1916 թ. ապրիլի 10, թիվ 16:

երկսեռ երեխաներ⁴⁷։ Եթե ընդունելու լինենք այն իրողությունը, որ յուրաքանչյուր ընտանիք բաղկացած էր մոտ 6 շնչից, ապա պարզ կդառնա, որ Բասենի շրջանում կային 2 հազար տուն գաղթականներ, որոնք տեղաբաշխված էին Բասենի հետևյալ շրջաններում. Ղարաքիլիսի 8 գյուղերում՝ 176 ընտանիք (1760 հոգի), Արփաչախի 10 գյուղերում՝ 158 ընտանիք (1580 հոգի), Ալիջակրակի 10 գյուղերում՝ 270 ընտանիք (2700 հոգի), Օմրակումի 21 գյուղերում՝ 425 ընտանիք (4250 հոգի), Քյոփրի-Քյոյի 7 գյուղերում՝ 100 ընտանիք (1000 հոգի)։ Ընդամենը՝ 11290 հոգի⁴⁸։ Գաղթականական բնակչության գերակշռող մասը բաղկացած էր կանանցից, երեխաներից և ծերերից։ Աշխատունակ տղամարդիկ կազմում էին գաղթականների մոտ 10 %-ը⁴⁹։

Բնակություն վերահաստատելուց հետո ազգաբնակչությունը ձեռնամուխ եղավ երկրագործական աշխատանքների վերսկսմանը՝ հավատացած լինելով, որ գոյության և փրկության միակ ուղին պայմանավորված էր հենց դրանով։ Բարեբախտաբար, շրջանի գաղթականությունն ուներ բավարար չափով անասուններ, որով հնարավորություն ստեղծվեց երկրագործական աշխատանքներ կատարել՝ առանց դրսի օգնության։ Սակայն ցանքատարածությունների մշակմամբ զբաղվում էր բնակչության միայն 80 տոկոսը, որովհետև մնացած 20 տոկոսը չքավորներ էին, որոնք զուրկ էին աշխատողներից և լծկաններից⁵⁰։ 1915-1916 թթ. ձմռանը գյուղատնտեսական ընկերությունը խոստացել էր Բասեն ուղարկել սերմացու, լծկաններ, երկրագործական գործիքներ և նույնիսկ հրահանգիչներ։ Սակայն խոստումները չիրականացան⁵¹։ Եղբայրական օգնության կոմիտեի աջակցությամբ (այն հատկացրել էր 15000 ռ.) սերմացու գնեցին ռուսական Բասենի հայկական գյուղերից՝ ցորենի փուլը՝ 5-6 ռ., իսկ զարիինը՝ 2-2,50 ռ. չափով։ Քանի որ գաղթականությունը Բասեն եկավ 1916 թ. գարնանը, հետևաբար աշնանացան չլինելու պատճառով գարնանը ցանեցին շատ քիչ, միջին թվով յուրաքանչյուր շնչին 1 փուլ, ընդամենը՝ 1000 փուլ ցորեն և զարի։ Բայց, դժբախտաբար, բերքը չտվեց ցանկալի արդյունք՝ սերմացուի հին լինելու (շատերը օգտագործեցին նախորդ տարվա Ալաշկերտից բերված հին ցորենը) և ուշ ցանելու պատճառով⁵²։

Մի կողմից գյուղատնտեսության անմխիթար վիճակը, մյուս կողմից էլ գաղթականական գործերով զբաղվող ազգային հիմնարկների անտարբեր վերաբերմունքը հնարավորություն չէին տալիս շրջանը փրկել տնտեսական քայքայումից։ Միակ կազմակերպությունը, որ նվազագույն չափով քիչ թե շատ բժշկական և պարենային օգնություն էր ցույց տալիս Բասենի գաղթականներին՝ Քաղաքների միության Բասե-

⁴⁷ ՀԱՍ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 5, նաև՝ ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 45, նաև ֆ. 57, ց. 1, գ. 124, թ. 2, նաև՝ «Армяне и война», 1916 г. июль, № 5.

⁴⁸ ЦГИА Р. Гр., Ф. 520, оп. 1, д. 26, л. 47, ԾՅ՝ Доклад женщины врача Р. Я. Вольфсен о положении беженцев в Пассинской долине и в окрестностях Эрзерума (Доложено в заседании Главного Кавказского Комитета Всероссийского Союза Городов 19 апреля 1916) Б. М. 1916, стр. 1.

⁴⁹ Նույն տեղում, նաև՝ Գ. Մասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918). Տաճկահայ գաղթականությունը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, Բոստոն, 1927, էջ 59:

⁵⁰ ՀԱՍ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 45:

⁵¹ ՀԱՍ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 11:

⁵² ՀԱՍ, ֆ. 57, ց. 1, գ. 424, թ. 2:

նի մասնաճյուղն էր⁵³: Սակայն պարենային օգնություն էր ցույց տրվում միայն երկու շրջանների՝ Ղարաքիլիսի և Ալիջակրակի մոտ 29-30 գյուղերի գաղթականներին, քանի որ հատկացված այլուրն անբավարար էր ամբողջ Բասենի գավառի գաղթականության կարիքները հոգալու համար: Բացի դրանից, Քաղաքների միության տեղական մասնաճյուղը այլուր էր բաժանում նաև ծայրահեղ կարիքավորներին, գլխավորապես՝ այրի կանանց, որք երեխաներին և անաշխատունակ ծերերին: Մնացած մթերքները բաժանվում էին շրջանի միայն աշխատանքի անընդունակ բոլոր անհատներին, համաձայն նախապես կատարված հաշվարկի (ընտանիքի ամեն մի անդամին տրվում էր 2 ֆունտ շաքար, 1 ֆունտ բրինձ, 1/2-ական ֆունտ լոբի, սիսեռ, կրուպա և 1/4 ֆունտ թեյ)⁵⁴: Յուրաքանչյուր գաղթական ստանում էր 92 կոպեկի արժողության բնամթերք՝ հասանելիք 4 ո. 50 կոպեկի փոխարեն:

Անկանոն էր պետական նպաստի բաշխումը, որն օգնության մի կիսամիջոց էր և ոչ թե իսկական օգնություն: 1916 թ. ապրիլին գաղթականներն, իբրև միանվագ գումար, ստացան հունվար, փետրվար և մարտ ամիսների նպաստները, որից հետո նրանք այլևս կանոնավոր կերպով պետական նպաստ չստացան⁵⁵:

Մենդի պակասությունը և հագուստեղենի բացակայությունը պատճառ էին դառնում բազմաթիվ վարակիչ հիվանդությունների տարածմանը: Չնայած 1916 թ. ապրիլին որոշվեց Բասենի գավառում բացել հիվանդանոցներ և սննդատու կայաններ, բայց իրականում գործում էր միայն մեկ հիվանդանոց՝ Ղարաքիլիսայում, իսկ երկրորդը թեև բացվել էր, բայց չէր գործում՝ բժշկական անձնակազմի բացակայության պատճառով⁵⁶:

Չունենալով համապատասխան նյութական և դրամական միջոցներ շրջանի բնակչությանը ցանկալի օգնություն ցույց տալու համար, Բասենի Քաղաքացիական մարմինը չկարողացավ նույնիսկ հարկ եղած ընդունելություն կազմակերպել Մուշից եկած գաղթականների համար, որոնց հոգատարությունը ծանրացավ հայ ազգաբնակչության վրա⁵⁷:

Թուրքական տիրապետության տակ գտնվող Բասենից բացի, գաղթականներ կային նաև ռուսական տիրապետության տակ գտնվող Բասենի մի շարք գյուղերում (Սթահան, Բաշքեռ, Արմութլի, Կրոշկելտի, Չուրաք-Ձորախլի, Ուլու, Ղըզըլ և այլն), որոնց վիճակն ավելի հուսահատական էր: Նրանց թիվը հասնում էր 1500 հոգու կամ մոտ 200 ընտանիք, որոնց մեծամասնությունը անտղամարդ ալաշկերտցիներ էին⁵⁸: Ռուսական Բասենում գաղթականների օգնության գործն իր վրա էր վերցրել Հայկական կենտրոնական կոմիտեի տեղական բաժանմունքը, որը 3 ամսվա խոստումներից հետո, 1916 թ. հունիսի վերջերին, կարողացավ ընդամենը 2 վագոն այլուր ուղարկել շրջանի Բաշ գյուղ⁵⁹:

Անտանեյի էր պաշտոնյաների անբարյացակամ վերաբերմունքը գաղթականների նկատմամբ: Նամանավանդ զինվորական իշխանությունների ներկայացուցիչներն

⁵³ ՀԱԱ, ֆ. 32, ց. 1, գ. 14, թ. 26 - 27:

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 424, թ. 4, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. հուլիսի 26, թիվ 164:

⁵⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 424, թ. 2:

⁵⁶ Նույն տեղում, թ. 3:

⁵⁷ Նույն տեղում, թ. 5-6:

⁵⁸ Նույն տեղում, թ. 6:

⁵⁹ «Հորիզոն», 1916 թ. հուլիսի 26, թիվ 164:

անցնում էին ժողովրդին հարստահարելու ամեն չափ ու սահման:

Գնալով մեծանում էր Բասենի շրջանի գաղթականության թիվը: 1916 թ. դեկտեմբերին այնտեղ ապրում էին 14000 գաղթականներ⁶⁰, իսկ 1917 թ. հուլիսին այդ թիվը հասավ 15000-ի⁶¹:

Ռուսական բանակի կողմից Տրապիզոնը գրավելուց մի քանի օր անց, գաղթականներին օգնելու նպատակով, Բաթումից Տրապիզոն ժամանեցին ԿՀԲԸ Բաթումի մասնաճյուղի և տրապիզոնցիների Հայրենակցական միության Բաթումի ներկայացուցիչները, որոնք, համապատասխան դրամական և պարենային օգնություն ցույց տալուց բացի, գաղթական երեխաների համար բացեցին ապաստարան և որբանոց⁶²: Իսկ 1916 թ. ապրիլի 10-ին, Տրապիզոնի գրավումից 5 օր հետո, արևմտահայերի և արևելահայերի միջնորդությամբ և բարձր իշխանությունների թույլտվությամբ, քաղաքում կազմակերպվեց 8 հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որի կազմի մեջ մտան հայերից (3 հոգի), հույներից (3 հոգի), թուրքերից (1 հոգի) և պարսիկներից (1 հոգի) բաղկացած ներկայացուցիչներ: Հանձնաժողովը, որը գործում էր քաղաքային ինքնավարությանը կից, ուներ որոշակի նպատակ: Այն պետք է ի հայտ բերեր և ցուցակագրեր Տրապիզոնի շրջանի հայապատկան սեփականությունները և դրանք վերցնել իր տնօրինության ներքո⁶³:

Տրապիզոնը գրավող զեներալ Լյախովը 1916 թ. ապրիլի 19-ին հիմնեց գաղթականությանը օգնող Հայկական կոմիտե, որը փաստորեն վերակազմավորված վերոհիշյալ հանձնաժողովն էր⁶⁴: Այն բաղկացած էր 3-5 անդամներից, որոնք ընտրվում էին տեղական հայկական համայնքի ժողովի կողմից՝ ԿՀԲԸ Խորհրդի ներկայացուցչի հսկողության ներքո, և հաստատվում էին նույն՝ ԿՀԲԸ Խորհրդի կողմից⁶⁵: Կոմիտեի նախագահ ընտրվեց Բաթումից հոգևորական Մելյանը: Կոմիտեին կից գործում էր 3 հոգուց բաղկացած հատուկ վերահսկիչ հանձնաժողով, որի անդամներն ընտրվում էին հայկական համայնքի ժողովի կողմից:

Գեներալ Լյախովը լայն իրավունքներ ընձեռեց Հայկական կոմիտեին: Վերջինս, հաստատված իր իսկ կանոնադրության համաձայն, նպատակ ուներ փնտրել, գտնել և խնամել հայ որբերին և կանանց, օգնություն հատկացնել իր կարիքավոր հայերին, ինչպես նաև հավաքել, պահել և վաճառել հայապատկան սեփականությունները: Տրապիզոնի շրջանի հայերի շարժական և անշարժ գույքը կառավարելու, ինչպես նաև պատերազմից տուժած հայերին օգնություն ցույց տալու համար հրապարակվեց Տրապիզոնի Հայկական կոմիտեի 10 կետից բաղկացած հրահանգը, որի համաձայն՝ ստեղծվեց հայերի շարժական և անշարժ գույքը կառավարելու համապատասխան վարչություն⁶⁶: 1916 թ. դեկտեմբերի 1-ին Հայկական կոմիտեն վերսկսեց իր ընդհատված գործունեությունը, որը շարունակվեց մինչև 1917 թ. փետրվարի 1-ը: Կոմի-

⁶⁰ «Համբավաբեր», 1916 թ. դեկտեմբերի 11, թիվ 49:

⁶¹ «Աշխատանք», 1917 թ. հուլիսի 19, թիվ 22:

⁶² ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 29:

⁶³ ՀԱՍ, ֆ. 51, ց. 1, գ. 23, թ. 13:

⁶⁴ ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 29, նաև՝ ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 18, նաև՝ «Համբավաբեր», 1917 թ. մայիսի 19, թիվ 11:

⁶⁵ ՀԱՍ, ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 19:

⁶⁶ Центральный Государственный Военно-Исторический Архив Российской Федерации (ЦГВИА РФ) ф. 2100, оп. 1, д. 272, лл. 64-65, նաև ՀԱՍ, ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 77:

տեղի նորընծա նախագահ դարձավ երդվյալ հավատարմատար Ա. Առաքելյանը⁶⁷: Կոմիտեն կազմեց Տրապիզոնի 426 հայկական տների վիճակագրությունը, որից պարզվեց, որ 131-ը գտնվում էին բոլորովին ավերված վիճակում, 101-ը՝ կիսաքանդ էին, և միայն 194-ն էին, որ մնացել էին կանգուն: Վիճակագրության համար կոմիտեի կողմից արձանագրվեցին նաև քաղաքի 141 խանութները: Իր հետևողական և սկզբունքային գործունեության հետևանքով, Կոմիտեին հաջողվեց փրկել Տրապիզոնի շրջանի 16000 հայ բնակիչներին պատկանող շարժական և անշարժ գույքի միայն մի մասը: Ոչնչացումից փրկվեց 100000 ռ. արժողությամբ անշարժ և 30000 ռ. արժողությամբ շարժական գույք⁶⁸: Համապատասխան միջոցառումներ իրականացվեցին ծնողակորույս երեխաների որոնման ուղղությամբ: Կոմիտեն անխուսափելի կործանումից փրկեց շուրջ 200 հայ երեխաների, որոնց մի մասին ուղարկեց ԿՀԲԸ Բաթումի որբանոց: Կոմիտեն մեծ աշխատանք կատարեց նաև շրջանի գաղթականությանը փողով և բնամթերքով օգնելու ուղղությամբ: Իր գործունեության տարբեր շրջաններում կոմիտեն օժանդակության կարոտ հայերին հատկացրեց մինչև 8000 ռ. ֆինանսական օգնություն⁶⁹:

Բացի գաղթականական կոմիտեից, Տրապիզոնում գործում էր նաև 100-ից ավելի անդամներ ունեցող ԿՀԲԸ տեղական մասնաճյուղը, որը զբաղվում էր տեղացի կարիքավորներին ու նորեկ գաղթականներին պահելու և խնամելու գործերով:

Տրապիզոնում հիմնվել էր նաև Եղբայրական օգնության տեղական կոմիտե, որի գործունեության ոլորտի մեջ էր մտնում որբանոցների և դպրոցների հոգածությունը:

Հայ գաղթականներին օգնում էր նաև Քաղաքների միության Տրապիզոնի բաժանմունքը, որը 1916 թ. մայիս-հունիս ամիսներին Տրապիզոնի շրջանի մի շարք վայրերում (Օֆում, Խումուրյանում, Դրոնայում, Պլատանայում և Ջնիզլիկում), բացել էր 5 պարենային-բժշկական կետեր, 5 բաղնիքներ, 4 թեյարաններ, 4 կենսամթերքների պահեստներ, ինչպես նաև կենտրոնական դեղատուն, ամբուլատորիա, որբանոց և գաղթականների համար ժամանակավոր հանգրվան՝ Տրապիզոնում⁷⁰: Սննդատու կետերն օրական սպասարկում էին մինչև 1750 գաղթականների և հաճախ բաժանում էին 2 ֆունտ ալյուր: Փախստականներին խնամելու, սննդատու կայաններին կանոնավոր կերպով մթերքներ մատակարարելու և փոխադրական սայլերի թիվը ավելացնելու նպատակով, Քաղաքների միության կովկասյան բաժանմունքը Տրապիզոնի շրջանին ամսական հատկացնում էր 59985 ռ.⁷¹:

Տրապիզոնում իր բարեգործական պարտքն էր կատարում նաև Մոսկվայի Հայկական կոմիտեի տեղական բաժանմունքը, որը Տրապիզոնում բացել էր 75 մահճակալով հիվանդանոց⁷²:

1916 թ. գարնանը, երբ ռուսական բանակը գրավեց Տրապիզոնը, աշխուժություն նկատվեց նաև դպրոցական-կրթական գործում: Վերապրող 7-800 հայեր նախկին Աղջկանց վարժարանի շենքում բացեցին որբանոց-դպրոց: Ապա սկսեց գործել նախ-

⁶⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 29-30, նաև ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 31:

⁶⁸ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 31:

⁶⁹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 31:

⁷⁰ (ЦГИА Р. Гр.) ф. 520, оп. 1, д. 45, л. 97, նաև՝ «Հորիզոն», 1917 թ. հոկտեմբերի 4, թիվ 221, նաև՝ «Արև», 1916 թ. հոկտեմբերի 6, թիվ 221:

⁷¹ «Հորիզոն», 1916 թ. սեպտեմբերի 17, թիվ 207:

⁷² ՀԱԱ, ֆ. 393, ց. 1, գ. 213, թ. 1:

կին ազգային-լուսավորչական վարժարանը, ուր սկսեցին հաճախել 60-70 աշակերտներ: Դրանց զուգահեռ վերաբացվեց նաև Մխիթարյան վարժարանը (իր գիշերօթիկ բաժանմունքով), ուր սովորում էին 50 երկսեռ աշակերտներ⁷³: 1917 թ. հունվարից իր կրթական գործունեությունը սկսեց նաև Տրապիզոնի հայոց տարրական դպրոցը, ուր սովորում էին 44 որբեր և պաշտոնավորում էին քույր և եղբայր 2 ուսուցիչներ⁷⁴:

1917 թ. հունվարին Էրզրումի շրջանում ապաստանել էին 5000, իսկ քաղաքում՝ 2000 գաղթականներ, որոնք փախել էին Դիարբեքիից և Խարբեռլից⁷⁵: Կոտորածներից փրկված տրապիզոնցի հայերի թիվը կազմում էր ընդամենը 586 հոգի⁷⁶:

Այսպիսով, ռուսական բանակի՝ դեպի Սամսոն շարժվելու շնորհիվ Տրապիզոնի թիկունք դառնալու հանգամանքը, ինչպես նաև բարեգործական հաստատությունների անխափան աշխատանքը հնարավորություն էր ընձեռել Տրապիզոնի հայ բնակչությանը՝ ազատ մնալ սուր կարիքներից, ունենալ բնակարան, անհրաժեշտ քանակությամբ հագուստեղեն և կարասիներ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Բայբուրդն ուներ 16000-ի հասնող հայ ազգաբնակչություն, սակայն կոտորածների և աքսորների հետևանքով 1916 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին քաղաքում մնացել էին ընդամենը 200 կանայք և որբ երեխաներ⁷⁷:

Նույն ժամանակաշրջանում Բայբուրդի Ղըսանդա, Հընդի, Լսոնք գյուղերում հանգրվանել էին 450-500 գաղթական հայեր, որոնք գտնվում էին անօգնական վիճակում⁷⁸: 1916 թ. սեպտեմբերի 17-ին Անդրանիկին ուղղված իր նամակում Սեպուհը նշում էր. «Արցունքն այժմ էրիս դիմում եմ քեզ: Ամեն տեղ, ամեն դուռ զարկի, բայց բռնորդ դռները ամուր գոց և սրտերը կարծրացած տեսա: Ոչ մի տեղից պատասխան, օգնություն չստացա: Երեք ամիս է անցել այն օրից, երբ Բաբերթը գրավված է և ոչ մի նպաստաբաշխ մարմին տեղս ազատվածներին օգնություն չի հասցրած: Ճարս կտրել եմ և հրապարակով դիմում եմ քեզ, հանուն և ի սեր ընկերության. դու դիմիր, ուր որ հարկն է, գուցե քո ազդու կոչերով մեղմացնես քար սրտերը՝ այս թշվառներին օգնություն հասցնելու համար...»⁷⁹:

Սկզբնական շրջանում Բայբուրդի գաղթականներին օգնություն էր հայցվում Թուրքեստանյան 2-րդ կորպուսի կոմենդանտ, կապիտան Անդրյուշենկոյի նախաձեռնությամբ, իսկ հետագայում օգնության գործը իրենց վրա վերցրին պարետային վարչության սպա Փիրումովը և անասնաբույժ Օզանեսովը⁸⁰: Հաշվի առնելով Բայբուրդում տիրող պարենային ճգնաժամը, ինչպես նաև այն հանգամանքը, որ գաղթականները շրջակա գյուղերից էին, որտեղ բերքը դեռ չէր հավաքվել, թվով 425 գաղթականներ վերաբնակվեցին իրենց նախկին գյուղերում:

1916 թ. մարտին Դիադինի գավառն ուներ 17000 բնակչություն, որից 6000-ը տե-

⁷³ Արմ. Կոթիկյան, Դայրոցա-թատերական կյանքը Տրապիզոնում (1815-1915), «Տեղեկագիր» Հասարակական գիտությունների 1962, թիվ 7:

⁷⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 30:

⁷⁵ ՀԱԱ, ֆ. 393, ց. 1, գ. 213, թ. 1:

⁷⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 30:

⁷⁷ «Համբավաբեր», 1916 թ. սեպտեմբերի 4, թիվ 36:

⁷⁸ «Հորիզոն», 1916 թ. հոկտեմբերի 5, թիվ 22:

⁷⁹ «Հորիզոն», 1916 թ. հոկտեմբերի 8, թիվ 225:

⁸⁰ Նույն տեղում:

ղացի հայեր էին, իսկ 6000-ն էլ՝ տեղացի եզդի ազգաբնակչություն: Բացի դրանից, գավառում տեղաբաշխված էին նաև 2500 հայ և նույնքան էլ եզդի գաղթականություն, որոնք հիմնականում ճողոպրել էին Վանի նահանգից⁸¹: Շրջանի գաղթականությունը ստանում էր պետական նպաստ: Նրանց ցույց էր տրվում նաև բժշկական և պարենային օգնություն: Մոսուն գյուղում բացվել էր Մոսկվայի Հայկական կոմիտեի 25 մահճակալով հիվանդանոցը, նույն կոմիտեի սպառողական խանութը և մթերքների պահեստը: Գործում էր նաև Մոսկվայի Հայկական կոմիտեի տեղաբաշխիչ կայանը, որտեղից գաղթականներ էին տեղափոխվում Աշտարակ և Կուրդու-Կուլի⁸²:

Գավառի մյուս շրջաններում բացակայում էր բժշկական օգնությունը, և անկանոն ձևով էր իրականացվում պետական նպաստի բաշխումը: Դա հիմնականում պայմանավորված էր գավառի այդ շրջաններում բարեգործական ընկերությունների և անհրաժեշտ ծառայողական անձնակազմի բացակայությամբ:

1916 թ. վերջերին և 1917 թ. սկզբներին Մոսունի և Դիադինի շրջանի գաղթականության թիվն աճեց՝ հասնելով 7000-ի⁸³: Ինչ վերաբերում է գավառի բուն ազգաբնակչությանը, ապա, համաձայն գեներալ-մայոր Ա. Թամամշևի որոշման, պետական նպաստի օրենքը տարածվում էր միայն եզդիների վրա: Աղքատացած հայ բնակչությունը, որը կորցրել էր և՛ բնակարանը, և՛ անասունները, և՛ գյուղատնտեսական գործիքները, և՛ տնային կահ-կարասին, մի խոսքով, ամեն ինչ ոչնչով չէր տարբերվում գաղթականությունից և գտնվում էր մեծ կարիքի մեջ:

Սվազում տեղահանություններից և կոտորածներից զերծ էին մնացել բռնի կերպով մահմեդականություն ընդունած և ամերիկյան միսիայի հովանավորության ներքո ապաստանած 40-50 տեղաբնիկ հայկական ընտանիքներ⁸⁴: Մինևույն ժամանակ մահմեդականություն ընդունած 500 հայ արհեստավորներ էլ հարկադրաբար աշխատում էին թուրքական բանակի համար:

Երզնկայի գրավումից հետո փոխվեց թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի նկատմամբ: Հաշվի առնելով ռուսական բանակի առաջխաղացումը, թուրքերն իրենք սկսեցին խնդրել, որ հայերն իրենց մոտ ապաստանեն՝ ռուսների Սվազ հասնելու դեպքում նրանց կողմից պաշտպանություն ստանալու հույսով:

1916 թ. օգոստոսի 1-ին Սվազում հանգրվանել էին 1000-1500 գաղթականներ, որոնցից 50 ընտանիքներ ժամանել էին Մամսունից, Թոքատից, Ամասիայից և հարևան այլ շրջաններից⁸⁵: Իրադարձությունների անբարենպաստ բերումով շրջանի 70 որբերի խնամքն իր վրա էր վերցրել շվեյցարական որբանոցը⁸⁶: Չնայած շրջանը բավարարված էր կենսամթերքներով, սակայն իրեն զգացնել էր տալիս դրամի պակասությունը:

1916 թ. մարտ-ապրիլ ամիսներին Բիթլիսում և նրա շրջակայքում իրենց գոյությունն էին պահպանում շուրջ 800 գաղթականներ⁸⁷, որոնք գտնվում էին չափից դուրս անտանելի վիճակում: Նույն թվականի հունիս-հուլիս ամիսներին գաղթականությո-

⁸¹ ЦГИА Р. Гр. ф. 520, оп. 1, д. 13, л. 37, также д. 35, л. 118.

⁸² Նույն տեղում:

⁸³ «Армяне и война», 1917 г. январь-февраль, № 11-12.

⁸⁴ «Հորիզոն», 1916 թ. սեպտեմբերի 14, թիվ 204:

⁸⁵ Նույն տեղում, նաև՝ «Армяне и война», 1916 г. октябрь, № 8.

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ «Армяне и война», 1916 г. апрель-май, № 2, նաև՝ ЦГИА Р. Гр., ф. 520, оп. 1, д. 34, л. 4-5.

յան թիվը, համաձայն գեներալ-մայոր Ա. Թամամշևի վկայության, հասավ 11000-ի⁸⁸, սակայն փախստականների թշվառ վիճակը չփոխվեց: Իր հեռագրերից մեկում Սեպուհը 1916 թ. ամռանը նշում էր, որ «ամեն օր այստեղ են գալիս 50-60 փախստականներ՝ կանայք, երեխաներ և տղամարդիկ: Այլուր և հագուստ բոլորովին չկա: Հեռագրվեց Վան, բայց այնտեղից ո՛չ ուտելիք ուղարկեցին և ո՛չ էլ հագուստ: Խնդրում ենք կարգադրեք օգնելու, այլապես շատերը կմեռնեն սովից»⁸⁹:

Սովալյուռ կ և անապաստան գաղթականներին օգնելու և մասնավորապես Բիթլիսի փախստականների համար սննդատու կայան հիմնելու ու 500 ձեռք հագուստեղեն գնելու նպատակով գաղթականական գործի գլխավոր լիազոր գեներալ-մայոր Ա. Թամամշևը Բիթլիսում գործող Քաղաքների միության կովկասյան բաժանմունքի տեղական մասնաճյուղի տրամադրության տակ դրեց 12600 ռ. դրամ⁹⁰:

Միջոցներ էին ձեռնարկվում նաև քրդերի մոտ գերության մեջ գտնվող Բիթլիսի շրջանի շատ գաղթականների ազատման ուղղությամբ, որոնցից յուրաքանչյուրի համար վճարվում էր 1 օսմանյան ոսկի (մոտավորապես 18 ռ.):

Երևանի նահանգապետին ուղղված իր 1915 թ. նոյեմբերի 6-ի նո. 28815 հեռագրում գեներալ-մայոր Ա. Թամամշևը հայտնում էր, որ, ի լրումն սենատոր Պետերսոնի հոկտեմբերի 30-ի նո. 27629 հեռագրի, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը, հաշվի առնելով Դիադինի, ինչպես նաև Բայազետի և Ալաշկերտի շրջաններում ստեղծված անբարենպաստ վիճակը, թույլատրել էր վերոհիշյալ շրջաններ վերադառնալ միայն այն գաղթականներին, որոնք մինչև պատերազմն ապրել էին այդ վայրերում: «Թեև դեռ շարունակվում է պատերազմը,- գրում էր Հովհաննես Թումանյանը,- բայց Ալաշկերտի հայ ժողովուրդը, որ հեռացել էր ռուսաց զորքի նահանջի ժամանակ, նորից ռուսաց զորքի հետ վերադառնում է իր տները - Եփրատի հովիտը»⁹¹: Միաժամանակ արգելվում էր այլ վայրերից հիշյալ շրջանները գաղթականների տեղափոխումը, քանի որ վերջիններս կարող էին ընկնել առավել ծանր կացության մեջ⁹²: Այս որոշումն անշեղ գործադրվեց մինչև 1916 թ. մայիսի վերջերը: Հետագայում, զարնանային աշխատանքների ավարտման և ռուսական բանակի հաղթանակների շնորհիվ երբ ռազմաճակատի գիծը փոխադրվեց Արևմտյան Հայաստանի խորքերը, թույլատրվեց հիշյալ շրջան վերադառնալ նաև այլ վայրերի գաղթականներին:

Մինչև պատերազմը Բայազետի գավառն ուներ 6000 բնակիչ, որոնցից 3000-ը հայեր էին, 2700-ը՝ քրդեր, իսկ 300-ը՝ եզդիներ⁹³: 1916 թ. մարտին Բայազետի գավառում ապրում էին 933 գաղթականներ, որոնցից 733-ը հայեր էին, իսկ 200-ը՝ եզդիներ⁹⁴: Իսպառ ավերվել էին շրջանի շուրջ 3500 տներ, որոնց կորուստը կազմում էր 9450000 ռ.⁹⁵: Մինչև մայիսի վերջը Ալաշկերտ-Ղարաքիլիսայի շրջան վերադարձան

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ «Վան-Տոսպ», 1916 թ. հուլիսի 24, թիվ 35:

⁹⁰ ՀԱՍ, ֆ. 27, ց. 1, գ. 226, թ. 47, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. հունիսի 16, թիվ 132:

⁹¹ **Հ. Թումանյան**, Երկերի ժողովածու, Հ. 4, Երևան, 1951, էջ 309:

⁹² ՀԱՍ, ֆ. 50, ց. 1, գ. 48, թ. 131, 133, 178, գ. 49, թ. 131, նաև՝ ֆ. 223, ց. 1, գ. 30, թ. 1, նաև՝ ֆ. 102, ց. 1, գ. 1057, 1-ի մաս, նաև՝ ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 157, նաև ֆ. 70, ց. 1, գ. 164, թ. 155, գ. 436, թ. 73, նաև՝ ЦГИА Р. Гр., ֆ. 520, оп. 1, д. 34, л. 4-5, 24.

⁹³ ЦГИА Р. Гр., ֆ. 520, оп. 1, д. 35, л. 19, также д. 13, л. 37.

⁹⁴ ЦГИА Р. Гр., ֆ. 520, оп. 1, д. 35, л. 19, также д. 13, л. 37.

⁹⁵ «Հորիզոն», 1916 թ. մարտի 19:

մոտ 1800 տղամարդ գաղթականներ, որոնք ներկայացնում էին շրջանի 1200-1500 ընտանիքներ⁹⁶: 1916 թ. հունիսին Ալաշկերտի հայությունը, որը բաղկացած էր հիմնականում տղամարդկանցից, ամփոփված էր նույն շրջանի 30 գյուղերում: Ընտանիքի անդամների թիվը յուրաքանչյուր գյուղում չէր անցնում 120-140-ից: Կային նաև գյուղեր, որտեղ տեղավորված էին ընդամենը 2-3 ընտանիքներ: Միջին հաշվով, ամբողջ Ալաշկերտում զետեղված ընտանիքների թիվը հասնում էր 1500-ի⁹⁷: 1917 թ. փետրվարին Ալաշկերտի բնակչության թիվը հասավ շուրջ 7500-ի (որից 1700-ը ծերեր և անաշխատունակներ էին, 2400-ը՝ կանայք, 1100-ը՝ մինչև 5 տարեկան, և 2300-ը՝ 5-14 տարեկան երեխաներ)⁹⁸: Իսկ նույն թվականի աշնանը կային արդեն 9600 գաղթականներ⁹⁹:

1915 թ. սեպտեմբերի 15-ին կազմակերպվեց Ալաշկերտի Եղբայրական օգնության կոմիտեն, որը, Կովկասյան 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկու կողմից վավերացվելուց հետո, ձեռնամուխ եղավ իր գործունեությանը: Կոմիտեի տրամադրության տակ դրված գումարներով հոկտեմբերին ձեռք բերվեց և Մոսկու ու Արծափ տեղափոխվեց մոտավորապես 5000 կոտ ցորեն¹⁰⁰: Միաժամանակ գաղթականներին օգնելու նպատակով գավառում գործում էր գաղթականական կոմիտե՝ Բայազետի գավառապետ կապիտան Կարտիշևսկու նախագահությամբ: Կոմիտեի կազմի մեջ, բացի գավառապետի գրասենյակի անդամներից, մտնում էին հայ հոգևորականության ներկայացուցիչները¹⁰¹:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման գործում մեծ դեր խաղացին Հայկական գյուղատնտեսական ընկերության և Եղբայրական օգնության կոմիտեի կողմից գործուղված հրահանգիչները, որոնք ժամանակին բաժանեցին սերմացու, դրամ, լծկան անասուններ և գործիքներ (1916 թ. զարնանը բաժանվեց 125 գութան, 100 գերանդի, բահեր և եղաններ)¹⁰²: Արժեք ներկայացնող գործիքները և անասունները բաժանվում էին բացառապես այն պայմանով, որ հետագայում գործիք կամ անասուններ ստացող գյուղացին վերադարձներ դրանց արժեքը: Գյուղատնտեսության հետագա զարգացման համար նախատեսվող այս միջոցառումը նպատակ ուներ հավաքված գումարներով հետագայում ստեղծել գյուղատնտեսական ֆոնդ: Բավականին արդյունավետ էր գործում նաև Քաղաքների միությունը, որը 1917 թ. օգոստոսի 1-ին Ալաշկերտի շրջանում ուներ 13 հիմնարկներ, որոնք տեղաբաշխված էին Ղարաքիլիսայում, Ալաշկերտում և Դուտախում: Այդպիսի հիմնարկներից էին 40 մահճակալով գաղթականական հիվանդանոցը, ամբուլատորիան, որբանոցը (416 որբերի համար), պարենային կետը, իրերի պահեստը և ախտահանական ջոկատը¹⁰³:

1917 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Ալաշկերտի գավառային համագումարը, որը քննարկեց Ալաշկերտի գավառում Կենտրոնական կոմիտեի և ԿՀԲԸ գործունեութե-

⁹⁶ «Գյուղատնտես», 1916 թ. հունվարի 15, թիվ 1:

⁹⁷ «Աշխատանք», 1916 թ. հունիսի 22, թիվ 15:

⁹⁸ ЦГИА Р. Гр., ф. 520, оп. 1, д. 90, л. 168, նաև՝ «Վան-Տոսպ», 1916 թ. դեկտեմբերի 25, թիվ 5:

⁹⁹ «Республика», 1917 г. 15 ноября, № 107.

¹⁰⁰ «Մշակ», 1916 թ. հունվարի 24, թիվ 16:

¹⁰¹ ЦГИА Р. Гр., ф. 520, оп. 1, д. 90, л. 168, նաև՝ «Վան-Տոսպ», 1916 թ. դեկտեմբերի 25, թիվ 5:

¹⁰² «Հորիզոն», 1916 թ. օգոստոսի 12, թիվ 179:

¹⁰³ ՀԱԱ, ֆ. 26, ց. 1, գ. 176, թ. 45:

յան արդյունքները՝ պարենավորման, որբանոցային, հիվանդանոցային և կրթական գործունեության, սննդատու կայանների կազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ: Գավառային համագումարի որոշումներից պարզ դարձավ, որ ա) ԿՀԲԸ կից գործող ՀԿԿ իր ամբողջ գործունեության ընթացքում Ալաշկերտում ստացել և բաշխել էր 13246 փութ ալյուր, 17000 փութ ցորեն, 155 փութ շաքարավազ, 295 փութ շաքար, 72 փութ օճառ, 2 փութ թեյ, 38 փութ քարյուղ, 69 փութ բրինձ, 25000 հատ լուցկի; բ) ՀԿԿ սուղ միջոցներով Թոփրակ-Կալեի (Վաղարշակերտ) մեջ բացվել էր 12 մահճակալով հիվանդանոց; գ) Թոփրակ-Կալեում հիմնվել էր որբանոց-դպրոց, ուր սովորում էին 45 աշակերտ-աշակերտուհիներ: Բացի դրանից, որբանոցը իր խնամքի տակ էր վերցրել 120-130 փոքրահասակ որբերի, որոնց համար կառավարությունից ամսական ստացվել էր՝ յուրաքանչյուր որբի համար 15-ական ռ.: Որբանոցը փակվեց 1917 թ. օգոստոսին, իսկ որբերը փոխադրվեցին Կովկաս; դ) 1916-17 ուսումնական տարում Ալաշկերտի մի շարք գյուղերում (Եզնի-Թափայում, Մանկասարում, Ղայաբեկում, Մազրայում) ԿՀԲԸ բացել էր դպրոցներ՝ 235 աշակերտներով, հակառակ այն բանի, որ գավառում չկային դպրոցական ոչ մի հարմարություններ:

1917 թ. հունիսին Ղարաքիլիսայում բացված սննդատու կայանում գաղթականներին բաժանվել էր հաց ու շաքար:

Երկարատև վիճաբանություններից և քննադատություններից հետո, համագումարը ձայների մեծամասնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը. «... Ալաշկերտի գավառական համագումարը կգտնի, որ պարենավորման գործը եղել է օգտակար, բայց ոչ բավարար, որվհետև երկրի պաշտոնյաները կարիքների պարագայում եղել են թույլ...»¹⁰⁴:

Խնուսի (հունվարի 18), Մուշի (փետրվարի 1) և Բիթլիսի գրավումներից հետո, 1916 թ. մարտի սկզբներին Թիֆլիսում ապաստանած մի խումբ մշեցիներ՝ թվով 230 հոգի, ցանկություն հայտնեցին վերադառնալ իրենց հայրենիք՝ ավերված տնտեսությունը վերականգնելու հույսով: Նկատի ունենալով գաղթական մշեցիների վերոհիշյալ մտադրությունը, ՀԿԿ 5000 ռուբլի հատկացրեց ճանապարհաձախսի և հագուստեղենի¹⁰⁵ և 10000 ռ. էլ՝ գաղթականների ամենօրյա կարիքները բավարարելու համար¹⁰⁶: Վերադառնալով հայրենիք, մշեցի այդ երիտասարդները ձեռնամուխ եղան այնտեղ գործող գաղթականական մարմինների աջակցության գործին:

1916 թ. մարտին Խնուսի, Մուշի և Մասունի շրջաններում կային 8400 գաղթականներ, որոնք գտնվում էին կարիքի և զրկանքների մեջ: 1916 թ. զարնանը գաղթականների թվաքանակը փոքր-ինչ շատացավ և հասավ 8811-ի, որոնցից 3071-ը գտնվում էին Խուրում, Բոնաշենում, Մոտրգանում, 1596-ը՝ Մասունում, իսկ 4144-ը՝ Մուշում, Մշո դաշտում և Կինճում: Ընդ որում պետք է նշել, որ Մասունի բնակչության 80 տոկոսը երիտասարդ տղամարդիկ էին, իսկ Խուրի և Բոնաշենի գաղթականության մեծամասնությունը, որ եկել էր ընտանիքներով, կանայք և երեխաներ էին:

Մուշում ձեռնարկվեցին գյուղատնտեսական աշխատանքներ: Գյուղացիներին բաժանվեցին որոշ քանակությամբ եզներ և երկրագործական գործիքներ: Չնայած գործող գաղթականական կոմիտեների կողմից իրականացվեցին մի շարք միջոցա-

¹⁰⁴ «Աշխատանք», 1917թ. սեպտեմբերի 27, թիվ 41:

¹⁰⁵ «Համաբավաբեր», 1916թ. հոկտեմբերի 2, թիվ 40:

¹⁰⁶ «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 20, թիվ 17, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. մարտի 13, թիվ 58:

ռումներ, սակայն, այնուամենայնիվ, Մուշի գաղթական հայությունը գտնվում էր սարսափելի վիճակում¹⁰⁷: Անդրանիկը Մուշից ուղարկած իր հեռագրում նշում էր, որ «Մուշում 5-6 հազար ժողովուրդ սովամահի է մատնված...»: Միննույն ժամանակ, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին ուղարկած իր հեռագրում Անդրանիկը բարեգործական հիմնարկներին կոչ էր անում օգնության հասնել անօգնական կանանց և մանուկներին¹⁰⁸:

1916 թ. հունիսին Մուշի շրջանում կենտրոնացված գաղթականների թիվը 14300-ից¹⁰⁹ հասավ 14500-ի¹¹⁰, սակայն նրանց վիճակը մնաց անմխիթար: Սննդամթերքի պակասության հետևանքով Մուշում լայն տարածում ստացան վարակիչ հիվանդությունները, որոնցից օրական մահանում էին 8-10 հոգի:

1916 թ. հուլիսի 23-ին տեղի ունեցավ նահանջ, որի հետևանքով թե՛ Սասունի լեռներում և թե՛ Մշո դաշտում խմբված 8162 գաղթականներ Մուշ-Բիթլիսից անցան Թուրքական Բասեն, Կարսի նահանգի Կադզվանի շրջան և Երևանի նահանգ¹¹¹: ՀԿԿ Մուշի ներկայացուցիչ Արմեն Սասունին գրում էր, որ «հակառակ անոր, որ Խնուսից և ճանապարհի նշանավոր կետերից հեռացված է բոլոր մարմիններին, օր առաջ մտահոգվելին Մուշի և Սասունի փախստականների մասին, այնուամենայնիվ, նախօրոք պատրաստություններ չէին տեսնված ճանապարհին»¹¹²: Այնուամենայնիվ գաղթի ամբողջ ճանապարհին գործում էին սննդատու 6 կետեր, որոնցում ԿՀԲԸ բաժանում էր թեյ և շաքար: Իսկ Կադզվանում բացվել էր հիվանդանոց՝ խոլերայի իր բաժանմունքով¹¹³:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում քրդերի մոտ գերության մեջ գտնվող փախստականներին ազատելու ուղղությամբ: 1916 թ. դեկտեմբերի 1-ին Հայկական կենտրոնական կոմիտեի Մշո շրջանի լիազոր Կարո Սասունին նույն կոմիտեին ներկայացրած իր հաշվետվության մեջ նշում էր, որ գերության մեջ գտնվող հայերին ազատելու Թիֆլիսի հանձնաժողովի նախագահ Անդրանիկի կողմից իրեն փոխանցված 2500 ռուբլով մինչև 1916 թ. նոյեմբերի 10-ը գերությունից ազատվել էին 630 գաղթականներ¹¹⁴: Քրդերը դժվարությամբ էին բաց թողնում հայերին, քանի որ վերջիններս դաշտային աշխատանքներ էին կատարում իրենց համար: Բացի դրանից, նրանք յուրաքանչյուր հայի համար պահանջում էին օսմանյան մեկ ոսկի: 1916 թ. ձմռանը, երբ ռուսական բանակը մուտք գործեց Խնուս, անմիջապես այնտեղ հաստատվեց գաղթականական մարմին, որը սկսեց նպաստ բաժանել գավառի փախստականներին¹¹⁵:

Գաղթական ազգաբնակչությունն ապրում էր գյուղերում գտնված ցորենով, որի պակասությունն այնքան զգալի էր, որ աշխատունակ տղամարդիկ հաճախ մեկնում

¹⁰⁷ «Армяне и война», 1916 г. июль, № 4.

¹⁰⁸ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404, (մաս 2), թ. 248, նաև՝ «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 20, թիվ 17, նաև՝ «Գաղափար», 1916 թ. մարտի 18, թիվ 14:

¹⁰⁹ «Գաղափար», 1916 թ. հունիսի 26, թիվ 31, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. հունիսի 24, թիվ 139:

¹¹⁰ «Армяне и война», 1916 г. июль, № 5.

¹¹¹ ЦГИА Р. Гр., ф. 520, оп. 1, д. 31, л. 144.

¹¹² «Աշխատանք», 1916 թ. սեպտեմբերի 10, թիվ 38:

¹¹³ ЦГИА Р. Гр., ф. 520, оп. 1, д. 31, л. 144.

¹¹⁴ «Համբավաբեր», 1916 թ. սեպտեմբերի 4, թիվ 49:

¹¹⁵ Public record office of England. Fo 371/70371/2768, file (161096), p. 413.

էին Խնուսից հարավ՝ 30-40 վերստ հեռավորության վրա գտնվող քրդաբնակ Նըթիկ գավառի և Մուրադ-Չայի եզերքին գտնվող անբնակ գյուղերը, արտերը հնձելու համար¹¹⁶:

1916 թ. օգոստոսյան գաղթից հետո Խնուսն ուներ 2-3 հազար բնակչություն, որից 1/4-ը մշեցիներ էին: Գավառի 25 հայկական գյուղերից թափուր էին մնացել ընդամենը 4-ը, որոնցից յուրաքանչյուրն ուներ 100-300 բնակչություն¹¹⁷: 1916 թ. դեկտեմբերին և 1917 թ. սկզբներին Խնուսի գաղթականության թիվը հասավ 3500-ի¹¹⁸:

Ահա այսպիսին էր վիճակը Արևմտյան Հայաստանի պատերազմի իրավունքով գրավված շրջաններում Մեծ Եղեռնի տարիներին:

¹¹⁶ «Հորիզոն», 1916 թ. նոյեմբերի 1, թիվ 224:

¹¹⁷ Նույն տեղում:

¹¹⁸ Նույն տեղում:

ՀՐԱՆՈՒՇ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայկական առաջին կամավորական խումբը, Անդրանիկի ղեկավարությամբ, 1914 թ. հոկտեմբերի 19-ին մեկնել էր Ատրպատական՝ միանալու գեներալ Չերնոզուբովի հրամանատարության տակ գործող զորաջոկատին: Առաջին խումբը վերջնականապես կազմավորվեց հոկտեմբերի 23-ին Մալմաստում և Ջուլֆայում, սպառազինվելով՝ մեկնեց Խոյ: Խումբը հիմնականում համալրված էր արևմտահայերով: Վաշտերի հրամանատարներ էին նշանակված ֆիդայական շարժման շրջանից Անդրանիկի մարտական ընկերները՝ Մախլուտոն, Սեպուհը, Աղոխանցիներ՝ Նիկոլը և Արշակը: Հեծյալ հարյուրյակի հրամանատարն էր Գյումուշխանցի Ավոն¹:

Մինչև նոյեմբերի 3-ը Անդրանիկն զբաղվեց հիմնականում զինվորներ մարզելու, խմբում բարձր զինվորական կարգապահություն ապահովելու հարցերով: Նոյեմբերի 5-ին պատմական Առավուլի փեշերին առաջին անգամ խումբը մտավ մարտական գործողությունների մեջ և հենց այդ օրն էլ գրավեց Աշնակ գյուղը: «Նոյեմբերի 5-ի մարտում Անդրանիկի կամավորական ջոկատը ցուցաբերեց արտակարգ հերոսություն և ինքնագոհություն», - կաթողիկոսին ուղղված հեռագրում հայտնում է գեներալ Չերնոզուբովը²:

Նոյեմբերի 7-ին թուրքերը համալրում ստացան և մարտի մեջ նետեցին 1000 հոգանոց կանոնավոր մի զորամաս, քրդերի համիդեական ալայներ և 2500 ձիավորով հեծելազորը, ինչպես նաև Շերիֆ բեկի հեծելազորն ու հետևակը: Գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանի 2-րդ Կովկասյան հրաձգային բրիգադի կազմում կամավորական 1-ին խումբը նոյեմբերի 7-ից մինչև 17-ն ընկած տասնօրյա ծանր մարտերում զգալի կորուստներ պատճառելով հատկապես քրդական ուժերին՝ գրավեց Քաշկուլ, Կոթուր, Արթել, Պուրուշորան, Խանիկ, Ղաշղուլամ գյուղերը: Խումբն անցնելով իրանա-թուրքական սահմանը, նոյեմբերի 18-ին գրավեց Վանից ոչ հեռու գտնվող Սարայ գյուղաքաղաքը, որով ձախողվեց թուրքական զորքերի առաջխաղացումը Վանի ուղղությամբ: «Թշնամին սարսափահար փախավ Բաշգալե», - գրում է Անդրանիկը³: Դիման և Մարնա հայաբնակ գյուղերի գրավման ժամանակ գերի ընկած թուրք սպաներից մեկը հարցաքննության ժամանակ խոստովանում էր, որ ռուսական զորախմբի կազմում ամենակազմակերպված ու անվեհեր կովոդները հայեր են: Մամուլը տեղեկացնում է այդ օրերի մի հետաքրքիր փաստի մասին. ռուսական բանակ են դիմում թուրքական բանակից փախած մի խումբ հայեր: Նրանք արցունքներն աչքերին աղերսում են ռուս հրամանատարին իրենց թիկունք չուղար-

¹ Դարիբջանյան Բ., Տարոնի արծիվը, Երևան 1996 թ., էջ 90:

² Աղայան Օ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան 1982 թ., էջ 385:

³ Լյուլեճեան Լ., Զորավար Անդրանիկի Կովկասեան ռազմաճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917 թթ., Պոսթոն, 1924, էջ 10:

կել, այլ թողնել ռուսական կողմում կռվելու թուրքերի դեմ: «Մենք նրա համար ենք փախել, որպեսզի ռուսների հետ մեկտեղ կռվենք թուրքերի դեմ և ոչ թե թիկունքում նստենք», - ասում են նրանք: Եվ հրամանատարը նրանց թույլատրում է գենքը ձեռքներին միանալ ռուսական զորքին⁴:

Տեսնելով Կոթուրի լեռնանցքում ռուսական բանակի հաղթական ընթացքը, Հերթի գյուղի չորս քրդական բեկեր, որոնք իրենց ձեռքի տակ ունեին շուրջ 1800 համիդետական հեծյալ, հանձնելով մի քանի տասնյակ գենք, խնդրագիր են ուղարկում Անդրանիկին, որը նրանց գեներալ Նազարբեկյանի ուղեկցությամբ ուղարկում է գեներալ Չերնոգուբովի շտաբ՝ զգուշացնելով, սակայն, որ այնտեղ հավատ չընծայեն քրդերի անկեղծությանը: Անդրանիկը գիտեր և հայտնեց Նազարբեկյանին, որ այդ քրդերը մինչև պատերազմն արդեն ունեին 3000 հրացան, ապա թուրքերից ստացել էին ևս 1000 հրացան: Սակայն Չերնոգուբովը, որ դեռևս հայերին ընդունելու և շնորհակալություն հայտնելու ժամանակ պատվիրել էր «զգույշ ըլլալ քուրդերու հետ բախում ունենալիս, որովհետև քուրդերն ալ մեր հրամանի տակ կազմակերպված են»⁵, նրանց ազատ է արձակում: Ինչպես և սպասում էր Անդրանիկը, վերջիններս Հուսեին և Սաթուն բեկերի առաջնորդությամբ վերակազմում են իրենց ավագալիսները և հիմնահատակ ավերում մի քանի հայկական գյուղեր:

Նոյեմբերի 19-ին խումբը Սարայից հետո գրավեց քրդական Մերկե գյուղը: Թշնամին տվեց մոտ 75 սպանված: Նոյեմբերի վերջին, գրավելով Ասուրի, Քերքեզ և Մարքոհին բնակավայրերը, խումբը գտնվում էր Կարկալու լեռան մոտ, որտեղից մինչև Վան մնում էր երկու անցում: Այդ կոիվներում զոհվեցին Անդրանիկի ֆիդայի զինակիցներից մշեցի բուժակ Սիմոնը, վաշտապետի օգնական Զուլալը և հիսնապետ Եղիան:

Խումբը դեկտեմբերի 5-ից 7-ը մարտական գործողությունների մասնակցեց Հալեպ սարի բարձունքներում: Կամավորները ուժեղ գրոհ սկսեցին և անմիջապես մեծ հաջողության հասան: Մարտի մասնակիցներից մեկը հիշում է. «Կոիվը շատ հաջող տարինք շնորհիվ հրամանատարի ղեկավարումներին: Թշնամին փախուստի դիմեց, մեր գունդը այդ հսկա ձյունապատ լեռներն ու ձորերը ճեղքելով՝ մտավ Պելեճուկ գյուղը»⁶: Ռուսների հետ համատեղ գրոհով դեկտեմբերի 6-ի երեկոյան մարտն ավարտվեց նրանով, որ թուրքերը, մարտի դաշտում թողնելով շուրջ 300 սպանված, դիմեցին խուճապահար փախուստի: Կամավորները, հաղթահարելով գիշերվա սոսկալի ցուրտն ու ձնաբուքը, դեկտեմբերի 7-ին հաստատվեցին Պելեջուք (Բելեդյանուք) գյուղում և այդտեղ պաշտպանեցին գրավված բնագծերը մինչև դեկտեմբերի 23-ը: Այդ օրերին խմբին տեղեկացրին Անդրանիկին մարտական բարձր պարգևով՝ Ոսկե սրով պարգևատրելու մասին: Անդրանիկին ջերմորեն շնորհավորեցին ռուս հրամանատարները և, հատկապես, գեներալ Չերնոգուբովը:

1914 թ. դեկտեմբերի 23-ին ընդհանուր նահանջի հրաման տրվեց, որը կապված էր Սարիղամիշի շրջանում ծավալված մարտական գործողությունների և Թավրիզի շրջանում թուրքական զերակշիռ ուժերի հայտնվելու հետ: Այս նահանջի պատճառների մասին հակիրճ նշենք, որ Կովկասյան ճակատում մարտական գործողություն-

⁴ «Русское слово», 12 ноября 1914, ном. 261.

⁵ Ղարիբջանյան Բ., նշվ. աշխ., էջ 91:

⁶ Աղայան Մ., նշվ. աշխ., էջ 387:

ների առաջին իսկ օրերին ռուսական ուժերն առաջ շարժվեցին և Օլթիի ուղղությամբ գրավեցին Իդը (Կողբը), Սարիղամիշի ուղղությամբ՝ Զիվին ամրությունները, Կաղզվանի ուղղությամբ՝ Բայազետն ու Դիադինը: Այնուհետև գրավելով Քեոփրի Քյոյը և Ղարաքիլիսան, նոյեմբերի 9-ին Բասենի ամբողջ դաշտը և Ալաշկերտի հովտի մեծ մասը մաքրեցին թուրքական ուժերից: Բայց ռուսական զորքի այս արագ առաջխաղացումն ամրապնդված չէր թիկունքի հետ ամուր կապով, մատակարարմամբ և համապատասխան թիկունքային ռեզերվով:

Նոյեմբերի սկզբներին թուրքական բանակը հակահարձակման անցավ, և նոյեմբերի 10-ին գեներալ Բարաթյանի հեծելազորը հանձնեց Քեոփրի Քյոյը: Հասան Իզգեթ փաշայի թուրքական կորպուսը կարողացավ կանգնեցնել Սարիղամիշի ռուսական ջոկատի առաջխաղացումը և նույնիսկ բավականին հետ մղեց նրան: Բասենի այս անհաջողությունը կասեցնում էր գեներալ Նիկոլանի առաջխաղացումը Ալաշկերտի դաշտում, որը դեպի Վան իր ճանապարհին գրավել էր Թափարիզի լեռնանցքը: Նոյեմբերի սկզբին թուրքերը հարձակման անցան նաև Բաթումի շրջանում: Ամբողջ նոյեմբեր ամսին կատաղի մարտեր տեղի ունեցան Բասենի դաշտում՝ Մասլահատ-Յուզվերան գծի վրա, և Ալաշկերտում՝ Դուրադի և Ղլիճ Գյադուկի լեռնանցքում: Ռազմական գործողությունները դժվարանում էին ցրտաշունչ ձմեռվա և առատ ձյան պայմաններում: Դեկտեմբերի սկզբին թուրքական զորամասերը ուժեղացրին ճնշումը Օլթիի շրջանում: Թուրքական 3-րդ բանակի ուժերով ձեռնարկվեց Էնվեր փաշայի՝ Սարիղամիշի արշավանքը, որը նպատակ ուներ գրավել Կարսը և, ապա՝ ողջ Անդրկովկասը: Ի դեպ, Էնվեր փաշայի բանակի շտաբի պետն էր գերմանացի գեներալ Ֆոն Շելենդորֆը:

Բասենի դաշտում իր ճնշումն ուժեղացրեց թուրքական 11-րդ կորպուսը, որը, հանդիպելով ռուսների համառ դիմադրությանը, որևէ էական հաջողության չհասավ⁷:

Ահա, ռազմաճակատում ստեղծված այս անբարենպաստ իրադրությունն էր, որ գեներալ Չերնոգուբովին ստիպել էր նահանջի հրաման արձակել:

Հայկական առաջին կամավորական խումբը դեկտեմբերի վերջերին նահանջեց Ջուլֆա: Այս նահանջի ժամանակ խումբը դեպի Կովկաս ուղեկցեց Դիլմանի շրջանում կուտակված շուրջ 150 հազար հայերի, որի շնորհիվ նրանք փրկվեցին անխուսափելի կոտորածից: Այդ նահանջի օրերին Անդրանիկն իր խմբի և օգնության եկած կազակային ջոկատի օգնությամբ կարողացավ կասեցնել Մակուից արշավող քուրդ և թուրք խաժամուժին, ինչի շնորհիվ գաղթականները կարողացան անարգել հասնել Անդրկովկաս:

Հասնելով Ջուլֆա, առաջին խումբը հնարավորություն ստացավ մի քանի օր հանգստանալ և համալրել անձնակազմը: 1915 թ. հունվարի 3-ին գեներալ Չերնոգուբովն իր ձեռքով, հանդիսավոր պայմաններում, Անդրանիկի կրծքին ամրացրեց քաջության Գեորգիևյան խաչը:

1915 թ. հունվարի 11-ից կամավորական առաջին խումբը կրկին մեկնեց ռազմական գործողությունների թատերաբեմ: Նա պիտի մասնակցեր հունվարի 13-ի Սոֆյանի մեծ ճակատամարտին, սակայն հորդացած գետերի և ճանապարհներ չլինելու պատճառով տեղ հասավ միայն հունվարի 15-ի երեկոյան, երբ ճակատամարտն ա-

⁷ Арутюнян А., Кавказский фронт 1914-1914 гг., Ереван, 1971.

վարտվել էր ռուսական զենքի փառավոր հաղթանակով, թուրքական ուժերի լիակատար ջախջախմամբ, և գրավվել էին Թավրիզի և Մարագուի շրջանները⁸։ Դրանով հայկական առաջին կամավորական խումբն ավարտեց մարտական գործողությունների առաջին փուլը և ուղարկվեց ձմեռային հանգստի ու համալրման։

Հայկական 2-րդ կամավորական խումբը ռազմաճակատ մեկնեց 1914 թ. հոկտեմբերի 25-ին և գործողվեց գեներալ Նիկոլասի Բայազետյան գորաջոկատ, որը գտնվում էր Բայազետի մոտակա Կիզիլդիզ բնակավայրում։ Խմբի կազմում կային 472 կամավորներ, որից 354-ը արևելահայ, 118-ը՝ արևմտահայ⁹։

Խումբն առաջադրանք ստացավ գրավել Թափարիզի լեռնանցքի մյուս կողմում գտնվող Գյավրե-Շամիե գյուղը, որ գրավել էին քրդերը։ Կամավորականները մարտական գործողությունների մեջ մտան հոկտեմբերի 30-ին և երկու օր տևած համառ մարտերից հետո կարողացան գրավել Գյավրե-Շամիեն։ Ծանր մարտերում վիրավորվեց խմբի հրամանատար Դրոն, որն ուղարկվեց թիկունք՝ բուժման։ Նրան փոխարինեց Արմեն Գարոն՝ էրզրումից թուրքական պառլամենտի նախկին անդամ Գարեգին Բաստրմաջյանը («Յաղթանդամ, կուրծքը միշտ դուրս ցցած, - կարծես ըսել կ'ուզեր, թե «ոչ ակնկալություն և ոչ ալ վախ ունիմ ունե մեկե», - խոհուն ու կիրթ ընկեր մ'էր։ Շիտակ ու ազնիւ, համարձակ էր և անկաշկանդ իր հայեացքներու և կարծիքներու մէջ»)¹⁰։ Այդ օրերին ռուսական զորքերն անհաջողություններ էին կրում Բասենի դաշտում, Մինդիշվանի և Հոպիկի ուղղությամբ տարվող մարտերում և նահանջեցին դեպի Յուզվերան։

Դա ստիպեց, որ գեներալ Նիկոլասի՝ հաջողությամբ կովող գորաջոկատը հեռագրով դեպի սահմանային բնագիծը նահանջելու հրաման ստանա։ Կամավորական 2-րդ խումբը ռուսական ջոկատի կազմում Թափարիզի լեռնանցքից նահանջեց դեպի Կիզիլդիզ, ապա՝ Ալաշկերտի Ղարաքիլիսա՝ միանալու գեներալ Աբաղիսի գորաջոկատին։

Գեներալ Աբաղիսը խումբն անմիջապես ուղարկեց Դութաղ՝ Կլիչ Գյաղուկից հարավ գտնվող, թուրքերի կողմից ուժգին գնդակոծվող դիրքերը պաշտպանելու համար¹¹։ Ի դեպ, բոլոր հուշագրողները համակարծիք են գեներալ Աբաղիսի անհամակիր լինելը հայ կամավորների նկատմամբ։

Դութաղի դիրքերում 2-րդ կամավորական խումբն իրականացնում էր հետախուզական և պահակազորային ծառայություն։ Խումբն այնուհետև, դեկտեմբերի 10-ին, ամրացավ Դերիկում, դեկտեմբերի 11-13-ին՝ Տունտինում։ Գեներալ Աբաղիսի գորաջոկատում մինչև 1914 թ. դեկտեմբերի 13-ը կամավորական 2-րդ խումբը մասնակցեց ինը մարտերի։ Ռուսական բանակի ընդհանուր նահանջի մասին կարգադրություն ստանալուց հետո 2-րդ խումբը ևս նահանջեց չափազանց ծանր պայմաններում և դեկտեմբերի 25-ին տեղակայվեց Իգդիրում՝ հանգստի և համալրման համար։ Մարտական գործողություններին մասնակցելով 24 օր, կամավորական խմբից

⁸ Կարապետյան Ս., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Երևան, 1999 թ., էջ 53։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Փափազյան Վ., Իմ յուշերը, Բեյրութ, հ. 2, 1952, էջ 58։

¹¹ Կարապետյան Ս., էջ 190։

գոհվել էր 13 և վիրավորվել 29 մարտիկ¹²:

Կամավորական 3-րդ խումբը (հրամանատար՝ Համագասպ Սրվանձտյան) կազմավորվել էր 1914 թ. սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 31-ը, Կաղզվանում: Այն գործելու էր գեներալ-մայոր Պրժնալսկու առաջին պլաստունյան բրիգադի կազմում, Կաղզվան-Բիթլիս ուղղությամբ: Խմբի կազմում կային 250 հետևակային և 70 հեծյալ կամավորական¹³, որոնք բաժանված էին 6 հետևակային հիսնյակների և 2 հեծյալ դասակների:

Նոյեմբերի 1-ին մտնելով ռազմական գործողությունների շրջան, խումբը նոյեմբերի 4-ին հասավ Դելիբաբա՝ այնտեղ միանալով գնդապետ Կուլեբյակինի զորաջոկատին, որը համառ մարտերում կասեցրել էր հոկտեմբերի 27-ին թուրքերի սկսած հարձակումը Քեոփրի Քյոյի ուղղությամբ և նրանց ետ էր մղել դեպի Էնդեկ-Թորխոջա բնագիծը: Դա շրջադարձային կետ էր այդ շրջանում մղվող մարտերում:

Առաջին մարտական գործողությունը, որ կատարեց 3-րդ խումբը, Ալազյազ գյուղի գրավումն էր նոյեմբերի 6-ին: Գյուղի համար ողջ օրն ընթացող մարտի ելքը վճռում է 15 հեծյալ կամավորների ջոկատը, որը դասակի հրամանատար Ղասումի գլխավորությամբ քրդերին ստիպում է փախուստով թողնել գյուղը:

Խումբն այստեղ պաշտպանում էր Կարադերբենտյան ջոկատի ծայրագույն ձախ թևը, ինչը կարևոր ստրատեգիական նշանակություն ուներ: Կամավորները մի քանի անգամ ետ են մղում քրդերի ձեռնարկած համառ գրոհները Ալազյազի ուղղությամբ:

Նոյեմբերի 13-ին, հմր. 102 հրամանով, գնդապետ Կուլեբյակինը 3-րդ խմբի հրամանատար Համագասպին կարգադրում է. «Ձեզ հանձնարարում եմ կամավորներով գործել Ալազյազ-Խոսրովերան գծում՝ թույլ չտալով թուրքերին շրջանցել մեր ձախ թևը, հարավի ուղղությամբ լեռների մեջ մի խորացեք, միշտ կապի մեջ եղեք Թիք-Դաղի մեր ջոկատի հետ: Հիմնականում պաշտպանվեք»¹⁴:

Մինչ այդ խումբը, նախօրոք հետախուզելով իրադրությունը, սեփական ուժերով գրավել էր Քափանակ, Խոսրովերան և Փիրհասան գյուղերը: Մի քանի օր ռազմաձևակառուի այդ հատվածում անդորր էր:

Նոյեմբերի 15-ին կամավորական 3-րդ խումբը մտավ գեներալ Գուլիգայի գլխավորած բրիգադի կազմի մեջ և պահում էր Էնդեկ-Թիք-Դաղ-Փինդաուզ բնագիծը: «Սկսվեցին թեժ, երկարատև պաշտպանական մարտեր, և 3-րդ հայկական խումբը հաջողությամբ մասնակցեց այդ բոլոր կռիվներին՝ անընդմեջ իրականացնելով պահակազորային և հետախուզական ծառայություններ, միաժամանակ ետ մղելով թշնամու անդադար հարձակումները»¹⁵: Գեներալ Գուլիգան վկայում է. «Հայ կամավորականները հատկապես մեծ ծառայություններ մատուցեցին զորաջոկատին 1914 թ. դեկտեմբերի 2-ին, Սիզման, Փիրհասան և Քափանակ գյուղերի մանրակրկիտ հետախուզությունն իրականացնելով, որը սկսված ցրտերի, խորը ձյան և հաճախակի մառախուղների հետևանքով խիստ դժվարացրել էր անկանխատեսելի

¹² Նույն տեղում, էջ 54, 90:

¹³ Նույն տեղում, էջ 196:

¹⁴ Կարապետյան Մ., էջ 200:

¹⁵ Նույն տեղում, էջ 56:

թշնամուն հետևելը»¹⁶:

Կամավորական 3-րդ խումբն այդ կռիվներում մեծաթիվ զոհեր տվեց: Դեկտեմբերի 6-ին սպիտակ ծածկոցներով քողարկված թուրքերը և քրդերը, հարձակվելով հայ կամավորների ժամապահների վրա, մտան Ալազյազ, որտեղ տեղակայված էին կամավորական խումբը և կազակների երկու հարյուրակ: Թուրքերի հանկարծակի գիշերային գրոհին զոհ գնացին 70 կամավորներ, որոնցից 30 սպանված և 40 վիրավոր: Կամավորները ստիպված եղան թողնել գյուղը: Այնուհետև, ամրանալով մոտակա բարձունքներում և համախմբելով իրենց ուժերը, նրանք կազակների հետ միասին կրկին գրավեցին Ալազյազը՝ թուրքերին պատճառելով զգալի կորուստներ:

Դեկտեմբերի 19-ին հայկական 3-րդ կամավորական խումբը տեղափոխվեց Բաշգյուղ և մտավ գեներալ Կուլեբյակինի գլխավորած Բաշգյուղի առաջապահ զորաջոկատի կազմը:

Դեկտեմբերի 20-ին խումբը, գնդապետ Ռաձեի գլխավորությամբ, պատժիչ գործողություն իրականացրեց քրդաբնակ Բալիքչի գյուղում, որի բնակիչները թշնամական արարքներ էին կատարել ռուսական զորաջոկատի նկատմամբ: Դրանից հետո, դեկտեմբերի 25-ին, կամավորական 3-րդ խումբը ևս հանգստի և համալրման նպատակով ետ բերվեց Կադզվան: Այդ նույն օրը, դեկտեմբերի 25-ին, կորպուսի հրամանատարին ուղղած իր զեկուցագրում գեներալ Կուլեբյակինը գրում է. «Ծառայությանս և խղճիս պարտքով ինձ պարտավոր եմ համարում վկայել այդ խմբի և հատկապես նրա հրամանատարի՝ Համազասպի ամենաբարեխիղճ, անմնացորդ աշխատանքը:

Չնայած տարբեր վայրերից հավաքված, մեծամասնությամբ ռազմական գործին անծանոթ, կառավարման ոչ մի համակարգի չվարժված հայերի կառավարման դժվարությունների, պրն Համազասպը իր խմբի լավագույն մարդկանց օգնությամբ (պոլսահայ և թուրքահայ հպատակներից), կարողացավ իր ոչ մեծ ջոկատում հաստատել երկաթյա կարգապահություն և կարգ ու կանոն: Բոլոր մարտերում խմբի կամավորականներն անվախ գնում էին դեպի անխուսափելի մահ և մեռնում էին ազնվաբար, ինչպես իսկական հերոսներ՝ լցված սիրո խորը զգացմամբ իրենց հայրենիքի նկատմամբ»¹⁷:

Այդ նույն զեկուցագրում գեներալ Կուլեբյակինը գտնում էր, որ Համազասպն արժանի է ամենաբարձր խրախուսանքի, և հայտնում, որ ուրախ կլինեի հայ կամավորական 3-րդ խումբը կրկին տեսնել իր ջոկատի կազմում: Խմբի մարտական գործողությունների մասին բարձր համարում ունեի նաև Կուբանյան 2-րդ հետևակային բրիգադի հրամանատար Գուլիգան: 1914 թ. դեկտեմբերի 27-ի հրամանում նա հաստատում է, որ խմբի մարտիկները «բոլոր մարտերում եղել են խիզախ, հարձակման ժամանակ առաջին դիրքերում... կորպուսի հրամանատարի հրամանով շնորհակալություն է հայտարարվում ազնիվ ու հերոսական ծառայության համար...»¹⁸:

Փորձառու և քաջարի հայդուկապետ Քեռու՝ Արշակ Գաֆաֆյանի գլխավորությամբ ռազմաճակատի մարտական գործողություններին փայլուն մասնակցություն ունեցան նաև հայկական 4-րդ կամավորական խմբի մարտիկները: Քեռին (Էրզ-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 58:

¹⁸ Աղայան Մ., նշվ. աշխ., էջ 388:

րումն ցի «Քավթառ Արշակ») հին ֆիդայի էր և հայրենիքի ազատագրման համար մարտնչել էր Թորգոմի, Սարգիս Կուկունյանի, Սեբաստացի Մուրադի խմբերում և ֆիդայական ջոկատներում եղել էր զենքի պատասխանատուն¹⁹:

Մարտական գործողությունների մեջ հայկական 4-րդ կամավորական խումբը մտավ նոյեմբերի 6-ին և, ինչպես հաստատում է «Հայերի մասնակցությունը 1914-1918 թթ. առաջին համաշխարհային պատերազմին» թեմայով Ռազմա-պատմական հանձնաժողովի նախագահ գեներալ Ա. Կուլեբյակինի կազմած «պատմական տեղեկանքը»²⁰, հենց առաջին օրերից հայտնվեց ծանր իրադրության մեջ: Խումբը, դուրս գալով Սարիղամիշից Կարաուրգանի ճանապարհով, Թուրքեստանյան 2-րդ կորպուսի կազմում հասավ Ադվերան և Խոշաբ: Ռուսական բանակը մինչ այդ 1-ին պլաստունյան բրիգադի և Թուրքեստանյան 2-րդ կորպուսի ուժերով կասեցրել էր Էրզրումի կողմից թուրքերի հարձակումը՝ հակառակորդին ետ շարտելով Արդի-Յուզվերան-Կարս-Խոշաբ բնագիծը:

Հայկական 4-րդ կամավորական խումբն իր մարտական առաջին մկրտությունն ստացավ 1914 թ. նոյեմբերի 16-ին, Կարաբաղիկ գյուղում: Ընդհարվելով թուրքերի հետ, կամավորական 4-րդ խումբը հաջող մարտական գործողություններից հետո անցավ Չաքիրբաբայի լեռնաշղթան, հետևողականորեն ճնշելով հակառակորդի դիմադրությունը, ճանապարհին գրավեց Լյավրոս և Կըզլ-Քիլիսա գյուղերը Իդ (Կողբ) տանող ճանապարհին: Այդ ժամանակ Օլթիից դեպի Կողբ էր շարժվում նաև գեներալ Իստոմինի զորաջոկատը: Քեռին նպատակ ուներ միանալու այդ ջոկատին:

Էնվեր փաշայի՝ Սարիղամիշի ուղղությամբ հարձակման նախօրեին ուժեղ հարվածով գրավելով Էրկեն գյուղը և նրա մերձակայքում մղած մարտերից հետո, Քեռու խումբը հրաման ստացավ շարժվել դեպի Կողբ և միանալ Օլթիի ջոկատին, սակայն Կողբն արդեն գրավել էին թուրքերը: Քեռու խումբը ստիպված էր թուրքերի թիկունքում, լեռնային տեղանքում միայնակ կռիվներ մղելով ճեղքել թշնամու շրջափակումը և շարժվել դեպի Նախման: Այստեղ Քեռին, մեծաթիվ զոհերից խուսափելու նպատակով, խումբը բաժանեց երկու մասի և, այնուհանդերձ, մեծ կորուստներ տալով առաջացավ դեպի Սարիղամիշ և Մերդենեկ, ուր այդ ժամանակ ընթանում էին դեկտեմբերյան վերջին մարտերը, որոնք ավարտվեցին թուրքական 9-րդ և 10-րդ կորպուսների լիակատար ջախջախմամբ: Սարիղամիշի գործողության ժամանակ գործելով ռուսական զորաջոկատի աջ թևում հարձակման անցած թուրքերի դեմ, Քեռու խումբը փայտուն կերպով կատարեց իր առաջադրանքները: Հրամանատարության՝ զորքերին ուղղված հրամանում հատկապես նշվում էր, որ հայկական 4-րդ կամավորական խումբը նահանջի ժամանակ կիրճի մատույցներում 10 ժամ շարունակ կասեցրել էր մի ամբողջ թուրքական դիվիզիայի առաջխաղացումը՝ դրանով ռուսական զորաջոկատային հնարավորություն տալով խուսափել մեծաթիվ զոհերից, որի համար մյուս զորամասերի թվում արժանացավ հրամանատարության հատուկ շնորհակալությանը²¹: Կամավորական 4-րդ խմբի ծառայություններից էր նաև այն մեծ օգնությունը, որ երկու ամսվա ընթացքում ցուցաբերվեց թուրքա-

¹⁹ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Թեհրան, 1982, հ. 1, էջ 11, 131, հ. 3, էջ 286-292:

²⁰ Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 184-195:

²¹ Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 187:

կան յաթաղանից փախչող հայերին²²։ Սարիղամիշի գործողությանը մասնակցելուց հետո հյուծված և թուլացած հայկական 4-րդ կամավորական խումբը մեկնեց Երևան՝ հանգստի և համալրման։

Այսպիսով, պատերազմի առաջին իսկ երկու ամիսներին, կամավորական շարժման առաջին փուլում, բոլոր չորս կամավորական խմբերն էլ աչքի ընկան իրենց խիզախությամբ և անձնագոհությամբ։ «Պատերազմի միայն առաջին երկու ամիսների ընթացքում, 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայկական չորս կամավորական խմբերը տվեցին 156 սպանված, 743 վիրավոր, հիվանդ և ցրտահար՝ կորցնելով ընդհանուր անձնակազմի մեկ երրորդը»²³։ Այդ ամիսների ընթացքում նրանք ոչնչացրել էին անհամեմատ ավելի մեծ թվով թուրքերի և քրդերի, գրավել էին բազմաթիվ բնագծեր ու բնակավայրեր։

Բացի ռազմի դաշտում զուտ մարտական ծառայություններից, ինչպես արդեն նշել ենք, նրանք հատկապես մեծ ծառայություն մատուցեցին հայ ժողովրդին՝ Արևմտյան Հայաստանից փախչող գաղթականներին Անդրկովկաս ուղեկցելու գործում՝ դրանով հարյուր հազարավոր հայերի փրկելով անխուսափելի ոչնչացումից։

Թիկունք վերադառնալուն պես ակտիվ աշխատանքներ ձեռնարկվեցին խմբերի համալրման և նրանց թվաքանակի ավելացման համար։ Աշխատանքներ տարվեցին մարտական գործողությունների ընթացքում կամավորական շարժման կազմակերպման մեջ նկատված թերություններն ու բացթողումները շտկելու ուղղությամբ։

Կապված 1914 թ. դեկտեմբերին թուրքերի՝ Սարիղամիշի ուղղությամբ առաջխաղացման հետ, Կովկասյան ռազմաճակատի զինվորական հրամանատարությունը առաջարկեց մեծացնել հայ կամավորների թիվը։ Զինվորական իշխանություններն արդեն լրիվ մոռացել էին հայ կամավորներին միայն որպես ուղեկցողներ և հետախույզներ օգտագործելու սկզբնական ինքնավստահ մտադրության մասին։ Հայերն ապացուցել էին այլևս, որ իրենք իրական կովող ուժ էին։

Ռուսական բանակի 4-րդ կորպուսի՝ մեր արդեն հիշված հրամանատար գեներալ Օգանովսկին իր համհարզ Շահխաթունու միջոցով առաջարկեց կամավորական խմբերի ձևավորմամբ զբաղվող հայկական կազմակերպություններին ավելացնել կամավորական խմբերի թիվը, պահեստի խումբն ստեղծել Քանաքեռում և բացել հրամանատարական դասընթացներ²⁴։ Սկսվեցին նոր բանակցություններ փոխաբայի զինվորական գծով տեղակալ գեներալ Միշլանսկու հետ։ Դրա արդյունքում հրապարակվեց 1915 թ. ապրիլի 6-ի Նիկոլայ II-ի հրամանը կամավորական խմբերի նոր հաստիքացուցակի հաստատման մասին, որտեղ կամավորական յուրաքանչյուր խմբի թվականը հասցվեց շուրջ 1000-ի։ Այդ նույն նկատառումներով կազմավորվեցին ևս 3 կամավորական խմբեր։ Քանաքեռում զգալի աշխատանք ծավալվեց կամավորական խմբերի համար կադրեր հավաքագրելու ուղղությամբ և բացվեց սպայական դպրոց²⁵։

Հայկական 5-րդ կամավորական խմբի ձևավորման աշխատանքներն սկսվել էին դեռևս 1914 թ. դեկտեմբերին, սակայն հրացաններ չլինելու պատճառով խումբը

²² Աղայան Մ., նշվ. աշխ., էջ 388։

²³ Գարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 60։

²⁴ Աղայան Մ., նշվ. աշխ., էջ 391։

²⁵ Նույն տեղում։

չկարողացավ այդ ժամանակ մասնակցել մարտական գործողություններին և Խանասորի Վարդանի գլխավորությամբ 5-րդ խումբը Ալեքսանդրապոլից տեղափոխվեց Երևան:

1915 թ. փետրվարի 19-ին Անդրանիկի գլխավորած կամավորական 1-ին խումբը կրկին մտավ մարտական գործողությունների մեջ՝ գեներալ Նազարբեկյանի գորաջուկատի կազմում մասնակցելով Խոյի մոտ Դուզ-Դադի համառ մարտերին: Ապրիլի 15-ին խումբը գեներալ Չերնոգուբովից հրաման ստացավ՝ տեղաշարժվել դեպի Դիլման, որտեղ շրջապատման մեջ էր ընկել գեներալ Նիկոլանի գորաջուկատը: Ապրիլի 17-ին խումբն արդեն դիրքեր գրավեց Համզաքենդ գյուղի մոտ և 18-ին մտավ պատմական դարձած Դիլմանի ճակատամարտի մեջ: Սկզբում Խալիլ փաշայի գլխավորած թուրքական զորքերը խուճապի էին մատնել ռուսներին, որոնք սկսեցին անկազմակերպ նահանջել, սակայն օգնության հասավ գեներալ Նազարբեկյանի հրաձգային բրիգադը, և Նազարբեկյանը կարողացավ նորից մարտի մեջ մտնել կառավարումը կորցրած ռուսական զորաջուկատը:

Թեժ մարտերում իրենց հրաշալի դրսևորեցին հայ կամավորները: «Տիլմանը գրավված էր թուրքերու կողմեն, քաղաքի բնակչությունը կջարդեին, ռուս 6-րդ բանակը կպարտվի, Նազարբեկով կուզա ինձի կհրամայե քաղաքի մոտ բարձրունքները գրավել, սարսափելի համազարկով մը, և գնդակներու տեղատարափին մեջեն կհառաջանամ, իմ ուժերուս գլուխը անցած, կհասնիմ ճիշտ կովի գիծը... մենք և ռուսները կողք-կողքի դիրք բռնած մեծ ճակատամարտի մը մեջ ենք թուրքերուն հետ: Տիլմանի դիմացի բարձրունքներու վրա ենք, կռիվը այնքան սաստիկ է, որ չի կարելի նկարագրիլ: Թշնամին 7-8 կետի վրայեն հարձակում կգործե, բայց կնշմարենք, որ հաճախ նոր ուժերով կփոխարինե առաջին գծի նոսրացած շարքերը», - այսպես է նկարագրում Մախլուտոն Դիլմանի ճակատամարտը²⁶:

Արյունահեղ ճակատամարտում մեծ զոհեր տալով, թուրքերը նահանջեցին: Անդրանիկը նրանց հետապնդեց մինչև Մուխանջիկ, Բարդան և ապա գրավեց Բաշկալեն, Խանասորը և հաղթականորեն մտավ Վան, որն արդեն գրավել էին Արաբառյան գնդի հայ կամավորները և ռուսական զորքերը:

Դիլմանի ճակատամարտի մասին գեներալ Չերնոգուբովի վկայությամբ՝ «Այդ ականավոր ճակատամարտում Անդրանիկի հայկական զունդը ցուցաբերեց աննկարագրելի քաջություն և անմնացորդ պոռթկում... Խալիլ բեյը գլխովին ջախջախվեց և արագ նահանջեց»²⁷:

Անդրանիկի կողմից Խալիլ փաշայի զորքերին հասցրած ծանր հարվածները խափանեցին պաշարված Վան քաղաքը գրոհող Ջնդեթ բեյի զորամասին օգնության հասնելը, որով Վանում պաշտպանվող տասնյակ հազարավոր հայեր փրկվեցին անխնա կոտորածից: Եթե Անդրանիկի խումբը «չի կտրեր Խալիլ փաշայի առաջը և չի վերցնե Բաշկալեն, Խալիլի նպատակն էր Վան երթալ ու կոտորել Վանը», - հավաստում է Լյուլեճյանը²⁸:

Ռուսական հրամանատարության 1915 թ. զարնանային մարտերի գլխավոր խնդիրն էր Վանի գրավումը: Այդ նպատակով, բացի Դիլման-Խանասոր-Վան ուղ-

²⁶ Ղարիբջանյան Բ., նշվ. աշխ., էջ 96:

²⁷ Գարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 69:

²⁸ Լյուլեճյան, նշվ. աշխ., էջ 21:

ղությունից, ռուսները հարձակման էին անցել նաև Վանա լճի արևմտյան՝ Մանազկերտ-Կոպ-Վան, և արևելյան՝ Բայազետ-Չինգիլի լեռնանցք-Վան ուղղություններով:

Երևանում 1915 թ. ապրիլին հայկական կամավորական 2-րդ, 3-րդ և 4-րդ հանգստացած և համալրված խմբերը Խանասորի Վարդանի հրամանատարության ներքո միավորվեցին մեկ ընդհանուր՝ Արարատյան կամավորական գնդի մեջ և մտան գեներալ Նիկոլանի բայազետյան զորաջոկատի կազմը, որի խնդիրն էր արևելյան Բայազետ-Չինգիլի լեռնանցք ուղղությամբ մտնել Վան: Արարատյան գունդը 2300 հետևակ և 500 հեծյալ կամավորականներով ապրիլի 15-ին Իզդիրից շարժվեց նշված ուղղությամբ՝ նպատակ ունենալով գրավել Թափարիզի լեռնանցքը և բացել դեպի Վան տանող ճանապարհը: Զորաջոկատի աջ շարասյունը, որի կազմում կային 678 արևելահայեր և 344 արևմտահայեր, Դրոյի առաջնորդությամբ, ռուսական զորքերի ընդհանուր հարձակման ճակատում ապրիլի 24-ից թուրքերի հետ մարտերի մեջ մտնելով Քյալասարի և Դասինգյուլի շրջաններում, ապրիլի 28-ին հասավ Բայազետու: Արարատյան զորաջոկատի միջին շարասյունը Վարդանի և Համազասպի ղեկավարությամբ ապրիլի 24-ի ընդհանուր հարձակման մեջ համառ և կատաղի կռիվներով ապրիլի 28-ին գրավեց Գյավրե Շամիե գյուղը: Հայկական գնդի միացյալ հեծելազորը, 4-րդ խմբի հրամանատարի տեղակալ Մ. Արզումանյանի ղեկավարությամբ, գրավեց Շարաբխանե, Բայազետաղա, Նուշիրաղա, Դավթիշ, Գենդուրմա գյուղերը, իսկ 2-րդ և 4-րդ միացյալ խումբը գրավեց Գյումիշ և Հավիդան գյուղերը՝ դրանով ազատելով դեպի Բերկրի տանող ուղին: Ապրիլի 30-ին Արարատյան զորաջոկատը շարժվեց Բերկրիի դաշտ և գրավեց Բերկրի-Կալան, որը դարձավ վերջին կայանը Վանը գրավելուց առաջ²⁹:

Այդ օրերին Վանում Արամ Մանուկյանի ընդհանուր ղեկավարությամբ ապրիլի 6-ին սկսած ինքնապաշտպանությունը օրհասական օրեր էր ապրում: Մայիսի 4-ին Տիրամեր գյուղից մի հայի միջոցով Խանասորի Վարդանը երկտող է ուղարկում նրանց, որտեղ ասված էր. «Արի կեցեք, մեկ օրեն ձեր մոտ կըլլանք»³⁰: Եվ իրոք, մայիսի 3-ից 4-ը Վանի շրջակայքում քրդերի հետ մի շարք արյունահեղ մարտերից հետո, 2-րդ և 4-րդ խմբերի հեծյալ ջոկատները դարաբաղի խմբապետ Խեչոյի հրամանատարությամբ մոտեցան քաղաքի մատույցներին և մայիսի 5-ին առաջինների թվում մտան Վան: Մայիսի 6-ին հանդիսավորությամբ քաղաք մտան նաև ռուսական զորաջոկատները: Վանի գրավումը պատմական մեծ նշանակություն ուներ: Վանի հերոսական ինքնապաշտպանության, ռուսական զորքի և հայ կամավորականների ուժերով փրկվեց Վան-Վասպուրականի և հարակից շրջանների ավելի քան 300 հազար հայերի կյանքը³¹:

Վանի գրավումը մեծ իրարանցում առաջացրեց երիտթուրքերի կառավարության մեջ³²:

Մայիսի 8-ին 2-րդ խումբն ուղարկվեց Շատախ, ուր հայ բնակչությունն անհա-

²⁹ Գարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 66:

³⁰ Եկարյան Ա., Հուշեր..., էջ 232:?

³¹ «Էջմիածին», 1965, թիվ Բ-Գ-Դ, էջ 164:

³² Մելվան Զադե Դիֆաթ, Օսմանյան հեղափոխության մուսթ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 95-98:

վասար մարտեր էր մղում թուրքերի դեմ:

Վանի գրավումից հետո կամավորների շարքերը զգալիորեն խտացան, նրանց թիվը հասավ 4 հազարի: Շուրջ 1000 կամավոր վանեցիներ համալրեցին Անդրանիկի առաջին խումբը: 4-րդ խումբը գրավեց Ոստանը: Գեներալ Տրուխինի և Նազարբեկյանի զորաջոկատների հանդիպումից հետո սկսվեց ընդհանուր առաջխաղացումը Վանա լճի հարավային ափերով դեպի Բիթլիս: Կամավորական խմբերը գրավեցին Սոկսը, իսկ հունիսի 2-ին՝ նաև Ազատկերտը, որտեղից շուրջ 4000 փրկված հայեր բերվեցին Վան: Այս օրերի կարևորագույն իրադարձությունն այն էր, որ 2-րդ խումբն ապահովեց դեպի Կովկաս անցնող շուրջ 200 հազար հայ գաղթականության անվտանգությունը: Դրոն ինքը, հեծյալ մի խմբով Բերկրիի կամրջից Արևելյան Հայաստան հասցրեց մեծ թվով հայ որբերի³³:

1915 թ. մայիսի կեսերից Հայկական կամավորական բոլոր խմբերը կրկին ժամանակավորապես միավորվեցին և մտան Չերնոգորովին փոխարինելու եկած գեներալ Տրուխինի Վանյան ռուսական հատուկ ջոկատի կազմը: Շուրջ երկու ամիս մասնակցելով ռազմական գործողություններին, նրանք համառ մարտեր մղեցին Վանա լճի հարավային շրջաններում: Հայ կամավորական խմբերն ազատագրեցին Զեյվա, Թախման, Ախթամար, Սուրբ Հակոբ, Թուխ Դատվան և Սորփի հայաբնակ գյուղերը:

Միայն Զեյվայի գրավման ժամանակ թուրքերը տվեցին 300 սպանված և 100 վիրավոր, այն դեպքում, երբ հայ կամավորներից զոհվել էր 14 և վիրավորվել էին 23-ը:

Սորփի գրավումից հետո զորաջոկատին ուղղված հրամանում գեներալ Տրուխինը գրում է. «Հունիսի 6-ից 7-ը տևած երկօրյա կռիվներում... հաղթանակը գլխավորապես հետևանք էր մեր հետևազորի վարած ուժգին կրակային մարտի, որը (հետևազորը- Ն. Բ.) 2/3 կազմված էր հայ կամավորականներից և գրեթե երկու օր է, աչք չէր փակել»³⁴:

1915 թ. հունիսի 13-ին Ոստանից Անդրանիկի առաջին կամավորական խումբը շարժվեց դեպի Ախթամար և Հալվանց: Երեք օր անց խումբը թուրքերի դեմ կատաղի ճակատամարտ տվեց Վանա լճի ափին: Խմբից զոհվեցին 8 հոգի, իսկ թուրքերը, մեծ զոհեր տալով, փախուստի դիմեցին: Այդ մարտերում տարած հաղթանակի համար Անդրանիկը պարգևատրվեց երկրորդ Գեորգիևյան խաչով³⁵: Հունիսի 14-ին, լրացուցիչ օգնություն ստանալով, թուրքերն անցան ընդհանուր հարձակման: Գեներալ Տրուխինի զորաջոկատը պատրաստվեց Զեյվայի բարձունքներից նահանջել դեպի Սուրբ Հակոբի շրջան: Գիշերային սրընթաց հարձակումով Անդրանիկը կարողացավ անակնկալի բերել թշնամուն: Հարձակումը Զեյվայի (Զիվինի) շրջակայքում կատարվեց այնպիսի արագությամբ, որ թշնամին գլխովին ջախջախվեց և ետ շարտվեց: Փայլուն հաղթանակը զարմանք և հիացմունք պատճառեց ռուսական հրամանատարությանը: Գեներալ Տրուխինը, որ նահանջել էր իր 2400 հեծյալներով և թնդանդամներով, ետ եկավ նախկին բնագիծ: Նահանջելու մասին նախորդ օրը տված հեռագրից հետո նա հաղթականորեն գեկուցեց բարձր հրամանատարությամբ. «Անդրանիկն իր պատասխանատվությամբ սվինամարտով գրավեց Զիվինի

³³ Աղայան Մ., նշվ. աշխ., էջ 407:

³⁴ Գարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 70-71:

³⁵ Նույն տեղում, էջ 72:

բարձունքները»։ Բանն այն էր, որ հարձակումից առաջ առաջին խումբը զինամթերք համարյա չուներ։ Այդ հաղթանակի համար Անդրանիկը հերթական անգամ արժանացավ Գեորգիևյան խաչի³⁶։ Հունիսի 30-ին տեղի ունեցած մարտում թշնամին դաշտում թողեց շուրջ 200 դիակ և 4 թնդանոթ։

Այնուհետև առաջին կամավորական խումբը մարտեր մղեց Խորթիզ, Հավաթաղ, Խնձորիկ գյուղերի համար։ Կորտանց գյուղից գլխապատառ փախչելով, թշնամին թողեց 120 հազար փամփուշտ, 80 վրան, մեծ թվով հրացաններ և դեղորայք։

Իր ռազմական տաղանդով և վաստակած փառքով Անդրանիկն այնպիսի հեղինակություն էր վայելում, որ գեներալ Տրուխինը նրա տրամադրության տակ դրեց մարտերում արդեն հյուծված ու նոսրացած կամավորական խմբերի մնացորդները և 400 կազակներ, 2 լեռնային և 4 դաշտային թնդանոթ։

Այդ օրերին Անդրանիկի նպատակն էր՝ Մուշի և Սասունի կողմերից շրջանցել թուրքերին, օգնության հասնել Սասնո լեռներում ապաստանած շուրջ 20 հազար հայերին, միանալ նրանց և հարվածել թշնամուն։ Գեներալ Օգանովսկին հուլիսի 11-ին հաղորդեց, որ նրան թույլատրվում է անցնել Մուշ և Սասուն։ Խումբն առաջ շարժվեց Սոխորդի ուղղությամբ։ Հաջող առաջընթացն անսպասելիորեն կասեցվեց ռուսական հրամանատարության կողմից ընդհանուր նահանջի հրամանով։ Այնուհանդերձ, «Անդրանիկին հաջողվեց գեներալ Նազարբեկյանի թույլտվությամբ որոշ քանակությամբ գեներալ Բաժանել տեղի պարտիզանական և հայդուկային խմբերին՝ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար։ Այդ խմբերը հերոսական ջանքերով կարողացան խորանալ Սասունի Խուրթ-Բոնաշենի շրջան և հազարավոր հայեր փրկելով բերել դեպի Մուշ»³⁷։

1915 թ. հուլիսի 16-ին Կովկասյան բանակի հրամանատարությունը ռուսական բոլոր զորաջոկատներին, այդ թվում նաև՝ հայ կամավորներին, հրամայեց թողնել գրաված բոլոր բնագծերը, փաստորեն՝ Արևմտյան Հայաստանի գրավված տարածքները, Վանը, Մուշը և մյուս հենակետերը, և նահանջել Արևելյան Հայաստան։ Առաջին և 2-րդ կամավորական խմբերը հայտնվեցին Բգդիբում, 3-րդ և 4-րդը՝ Դիլմանում։ Անհրաժեշտ է նշել, որ Վան-Բիթլիս ուղղությամբ գործող Արարատյան ջոկատն այդ երկու ամիսներին վերջնականապես կազմալուծվել էր, անընդհատ գտնվելով համառ մարտերի մեջ, կամավորների մի մասն էլ լքել էին խմբերը։ Հենց Անդրանիկի առաջին խմբում կամավորներից շատերը նահանջի ճանապարհին հանդիպելով իրենց ընտանիքներին և ստիպված լինելով զբաղվել նրանց անվտանգությամբ, լքեցին խումբը, և արդեն Արճեշում խմբի կազմում մնացել էր ընդամենը 185 կռվող³⁸։

Այդքան մեծ զոհերի գնով ձեռք բերված հաղթանակների արդյունքը անհասկանալի նահանջի հետևանքով կորցնելը, ազատագրված հայրենիքը կրկին թշնամուն թողնելը ճնշող և հուսալքող ազդեցություն թողեց կամավորականների վրա, որոնցից շատերը, հատկապես արևմտահայերը, լքեցին խմբերը։ Թուլացել էր նաև Ազգային Բյուրոյի ազդեցությունը։

«Կամավորների շարքերը շարունակեց անդադար նոսրանալ և 1915 թ. օգոստոս-

³⁶ Աղայան Մ., էջ 411։

³⁷ Աղայան Մ., նշվ. աշխ., էջ 415։

³⁸ Նույն տեղում, էջ 419։

սին հայկական բոլոր չորս խմբերում եղած մոտ 4000 կամավորականներից մնացել էր ընդամենը 1200 մարդ»³⁹:

Այնուհանդերձ, չնայած ընդհանուր հուսալքմանը, ցանկանալով ամեն գնով պահել հայկական ուժերը, Ազգային Բյուրոն որոշեց շարունակել պայքարը Արևմտյան Հայաստանն ազատագրելու նպատակով, մանավանդ արդեն առկա էին նոր ձևավորված 6-րդ և 7-րդ կամավորական խմբերը:

6-րդ կամավորական խումբը կազմակերպվել էր Կարակուրտում, այն բանից հետո, երբ Սարիղամիշի ուղղությունից դուրս էին բերվել 3-րդ և 4-րդ խմբերը: Նրա առաջին հրամանատարն էր կապիտան Հ. Ջանփոլադյանը, այնուհետև՝ պորուչիկ Գ. Ավշարյանը:

Գրիգոր Ավշարյանը Բաքվից էր, ավարտել էր Կազանի զինվորական ուսումնարանը, մասնակցել էր պատերազմին գերմանական ճակատում, որտեղ արիության համար արժանացել էր Գեորգիևյան խաչի և Ոսկե սրի: Վիրավորվելուց հետո բուժվելով, նշանակվեց 6-րդ կամավորական խմբի հրամանատար:

Խումբը կոչվում էր նաև «հնչակյան», քանի որ համալրված էր հիմնականում Հնչակյան կուսակցության կողմից հավաքագրված կամավորներով: Այս խումբը կազմավորվել էր ինքնուրույն, ուներ ռազմականացված կարգ ու կանոն, ինչպես վկայում է «պատմական տեղեկանքը»⁴⁰, «Ժառանգական կապ» չունեի և նման չէր առաջին չորս «պարտիզանական» խմբերին, այլ ավելի շատ նման էր հետագայում կազմվելիք կանոնավոր հրաձգային գումարտակների:

Մարտական մկրտություն ստանալով 1915 թ. ապրիլի 6-ին, խումբն այնուհետև արյունահեղ բախումների մեջ մտավ թշնամու հետ բազմաթիվ բնակավայրերի ազատագրման համար մղվող մարտերում: 1915 թ. հունիսի 20-ից 29-ը Վերին Բասենում, Չախմախլու լեռան կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող բնագիծը գրավելիս, 6-րդ խումբը ցույց տվեց մարտական սխրանքի օրինակներ: Հրամանատարի տեղակալը՝ Հայկ Բժշկյանը, իր ակնարկներում նկարագրել էր այդ մարտերը⁴¹: Այդ մարտերում հունիսի 22-ին զոհվեց Գ. Ավշարյանը: Այդ կապակցությամբ գեներալ Բարաթյանը հեռագրեց Թիֆլիս՝ Ալ. Խատիսյանին՝ հավաստելով 6-րդ կամավորական խմբի և նրա զոհված հրամանատարի մարտական արիությունը⁴²: Խմբի հրամանատար նշանակվեց Հայկ Բժշկյանը:

7-րդ հայկական կամավորական խումբը (հրամանատար՝ Հովսեփ Արդուրյան) պահեստային էր, և 3-րդ ու 4-րդ խմբերին Դիլմանում համալրելու համար Երևանից ուղարկեց 750 կամավորական:

1915 թ. աշնանը հայկական կամավորական խմբերի համալրման ուղղությամբ լայն աշխատանքներ ծավալվեցին Ազգային Բյուրոյի և Կարգադրիչ մարմնի կողմից: Հատկապես մեծ ազդեցություն գործեց Անդրանիկի՝ սեպտեմբերի 4-ի կոչը, որ ուղղված էր ժողովրդին ու կամավորականներին: Այդ կոչում մասնավորապես ասվում էր. «Կոչ եմ անում Ձեզ անմիջապես ժամանել մեր զորախումբը՝ Երևան: Իմ բարեկամներ, տասն ամսվա ընթացքում մենք տանջվեցինք սարերում և լեռնանցք-

³⁹ Կարապետյան, նշվ. աշխ., էջ 73:

⁴⁰ Նշվ. աշխ., էջ 193:

⁴¹ Հուշարձան Ս. Դ. Հնչակյան կուսակցության 40-ամյակին, Փարիզ, 1930 թ., էջ 277:

⁴² Կարապետյան, նշվ. աշխ., էջ 193:

ներում, կրեցինք ամեն տեսակ զրկանք, անցանք հսկայական տարածքներ՝ հաճախ դիմանալով սովին և կոշիկի պակասությանը: Բայց այդ ամենը մեզ չպետք է հիասթափի: Հասել է ընդհանուր, երբ մենք պետք է կրկին ցուցաբերենք քաջություն և խիզախություն, և մեր կողմից սիրած գործը մեզ կշարժի վրեժխնդրության և ազատության կարոտ մեր Հայրենիք: Գունդը հնարավորություն ունի նոր կամավորներ ընդունելու, մասնավորապես... ձիավորների: Եկողները պիտի լինեն քաջառողջ, չարքաշ կյանքի և զրկանքների ընդունակ: Գունդը շնորհակալությամբ կընդունի նվերներ, հատկապես մեծ կարիք կա սպիտակեղենի, գուլպայի, ծխախոտի, գալետի, պաքսիմատի, շաքարի, առհասարակ՝ չոր ուտելիքների: Նվերները կարելի է ուղարկել Ազգային Բյուրոյի կամ Կարգադրիչ մարմնի միջոցով: Ժամանակը կարճ է, պետք է շտապել»⁴³:

Գործադրված ջանքերը տվեցին իրենց արդյունքը. հայկական 3-րդ և 4-րդ կամավորական խմբերը համալրվեցին Դիվանում, իսկ 1-ինը և 2-րդը՝ Երևանում և Իգդիրում: 1915 թ. հոկտեմբերին նրանք արդեն վերականգնել էին իրենց նախկին մարտական կազմը և լի էին մարտերի մեջ նետվելու վճռականությամբ:

Վերակազմավորված կամավորական խմբերը Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատարի 1915 թ. օգոստոսի 3-ի թիվ 61 հրամանով դրվել էին Կովկասյան 1-ին աշխարհագորային բրիգադի հրամանատար գեներալ Յուրկևիչի տրամադրության տակ: Այդ հրամանը կամավորական խմբերի մեկ ուղղությամբ գործելու, մեկ միավորման մեջ գտնվելու մասին համապատասխանում էր և՛ Ազգային Բյուրոյի, և՛ հայ հրամանատարների ցանկությանը՝ նորից մեկ բռնկման մեջ հավաքել Արարատյան ջոկատի կազմալուծման հետևանքով ցրված հայկական ուժերը, ինչը կմեծացներ խմբերի մարտական հնարավորությունները և թույլ կտար լուծելու ավելի խոշոր և պատասխանատու մարտական խնդիրներ: Այնուհանդերձ, չնայած այդ ուղղությամբ Աշխարհագորային բրիգադի շտաբի պետ, հայազգի գնդապետ Բեժանբեկի գործադրած ջանքերին, վերոհիշյալ հրամանը չիրագործվեց, և կրկին հայկական խմբերն սկսեցին գործել ռազմաճակատի տարբեր հատվածներում և միավորումներում⁴⁴: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ Վան-Ադրբեջանյան զորաջոկատի հրամանատար գեներալ Չերնոգուբովի միջնորդությամբ 3-րդ և 4-րդ խմբերը մնացին նրա զորաջոկատի կազմում:

Չերնոգուբովի կարգադրությամբ վերոհիշյալ խմբերից առանձնացված կեսական վաշտեր 1915 թ. սեպտեմբերի 7-ին Դիվանից դուրս եկան Վանի ուղղությամբ՝ ուժեղացնելու Վանի զորաջոկատը, որը շուտով կրկին գրավեց արդեն ավերակների վերածված Վանը: Նրանք դիրքեր գրավեցին Ոստանի մոտ գնդապետ Ջեմցովի առաջին կազակային գնդի կազմում, որը Վանի զորաջոկատի առաջապահն էր: Թուրքերը գտնվում էին Սև լեռան վրա, Վարկունիս գյուղի մոտ, 25 վերստ արևմուտք, լավ ամրացված դիրքերում: Գնդապետ Ջեմցովը, ինչ-որ տեղ վախենալով այդ հատվածում թուրքերի ուժեղացումից, սեպտեմբերի 28-ին իր գնդով անսպասելի թողեց Ոստանը և ետ քաշվեց, սակայն հայ կամավորները և գնդապետ Նալգինի Պոլտավյան առաջին գունդը կարողացան հիմնականում պահել գրաված բնագծերը, մինչև որ հոկտեմբերի 9-ին Վան հասան հայկական 7-րդ կամավորական խում-

⁴³ Նշվ. աշխ., էջ 73-74:

⁴⁴ Կարապետյան, նշվ. աշխ., էջ 232:

բը և նոյեմբերի 12-ին՝ 3-րդ խումբը: 4-րդ խմբի կիսավաշտը կրկին վերադարձավ Դիլման և միացավ իր խմբին:

7-րդ հայկական խումբն այդ օրերին Խանի մոտ հսկում էր Շատախի ուղղությամբ: Խումբը մի քանի ընդհարումներ ունեցավ քրդերի հետ, սակայն նրա «փառավոր գործերը», ինչպես գրում է պատմական տեղեկանքը⁴⁵ կազմողը, կատարվեցին Սոուջ Բուլաղի և Ռևանդուզի ուղղություններում:

Վան ժամանած առաջին կամավորական գունդը, Մախլուտոյի ժամանակավոր հրամանատարությամբ, 1916 թ. նոյեմբերի 7-ին մեկնեց Արճեշ, որտեղ նրան բաժին վիճակվեց Վանա լճի հյուսիսային և արևմտյան ափերի գրավման ծանր գործը: Արճեշի շրջակայքում առաջին խումբը պարտության մատնեց քրդերին, գրավեց Արտիշատի, Գմբեթի և Զարթունի շրջանները: Նոյեմբերի 30-ին Աղբաշիի ճակատամարտում, մեծ հմտությամբ ջարդելով քրդերի մեծաքանակ ուժերը, խումբը գնդապետ Ալեքսանդրովի Արճեշի զորաջոկատի օգնությամբ գրավեց Աղբաշիի ողջ շրջանը և 15 քրդաբնակ գյուղեր և կրկին վերադարձավ Արճեշ: Դեկտեմբերի 13-ին ժամանած 2-րդ կամավորական խմբի օգնությամբ դեկտեմբերի վերջին առաջին խումբը քրդերի հետ արյունահեղ մարտերում նրանց դուրս քշեց Սու-Սոդունի շրջանից և մաքրեց դեպի Պատնոս տանող ճանապարհը: Դրանից հետո քրդերը դադարեցին որևէ ակտիվ գործողություն ձեռնարկելուց: Արճեշում գտնվելու երկու ամսվա ընթացքում առաջին կամավորական խումբը տվեց ընդամենը 5 սպանված և 17 վիրավոր, իսկ քրդերը միայն Աղբաշիի մոտ թողել էին շուրջ 100 դիակ⁴⁶:

1916 թ. հունվարի 20-ին գեներալ Կուլեբյակինի՝ Արճեշյան զորաջոկատի կազմում առաջին կամավորական խումբը շարժվեց դեպի արևմուտք, Սինակ լեռան արևելյան լանջերը, առանց կորուստներ տալու, ջարդելով թշնամուն, գրավեց Նորշեն գյուղը: Այնտեղ ապաստան գտած հայերն ուղարկվեցին թիկունք: Հունվարի 29-ին Ադիլջևազի և Սիփանի փեշերին խումբը լուրջ հարված հասցրեց Հուսեյին փաշայի և թուրքական ոստիկանության խմբերին, որոնք շուրջ 300 զոհ տալով ետ շարժվեցին: Քոչետը գյուղում լիակատար պարտության մատնելով թուրքերին, խումբը հունվարի 30-ին գրավեց Ադիլջևազը: Ծաղ գյուղում գերված 60 հայ կանայք ևս ուղարկվեցին Վան⁴⁷:

Առանց հանգստանալու, խումբը շարունակեց կռիվները Ախլաթի ուղղությամբ և փետրվարի 2-ին գրավեց Ախլաթը: Այստեղ ևս դեռ կային կոտորածներից փրկված մեծ թվով հայեր, որոնք ազատագրվեցին կամավորականների օգնությամբ: Պետք է հատկապես նշել, որ Ադիլջևազի, Ախլաթի, Արճեշի, Նորշենի և այդ շրջանի մյուս բոլոր մարտական գործողությունների ընթացքում «առաջին խումբը շարժվում է միայն առջևից՝ իր վրա կրելով արշավանքի ողջ ծանրությունը»⁴⁸:

Այդ նույն օրը, փետրվարի 2-ին, գեներալ Նազարբեկյանի գլխավորած ռուսական Կովկասյան 2-րդ հրաձգային կորպուսի զորաջոկատը և հայ կամավորական 2-րդ և 4-րդ խմբերը գրավեցին Մուշը:

1916 թ. փետրվարի 6-ին առաջին խումբը բանակի շտաբի հրամանով մտավ գե-

⁴⁵ Գարապետյան, նշվ. աշխ., էջ 236 :

⁴⁶ Նշվ. աշխ., էջ 77-79:

⁴⁷ Աղայան Մ., նշվ. աշխ., էջ 432:

⁴⁸ Գարապետյան, նշվ. աշխ., էջ 79:

ներալ Աբացիկի՝ Բիթլիսյան խմբավորման առաջին Սևծովյան գնդի Ֆիլիպովի գլխավորած զորաջոկատի կազմի մեջ, որը հունվարի կեսերից ամրացել էր Նեմ-րուք լեռան շրջանում: Խումբն ուղարկվեց Դատվանի ուղղությամբ, ուր ամրացել էին Ախլաթից նահանջած քրդերն ու թուրք ոստիկանական զորքերը:

Փետրվարի 7-ին Նազիկ լճի շրջանից վերադարձած գնդապետ Ֆիլիպովի գունդը և առաջին խումբը հանդիպում են առանց մարտերի գրավված Դատվանում: Այդտեղ է ժամանում նաև գեներալ Աբացիկը, որին հրամայված էր գրավել Բիթլիսը:

Բիթլիսի ուղղությամբ տեղի ունեցած կռիվներում առաջին և 2-րդ խմբերը գործուն մասնակցություն ունեցան խիստ դժվարին՝ առատ ձյան և սաստիկ ցրտերի պայմաններում Ռահվե դուրան դաշտի, Բիթլիսի կիմի մուտքի, Ալամիս-խան, Բաշ-խան գյուղերի և Բիթլիսի Սու գետի մերձակա բարձունքների գրավման գործողություններին: Ահա թե ինչպես է նկարագրում պատմական տեղեկանքը այդ մարտերից վերջինը. «Բիթլիս Սու գետի երկարությամբ բարձունքներին մի շարք պատնեշում էր քաղաքը: Հենց այդ բարձունքներին էլ ամրացել էին թուրքերը: Բարձունքի ստորոտում կիրճը նեղանում և վերածվում էր միջանցքի, և ճանապարհը գտնվում էր մերձակա կրակի հասանելիության վրա: Մնում էր գրոհել հենց բարձունքները և նրանց վրայով թափանցել քաղաք: Առանց այդ էլ դժվարամատչելի լեռնաշարը ծածկված էր ձյան գանգվածներով:

Փետրվարի 15-ին սկսվեց այդ բարձունքների գրոհը (1-ին – Հ. Բ.): Խմբի առաջին և 2-րդ վաշտերն, Անդրանիկի հրամանատարությամբ, գնում էին առջևից, առանց գնդացիների և հրետանու, որոնք հրաձիգների հետ հասան մարտն սկսվելուց երկու ժամ հետո: Բարձունքներում ամրացած թուրքերը կամավորականներին դիմավորեցին հրետանու և հրազենի ուժեղ կրակով: Հայերն ստիպված էին գնալ առատ ձյան միջով, հենց նրա մեջ էլ խրամատավորվել: Այդ նույն դժվարությունները բաժին ընկան նաև 2-րդ Կովկասյան կազակային դիվիզիայի հրաձիգներին և հետիոտն գրոհող կազակներին: Աջ թևում վեր էին սողում հայերը, ձախում՝ ռուսները: Սակայն բոլոր ջանքերն իզուր էին. թուրքերը համառորեն պաշտպանվում էին, և մութն ընկնելուց հետո մարտը դադարեց (1-ին – Հ. Բ.): Խումբը տվեց 15 սպանված և 55 վիրավոր»⁴⁹: Շուրջ 36 ժամ չհանգստացած կռվողներին փոխարինած գնդապետ Ֆիլիպովի ջոկատին ևս չհաջողվեց փետրվարի 17-18-ին ճեղքել պաշտպանությունը: Գիշերը Անդրանիկի հետախույզները թշնամու դիրքերից գերեցին 8 թուրք զինվորի, որոնց նա ներկայացրեց գեներալ Աբացիկին: Համարձակությունից ու սեփական նախաձեռնությունից զուրկ գեներալը գերիներին հարցաքննելուց հետո երբ իմացավ Բիթլիսին մոտենալու դժվարությունների մասին, անմիջապես հեռագրեց Բիթլիսը գրավելու անհնարինության մասին: Դրանից խիստ զայրացած Անդրանիկը կարողանում է գնդապետ Ֆիլիպովի միջոցով հեռագիր ուղարկել կորպուսի հրամանատարին. «Գլուխս կերաշխավորեմ, որ կարելի է Բիթլիսը գրավել անմիջապես»⁵⁰: Պատասխան հեռագիրը հրամայում էր՝ ինչ գնով էլ լինի՝ անհապաղ գրավել Բիթլիսը: Քուրդ գրող Արաբ Շամիլովը, որն այդտեղ էր որպես թարգման, մեջբերում է հրամանատարության ներկայացուցչին Անդրանիկի ասածը. «Հաղորդեցեք պարոն գեներալին, որ ես ունեմ միայն 1500 զինվոր, բայց ես խոսք եմ

⁴⁹ Կարապետյան, էջ 251:

⁵⁰ Լյուկեճյան, նշվ. աշխ., էջ 40:

տալիս, որ այս գիշեր կվերցնեմ Բիթլիսը»⁵¹:

Ծանոթ լինելով տեղանքին, առանց կրակելու, գիշերվա ժամը 4.30-ին Անդրանիկի հրամանատարությամբ առաջ գնացին խմբի 1-ին և 2-րդ վաշտերը և Մախլուտոյի հեծյալները՝ առանց ձիերի: Կիրճն անցնելով, հարձակվողները որոշված վայրում ուժգին կրակով անակնկալի բերեցին թուրքերին և շուտով գրավեցին Գրգուռ, Ուրթափ, Բաշխան և այլ բարձունքները: Խրամատներում մերձակա մարտում հրազենով և սրերով կոտորելով ժամապահներին, իրարանցում առաջացրին: Հաղթանակը կատարյալ էր: Հետապնդելով խուճապահար, ամեն ինչ թողած փախչող թուրքերին, Մախլուտոյի հեծյալները և երկու վաշտերը, աջից շրջանցելով քաղաքը, մտան Բիթլիսի հարավային արվարձանները: Անցնելով Ավեր մեյդան թաղը, գրավեցին թուրքական լազարեթի վերածված ամերիկյան առաքելության որբանոցի շենքը: Անդրանիկն այդ գիշերը լուսացրեց Բիթլիսի կուսակալի ապարանքում: Առավոտյան ութ հազարանոց զորքի «հաղթական» երթով քաղաք մտավ գնեերալ Աբաղիան:

Բիթլիսում ևս կային կենդանի մնացած շուրջ 300 հայ երեխաներ ու կանայք, որոնք ուղարկվեցին Վան: Քաղաքի հարավ-արևելյան կողմում գտնվող Էլնև, Օլակ, Խումալ, Գևչոզ, Արձանավանք, Կարմուջ և այլ գյուղերում գերված մի քանի հարյուր հայ կանայք և երեխաներ նույնպես փրկվեցին քղերից: Այնուհետև հայկական առաջին կամավորական խումբը տարբեր վայրերում մարտեր մղեց Մուշի և Բիթլիսի միջև, մարտի 12-ից մինչև 31-ը մասնակցեց Բիթլիսի հերոսական պաշտպանությանը:

Իրենց գործողություններով աչքի ընկան նաև Դրոյի գլխավորած 2-րդ խմբի կամավորականները, թվով 1240 մարդ, այդ թվում՝ 585 արևելահայ և 655 արևմտահայ, որոնք 1915 թ. նոյեմբերի 26-ին դուրս գալով Երևանից, դեկտեմբերի 12-ին հետախուզական հեծյալ մի խմբով մարտի մեջ մտան Կոփ գյուղի մոտ: Սաստիկ սառնամանիքի պատճառով ցրտահար եղան խմբի 35 կամավորականներ⁵²: Խումբն այնուհետև մինչև դեկտեմբերի վերջը մասնակցեց Արճեշի ուղղությամբ մղված մի քանի ընդհարումների և մինչև 1916 թ. հունվարի 9-ը տեղակայվեց Բաղնուս գյուղում: Ռուսական Լաբինսկյան գնդի հետ միասին հետապնդելով նահանջող թշնամու զորամասերին, անցնելով Ձիանական լեռը, Կարա-Կիրփիի մոտ խոշոր պարտության մատնեց թուրքերին և 1916 թ. հունվարի 13-ին ազատագրեց Խնուսը: Մինչև հունվարի 25-ը խումբը վերադարձավ Խնուս: Հունվարի 28-ին 2-րդ խումբը, միանալով գնեերալ Նազարբեկյանի զորաջոկատի և 4-րդ հայկական կամավորական խմբի ուժերին, հնգօրյա ծանր ու համառ մարտերից հետո 1916 թ. փետրվարի 2-ին գրավեց Մուշը: Առաջինը քաղաք մտավ 2-րդ խմբի հեծյալ ջոկատը:

Այնուհետև խումբը գործում էր Բիթլիսի ուղղությամբ՝ օգնության շտապելով գեներալ Աբաղիանի Բիթլիսյան զորաջոկատին և 1-ին կամավորական խմբին: Բիթլիսի ճանապարհին խումբը գրավեց Խաս, Մառնիկ, Նորք և մի շարք այլ գյուղեր: 2-րդ կամավորական խմբի վաշտերից մեկը, հին հայդուկ Դալի Ղազարի առաջնորդությամբ, ռուսական զորքերի հետ փետրվարի 19-ին մտավ Բիթլիս:

Խումբն այնուհետև տեղակայվում է Մշո դաշտի Մառնիկ գյուղում, այնտեղից

⁵¹ Шамиллов А., Курдский пастух, М., 1969, стр. 104:

⁵² Կարապետյան, նշվ. աշխ., էջ 83:

շարժվում Նաստիկ գյուղի շրջան՝ այդ տարածքները սեփական ուժերով ազատագրելու նպատակով, ինչն իրագործվում է շուրջ մեկ շաբաթյա հաջողությամբ մղված մարտերում:

Մարտի 11-ին 2-րդ կամավորական խումբը կրկին վերադառնում է Մուշ: Հաջորդ մարտը 2-րդ կամավորական խումբը մղում է Կոստաղաջում, թուրքական կանոնավոր զորամասի հետ: Վերջին անգամ հայկական կամավորական 2-րդ խումբը մարտերի մեջ է մտնում ապրիլի 12-ին և 23-ին Կուսմա-Գյատտուկ գյուղի մերձակայքում: Այդ արյունահեղ մարտերում զոհվում են խմբի հրամանատարի օգնական Հարություն Ավոյանը, Մ. Խաղկիհանյանը և Վ. Եղոյանը: 1915 թ. նոյեմբերի 26-ից մարտի մեջ մտնելուց հետո Դրոյի հայկական 2-րդ կամավորական խումբը տվեց 51 սպանված, 104 վիրավոր և 44 ցրտահար⁵³: 1915 թ. ձմռանը և գարնանը Բիթլիսի շրջանում մղվող մարտերում իրենց մասնակցությունը բերեցին նաև 3-րդ և 4-րդ կամավորական խմբերը:

Համազասպ Սրվանձտյանի 3-րդ խումբը առաջադրանք էր ստացել պաշտպանել Գյուղեթ-Դերե կիրճի և Կարմուջ գյուղի շրջանները, որտեղ տեղի ունեցած թեժ մարտերում հայ կամավորականները դրսևորեցին լավագույն որակներ: Քեռու գլխավորած 4-րդ հայկական կամավորական խումբը 1915 թ. դեկտեմբերի 12-ից մինչև 1916 թ. հուլիսի 11-ը անցկացրեց Պարսկաստանում և Սուլթուզի ռուսական զորաջոկատի կազմում մասնակցեց 24 մարտերի⁵⁴:

1915 թ. ամռանը 4-րդ կամավորական խմբի կազմում կային 2461 կամավորներ, այդ թվում՝ 186 ռումինահայ, 252 ամերիկահայ, 472 արևելահայ և 1551 արևմտահայ: Մինչև 1916 թ. հուլիսի 16-ը, երբ տրվեց խմբի կազմացրման հրամանը, խումբը կորցրեց 1233 մարտիկ, որից 411-ը՝ սպանված⁵⁴: Ռևանդուզի շրջանում տեղի ունեցած ճակատամարտում էլ քաջի մահով ընկավ խրամատում իր մարտիկների կողքին կռվող Քեռին⁵⁵:

Պարսկաստանում, Ռևանդուզի և Սոուջ-Բուլաղի համար մղված մարտերում իրենց քաջությամբ դրսևորվեցին նաև Հովսեփ Արդույանի ղեկավարած 7-րդ պահեստային կամավորական գնդի մարտիկները:

6-րդ կամավորական գունդը կռվում էր Էրզրումի ուղղությունում, մեծ եռանդով և անձնագոհությամբ էր կատարում իր առաջադրանքները: «Հետապնդելով թշնամուն և 1916 թ. փետրվար-մարտ ամիսներին գրավելով Էրզրումի մոտ տեղակայված թուրքական դիրքերը, Կարսի դուռ կոչված ճանապարհով առաջինների շարքում մտավ և գրավեց Էրզրումը: Էրզրումի գրավումից հետո 6-րդ խումբը մասնակցեց Մամախաթունի կռիվներին: Մարտում 2-րդ անգամ վիրավորվեց Հայկ Բժշկյանը, որից հետո խումբը ղեկավարում էր Պանդուխտը»⁵⁶:

Ահա այսպիսի անձնագոհ և հերոսական կռիվների մասնակցող կամավորականները կրկին խորին հիասթափություն ապրեցին, երբ ցարական կառավարությունը և զինվորական հրամանատարությունը, ելնելով ինչ-ինչ նկատառումներից, 1916 թ. մարտի 13-ից սկսեցին ցրել կամավորական խմբերը՝ նպատակ ունենալով

⁵³ Գարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 85:

⁵⁴ Գարապետյան Մ., էջ 86:

⁵⁵ Նշվ. աշխ., էջ 302:

⁵⁶ Նշվ. աշխ., էջ 89:

նրանց փոխարեն ռուսական բանակի կազմում ստեղծել կանոնավոր հրաձգային գումարտակներ: Գլխավոր պատճառներից մեկն այն հանգամանքն էր, որ հայ կամավորական շարժման ջատագով փոխարքա Վորոնցով-Դաշկովին փոխարինել էր Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլանիչը, որը վարում էր հակընդդեմ քաղաքականություն: Գեներալ Օգանովսկին այդ փոփոխության նկատառումների և շարժառիթների մասին գրում է. «Հայկական կամավորական ջոկատները բաժանել են չորս մասի՝ նպատակ ունենալով նրանց զրկել ինքնուրույնությունից և չեզոքացնել /հայ/ զինված ուժերը: Մտադրություն կա մոտ ժամանակներս վերացնել հայկական կամավորական զորամասերի ինքնավար գոյությունը և նրանց միացնել համառուսական զինվորական ուժերին: Դա ունի իր պատճառները: Մենք հետապնդում ենք այնպիսի նպատակ, որ պատերազմը վերջանալուն պես հնարավորություն ունենանք անմիջապես և արագ զինաթափել հայերին: Հայերը պետք է փոխեն իրենց մտածողությունն ու աշխարհայեցողությունը: Նրանք պետք է հրապարակայնորեն հայտարարեն և գործով ապացուցեն, որ կոչվում են ոչ թե ինքնավար Հայաստանի համար, այլ որպես ռուսական կայսրության քաղաքացիներ, այլապես հայերի նպատակադրումներն իրենց վրա թանկ կնստեն»⁵⁷:

Այսպիսով, 1916 թ. ապրիլ-հունիս ամիսներին հայկական կամավորական բոլոր 7 խմբերը տարբեր վայրերում կազմացրվեցին: Պանդուխտը, Արդուբյանը, Քեռին, Անդրանիկը, Համազասպը և մյուս հայ քաջորդի հրամանատարները մեկուսացվեցին մարտական գործողություններից: Կամավորների հիմնական մասը, շուրջ 3200 մարդ, հիասթափված ռուսական հրամանատարության վարած քաղաքականությունից, ընդհանրապես թողեցին զինվորական ծառայությունը, իսկ արտասահմանից եկած հայերը վերադարձան իրենց տները: Միայն շուրջ 2000 կամավորներ պատրաստակամություն հայտնեցին համալրելու հայկական հրաձգային գումարտակները:

⁵⁷ **Борян Б.**, Армения, международная дипломатия и СССР, 4.1,- М. – Л., 1928, стр. 361-362:



ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ ՆՈՐ ԿԱՐԵՎՈՐ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐ

H. Morgenthau, United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913-1916. Compiled with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute, Princeton and London, 2004, 496 p.

Հ. Մորգենթաու, Միացյալ Նահանգների դիվանագիտությունը Բոսֆորում. դեսպան Մորգենթաուի օրագրերը, 1913-1916: Արա Սարաֆյանի աշխատասիրությամբ, Կոմիտասի ինստիտուտ, Փրինսթոն և Լոնդոն, 2004, 496 էջ:

1990-ական թվականների երկրորդ կեսից ի վեր Հայոց Ցեղասպանության պատմության սկզբնաղբյուրների հրատարակության ասպարեզում նշանակալից ավանդ է ներդրել անգլիացի պատմաբան Արա Սարաֆյանը, որի ջանքերով լույս են ընծայվել ամերիկյան դիվանագիտական արժեքավոր փաստաթղթեր, ամերիկացի և եվրոպացի միսիոներների բազմաթիվ հուշագրություններ: Նրա իրականացրած հրատարակություններից հիշարժան է ԱՄՆ-ի արխիվներում պահվող, ամերիկացի դիվանագետների գրագրություններն ամփոփող վավերագրերի ժողովածուն¹: Հարկ է մատնանշել նաև նրա ավանդը Ջ. Բրայսի և Ա. Թոյնբիի աշխատասիրությամբ 1916 թ. լույս ընծայված «Հայերի նկատմամբ վերաբերմունքն Օսմանյան կայսրությունում (1915-16)» փաստաթղթերի ժողովածուի վերահրատարակության գործում²:

Սույն ժողովածուում ընդգրկված անգլիական արխիվային 150 վավերագրի պատմականությունը թուրքական պաշտոնական շրջանների կողմից վերջին տա-

¹ United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2004. Ժողովածուում հրատարակված փաստաթղթերի մի մասը գետեղվել է հետևյալ հրատարակության մեջ. United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, v. I-III, Watertown, 1993-1995.

² J. Bryce and A. Toynbee, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian, Princeton, 2000.

րիներին տեղիք է տվել բուռն քննարկումների, քանզի, ելնելով Օսմանյան կայսրության տարածքում գտնվող փաստաթղթերի հեղինակների անվտանգության շահերից, հրատարակիչները գերադասել են չբացահայտել նրանց ինքնությունը: Ձեռնամուխ լինելով ժողովածուի վերահրատարակությանը, Սարաֆյանն՝ ըստ փաստաթղթերի բնագրերի, ճշգրտել է և մատնանշել թե՛ հեղինակների ազգանունները և թե՛ այն բնակավայրերը, որտեղից դրանք ստացվել են: Դրանով նա ջախջախիչ հարված է հասցրել ժողովածուի հրատարակության հետ կապված հանգամանքները շահարկող ժամանակակից թուրք քաղաքագետներին և պատմաբաններին:

Հայոց Մեծ Եղեռնի պատմության բազմազան սկզբնաղբյուրների թվում իրենց ուրույն տեղն ունեն պատմաբաններին քաջածանոթ՝ 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի (1856-1946)՝ 1918 թ. լույս ընծայված և բազմիցս վերահրատարակված հուշերը³: Պատմաբանների լայն շրջանակներին, սակայն, մինչ վերջերս անհայտ էին Մորգենթաուի օրագրային ծավալուն գրառումները, որոնք մեծապես համալրում են նրա հուշերում ամփոփված՝ Հայոց Ցեղասպանությանն առնչվող տեղեկությունները: ԱՄՆ-ի դեսպանի օրագրերի՝ գիտական բարձր մակարդակով իրականացված հրատարակության համար ևս Հայոց Ցեղասպանության պատմության ուսումնասիրողները պարտական են Սարաֆյանին: Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանի ձեռագրերի բաժնում նա հայտնաբերել է 1913 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1916 թ. փետրվարի 1-ն ընդգրկող՝ Մորգենթաուի օրագրային նոթերը, որոնք նրա հետնորդները 1952 թ. հանձնել են գրադարանին (Էջ XIII)⁴: Գրքի առաջաբանում (Էջ VII-XIII) Սարաֆյանն արժեվորել է հեղինակի շոշափած բազմազան հարցերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վավերագրերի բնագրերին տվել մեկնաբանություններ:

Մորգենթաուի ամենօրյա գրառումներն աչքի են ընկնում տեղեկատվության բազմազանությամբ և պարունակում ոչ միայն Կոստանդնուպոլսում նրա առօրյային (ֆրանսերենի ուսուցում, տեսարժան վայրերի այցելություններ, ձիավարություններ և այլն), այլև դիվանագիտական գործունեությանը վերաբերող հետաքրքիր մանրամասներ, որոնք վկայում են Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպանի բազմաբնույթ գործունեության մասին: Սակայն Մորգենթաուի օրագրերին առավել նշանակալից կարևորություն են հաղորդում թե՛ օսմանյան պետական գործիչների և թե՛ կայսրությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետների հետ զանազան քաղաքական հարցերի քննարկումներին վերաբերող ծավալուն գրառումները:

Շրջանցելով Մորգենթաուի դիվանագիտական հարաբերություններին, Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծմանը, ԱՄՆ-ի քաղաքականությանը վերաբերող տեղեկությունները, անդրադառնանք Հայոց Մեծ Եղեռնին առնչվող՝

³ **H. Morgenthau**, Ambassador Morgenthau's Story, New York, 1918. Տե՛ս նաև հայերեն թարգմանությունը. Ամերիկեան դեսպան Մորկընթաուի յիշատակները և հայկական եղեռնին զաղտիքները, թարգմանիչ՝ Ենովք Արմեն, Կ. Պոլիս, 1919: Մորգենթաուի հուշերի մասին տե՛ս **Մ. Կաթապետյան**, Մորգենթաուի հուշագրության պատմագիտական արժեքը. – Հենրի Մորգենթաուն և հայ ժողովուրդը, Երևան, 1999, էջ 26-37:

⁴ Մորգենթաուի ձեռագիր օրագրային գրառումները սուկ երկու անգամ հղել է նրա թոռ Մորգենթաու III-ը՝ Մորգենթաունների ընտանիքին նվիրված իր գրքում: Տե՛ս **H. Morgenthau III**, Mostly Morgenthau's. A Family History, New York, 1991, p. 165-166.

դեսպանի քննարկած խնդիրներին, որոնց նրա օրագրերում հատկացված է զգալի տեղ: Մորգենթաուի հաղորդած արժեքավոր տեղեկությունների գերակշռող մասը լույս է սփռում, մասնավորապես, հայ ժողովրդի հանդեպ օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների որդեգրած դիրքորոշման և դեսպանի հայանպաստ գործունեության վրա, ինչը վկայում է հայ ժողովրդի հանդեպ նրա սրտացավ վերաբերմունքի, այլ ոչ թե իրադարձությունների անտարբեր դիտորդին բնորոշ պահվածքի մասին:

Մորգենթաուի օրագրային գրառումները բացահայտում են Մեծ Եղեռնի իրականացումն օսմանյան իշխանությունների կողմից դիտավորության հիման վրա, որն, ըստ ժամանակակից ցեղասպանագետների, ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բնորոշիչներից է⁵: Մորգենթաուն հավաստում է, որ 1915 թ. հուլիսի 10-ին իր հետ զրույցի ընթացքում Թուրքիայի Ներքին գործերի նախարար Թալեաթը խուսափել է Հայկական հարցի քննարկումից՝ ասելով, թե դրան կանդրադառնա մեկ այլ առիթով, սակայն չի վարանել նրա թարգմանիչ Շմավոնյանին անմիջապես հայտնել, որ «այդ օրը երբեք չի գա»: Դրանից դեսպանը հանգել է այն հետևության, որ օսմանյան իշխանություններն «ակնհայտորեն որոշում են կայացրել երկրի իսլամացման և բոլոր նրանց, ովքեր մահմեդականներ չեն, ոչնչացման ու բնաջնջման մասին» (էջ 273): Այդ իսկ պատճառով նա ամերիկյան կանանց կոմիտեի ներկայացուցիչներին խորհուրդ է տվել ձեռնպահ մնալ Թալեաթի հետ Հայոց Ցեղասպանության մասին խոսելուց, քանզի նախարարը որևէ նշանակություն չի տալիս նույնիսկ «բոլոր կառավարությունների և դեսպանների բողոքներին ու պահանջներին» (էջ 278):

Դիտավորության հիման վրա հայերի դեմ ցեղասպան քաղաքականության կենսագործումը հավաստել են նաև եվրոպացի դիվանագետներն ու հասարակական գործիչները: Ըստ Մորգենթաուի՝ Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչինին ցանկություն չի ունեցել հայկական կոտորածները կասեցնելու շուրջ զրուցել Թալեաթի և Էնվերի հետ, քանզի համոզվել է, որ դա անիմաստ է (էջ 256): Պալլավիչինին հույն դիվանագետ Յամադոսին հայտնել է իր համոզմունքն առ այն, որ թուրքերը «լի են վճռականությամբ ոչնչացնելու կամ վտարելու հայերին և հույներին» (էջ 275): Իսկ 1915 թ. օգոստոսին Կոստանդնուպոլսում գտնվող Լեփսիուսը Մորգենթաունին իրազեկել է, որ օսմանյան իշխանությունները հետամուտ են հայերին ոչնչացնելու ծրագիրն ավարտին հասցնելու քաղաքականությանը (էջ 301):

Ինչ վերաբերում է հայերի զանգվածային բնաջնջմանն ու տեղահանություններին, ապա Մորգենթաուն հաղորդում է կցկտուր տեղեկություններ, ինչն, անկասկած, պայմանավորված է գլխավորապես նրանով, որ զրույցներում նա, հավանաբար, գերադասել է խույս տալ ցեղասպանության մանրամասների մեջ թափանցելուց⁶: Այդուհանդերձ, Մորգենթաուի նոթերում հանդիպում ենք տարբեր բնակա-

⁵ Տե՛ս օրինակ **F. Chalk & K. Jonassohn**, *The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies*, New Haven & London, 1990, p. 26; **Yv. Ternon**, *L'Etat criminel. Les gnnocides au XX^e siecle*, Paris, 1995, p. 91-92; *նույնի* *L'innocence des victimes. Au siñcle des gnnocides*, Paris, 2001, p. 10; **J. Balint, I. W. Charny**, *Dñfinitions du gnnocide.* – Le livre noir de l'humanitñ. *Encyclopdie mondiale des gnnocides*. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 43-44.

⁶ Հարկ է նկատի ունենալ սակայն, որ չնայած օսմանյան իշխանությունների՝ մայրաքաղաքի և ներքին

վայրերից (Զեյթուն, Կոնիա, Զմյուռնիա) արտաքսվող հայերի համար ստեղծված դժնդակ և անելանելի պայմանների մասին վկայող Կոստանդնուպոլիս ժամանած սակավաթիվ ականատեսներից (մասնավորապես օտարերկրյա միսիոներներից) ստացված ցաքուցրիվ տեղեկությունների (էջ 240, 269, 276, 321 և այլն): Հիշարժան է, հատկապես, Մեքաստիայում ամերիկացի միսիոներ Փարթրիդջի վկայությունը 25.000 հայի քաղաքից վտարելու և Մոսուլ քշելու մասին: Ավելի կարևոր է, սակայն, միսիոների Կոստանդնուպոլիսից տրված հրամանի հիման վրա տեղահանությունների իրականացմանը վերաբերող հավաստումները. «Կասկածները չնչին են, որ կառավարությունը արտաքուստ ոչ տեսանելի, սակայն պատասխանատու է այս հալածանքների համար», – եզրակացրել է նա (էջ 286): Դրանով նա ևս, փաստորեն, ընդգծել է պետական քաղաքականության մակարդակով Հայոց Ցեղասպանության իրականացման հանգամանքը:

1915 թ. ապրիլ-հունիս ամիսներին կատարած տարբեր գրառումներում դեսպանը հաղորդում է նաև հայ մտավորականների ձերբակալությանն ու արտաքսմանն առնչվող տեղեկություններ: Դեռևս ապրիլին, Թալեաթի հետ զրույցներից հետո, Մորգենթաուի մոտ ձևավորվել է այն տպավորությունը, որ օսմանյան իշխանություններին մեծ երկյուղ է ներշնչում «հնարավոր հեղափոխության» գաղափարը (էջ 217) և ըստ այդմ՝ նրանք ցանկանում են հայ մտավորականներին տեղափոխել թուրքերով բնակեցված ներքին նահանգները, «որտեղ նրանք չեն կարող վնաս պատճառել» (էջ 216): Այդուհանդերձ, ելնելով գրառումներից, կարելի է հավաստել, որ Մորգենթաուն քիչ անց կողմնորոշվել է մտավորականների արտաքսման իրական պատճառներում, քանզի արդեն մայիսի 17-ին նշել է, որ ձերբակալվածների «մեծամասնությունը կատարելապես անմեղ է և դարձել է զավեշտալի սխալների զոհը» (էջ 231):

Ըստ Մորգենթաուի օրագրերի՝ ժամանակակիցները վկայել են նաև ցեղասպանության իրականացման զանազան դրսևորումների մասին: Գերմանացի միսիոներներից մեկն Էվերեկում հայերին վերաբերվելու եղանակն անվանել է սարսափելի և նշել, որ տեղում զինաթափում են հայերին, այն դեպքում, երբ մահմեդականներից զենքերը չեն առգրավվում (էջ 268): Մեկ այլ միսիոներ դեսպանին տեղեկացրել է 30.000 հայի՝ Հալեպից անապատ քշելու և այն սարսափելի խոշտանգումների մասին, որոնց նրանք ենթարկվում են (էջ 269): Բեդրի բեյն ընդունել է հայ երեխաներին հարկադրաբար կրոնափոխելու իրողությունը (էջ 294): Զմյուռնիայում հայերի ոչնչացումը, հայկական թաղամասերի հրկիզումը, թուրք սպաների և զինվորների կողմից հայերի ունեցվածքի կողոպուտը հավաստել է քահանա Հարլոուն (էջ 321):

Մորգենթաուի նոթերում առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Թալեաթի, Էնվերի, ինչպես նաև օսմանյան այլ ղեկավարների հետ զրույցներին վերա-

նահանգների միջև հաղորդակցությունները խոչընդոտելու ուղղությամբ գործադրած ջանքերին (ըստ դեսպանի գրառումներից մեկի՝ այդ մասին հավաստել է նաև Կոստանդնուպոլիսի ոստիկանապետ Բեդրի բեյը 1915 թ. օգոստոսի 3-ին Շմավոնյանի հետ ունեցած զրույցում (էջ 294)), Մորգենթաուն, այդուհանդերձ, տարբեր տարածաշրջաններում գտնվող ամերիկյան հյուպատոսներից ստացել է ընդարձակ և հավաստի տեղեկություններ, որոնք պարբերաբար հղել է պետական դեսպարտամենտին: Դրանք ամփոփված են “United States Official Records on the Armenian Genocide 1915-1917” ժողովածուում:

բերող գրառումները, որոնք բացահայտում են եղեռնի կազմակերպիչների համանման՝ առերևույթ, սակայն փոքր-ինչ զանազանվող հայատյաց միտումները: ԱՄՆ-ի դեսպանը հիմնավորապես մերկացնում է Թալեաթի անմարդկային դիմագիծը: Դեռևս մինչ 1915 թ. հայկական լայնածավալ կոտորածների սանձազերծումը, նա Օսմանյան կայսրության կրթության նախարարի հետ զրույցում վկայակոչել է Թալեաթի խոստովանությունն առ այն, որ «ինքը սիրտ չունի» (էջ 128): Հայոց Ցեղասպանության գործընթացի ծավալումը Մորզենթաուին վերջնականապես համոզել է դրանում: Հայերի ոչնչացման և արտաքսման քաղաքականությունն ավարտին հասցնելու հարցում Թալեաթի վճռականության մասին 1916 թ. հունվարի 4-ին վկայել է, մասնավորապես, Թուրքիայի դաշնակից Գերմանիայի նորանշանակ դեսպան կոմս Վոլֆ-Մետերնիխը, որը, թեպետ հայերի տեղահանությունները վերջնականապես դադարեցնելուն առնչվող Թալեաթի կեղծ խոստմանը, արձանագրել է որոշ բողոքականների և կաթոլիկների տեղահանությունը և փաստել հարցի առնչությամբ ճշմարտության բացակայությունը Ներքին գործերի նախարարի հավաստումներում (էջ 427):

Այդուհանդերձ, Մորզենթաուի հետ զրույցներում Թալեաթը երբևէ չի քողարկել հայերի ոչնչացման փաստը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն ընդունել է: Մի առիթով նա դեսպանին բացահայտորեն ասել է. «Ոչ մի հայ չի կարող այլևս մեր ընկերը լինել այն ամենից հետո, ինչ մենք արել ենք» (էջ 301): 1915 թ. օգոստոսի 2-ին արդեն Մորզենթաուն հավաստիացել է, որ Թալեաթը «ցանկանում է բնաջնջել խեղճ հայերին» (էջ 293): Դեռ ավելին, նա վկայակոչում է Թալեաթի լկտի խոստովանությունն այն մասին, որ հայերին ոչնչացնելու հարցում երեք ամսում արել է ավելին, քան Աբդուլ Համիդը՝ 37 տարում (էջ 279):

Փոխարենը, օտարերկրյա դիվանագետների հետ զրույցներում Ռազմական նախարար Էնվերը հետևել է շատ ավելի զգույշ և խորամանկ մարտավարության: 1915 թ. օգոստոսի 1-ին Մորզենթաուին նա հայտնել է, որ հայերի՝ ԱՄՆ մեկնելու հեռանկարն իրեն չի ոգևորում, քանզի թուրքերը կգրկվեն բարձր արժանիքներով օժտված քաղաքացիներից: Բացի դրանից, նա հայտարարել է, որ օսմանյան իշխանությունները ոչ միայն մտադիր չեն հայերին բնաջնջելու, այլև զգույշ են նրանց կարիքը, իսկ ինքը միայն վախենում է, որ տարագնացության թույլտվության պարագայում հասարակության լավագույն մասը կլքի կայսրությունը (էջ 291): Ռազմական նախարարը Մորզենթաուին հայտնել է նույնիսկ իր հիացմունքը՝ կապված հայերի աշխատասիրության հետ, ինչպես նաև փորձել է նրան համոզել, որ հայ ժողովրդի նկատմամբ բացասական տրամադրվածություն չունի (էջ 258): Էնվերը դեսպանին պարբերաբար տեղեկացրել է հայկական կոտորածները կասեցնելու (էջ 258), հայերին անհանգստություններ չպատճառելու իր ցանկությունը և նրա ներկայությամբ մի առիթով անգամ կարգադրել է հեռագրեր ուղարկել այդ կապակցությամբ (էջ 315): 1915 թ. մայիսին նա Մորզենթաուին նույնիսկ թույլատրել է Կոնիայի հայերին հատկացնել դրամական և այլ օգնություններ (էջ 233):

Ակնհայտ է, որ երիտթուրքերի պարագլուխների՝ հայերի հանդեպ իրականացվող քաղաքականության մեկնաբանությունների միջև կան էական զանազանություններ, որոնք չեն վրիպել նաև եվրոպացի դիվանագետների ուշադրությունից: Բուլղարացի դիվանագետ Կոլուշեֆֆին, օրինակ, Թալեաթին և Էնվերին անվանելով

«կատուններ», նախապատվությունն, այդուհանդերձ, տվել է առաջինին, քանզի նա «ցույց է տալիս իր մագիլները, այն դեպքում, երբ Էնվերը դրանք քողարկում է» (էջ 356):

Մորզենթաուն մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մեծ Եղեռնի պատճառներին՝ երիտթուրք ղեկավարների տված մեկնաբանությունների շուրջ, որոնք հանգում են հիմնականում երեքի՝ օտար պետությունների միջամտության, որի հետևանքով հայերն ապստամբել են, հայկական ինքնուրույն թագավորության հիմնադրման, ռուսների հետ, մասնավորապես Վանում, համագործակցության:

Ըստ Թալեաթի՝ հայերը հարստացել են թուրքերի հաշվին, ցանկանում են իշխել նրանց վրա, ստեղծել իրենց պետությունը, ինչպես նաև բացահայտորեն քաջալերել են նրանց թշնամիներին: Ուստի՝ թուրքերը հանգել են մինչ պատերազմի ավարտը հայերին «ուժասպառ անելու» անբեկանելի որոշման: «Նա ասաց, շարունակում է դեսպանը, որ իրենք ցանկանում են հայերին վերաբերվել այնպես, ինչպես մենք ենք վերաբերվում նեգրերին» (էջ 298): Այս պարագայում Թալեաթին գույների խտացման մեջ հանդիմանելու հարկը չկա, քանզի նույնիսկ մինչ ստրկության վերացումը՝ 1863 թ., աֆրիկյան ծագում ունեցող ստրուկների հանդեպ ցեղասպան քաղաքականություն ԱՄՆ-ում երբևէ չի իրականացվել:

Հայերի կարծեցյալ ապստամբության առնչությամբ Թալեաթը Կոլուշեֆֆին հայտնել է, որ ռուսները պատրաստվում են նրանց ռումբեր ուղարկել՝ Կոստանդնուպոլսում օգտագործելու համար (էջ 217): Նույն համոզմունքն է հայտնել Էնվերը, որը վկայակոչել է հայերի՝ Վանում ռումբեր օգտագործելու փաստը և մտավախություն հայտնել, որ նրանք նույն կերպ կարող են վարվել մայրաքաղաքում: Էնվերն, ի դեպ, հենց դրանով է հիմնավորել 1915 թ. ապրիլին նշանավոր հայերի ձերբակալություններն ու Անգորայի մերձակայք նրանց արտաքսումը (էջ 218):

Էրզրումում 25.000 հայերի սպառնացող տեղահանության վտանգն Էնվերը չի ժխտել և այն պատճառաբանել է նրանց ապստամբելու մտադրությամբ (էջ 232): Հայերին մեղադրելով «անջատողական» միտումներ և իրենց թագավորությունը ստեղծելու ցանկության մեջ, Էնվերն, ըստ էության, թուրքերի և հայերի փոխհարաբերություններում ծառացող միակ բարդությունը պայմանավորել է պատերազմական գործողությունների ընթացքում ռուսների հետ նրանց համագործակցությամբ (էջ 280): Հունիսի 19-ին նա հավաստել է, որ եթե նրանք դաշնակցեն թուրքերի թշնամիների հետ, ապա կբնաջնջվեն: Կեղծելով փաստերը՝ Էնվերը պնդել է, թե իբր հայերը և քրդերը Վանի տարածաշրջանում ոչնչացրել են 30.000 թուրքի (էջ 258): Ուստի, ելնելով երիտթուրք ղեկավարներին փոքր-իսկ պատասխանատվությունից, զերծ պահելու անհրաժեշտությունից՝ Էնվերը հիմնվել է Հայոց Պատրիարքի հետ 1915 թ. մարտին ունեցած զրույցի վրա, որի ընթացքում նրան զգուշացրել է հայերին զերծ պահել ռուսներին աջակցելուց և ապստամբելու գաղափարից, հակառակ դեպքում՝ փարիսեցիորեն հայտարարել է, թե անկարող կլինի կանխել նրանց դեմ հնարավոր բռնությունների կիրառումը (էջ 257):

Ի տարբերություն նրա, այս հարցում ևս Թալեաթը որդեգրել է շատ ավելի կոշտ դիրքորոշում՝ Մորզենթաունի հայտնելով, թե իբր Սարիղամիշում, Վանում և այլուր թուրքերի կրած ռազմական անհաջողությունների համար մեղավորը ոչ թե ռուսական զորքերն են, այլ հայ կամավորները (էջ 273, 359): Հայերի կոտորածները Վանում նա պատճառաբանել է պատերազմական գործողություններով, այլ ոչ թե կան-

խամտածված պետական քաղաքականությամբ (էջ 220):

Համանման դիրքերից են այս հարցը մեկնաբանել նաև Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և Արտաքին գործերի նախարար Հալիլ բեյը: Իշխանությունների՝ հայերին պատժելու վճռականությունը Մեծ վեզիրը «հիմնավորել» է հայերի և ռուսների կողմից նվազագույնը՝ 120.000 թուրքի ոչնչացմամբ Վանում (էջ 304): Հալիլ բեյը ևս հայերի արտաքսումը Վանից մեկնաբանել է բացառապես ռուսների հետ նրանց համագործակցությամբ, որը թուրքերին դրդել է դիմել ինքնապաշտպանության (էջ 381): Ժխտելով հայերի ոչնչացմանն առնչվող ծրագրի գոյության փաստը, նա ընդունել է, այդուհանդերձ, կոտորածների հավաստիությունը և այն բնորոշել իբրև «պաշտպանության անհրաժեշտ միջոց»: Այնուամենայնիվ, իր դիրքորոշումը նա ներկայացրել է իբրև հայերի հանդեպ կառավարության կիրառած դաժան միջոցառումների, այն է՝ «մասնակի արդարացուցիչ հանգամանքների» մեկնաբանություն, այլ ոչ իբրև արդարացում (էջ 382):

Նույն գերատեսչության մեկ այլ ղեկավար պաշտոնյա՝ Ռեշադ Հիքմեթը ևս ընդունել է հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների փաստը և այն հիմնավորել միևնույն մտացածին փաստարկով՝ պատերազմի ընթացքում հայերի ոչ չեզոք դիրքորոշմամբ, ինչի հետևանքով թուրքերը մեղավորին չեն զանազանել անմեղից (էջ 398): Ինչպես տեսնում ենք, օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների գերակշռող մասը, ի տարբերություն Հայոց Ցեղասպանության պատմության կեղծարարներից շատերի (այդ թվում՝ ժամանակակից թուրք), անթաքույց հավաստել է հայ ժողովրդի բնաջնջման իրողությունը:

Նշենք, որ, ըստ Մորգենթաուի հավաստումների, հայերի ոչնչացման մեկնաբանման հարցում երիտթուրք ղեկավարների հետ համակարծիք են եղել գերմանացի դիվանագետները: Այս առումով հատկանշական է նրա գրույցը Գերմանիայի դեսպանության ռազմածովային կցորդ Հումանի հետ, որը 1915 թ. օգոստոսին սատարել է երիտթուրքերին՝ հայկական կոտորածներն արդարացնելով օսմանյան իշխանությունների հանդեպ հայերի կարծեցյալ անհավատարմությամբ: Հարցը դիտարկելով թուրքերի անվտանգության տեսակետից՝ նա հայերի ոչնչացումը համարել է միանգամայն արդարացված (էջ 305): Իսկ դեսպան Վանգենհայմը խոստովանել է, որ հայերին ոչնչով չի օգնելու, քանզի Վանում նրանք գորավիզ են եղել Գերմանիայի հակառակորդներին՝ ռուսներին (էջ 217-218):

Մորգենթաուի գրառումների զգալի մասը վկայում է հայ ժողովրդի հանդեպ դրսևորած նրա անշահախնդիր, մարդասիրական վերաբերմունքի և սկզբունքայնության մասին: Ինչպես պարզվում է, դեսպանն օսմանյան ղեկավարների հետ ոչ միայն պարբերաբար քննարկել է հայերի կոտորածներին և տեղահանություններին առնչվող հարցերը, այլև իր սահմանափակ հնարավորությունների շրջանակում գործադրել նահատակվող ժողովրդին վերջնական կործանումից փրկելու բոլոր ջանքերը: Նա անկողմնակալորեն նրանց է ներկայացրել հայերի հանդեպ գործադրվող դժին վերաբերմունքի հավաստի պատկերը (էջ 291), միջամտել տեղահանվածներին օգնելու համար (էջ 233), Սայիդ Հալիմի հետ՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ 1915 թ. մայիսի 24-ի ծանուցագրի քննարկման առնչությամբ անվարանորեն սատարել հայերին (էջ 249):

Տեղահանությունների ծավալմանը զուգընթաց, 1915 թ. օգոստոսի 5-ին, Մորգեն-

թաուն Էնվերին է ներկայացրել արտաքսման դատապարտված հայերի կացության բարելավմանն ուղղված միջոցառումների փաթեթ: Նա առաջարկել է կասեցնել տեղահանությունները, հակառակ պարագայում՝ բացառություններ նախատեսել այն ընտանիքների համար, որոնց անդամներն իբրև զինվոր ծառայում են բանակում կամ որոնք տղամարդ չունեն: Ըստ Մորգենթաուի առաջարկությունների՝ տեղահանման դատապարտվածների համար հարկ էր ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ նախօրոք զգուշացնել մարդկանց և 10-ից 15 օր ժամանակ տրամադրել նրանց՝ նախապատրաստվելու համար, ճանապարհորդության ընթացքում երաշխավորել տեղահանվածների կյանքի անվտանգությունը և ունեցվածքի անձեռնմխելիությունը, կառավարության հոգածությամբ ապահովել նրանց սննդով, նախապես մարդկանց հայտնել այն վայրերի մասին, ուր պատրաստվում են նրանց տեղահանել՝ ընձեռելով ընտրություն կատարելու հնարավորություն և այլն (էջ 295-296):

Քաջ գիտակցելով Գերմանիայի մեղսակցությունը հայ ժողովրդի ողբերգության հարցում, Մորգենթաուն Վանզենհայմի հետ զրույցում, 1915 թ. հոկտեմբերի 15-ին, խստագույնս դատապարտել է Օսմանյան կայսրության դաշնակցի հակահայկական քաղաքականությունը և նշել, որ, անկախ իր երկրի պատասխանատվությունը ժխտելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերից, աշխարհին, այդուհանդերձ, Հայոց Ցեղասպանության համար պատասխանատու է ճանաչելու Գերմանիային (էջ 357):

Արևմտահայությանը սատարելու մասին են վկայում գլխավորապես Մորգենթաուի ձեռնարկած գործնական քայլերն ամերիկյան հյուպատոսների և միսիոներների միջոցով հայերին դրամական օգնություն բաշխելու հարցում (էջ 280): Վոլֆ-Մետերնիխի հետ զրույցներում նա ոչ միայն հավաստել է, որ հայերին շատ ավելի մեծ գումարներ կառաքել՝ անկաշկանդ գործելու հնարավորության պայմաններում (էջ 427), այլև խորհուրդ է տվել նրան, հաշվի առնելով իր հնարավորությունների սահմանափակությունը, նույն նպատակով Գերմանիայում հայթայթել դրամական միջոցներ (էջ 449):

Հարկ է նշել, որ դեսպանի հայանպաստ գործունեությունն աննկատ չի մնացել: Հաշվի առնելով նրա բարյացակամ վերաբերմունքը՝ Բրուսայի հայերը 1915 թ. մայիսին դիմել են նրան՝ իրենց օգնելու խնդրանքով (էջ 240): Երախտահատույց հայ հոգևոր առաջնորդները բարձր են գնահատել Մորգենթաուի նվիրվածությունը հայ ժողովրդին: 1916 թ. հունվարի 1-ին Հայոց Պատրիարքի անունից՝ նրա ներկայացուցիչը շնորհակալություն է հայտնել դեսպանին այն ամենի համար, ինչ նա «արել է հանուն հայերի» (էջ 421):

Անդրադառնալով նաև հայ գործիչների հետ Մորգենթաուի հանդիպումներին վերաբերող՝ նրա օրագրերում արձանագրված սակավաթիվ վկայություններին: Հետաքրքիր է, որ քաղաքացիական բարձր դիմագծի տեր դեսպանը միջնորդել է հանուն ձերբակալված Կոմիտասի ազատ արձակման, իսկ վերջինս այցելել է նրան և իր երախտագիտությունը հայտնել (էջ 231): Մորգենթաուն հիշատակում է նաև Կոստանդնուպոլսում բնակվող հայ արվեստագետների, այդ թվում՝ ոչ միայն Կոմիտասի, այլև Արմենակ Շահմուրադյանի հետ իր առնչությունների մասին, որի 24 հոգանոց երգչախմբի համերգին մասնակցել է և ինքը (էջ 29, 31, 32):

Կոստանդնուպոլսում Մորգենթաուն բազմիցս շփումներ է ունեցել նաև տարբեր երկրների հասարակական գործիչների, այդ թվում՝ Եվրոպայում հայանպաստ

շարժման կարկառուն ներկայացուցիչ Լեփսիուսի հետ: Հայերի ոչնչացման և տեղահանության գործընթացներին խոչընդոտելու կապակցությամբ նա վկայում է Լեփսիուսի վճռականության մասին, որը նրան հայտնել է Ժնև գնալու և համընդհանուր բողոքին միանալու առաջարկությամբ՝ միջազգային Կարմիր խաչին ու Հռոմի Պապին դիմելու իր հաստատականության մասին (էջ 291, 293):

Մշակութային արժեքների ոչնչացման առիթով Մորգենթաուն հաղորդում է թուրքերի կողմից՝ Բեյրութում ֆրանսիացի ճիզվիտներին պատկանող հարուստ գրադարանը տակնուվրա անելու մասին, որտեղ 100.000 գրքից զատ պահվել են նաև 4.000 «խիստ հազվագյուտ ձեռագրեր» (էջ 177):

Եզրափակելուց առաջ նկատենք, որ Մորգենթաունի օրագրերի հետ հպանցիկ իսկ ծանոթությունն ընթերցողին համոզում է, որ Հայոց Ցեղասպանության պատմագրությունը հիրավի հարստացել է արժեքավոր սկզբնաղբյուրով: Հարկ է մասնավորապես նկատի ունենալ, որ հայ ժողովրդի բնաջնջման շուրջ գրառումները Մորգենթաուն թղթին է հանձնել Օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաների հետ զրույցների անմիջական տպավորության տակ, որոնք, ըստ այդմ, ձեռք են բերում աղբյուրագիտական առավել մեծ կարևորություն, քանզի հեղինակի՝ հետագա սրբագրությունների հավանականությունն այս պարագայում իսպառ բացառվում է:

Մորգենթաունի արձանագրած՝ հայ ժողովրդի հանդեպ երիտթուրք պարագլուխների կիրառած քաղաքականությանն առնչվող անաչառ վկայությունները հուժկու հակահարված են տալիս Հայոց Ցեղասպանության պատմականությունը ժխտող ժամանակակից կեղծարարներին: Նրա գրառումներից ակնբախ է, որ հետագա տասնամյակներին Հայոց Ցեղասպանության կեղծարարներն ընդամենը որդեգրել են երիտթուրք պարագլուխների՝ հայ ժողովրդի բնաջնջման մեկնաբանության կապակցությամբ առաջադրած թեզերից շատերը և դրանցով հարստացրել իրենց գիճանոցը: Ըստ այդմ՝ եթե հարցին մոտենանք Հայոց Ցեղասպանության պատմականությունը ժխտող ուղղության և, մասնավորապես, ժամանակակից թուրքական պատմագրության կողմից շահարկվող թեզերի կտրվածքով, ակնհայտ կդառնա, որ օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների՝ հայերի հանդեպ գործադրված բռնությունների պատճառների հիմնավորմանը վերաբերող Մորգենթաունի հաղորդած տեղեկությունները խիստ այժմեական են:

Նշենք նաև, որ Հայոց Ցեղասպանությանն առնչվող տեղեկատվության հարստության և բազմազանության տեսակետից որևէ համեմատություններ չեն կարող լինել Մորգենթաունի հուշերի և օրագրերի միջև: Ուստի անհրաժեշտ ենք համարում արժեվորել Արա Սարաֆյանի շնորհակալ աշխատանքը՝ այս մեծարժեք սկզբնաղբյուրի հրատարակության իրականացման գործում:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՑՆՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայոց Մեծ Եղեռնին նվիրված, ցեղասպանության սահմոկեցուցիչ հետքերը սերունդների հիշողության մեջ «անկորնչելի շրջապտույտով մը» արտացոլած ցանկացած պատմական-հուշագրային ամենատարաշերտ աշխատություն նախնառաջ իր մեջ ներառում է մեկ հարցի պատասխան. արդյոք 20-րդ դարասկզբի՝ մարդկության պատմության մեջ իր նախադեպը չունեցած ոճրագործության ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻՆ այսօր քաղաքակիրթ մարդկությունը որքանո՞վ է պատրաստ, և պատրա՞ստ է արդյոք ի վերջո և վերջնականապես: Եվ ինչպիսի՞նք են, հոգեբանական ծանրակշիռ փաստարկներով են հայ և համաշխարհային պատմաբան, հոգեբան-ցեղասպանագետները համաշխարհային հանրությանը «ներկայացնում» ցեղասպանություն ապրած և ցեղասպան «իրավահաջորդների» սերունդների հիշողությունից իսպառ ջնջելու անցյալի «մահվան ուրվականների» զգացողության ողջ դաժնատեսությունն ու սարսափը:

Մեկինե Գարագաշյանի «Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը» աշխատության ներքին գաղափարային նպատակաուղղվածությունը կարելի է և պետք է փնտրել այն հարցադրման մեջ, որով հոգեբանը ցեղասպանության հետ կապված բազմաթիվ խնդիրներ փնտրում, գտնում, ուսումնասիրում է հենց այս լույսի ներքո՝ ինքնահատուկ հոգեբանական հարցադրումներով բացահայտում այնպիսի իրողություններ, որոնք ցայժմ գրեթե չեն արծարծվել պատմությունն ուսումնասիրողների և ցեղասպանագետ հոգեբանների, ինչու չէ՝ նաև հոգեվերլուծաբանների կողմից:

«Նախաբանի փոխարեն» առաջաբանում հոգեբանական գիտությունների դոկտոր Ալբերտ Նալչաջյանը, անդրադառնալով աշխատության մեջ արծարծվող, քննարկվող մի շարք կարևորագույն խնդիրների, նշում է. «Հեղինակն իրավացիորեն գտնում է, որ ցեղասպանության զարհուրելի տեսարաններին ականատես մարդիկ հոգեկան ցնցում են ապրում, որը հանգեցնում է մի շարք հետևանքների. «Ամենից առաջ նկատելի է, որ ցեղասպանությունից տուժածները չեն սիրում խոսել այդ արհավիրքի և իրենց կրած տառապանքների մասին: Դա նշանակում է, որ նրանց հոգեկանում, ի թիվս այլ պաշտպանական մեխանիզմների, գործում են նաև արտամղման և ճնշման մեխանիզմները: Բայց ահա հետաքրքիր մի երևույթ, որը գիտական շրջանառության մեջ է մտցնում հեղինակը. այդ նույն մարդիկ ավելի հաճախ միայն իրենց կյանքի մայրամուտին են մանրամասնորեն անդրադառնում այդ արհավիրքին, կրկին հոգեկան ցնցում են ապրում, ցանկանում են իրենց տպավորությունները հայտնել ուրիշներին, իսկ ովքեր ի վիճակի են՝ հուշեր են գրում... Հեղինակը խոսում է նաև ցեղասպանության ազդեցության հետևանքով հայերի մեծ մասի կրած հոգեբանական փոփոխությունների մասին: Կասկած չկա, որ հայ երեխաների նոր սերունդները միանգամայն առողջ են ծնվում և մեծ մասամբ հոգեպես

առողջ մարդիկ են դառնում. ազգի ապաքինման ներքին հնարավորությունները շատ մեծ են»:

«Ցեղասպանության խնդիրների բազմակողմանի և խոր ուսումնասիրությամբ» մտահղացված և գրված աշխատության «Հոգեցնցման միջսերնդային փոխանցումը», «Միջսերնդային փոխանցումը և ինքնաճանաչումը», «Ցեղասպանության հոգեցնցման վերլուծությունը», «Հոգեցնցման ախտանիշներն ու հետևանքները», «Հոգեցնցման տևականությունը», «Հայերի՝ հոգեցնցումը դիմակայելու յուրահատկությունները», «Ցեղասպանությունն ու հոգեկան առողջությունը», «Ցեղասպանության հերքումն ու հոգեկան ապաքինման գործընթացը» չափազանց հետաքրքրահարույց բաժիններում Մելինե Գարագաշյանը հոգեբանական նրբերանգներ և յուրահատկություններ ընդգրկող պատմական անդրադարձներով և հետհոգեցնցման հետևանքները ամբողջացնող հավաստի, խորհրդածությունների մղող փաստարկներով ներկայացնում է մի ողջ տևական ժամանակաշրջան ներկայացնող և իր շարունակականությամբ սերնդային ենթագիտակցության վրա ազդող ցեղասպանության պատճառահետևանքային ընդհանուր պատկերը, իբրև համագգային ողբերգություն, միաժամանակ արդարացիորեն նշում հոգեկան ապաքինման, առողջացման գործընթացի էականությունը և կարևորության գիտակցումը մերօրյա սերնդի կյանքում՝ թե՛ Հայաստանում և թե՛ ի Սփյուռքս:

Աշխատության «Առաջաբան»-ում հեղինակը իբրև իր մասնագիտացումի պատճառ նշում է. «Անկասկած հորս հոգեկան ապրումները եղան այն խթանները, որոնք ենթագիտակցաբար ինձի մղեցին մասնագիտանալու հոգեբանության հոգեցնցման ճյուղին մեջ»: Եվ ահավասիկ, ուսումնասիրության նյութը՝ «հույժ կարևոր և արդիական»:

Ընդհանրապես այն միջավայրը, որտեղ հասունացել, թրծվել և ի վերջո ինքնագիտակցումի է եկել՝ ցեղասպանության միջոցով նաև ինքնաճանաչման «ուղին հարթել» ապագա հոգեբանը, իբրև «ցեղասպանությունից փրկվածների հետնորդ», եղել է,- բառի բովանդակային և հոգևոր իմաստով,- ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ: Բավական է նշել, որ Մելինե Գարագաշյանը աշակերտել է (Բելյուրի Նշան Փալանձյան ճեմարանում) Սիմոն Վրացյանին, Մուշեղ Իշխանին, Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսին: Ազգային, հոգևոր, մշակութային այնպիսի երևելի երախտավորների, որոնց հայեցի շնչառության շնորհիվ անհնարին էր, որ ազգային ոգու և հիշողության արթնությամբ չտրոփեր ինչպես շատերի, այնպես էլ Մ. Գարագաշյանի «ծարավի հոգին»՝ հետագային փորձառության միջոցով չնախապատրաստեր նրան, իբրև հայության անցյալը,- որքան էլ տառապալի,- վերախմաստավորող և ապագային լուսավոր հայացք նետող մտավորական գործչի:

Մեծ Եղեռնի հետևանքները վերապրող և խորը գիտակցող յուրաքանչյուր ոք պետք է որ անտես չառնի «սուրի և սովի մղձավանջի» (Դ. Վարուժան) պատճառած «հոգեցնցման միջսերնդային փոխանցումը»: Ասել է թե՛ անհրաժեշտ էր որոշակի փորձառություն, որ «ինքս էլ մեր ընտանեկան անցյալը, ժողովրդի պատմությունը, իմ անսահման նվիրումը Հայաստանի, սերը Կյուրինի, հետաքրքրությունը ցեղասպանության հոգեցնցման նկատմամբ իմաստավորելու տարիքին հասա, հասկացա, որ 20-րդ դարասկզբի նախճիրը հոգեբանական ազդեցություն է ունեցել ինչպես իմ

մյուս հայրենակիցների, այնպես էլ ինձ վրա: Ավելին, այն իմ ազգային ինքնագիտակցության հիմնաքարն է դարձել»: Այս խորապատկերի վրա՝ արյան անլուծելի կանչով «ընթացք է տրվում» մի գործունեության, որ դարձակետային նշանակություն և նշանառություն պետք է ունենար Մելինե Գարագաշյանի համար՝ դառնալով նրա համար կյանքի և պատմագիտական-հոգեբանական գործունեության եզակի և տակավին շարունակվող հիմնականատակ: Եվ տարիների ընթացքում նա ավելի ու ավելի է խորամուխ լինում իր հետազոտման խնդրո առարկա իրադարձությունների, մարդկային հոգեբանական նրբերանգների մեջ (գոհի և դահճի անձնային և միջազգային (ազգամիջյան նպատակային առումով)՝ բացահայտելով և ներկայացնելով «միջսերնդային փոխանցման ու ինքնաճանաչումի» հետ առնչակից այնպիսի խնդիրներ, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց արտացոլումը գտնում են հոգեբանության՝ «ամենաազգանպաստ մասնագիտության» մեջ: Եվ պատահական չեն Մ. Գարագաշյանի տարիների պրպտումները, այցելությունները նախկինում հայահոծ բնակավայրեր՝ շփվելու, ծանոթանալու ոչ միայն այնտեղ բնակվող «մնացորդաց սերունդներին», այլև ազգությամբ թուրքերի հետ զրույցներում, հետազոտողի ուշիմությամբ, հոգեբանական թափանցումներով փորձում է ցեղասպան սերնդի ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ մեջ փնտրել նրանց նախնիների անագործյուն վարքագծի պատճառները, ի վերջո, նպատակները, եթե, իհարկե, մարդն իր բնույթով կարող է նպատակամետ լինել (էլ չենք խոսում մի ազգի խումբ-հավաքականություն) նմանօրինակ-անօրինակ ոճրագործության: «...Ես, ուրեմն, այդքան տարի անց, Քոչունյանների հայրական տանն եմ: Թուրք տանտերը բացատրեց, որ «սեֆեր բերլիքից» հինգ տարի անց կառավարությունը աճուրդի է հանել այն հայերի տները, ովքեր չէին վերադարձել: Թուրքն անսքող հպարտանում էր, որ հորը հարուստ հայի տուն է բաժին ընկել: Արտառոցն այն էր, որ նա հավատում էր ասածին. այսինքն՝ 1915-ից ընդամենը հինգ տարի անց կառավարությունն էր ազգաբնակչությանը հավատացրել, որ «պատերազմի ընթացքում, ապահովության համար հայերին տեղափոխել է անվտանգ տարածքներ», ու քանի որ այդքան ժամանակ անց հետ չեն եկել, ստիպված է եղել վաճառել նրանց տները: Կարծես թե բռնագաղթած կյուրինցիները, եթե անգամ Դեյր էզ-Ջորի սպանդից փրկված լինեին, կկարողանային իրենց բնօրրանները վերադառնալ... Տարիների ընթացքում հետազոտելով իմ և ուրիշների վերաբերմունքը այդ իրողության նկատմամբ, եզրակացրի, որ ցեղասպանությունը, անկախ տարիքից, արմատացած է ինչպես մյուս հայերի, այնպես էլ իմ ենթագիտակցության մեջ: Այն ի հայտ է գալիս, երբ տվյալ անհատը նորից է ենթարկվում հոգեցնցման, կամ եթե հասուն տարիքում իմաստավորում է անցյալը, վերասահմանում ինքնությունը»:

Միջանցյալ նշենք, որ ինչպես ազգային, այնպես էլ սոցիալ-հոգեբանական տեսակետից, աշխատության մեջ առանձնակի կարևորվում են վերապրողի մեղքի զգացմանը վերաբերող հեղինակի դատողությունները, որոնք քննարթանանում են հատկապես այն պատճառով, որ խնդրահարույց է դառնում նաև «գոհի զգացողությունը» իբրև ծանրակշիռ գործոն. «Վերապրողի մեղքի զգացումը՝ սպանդից ազատված անհատի խղճի խայթն է, ում հարազատները ոչնչացել են: Զգացողությունը տանելի է դառնում, երբ անհատը, ակամա իրեն գոհ համարելով, փորձում է, այս-

պես ասած, մեղքը քավել, ինքնագնահատում-արժանապատվությունը վերահաստատել: Սովորաբար գոհի զգացողությունը (նրա նախնական խոցվածությունը - Ա. Ա.) ի հայտ է գալիս, երբ տվյալ անձը երկրորդ կամ երրորդ անգամ է հոգեցնցման ենթարկվում՝ ասես վավերացնելով այն, ինչն արդեն զգացել էր: Ուշագրավ է, որ ծնողական՝ գոհի կերպարը փոխանցվում է սերնդե սերունդ: Խնդրահարույց է դառնում «գիտակցաբար»-ի և «ենթագիտակցաբար»-ի հոգեբանական գործոնը. պատասխանատվություն՝ առ անմեղ գոհերը, նրանց հիշատակը հավերժացնելու ներքին արյան անկորնչելի մղումով: Էական է նաև ներքին հոգեբանական գիտակցականությունը մանավանդ սփյուռքյան պայմաններում՝ առ այն, որ սերնդադադարի չումի-սերնդաշարունակումի ՄՂՈՒՄԸ՝ պայքար է, ընդգծված, առողջացումի պայքար ուժացումի դեմ, մանավանդ, երբ պատմական ճշմարտության ԻՄՍՅՈՒՄԸ հետագա սերունդների կողմից, նրանց հոգեբանական ինքնապաշտպանական վիճակի (այլ խոսքով՝ ինքնապաշտպանվածության) համար նախադրյալներ է ստեղծում, և անցյալի պատմական իրադարձությունների խեղաթյուրումը, նրանց համար որպես այդպիսին չեն դիտվում և չեն կարող դիտվել, որքան էլ թուրք և օտարազգի գիտնականները փորձեն «գոհի» և «դահճի» ՓՈԽԱՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ նենգափոխել պատմական իրողությունները:

Այսպիսով, ցեղասպանության հոգեցնցման ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ դիտարկելիս, Մ. Գարագաշյանը հանգում է այն եզրակացության, որ, գլխավորաբար, «անհանգստացնող հուշերն» են, որ ժառանգորդաբար, սերնդեսերունդ փոխանցվում են՝ գրեթե աննկատելիորեն. «...հատկապես երիտասարդների ներաշխարհում ու ենթագիտակցական հիշողություններում սքողված են մնում, քանի որ առօրյա զբաղումները կլանում են նրանց, ստիպում անընդհատ լարվել, տքնել... Անհանգստացնող հուշերն ու հոգեցնցման արտահայտություններն առավելապես ի հայտ են գալիս մեծահասակների հանդիպումների, ընտանեկան խմբակային զրույցների ընթացքում, երբ նրանք պատմում են իրենց... անցյալի, առանձին իրադարձությունների մասին»: Եվ ընթացք է տրվում «հոգեցնցման փոխանցմանը, շարունակականությամբ»: Պատճառը, հայոց պարագային, թերևս այն է եղել, որ «...հայերի ցեղասպանությունից հետո գրեթե բոլոր՝ միակողմանի որբերը հոգեբանական համապատասխան օգնություն չստանալով հանդերձ պատվավոր մարդիկ դարձան»: Այսինքն՝ «արյան սարսափների» ինքնահաղթահարման մի տևական ընթացքի շնորհիվ, վերապրման «ազգային բնագոյները» ավելի զորեղ և կենսունակ գտնվեցին, չնայած հոգեցնցման միջսերնդային փոխանցումը («որով հոգեբանները պետք է զբաղվեն») իր շարունակական բնույթով այնպիսի զգացողություններ են արթնացնում, որ «հոգեկան ցնցման տառապանքները, հուզումները» շարունակաբար իրենց ազդեցությունները թողնում են սերունդների հոգեբանության վրա, սերունդներ, որոնք գրեթե «բնագոյային մղումից» մշտապես կարող են ապրել ու ապրում են «վախը, սարսափը, տագնապը, ճարահատյալ-անվերադարձ բաժանման» զարհուրելի զգացողությունը:

Ընդհանրապես, աշխատության մեջ առանցքային նշանակություն ունի «Հոգեցնցման ախտանիշներն ու հետևանքները» չափազանց ուշաբժան բաժինը: Քննելով ցեղասպանության հոգեցնցման «ընդհանուր բնույթն ու դրսևորումները», Մ.

Գարագաշյանը վերջին երեսուն տարիների իր ուսումնասիրությունների, գիտահոգեբանական զննումների խորապատկերի վրա (մարդու նյարդային համակարգի «ընձեռած հնարավորությունների» փաստարկմամբ-վկայակոչումներով) եզրահանգում է. «Հետհոգեցնցման անմիջական հետևանքները կարող են ազդեցություն ունենալ տարբեր զգայարանների վրա, ուղեկցվել հոգեկան թմրությամբ-անզգայնությամբ, աչքի առաջ ականա հայտնվող սարսափազդու աղետը հիշեցնող տեսարաններով... դյուրագրգռությամբ, անջատվածությամբ...»: Այսպիսով, հոգեցնցման ենթարկված անհատը (ժառանգորդական փոխանցելիության գործոնների առկայությունը չի կարելի և հնարավոր էլ չի անտես առնել) չափազանց անհետևողական-անուշադիր է լինում ապագայի նկատմամբ՝ իր մի տեսակ թմրալից-սառն բնավորությամբ: Այդ բնավորությունը իրենից անկախ «ներքին, դաստիարակիչ» դեր ու նշանակություն է ունենում իր համար: Այս պարագային, սովորաբար, պարտադիր է «հոգեբան մասնագետի միջամտությունը, հիվանդի զգացումների, մտածումների, անգիտակցական արարքների քննարկումները բացահայտում են թաքնված ախտանշանները, նպաստում մտավախությունների, թախծի, ընկճող զգացումների, կայուն, անտրամաբանական մտքերի վերարձարժմանը, մեկնաբանմանը, կյանքին հարմարվելու, ապրելու հնարավորություններ և պայմաններ են ստեղծում»:

Մեկինե Գարագաշյանի «Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը» աշխատությունը հայության՝ մեծ ողբերգություն ապրած ազգի հոգեբանական «տարեգրությունը» լինելուց զատ, նաև ազգային ինքնության պահպանման (հոգեբանական նրբերանգային շեշտադրումներով) հրամայական խնդիրներ է արձարծում, դրանով իսկ հոգեկան և հոգեբանական ապաքինման հույժ անհրաժեշտ ազգային դիմակայության «նախապատրաստում», այն, ինչ այսօրվա և ապագա սերունդների սերնդագիտակցման համար ավելի քան անհրաժեշտ է ապագա մարտահրավերների ճանապարհին: Այս ամենով հանդերձ, չափազանց անհրաժեշտ ենք համարում աշխատության արևմտահայերենով հրատարակումը:

ՏԻՐԱՆ ԼՈՔՄԱԳՅՈՁՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻՆ

Կարելի է ասել, որ Կոմիտասագիտության հիմքը դրվել է դեռևս Վարդապետի կենդանության օրոք, երբ Փարիզում «Կոմիտասեան խնամատար հանձնաժողովի» ջանքերով և Վարդան Սարգսյանի աշխատասիրությամբ ի հայտ բերվեց Կոմիտասի ձեռագրերի փրկված մասը, և սկսվեց տպագրությունը նրա անտիպ գործերի, որի մեջ մտնում է նաև Ս. Պատարագի մշակումը:

Վարդապետի ձեռագրերը, անձնական գրադարանը և անհատական իրերը Հայաստան փոխադրելուց հետո սկսվեց երաժշտագետների կողմից ուսումնասիրությունների և հրատարակությունների մի նոր շրջան: Քանի որ Կոմիտասը հոգևորական էր, ուստի խորհրդային իշխանությունները այնքան էլ հաշտ աչքով չէին նայում եկեղեցականի փառաբանմանը, և կարելի է համարել, որ Մելիքյանի, Թերլեմեզյանի և ուրիշների աշխատանքները դժվարին պայմաններում կատարված քայլեր էին: 1960-ական թվականներին, երբ Խորհրդային Միությունում քաղաքական պայմանները առավել նպաստավոր դարձան, և մոտեցավ Վարդապետի ծննդյան 100-ամյակը, հրատարակումների հարցում կատարվեց հեղափոխություն: Գրվեցին բազմաթիվ և բազմապիսի հոդվածներ, ուսումնասիրություններ, մեկնաբանություններ՝ Կոմիտասի նախորդների, հետնորդների, նրա թատերական աշխարհի ու ռճի մասին: Համեմատություններ էին արվում Կոմիտասի և աշուղական երգարվեստի միջև: Այս ամենը կատարվում էր արդեն «դասական» դարձած տեղեկությունների մի «փնջի» հիման վրա, որին, ցավոք, ոչինչ չէր ավելանում և ոչ էլ՝ պակասում: Այստեղ չենք ուզում խոսել այդ՝ արդեն «դասականացված» տեղեկությունների հավաստիության մասին: Ուզում ենք միայն շեշտել, որ այսօր Գրականության և արվեստի թանգարանում գտնվող Կոմիտասյան ֆոնդում է» մի անձանոթ Կոմիտաս, որը պետք է նորովի ասպարեզ գա, և հետո արդեն կարելի է սկսել իսկական ուսումնասիրությունները Կոմիտասի մասին այնպես, ինչպես որ հարկն է, ինչպես որ դա կատարվում է արտասահմանում Բախի, Մոցարտի և Վագների մասին:

«Սարգիս Խաչենց» հրատարակչությունը, համագործակցելով Գրականության և արվեստի թանգարանի հետ, լրացրել է մի կարևոր բաց՝ հրատարակելով Վարդապետի հոդվածների և ուսումնասիրությունների առաջին հատորը¹:

Առաջին հատորում Կոմիտասի «Շնորհալին, նորա դարը և նորա ժամանակ յուզուած կրօնական խնդիրները» շարադրությունն է տեղ գտել, որը նա գրել է 1893 թվականին Գևորգյան Ճեմարանն ավարտելիս: Գրքում զետեղված են նաև բազմաթիվ ուսումնասիրություններ և հոդվածներ, որոնք մասամբ անտիպ էին: Կան նաև Կոմիտասի օտար լեզվով գրված հոդվածները, ներկայացված թե՛ բնագրով և թե՛ թարգմանաբար: Չմոռանանք նաև նրա նամակ-հոդվածը², որտեղ Կոմիտասը անդրադառնում է Դ. Խաչկունցի կատարած բանագործությանը: Գիրքն ունի «հավելված», որտեղ տեղ է տրված նաև Կոմիտասի թարգմանությանը՝ Ֆրից Արլբերգի «Ձայնամարզություն» գրքից:

¹ Կոմիտաս Վարդապետ. Ուսումնասիրություններ եւ յօդուածներ:

² Այս նամակ-հոդվածը արտատպված է նաև «Արևելեան մամուլ»-ի 1901 թվականի համարներում:

Այս հավաքածուում տեղ գտած նյութերը միշտ չէ, որ ավարտուն են:

Հրատարակիչների կողմից ճիշտ մոտեցում է որդեգրվել՝ հրատարակել Կոմիտասի բոլոր նյութերը անխտիր: Նրա մտքի բոլոր առկայծումները պետք է հրատարակվեն: Միայն այս կետից՝ ոչ հասու նյութերը պատրաստի ձևով մատուցվելուց հետո է, որ պետք է սկսվեն ուսումնասիրությունները: Գրքում զետեղված նյութերի համեմատությունը բնագրերի հետ ցույց է տալիս այն բձախնդիր և շնորհակալ աշխատանքը, որը կատարել են ժողովածուն կազմողները՝ Գուրգեն Գասպարյանը և Մարինե Մուշեղյանը: Նյութերը տպագրված են բնագրին հարազատ, մի բան, որը շատ հազվադեպ էր պատահում: Չգիտես ինչու, ամեն մի հրատարակող տարվում էր իր անհատական և անհարկի խմբագրությունները մտցնելու և Կոմիտասը «սրբագրելու» տենչով: Խորհրդային ժամանակներից մնացած այս ախտը շարունակվում է մինչ օրս, և ոչ միայն Կոմիտասի նկատմամբ:


Կոմիտասագիտությանը ներկայացված է հույժ գովելի մի ձեռնարկ, որը հանձնարարելի և օգտակար է ոչ միայն երաժիշտներին: Մյուս կողմից պետք է նշենք, որ գրքում տեղ գտած նյութերից ոչ բոլորն են հասու և մատչելի սովորական ընթերցողին, անգամ հասարակ երաժշտի համար: Բազմաթիվ էջեր կան, որոնք լի են Համբարձումյան ձայնանիշերով: Իհարկե, բոլորն էլ փոխադրված են եվրոպական նոտագրության, բայց դրանք մյուս ծանոթագրությունների հետ միասին ավելացված են գրքի վերջում, որը զգալի դժվարություն է հարուցում օգտվողին: Ցանկալի կլիներ, որ բոլոր ծանոթագրությունները իրականանային տեքստի հետ միասնաբար:

Համբարձումյան ձայնանիշերի վերածումը եվրոպականի կատարվել է Փուշ-ժո հարաբերությունով, որն առաջին անգամ կիրառվել է Ս. Մելիքյանի կողմից: Չնայած կազմողները նշում են, որ Մելիքյանը չի հիմնավորել, թե ինչու է ինքը այդպես վարվել, նույն կերպ վարվել են նաև իրենք այս գրքում, քանի որ այդ մոտեցումը արդեն «արմատացած է հայ երաժշտագիտության մեջ»: Հայտնի է, որ Պապա Համբարձում Լիմոնձյանից սկսած մինչև 30-ական թվականները կիրառվել է Փուշ-ռե հարաբերությունը:

Այսպես է վարվել նաև Կոմիտասը:

30-ական թվականներից Հայաստանում սկսել է կիրառվել Մելիքյանի հնարած այդ «չհիմնավորված» Փուշ-ժո հարաբերությունը: Թյուրիմացությունը, որից գիրքը կազմողները ցանկանում են խուսափել, իրականում պայմանավորված է այս մոտեցումով: Չէ՞ որ Կոմիտասն ինքը օգտագործում էր Փուշ-ռե հարաբերությունը և իր արձանագրությունները կատարել էր այդ մոտեցմամբ: Մինչև 30-ական թվականները կատարված բոլոր վերծանումները կատարվել են այդ նույն սկզբունքով, որով մինչ օրս առաջնորդվում են արտասահմանում: Այս ամենի առկայության դեպքում արդյոք ավելի ճիշտ չէ՞ր լինի օգտագործել հաստատված ավանդականը՝ «չհիմնավորված արմատացածի» փոխարեն:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ հույժ կարևոր է տեսնել սեղանի վրա մի գիրք, որը ներկայացված է բարձր մակարդակով և գովելի խղճմտությամբ:



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց քահանայական ձեռնադրություն և օծում: Սրբազան արարողությունը հանդիսապետում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, տասներկու սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն: Ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Արմեն սրկ. Խաչատրյանը՝ վերանվանվեց Ս. Ժիրայր, Հովհաննես սրկ. Ամիրյանը՝ Ս. Առաքել, Գևորգ սրկ. Հարությունյանը՝ Ս. Եփրեմ, Գառնիկ սրկ. Կիրակոսյանը՝ Ս. Հարություն, Արտակ սրկ. Օհանյանը՝ Ս. Հովել, Հմայակ սրկ. Մանուկյանը՝ Ս. Վիգեն, Անդրանիկ սրկ. Մինասյանը՝ Ս. Սողոմոն, Հայկ սրկ. Ամիրյանը՝ Ս. Մաղաքիա, Գարիկ սրկ. Գրիգորյանը՝ Ս. Սիփան, Վահե սրկ. Պողոսյանը՝ Ս. Արմաշ, Օգեսն սրկ. Միրզոյանը՝ Ս. Արամ, Գևորգ սրկ. Ջեյնալյանը՝ Ս. Մանուկ:

Ս. Պատարագի ընթացքին, «Ողջոյն»-ի ժամանակ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռի միաբանները բարձրացան Սուրբ Խորան և շնորհավորեցին նորընծաներին:

Ձեռնադրությունից հետո Հովնան Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով հոգևորականի պատասխանատու կոչմանը Հայոց Եկեղեցու և մեր ժողովրդի կյանքում:

«Տարիներ շարունակ ձեր հոգին, միտքը, սիրտը, էությունը սնուցանելով, լցնելով մեր հայրերի հավատքի կյանքով, Ավետարանից ճառագայթող Քրիստոսի պատգամներով՝ դուք աճեցիք և զարգացաք, կամաց-կամաց ձեր մեջ խմորվեց քրիստոնյան, քահանան, հոգևորականը, ճշմարիտ հովիվը, որպեսզի այս պահից սկսած՝ նվիրյալ ձեր կյանքով դուք դառնաք հոգևոր մխիթարություն մեր Սուրբ Եկեղեցու զավակների համար, որպեսզի ձեր կյանքը դառնա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կանթեղի մեջ նոր ձեթ, որպեսզի նոր լույս, նոր ուրախություն, նոր խնդություն, հավատքի նոր երանգ, նոր ուժականություն և զորություն կարողանաք անխտիր հաղորդել մեր ժողովրդի զավակներին», - նշեց Սրբազան Հայրն իր ոգեշունչ քարոզում (տե՛ս էջ 25):

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաև վեղարի տվչության արարողություն: Ս. Հարությունը և Ս. Մաղաքիան, որպես կուսակրոն քահանաներ, ստացան վեղար և համալրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

Մայր Աթոռում քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո, Նորին Սրբության Բարձր տնօրինությամբ նորած եկեղեցականները հովվական ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռի տարբեր կառույցներում:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲԵՂԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Գառնիկ)

Ծնվել է 1980 թ. մարտի 18-ին Արագածոտնի մարզի Մելիք գյուղում:

1987-1988 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, 1988-1989 թթ.՝ Նոր Հաճնի թիվ 1 միջնակարգ դպրոցում, 1989-1996 թթ. ուսումը շարունակել և ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցում:

1996-2002 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002-2004 թթ. Գարեգին Բ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության է կոչվել Վեհաբանում որպես գործավար քարտուղար, ապա՝ Մայր Աթոռի հյուրընկալ:

2003 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Խաչակրաց արշավանքները Մատթեոս Ուռեհայեցու «Ժամանակագրության» մեջ» թեմայով:

2004-2006 թթ. որպես հոգևոր սպասավոր ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2007 թ. կրկին ծառայության է կոչվել Վեհաբանում:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ ԱՄԻՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Հայկ)

Ծնվել է 1980 թ. սեպտեմբերի 13-ին Արմավիրի մարզի Առատաշեն գյուղում:

1987-1997 թթ. սովորել է տեղի Ցոլակ Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում:

1997-2000 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2000-2006 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հուլիսից ծառայության է կոչվել Մայր Տաճարում որպես լուսարար:

2007 թ. մարտի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հակոբ Կարնեցին և Կարին քաղաքի նշանավոր վանքերը» թեմայով:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԺԻՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1974 թ. Արուսյան քաղաքում:

1981-1991 թթ. սովորել է տեղի թիվ 7 միջնակարգ դպրոցում:

1992-1997 թթ. սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում:

1998 թվականից որպես սարկավագ ծառայել է Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում:

1999-2001 թթ. աշխատել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Թվային գրադարան» ծրագրում որպես տեքստերի ձևավորող:

2001 թվականից աշխատել է Երևանի Ս. Հովհաննես եկեղեցուն կից «Հովհաննես Կոզեռն» կրթամշակութային կենտրոնում որպես համակարգչի ուսուցիչ:

2002-2004 թթ. սովորել է Քահանայից պատրաստման լսարանում:

2004-2006 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2006-2007 թթ. աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանում որպես տնօրենի օգնական:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՌԱՔԵԼ ՔԱՀԱՆԱ ԱՄԻՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1978 թ. սեպտեմբերի 10-ին Արմավիրի մարզի Առատաշեն գյուղում:

1985-1995 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1995-2001 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Ս. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Միմեռն Երևանցու Տոնացույցը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատան տոնացույց-ձեռագրերը» թեմայով:

2001-2004 թթ. եղել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի գրադարանի պատասխանատուն:

2004-2006 թթ. որպես հոգևոր սպասավոր ծառայել է ՀՀ Զինված ուժերում: Զորացրվելուց հետո ծառայության է անցել Մայր Աթոռում որպես պարետի օգնական:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԵՓՐԵՄ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Գևորգ)

Ծնվել է 1973 թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում:
1980-1990 թթ. սովորել է տեղի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1993-1994 թթ. ծառայել է ՀՀ-ում տեղակայված ռուսական սահմանապահ զորքերում:

1995-2001 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001-2002 և 2004-2005 թթ. ծառայել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում:

2002-2004 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2004 թ. հունվարին պաշտպանել է ավարտաճառ՝ «Զաքարիա Գ Աղթամարցի. փորձ հայկական թագավորության վերականգնման XV դարի 2-րդ կեսին» թեմայով:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՀՈՎԵԼ ՔԱՀԱՆԱ ՕԶԱՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Արտակ)

Ծնվել է 1978 թ. մայիսի 28-ին Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է տեղի Նորայր Սիսակյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում:

1996-1998 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

1999-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Մոսկվայի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. ավարտելով Ճեմարանը՝ ծառայության է կոչվել Գևորգյան Հոգևոր Ճեմարանում որպես վերակացու, այնուհետև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության է անցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տեղեկատվական Համակարգի «Օտարալեզու մամուլ» բաժնում որպես գործավար-քարտուղար:

2005 թ. մարտի 14-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Կրոնակեղեցական բառապաշարի իմաստային դասակարգում (Եկեղեցական գրքերի անվանումներ)» թեմայով:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՎԻՓԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(ավագանի անունը՝ Հմայակ)

Ծնվել է 1982 թ. նոյեմբերի 7-ին Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղում:

1999 թ. ավարտել է տեղի Յուրա Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոցը:

1999-2004 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2004-2005 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «1836 թ. Հայ Եկեղեցու Կանոնադրությունը (Положение)» վերնագրով:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Մոսկվայի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005-2006 թթ. աշխատել է Մայր Աթոռի Վարչակազմակերպական բաժնում որպես Վարչակազմակերպական գործերի կառավարչի և թանգարանների տնօրենի գործավար- քարտուղար:

2006-2007 թթ. աշխատել է Մայր Աթոռի Մատակարարման բաժնում որպես գնորդ:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՍՈՂՈՄՈՆ ՔԱՀԱՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Անդրանիկ)

Ծնվել է 1976 թ. նոյեմբերի 8-ին Շիրակի մարզի Արթիկ քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է տեղի թիվ 5 միջնակարգ դպրոցում:

1993-1996 թթ. սովորել է Արթիկի ինդուստրիալ տեխնոլոգիական տեխնիկումի «Բեռների փոխադրումը և շարժման կառավարումը ավտոմոբիլային տրանսպորտում» բաժնում:

2000-2002 թթ. սովորել է ՔԴԿ-ի կազմակերպած կրոնի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

2002-2003 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանի առաջին լսարանում:

2003-2005 թթ. սովորել է Քահանայից լսարանում:

2005 թ. հոկտեմբերի 30-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ և ծառայության կոչվել Արթիկի տարածաշրջանում: Զուգահեռաբար նշանակվել է Հատիճավանքի պատասխանատու և կիրակնօրյա դպրոցի տնօրեն:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՄԻՓԱՆ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Գարիկ)

Ծնվել է 1980 թ. հոկտեմբերի 16-ին Էջմիածնի շրջանի Առատաշեն գյուղում:

1987-1997 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1997-2000 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2000-2006 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հուլիսից աշխատանքի է անցել Դիվանատանը որպես գործավար-քարտուղար:

2006 թ. սեպտեմբերի 28-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի մակդիրները» թեմայով:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՐՄԱՇ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Վահե)

Ծնվել է 1981 թ. նոյեմբերի 18-ին Էջմիածին քաղաքում:

1998 թ. ավարտել է Էջմիածնի թիվ 12 միջնակարգ դպրոցը:

1999-2000 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2000-2006 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հուլիսից աշխատանքի է անցել Մայր Աթոռի Տնտեսական բաժնում:

2007 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը» թեմայով:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՐԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ

(ավագանի անունը՝ Օգսեն)

Ծնվել է 1983 թ. ապրիլի 4-ին Տավուշի մարզի Զինար գյուղում:

1989-2000 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2000-2006 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Վանական Վարդապետը և Խորանաշատի գրչության կենտրոնը» թեմայով:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՄԱՆՈՒԿ ՔԱՀԱՆԱ ԶԵՅՆԱԼՅԱՆ

(ավագանի անունը՝ Գևորգ)

Ծնվել է 1983 թ. հունիսի 4-ին Արմավիրի մարզի Լուկաշին գյուղում:

1990-2000 թթ. սովորել է տեղի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցում:

2000-2004 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2005-2006 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռի Գանձատանը որպես հսկիչ-բացատրող:

2007 թ. մարտի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ-թաթարական ընդհարումները 1905-1906 թթ.» թեմայով:

2007 թ. ապրիլի 15-ին, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՈՒՖՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը կազմակերպել էր ուխտագնացություն տասնմեկ տարբեր հաստատությունների (մանկատներ, հատուկ դպրոցներ, Հայորդյաց տներ) մոտ 220 սաների մասնակցությամբ:

Պատանի ուխտավորների առաջին կայանն էր Ս. Հռիփսիմե վանքը, ուր մասնակցեցին Ս. Պատարագին:

Սաներն այնուհետև եղան նաև Վաղարշապատի մյուս վանքերում ու եկեղեցիներում: Ս. Գայանե վանքում հավաքաբար մասնակցեցին սիրո ճաշի, ապա շարժվեցին դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ուխտավորներից ավագներն այցելեցին Ալեք և Մարի Մանուկյան գանձատուն, դիտեցին ցուցադրվող եկեղեցական սպասքի, զգեստների և ազգային-եկեղեցական արվեստի տարբեր նմուշներ:

Ուխտավորները Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում ունկնդրեցին նաև ժողովրդական երգեր պատանի երգիչների կատարմամբ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Համահայկական երիտասարդական եկեղեցասիրաց կազմակերպության կազմավորման հարցին նվիրված ժողով՝ նախագահությամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի: Ժողովին ներկա էին երիտասարդներ Հայաստանի, Վրաստանի և Արցախի թեմերից:

Ժողովի ընթացքում հստակեցվեցին Առաջին պատգամավորական ժողովի և Համազգային ուխտագնացության անցկացման թվականները: Ըստ այդմ՝ պատգամավորական ժողովը կգումարվի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 2008 թ. հուլիսի 11-12-ը, ուխտագնացությունը Ս. Էջմիածնից-Օշական տեղի կունենա նույն թվականի հուլիսի 12-13-ը:

Կայանալիք պատգամավորական ժողովին կմասնակցեն շուրջ երեք հարյուր, իսկ ուխտագնացությանը՝ երկու հազարից ավելի երիտասարդներ:

Հովնան Սրբազանն իր խոսքում հորդորեց երիտասարդներին իրենց ստանձնած պարտականությունների մեջ լինել հետևողական և աշխատասեր՝ վստահեցնելով, որ այս կազմակերպությունը, որն ունի հստակ առաքելություն, կարդարացնի երիտասարդների սպասելիքները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ-
ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

(Միջազգային գիտաժողով, 5 ապրիլի 2007 թ.)

Սույն թվականի ապրիլի 5-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված գիտաժողով՝ «Կրթություն-մարդու իրավունքներ-հասարակություն» խորագրով:

Գիտաժողովին հրավիրված էին ՀՀ Կրթության և գիտության նախարար պրն Լևոն Սկրտչյանը, ՀՀ ՄԴ նախագահ պրն Գագիկ Հարությունյանը, ՀՀ նախագահի խորհրդական պրն Սերգո Երիցյանը, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գիտաժողովին իրենց մասնակցությունը բերեցին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Ս. Վազգեն վարդապետ Նանյանը և Բարեշնորհ Արսեն սարկավազ Զոհրաբյանը:

Գիտաժողովը բացվեց ԵՊՀ ռեկտոր Ս. Զոլյանի ողջույնի խոսքով: Ներկաներին ողջունեցին նաև Ի. Կոնկնիչը (ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ) և Ա. Հարությունյանը (Մարդու իրավունքների պաշտպան): Զեկույցներով հանդես եկան ՀՀ Ազգային ժողովի ԿԴ մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանը («Ժողովրդավարական պետությունը և կրթության իրավունքի իրացումը»), ՀՀ նախագահի խորհրդական Սերգո Երիցյանը («Փոքրամասնությունների կրթությունը Հայաստանում»), ԵՊՀ ռեկտոր Ս. Զոլյանը («Կրթությունը՝ քաղաքացիական հասարակության նախապայման») և այլք: Կրթության հիմնախնդիրների տարբեր տեսանկյուններին անդրադարձավ նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Ս. Վազգեն վարդապետ Նանյանը՝ «Կրթության հիմնախնդիրը մարտնչող գլոբալիզացիայի համատեքստում» զեկույցում:

Ստորև ներկայացնում ենք Ս. Վազգեն վարդապետ Նանյանի զեկույցումը՝ կարդացված այդ գիտաժողովում:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԱՐՏՆՉՈՂ ԳԼՈՒԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Տիկնայք և պարոնայք,

Սիրելի ներկաներ,

Նախ և առաջ թույլ տվեք հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջունել և Նորին Սրբության Հայրապետական ջերմ սերը փոխանցել ժողովիս կազմակերպիչներին և բոլոր մասնակիցներին:

Հիշավի, կրթությունը միշտ առանցքային դեր է ունեցել և ունի մարդկության համար, որի ամենամեծ և առաջին ուսուցիչը եղել է ինքն Աստված: Անկախ մեր

հավատքի պատկանելությունից՝ հավատացյալ, ազնուստիկ թե աթեիստ, մենք հարատև կրթության և դաստիարակության ընթացքի մեջ ենք, քանզի կրթությունը նշանակում է առաջընթաց, իսկ առաջընթացն առողջ հասարակության կարևորագույն նախադրյալներից մեկն է:

Դժբախտաբար, ինչպես շատ հասկացություններ, այնպես էլ կրթություն եզրը վերջին ժամանակաշրջանում ենթարկվել է բովանդակային լուրջ փոփոխությունների: Փաստ է, որ այն, ինչ որ նախկինում ընկալվում էր իբրև «կրթություն», այսօր, երբ ողջ քաղաքակիրթ մարդկությունը, այդ թվում նաև Հայաստան աշխարհը թևակոխել է Ժան Ֆրանսուա Լյոտարդի (Jean-François Lyotard) նշանավոր բնորոշմամբ «պոստմոդեռն» (postmodern) շրջանը, այն նույնը չէ, և որ ամենակարևորն է՝ այն դադարել է այլևս միանշանակ իմաստ և ընկալում ունենալուց: Ողջ աշխարհն այսօր ենթարկվում է աշխարհաքաղաքական սրընթաց փոփոխությունների, վերաբնեռացման, ուժերի վերադասավորման և գիտատեխնիկական առաջընթացի ընձեռած նորագույն միջոցների ու ռազմավարական նոր դաշնակիցների անդուլ փնտրտուքով:

Գլոբալիզացիայի ոլորապտույտի մեջ հայտնված գերպետություններն անում են կարելին՝ առավել ամրացնելու իրենց դիրքերը՝ համապատասխան երկրամասերում ծնունդ տալով նոր քաղաքական դաշինքների, որոնց առաջացման պատճառը թելադրված է ոչ թե երկար և գեղեցիկ, բայց և ոչինչ չասող և կամ ավելի շուտ իրականությանը քիչ համապատասխանող բառերի ու նախադասությունների ետևում թաքնված տարածաշրջանային առավել նպաստավոր գործակցությամբ՝ միևնույն լեզվական, մշակութային, կրոնական և այլ ընդհանուր ենթահողերի առկայության իրողությամբ պայմանավորված, այլ պարզ և գոյապահպանության կենսական մտավախությունից: Այսօր մտահոգությամբ պետք է փաստենք, որ վաղուց հաղթահարված թվացող և անցյալում թողնված սառը պատերազմն ինչպե՞ս է կերպարանափոխվել և պահպանել իր լուռ, սակայն խոսուն ներկայությունը արդի միջքաղաքական բեմահարթակում:

Միացյալ Նահանգներ, Եվրոմիություն, Չինաստան, Հարավային Ամերիկայի երկրներ, Ռուսաստանի Դաշնություն, Արաբական աշխարհ,՝ ահավասիկ մի քանի երկրների և քաղաքական միությունների անուններ, որոնք, ըստ էության, բաժանում են ողջ աշխարհը երկու անհավասար մասերի՝ յուրայինների և օտարների, հզորների և տկարների:

Թե ո՞ր է գտնվում այս սև ու սպիտակ համայնապատկերում Հայաստանը, թե՛րևս բոլորիս արդեն քաջ հայտնի է: Առանց մասնավորեցնելու, սակայն, այս ելույթի սահմաններում, որն առանց այդ էլ նման նպատակ չի հետապնդում, Հայաստանի տարածաշրջանային նախընտրությունների, հեռահար քաղաքական ռազմավարությունների ընդլայնված սպեկտորը՝ փաստենք միայն այն, որ Հայաստանը գտնվում է իրենից քանիցս թվով և հզորությամբ գերազանցող գերպետությունների հետ ճամփա ընկած մի կարգավիճակում, կացություն, որը մեզ համար, որքան էլ՝ զարմանալի, սակայն նոր և անձանդ չէ: Բավական է հիշել Հայոց պատմությունը՝

սկսած գոյապայքարի ամենավաղ շրջանից, բավարար է հիշել Հայաստանի հզոր դրացիներին և ախոյաններին՝ Ասորիքը, Պարթևական և Հռոմեական գերտերությունները, Բյուզանդական կայսրությունը, թաթար-սելջուկական և արաբական իշխանությունները և, ի վերջո, Օսմանյան Թուրքիան և Խորհրդային Միությունը:

Ուշագրավ է, որ հայ տեսակը դարերի ընթացքում մշակված և բյուրեղացած իր գենետիկ յուրահատկությունների շնորհիվ ձեռք է բերել հատուկ իմունիտետ, որն ըստ ամենայնի թույլ է տալիս մեկտեղել և լծորդել առաջին հայացքից իրարամերժ երկու ծայրահեղ հակոտնյաններ՝ հասարակական լիարժեք ինտեգրացումը և ազգային առանձնահատկությունների և կամ սեփական ինքնության պաշտպանումը՝ խուսափելով, այդպիսով, մի կողմից գետնայական, ինքնակղզիացած վիճակից, մյուս կողմից էլ ուժացման կործանարար հետևանքներից: Այլ հարց է, անշուշտ, եթե այս իմունիտետը կախարդական դեղատոմսն է ազգային մեր հիմնահարցերի լուծման բոլոր պարագաների:

Այսօր գլոբալ մակարդակի վրա այլևս անիմաստ է խոսել մեծամասնությունների և փոքրամասնությունների մասին, քանզի մեծ թվացող մեծամասնություններն անգամ խորքում պարզ փոքրամասնություններ են: Սակայն եթե մենք ամենքս փոքրամասնություն ենք, ովքե՞ր են այդ դեպքում մեծամասնությունը, և ի՞նչ պատասխան մենք պետք է տանք մեր առջև ծառացած այս մարտահրավերին:

Իրականությունն այն է, որ բոլոր ժամանակների ամենամեծ մարտահրավերը մարդու համար եղել է և է սեփական անձի և ինքնության ճանաչումը, ինչպես որ այն փորագրված էր Հին Հունաստանի Դելֆոսի տաճարի շքամուտքին՝ «Օանիք գրեզ», հետևաբար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թե ովքե՞ր են «մենք»-ը՝ անհատական և հավաքական իմաստով, ովքեր են այդ «մենք»-ը, որոնցից պահաջվում է պատասխան, և ապա միայն փորձել հասկանալ՝ ինչպիսի պատասխան կարող է հակադրվել խնդրո առարկա մարտահրավերին:

Սիրելիներ, որոշ առումով հոռետեսական երանգներ պարունակող, բայց և միևնույն ժամանակ ճշմարտությունը շրջանցել չցանկացող իրական համայնապատկերը ներկայացնելուց հետո կարող ենք արդարացիորեն մեզ հարց տալ. բայց ի վերջո այս ամենն ի՞նչ առնչություն ունի այսօրվա մեր հավաքի բուն նյութի հետ, որ է՝ կրթության հիմնախնդիրը: Առանց վարանելու պիտի պատասխանենք, որ այս երկու հարցերը ոչ թե միայն իրար շաղկապված են, այլ ուղղակիորեն և անմիջականորեն առնչվում են մեկը մյուսին:

Հայտնություն արած պիտի չլինենք, եթե որերորդ անգամը լինելով հաստատենք, որ կրթությունն ամենաեական բաղադրիչներից մեկն է հասարակական բնականոն և հարաճուն կյանքի զարգացման և որ այն ուշադրության կենտրոնում է ինչպես պետության, որի նպատակն է լուսավորյալ սերունդ պատրաստելու գործը, այնպես էլ Հայոց Եկեղեցու, որի նպատակն է այս դեպքում, որ նոր սերունդը լինի ոչ միայն կրթված, այլև իր մեջ կրի աստվածաճանաչողության լույսը: Սակայն հիմնական հարցադրումն այս առումով միշտ նույնն է՝ ինչպիսի՞ն պետք է լինի կրթությունը Հայաստանում 21-րդ դարում՝ մարտնչող գլոբալիզացիայի համատեքստում:

Հարցադրումը ինքնին բարդ է, ուստի ենթադրում է բազմակողմանի և համալիր պատասխան: Պետք է պարզապես լավ գիտակցել, որ հարգելով և հասկանալով ժամանակի և շահագրգիռ կառույցների բոլոր պահանջներն ու թելադրանքները, անհրաժեշտ է, որ դրանք այդուհանդերձ հարմարեցվեն և համապատասխանեցվեն մեր իրականությանը, և հատկապես ազգային մեր շահերին ու հեռանկարներին: Անհրաժեշտ է հանդես բերել ծայրաստիճան ուշադրություն՝ նկատելու և պատկերացնելու համար այն անցանկալի հետևանքները, որոնք կարող են ի հայտ գալ առաջին հայացքից այնպիսի անմեղ թվացող գործնական «առաջարկներից», ինչպիսիք են, օրինակ՝ հանրակրթական դպրոցներում Հայոց պատմություն առարկայի դասաժամերի կրճատումը, կամ Հայ Եկեղեցու պատմություն առարկայի դեմ արտահայտվողների անհիմն ու անհեռատես վրդովմունքը: Եվ կամ անհրաժեշտ է ուղղակի հրաժարվել մեր կրթական ծրագրերը բարելավելու և արդիականացնելու բարի նպատակ հետապնդող օտարերկրյա «գրանտներ»-ից, որոնց իրական թիրախն ու առաքելությունը հաճախ այն չէ, ինչ նշված է այդ ծրագրերի պաշտոնական տիտղոսաթերթերին: Ուրախությամբ պետք է արձանագրենք, որ այս ուղղությամբ Կրթության նախարարությունը տանում է հետևողական և արդյունավետ աշխատանք:

Եթե ցանկանում եք դաստիարակել նիհիլիզմով վարակված կոսմոպոլիտ մի նոր սերունդ, ապա շատ բան անհրաժեշտ չէ անել, որովհետև անգործության և կամ ոչ նպատակային աշխատանքի արդյունքում մենք անտարակույս կհասնենք նման «բաղձալի» նպատակին: Բայց եթե մեր նպատակն է դաստիարակել մի սերունդ, որը հավատարիմ ժառանգորդը և կրողը պիտի լինի մեր ազգային ավանդույթների, նկարագրի, մտածելակերպի, աշխարհընկալման, հանճարի, պատմական փառապանծ անցյալի և այն ամենի, ինչը վերջին հաշվով բնորոշում և ձևակերպում է «հայ տեսակ» հասկացությունը՝ այն տարբերելով չինացուց, վրացուց և այլ ազգություններից, ապա մենք իսկապես դեռ շատ անելիք ունենք այս ճանապարհին:

Ո՞րն է ի վերջո մեր պատասխանը՝ ամեն բան միևնույն ձևին և բովանդակությամբ հանգեցնող գլոբալիզացված այս ժամանակաշրջանում:

Գոյություն ունեն պատասխանների մի քանի տարբերակներ, սակայն անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրանցից մեզ բնորոշի՝ հայկականի վրա: Ճիշտ է, որ գլոբալիզացիան իբրև այդպիսին առավել արտահայտվեց և թափ առավ հատկապես Ինդուստրիալ հեղափոխությունից հետո, սակայն սա չի նշանակում, որ այն նախկինում ոչ մի ձևով արտահայտված չի եղել: Հելլենիստական մշակույթը, գերպետությունների նվաճողական քաղաքականության մաս կազմող բռնի և կամավոր արտագաղթը, ասսիմիլիացիան, զանգվածային կրոնափոխությունը նույնպես կարող են գլոբալիզացիայի պատմական արձագանքներ նկատվել: Այս համատեքստում մասնավոր ուշադրության են արժանի Հայ ժողովրդի պատմության հատկապես երկու դրվագները՝ Քրիստոնեության ընդունումը (301 թ.) և գրերի գյուտը (405-406 թթ.), իրադարձություններ, որոնք շրջադարձային նշանակություն ունեցան մեր ժողովրդի հետագա ողջ պատմության ընթացքի վրա: Քրիստոնեությունը, որպես

հավիտենական կյանքին առաջնորդող ճշմարիտ կրոն, Հայաստանում պետական կրոն հռչակվեց այնպիսի մի ժամանակ, երբ հեթանոսությունն արդեն սպառել էր իրեն և այն անհրաժեշտ էր նաև մեր ազգային ինքնության ու առանձնահատկությունների պաշտպանության համար, որի վառ ապացույցը կարելի է համարել «Վասն Հաւատոյ եւ վասն Հայրենեաց» մղված Վարդանանց հերոսամարտը (451 թ.):

Մեսրոպյան այբուբենի գյուտը և հայ գրի ու գրականության ոսկե դարը էականորեն նպաստեցին հայապահպանությանը մեր ժողովրդի համար ճգնաժամային այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ դեռևս 387 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանված Հայաստանն արդեն 428 թ. վերջնականորեն կորցրեց նաև իր պետականությունը: Նմանօրինակ կացության մեջ, երբ կային բոլոր նախադրյալները ձուլվել-կորչելու, հայ ժողովուրդը գոյատևեց ու ապրեց շնորհիվ իր մշակույթի և կրոնի, որոնք արթուն պահեցին մեր ազգային միտքն ու հիշողությունը:

Ազգային մշակույթ և կրոն.

Ահավասիկ երկու հիմնարար գաղափարներ, որոնք հայ կրթության և դաստիարակության բաղադրիչներն են եղել և որոնց շնորհիվ առ այսօր պահպանվել է հայ Սփյուռքը: Վերլուծենք Սփյուռքի ցանկացած գաղթօջախի ազգային ներքին կյանքը և կոտեսենք մեկ օրինաչափություն: Բոլոր այն վայրերում, ուր պահպանվել է հայ եկեղեցական կառույցը, շարունակվել է ազգային համայնքային կյանքը, և հակառակը, ուր հայությունը հեռացել և հրաժարվել է իր հոգևոր ինքնությունից, ձուլվել է, ինչպես Լեհաստանի հայությունը 17-րդ դարում:

Ամփոփելով նոր ժամանակներում կրթության հիմնահարցին նվիրված մեր զեկույցը՝ ասենք, որ այսօր՝ իրապես մարտնչող գլոբալիզացիայի ժամանակաշրջանում, որից խուսափելն անհնար է, իսկ առճակատումը՝ անիմաստ, որպեսզի մեր կրթությունը լինի լիարժեք և գոհացուցիչ, այն պետք է էապես ներառի և առհասարակ խարսխված լինի հայ մշակույթի և իրականության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատքի վրա. լինի միևնույն ժամանակ բազմակողմանի՝ ամփոփելով պատմության քննությունն անցած ավանդականն ու դեպի ապագան նայող նորն ու ժամանակակիցը, նպաստի, որպեսզի անհատը վերջին հաշվով կարողանա ինքնաճանաչողության, ազգային-հավաքական ինքնության բացահայտման և հային հատուկ ներուժի և հանճարի արտահայտման ճանապարհով դառնա երկրի օրինահարգ քաղաքացի և կյանքում իր առաքելությունն ու կոչումը ճանաչող հայ մարդ: Միայն նման ձևով կկարողանանք հանգիստ սրտով ապրել՝ իմանալով, որ արել ենք կարելին, որպեսզի վաղվա սերունդը լինի այնպիսին, ինչպիսին այն երագել են մեր հայրերը, և այնպիսին, ինչպիսին երագում ենք մենք այսօր և այստեղ:

ՕԾՎԵՑ ԿԱՆԱԶՈՒՏ ԳՅՈՒՂԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Ապրիլի 14-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեց Արարատի մարզի Կանաչուտ գյուղի վերակառուցված Ս. Գևորգ եկեղեցին: Նախորդ օրը, ապրիլի 13-ին, օծվեցին եկեղեցու խաչը, որը տեղադրվեց գմբեթին, և եկեղեցու չորս սյուները: Ապրիլի 14-ին Նավասարդ Սրբազանն օծեց եկեղեցու գլխավոր, արևելյան և արևմտյան դռները, Սուրբ Սեդանը: Օծման կարգից հետո վերակառուցված եկեղեցում մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագ:

Եկեղեցին վերակառուցվել է երեք տարվա ընթացքում Արարատի մարզպետ, ծնունդով Կանաչուտցի Ալիկ Սարգսյանի օժանդակությամբ:

Կանաչուտի Ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է 1908 թ. և չի գործել 1937 թվականից:

Օծման հանդիսավոր արարողության ընթացքում Նավասարդ Սրբազանն ընթերցեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի կոնդակը և Վեհափառի կողմից Ալիկ Սարգսյանին հանձնեց Հայոց եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ

ԴԱՐՊԱՍ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Սյունյաց Մարգում հոգևոր կյանքը վերագարթոնք է ապրում, որի կենդանի վկայությունն է եկեղեցիների վերաբացման շարունակականությունը: Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդության և Դարպասի համայնքի բնակիչներ Ներսես, Արմեն և Արամ Ստեփանյանների նախաձեռնությամբ և խնամակալ բարերարությամբ սույն թվականի ապրիլի 26-ին տեղի ունեցավ նույն համայնքի Սուրբ Ստեփաննոս Նախավկա եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Կառուցվելիք եկեղեցու հիմքերի առջև Գերաշնորհ Սրբազան Հորը, Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդ Ս. Արգար վարդապետ Հովակիմյանին, Սիսիանի հոգևոր հովիվ Ս. Գրիգոր քահանա Հովսեփյանին, Անգեղակոթ-Բռնակոթ համայնքների հոգևոր հովիվ Ս. Ահարոն քահանա Մելքումյանին և Գորիսի հոգևոր հովիվ Ս. Շիրակ քահանա Խանոյանին ավանդական հայկական աղ ու հացով, ազգային երաժշտության հնչյունների ներքո դիմավորեցին Դարպաս գյուղի դպրոցականները: Դիմավորելու էին եկել նաև ԱԺ պատգամավոր Ա. Սարգսյանը, Սիսիանի քաղաքապետ Լ. Սարգսյանը, Դարպասի համայնքի ղեկավար Ռ. Խաչատրյանը, Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու խաչքավոր Ա. Հովհաննիսյանը, Սիսիանի տարածքային մաքսատան պետ Ա. Մինասյանը, բարձրաստիճան այլ այրեր:

Ապա հանդիսապետությամբ և ձեռամբ Գերաշնորհ Սրբազան Հոր կատարվեց 16 հիմնաքարերի օրհնությունը: Հավարտ արարողության Գերաշնորհ Սրբազան Հայրն իր օրհնության և գնահատանքի խոսքն ուղղեց մոսկվայաբնակ բարերարներին և ներկաներին, ինչպես նաև կարևորեց կառուցվելիք Աստուծո տան ներկայությունն այդ տարածքում:

Դարպաս գյուղի դպրոցականներն իրենց ասմունքով, երգ ու պարով ողջունեցին հյուրերին և շնորհակալության բարեմաղթանքներ ուղղեցին Ստեփանյան եղբայրներին:

Ներկաները հոգևոր մխիթարությամբ ու աղոթքով հետևեցին հիմնարկեքի արարողությանը:

ԴԻՎԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈԽԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ

*ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ***Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ**

Ս. Հարության տոնին Գուգարաց թեմի գործող բոլոր եկեղեցիներում ևս մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ, որի ավարտին Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսը տրվեց ողջ ժողովրդին:

Վանաձորի առաջնորդանիստ Մայր եկեղեցում պատարագիչն էր Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջանը: Ընթերցելով Ամենայն Հայոց Հայրապետի Ս. Հարության պատգամը՝ առաջնորդ Սրբազան Հայրն իր օրհնությունը բաշխեց հարյուրավոր վանաձորցիներին՝ հորդորելով հավատարիմ մնալ Մայր եկեղեցուն և կյանքում մշտապես առաջնորդվել Ս. Հարության հավատով ու հույսով:

Պատարագին ներկա էին մարգալետ Ա. Քոչարյանը, քաղաքապետ Ս. Դարբինյանը, եկեղեցու խաչքավոր, ՎՊՄԻ ռեկտոր Գ. Խաչատրյանը, մարգային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Պատարագի ավարտին Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավոր Գ. Խաչատրյանի, Ս. Աստվածածին եկեղեցու խաչքավոր Ա. Մխոյանի, Ս. Սարգիս եկեղեցու խաչքավոր Ս. Ռուբինյանի կողմից հազարավոր զատկական հավկիթներ բաժանվեցին ժողովրդին:

Զատիկի օրը քահանա Հայրերի կողմից Ս. Հարության ավետիսը տրվեց նաև Վանաձորի ծերանոցի և մանկատան բնակիչներին: Տնօրինեքից հետո թեմի եկեղեցասեր Երիտասարդաց Միության անդամները զատկական ձվեր բաժանեցին մանուկներին և ծերերին:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ Ս. ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՅՈՒ ՇԻՐԻՄԻՆ

Գուգարաց թեմում ամեն տարի ապրիլի 17-ին հանդիսավորությամբ նշվում է Ս. Հովհան Օձնեցի Հայրապետի ուխտի օրը:

Այս տարի ևս Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպս. Չուլջանի օրհնությամբ և առաջնորդությամբ հարյուրավոր ուխտավորներ Օձունում մասնակցեցին Սրբի հիշատակմանը նվիրված Պատարագին և ապա այցելեցին Արդվիում գտնվող Սուրբ Հայրապետի շիրիմին:

Վանաձորից, Սպիտակից, Ալավերդուց, Մարգահովտից մոտ 300 ուխտավորներ իրենց հոգևոր հայրերի առաջնորդությամբ առաջինը հանգրվանեցին Օձունի Ս. Աստվածածին եկեղեցում, ուր հաղորդությամբ մասնակից դարձան Սուրբ և Անմահ Պատարագին: Արարողության ավարտին կատարվեց ՎՊՄԻ-ի 20 ուսանողների մկրտությունը՝ կնքահայրությամբ ՎՊՄԻ-ի ռեկտոր, Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավոր Գ. Խաչատրյանի: Ծիսական արարողությանը հաջորդեց ժողովրդական տոնախմբությունը. օձունցիները երգ ու պարով, գյուղապետ Մ. Այվազյանի կողմից տրված մատաղով նշանավորեցին տոնական այս օրը: Օձունի դպրոցի սաների պատրաստած զատկական հանդիսությունը, երաժշտական համարները տոնական տրամադրություն և ցնծություն պարգևեցին ներկաներին:

Օձունից ուխտավորները մեկնեցին Արդվի, ուր ամփոփված է Ս. Հովհան Օձնեցու աճյունը: Սրբազան Հոր գլխավորությամբ և հոգևոր հայրերի մասնակցությամբ Սրբի շիրիմին կատարվեց մաղթանքի արարողություն, և ապա ուխտավորները հայցեցին Սրբի բարեխոսությունը:

Թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը, իր հայրական օրհնությունը և բարեմաղթանքները հղելով բոլոր ուխտավորներին, ևս մեկ անգամ կարևորեց ուխտագնացությունը՝ որպես երիտասարդության հոգևոր դաստիարակության և բարոյական կերպարի կերտման լավագույն միջոց:

Ուխտդ ի կատար, սիրելի՛ ուխտավոր:

ԱՍՏՂԻԿ ԱՄՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ոգեկոչման արարողությունները Թբիլիսիի հայոց հովվությունում սկսվեցին ապրիլի 23-ին: Այդ օրը Թբիլիսիի Կինոյի տանը ցուցադրվեց Հայոց Մեծ Եղեռնին նվիրված ֆիլմերի շարք, այդ թվում և՝ «Հայ Եկեղեցին Ցեղասպանության տարիներին» («Շողակաթ» հեռուստաընկերություն, ՀՀ) և «Ես մեղադրում եմ» (Երկիր Մեդիա, ՀՀ): Հանդիսությանը ներկա էր թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Ցուցադրության ավարտին խոսք ասաց Առաջնորդարանի մշակույթի ու երիտասարդության հարցերի բաժնի ղեկավար Լևոն Զիդիյանը:

Նույն օրը, երեկոյան, Թբիլիսիի առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցում Ս. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ անցկացվեց «Խաղաղական» ժամերգություն, որին հաջորդեց եկեղեցու բակում Խարույկի վառման արարողությունը՝ ի հիշատակ անմեղ զոհերի լույս հոգիների: Խարույկի շուրջ հնչեցին հիշատակի խոսքեր ու հոգևոր երգեր: Ավարտին ժամերգությանը մասնակից երիտասարդները այնուհետև ջահերով շարժվեցին Վրաստանում Թուրքիայի դեսպանատուն, ուր «Հայր մեր»-ի, «Տեր Ողորմես»-ի, «Օ՛վ Հայոց աշխարհ»-ի հնչեցմամբ կայացավ բողոքի խաղաղ ցույց:

Ապրիլի 24-ի առավոտյան, հանդիսապետությամբ առաջնորդ Հոր, թեմի հայոց եկեղեցիներում մատուցվեց Ոգեկոչման Սուրբ և Անմահ Պատարագ: Արարողությանը ներկա էին Վրաց Ավետարանական-Մկրտչական Եկեղեցու առաջնորդ Ս. Մալխազ եպիսկոպոս Սոնդուլաշվիլին, Վրաց Ուղղափառ Եկեղեցու հոգևոր ակադեմիայի պրոռեկտոր Սերգո Վարդոսանիձեն, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի խորհրդարանի անդամներ Մելիք Ռաիսյանը, Հենզել Մկոյանը, Համլետ Մովսիսյանը, Վան Բայբությունը, հարյուրավոր հավատացյալներ: Քարոզի իր խոսքում առաջնորդ Սրբազան Հայրը վիրահայությանը կոչեց միասնական լինել հատկապես այս օրը ու միանալով ազգի այսօրյա պահանջին՝ դատապարտել և ողջ մարդկությանը ճանաչել տալ հայոց Ցեղասպանությունը: Սրբազան Հայրը երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր Մեծ Եղեռնի ծանր օրերին հայ ժողովրդի կողքին են եղել ու ապաստան տվել հազարավոր փախստականների:

Եկեղեցու բակում կազմակերպվեց Ռոբերտ Ներսեսովի գեղարվեստից ստուդիայի սաների աշխատանքների ցուցադրությունը՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնին:

Հավարտ Ս. Պատարագի մասնակիցները, որոնց թիվը հասնում էր հազարի, մոմերով ու Ցեղասպանությունը դատապարտող ցուցապաստառներով շարժվեցին դեպի Վրաստանում Թուրքիայի դեսպանություն:

Նույն օրը Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնում անցկացվեց հուշ-երեկո, իսկ սրահում՝ ֆոտոցուցահանդես: Ոգեկոչման խոսքով հանդես եկան Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ

Մուրադյանը և ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը: Երեկոյին ներկա էր նաև Հայ-վրացական տնտեսական համագործակցության համանախագահ Բեսո Ջուղելին:

1915 թ. նահատակների հիշատակը ոգեկոչող միջոցառումներ անցկացվեցին նաև Վրաստանի հայաբնակ շրջաններում և գյուղերում:

Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց Աջարիայի հայոց հոգևոր հովիվ Տ.Կիրակոս արեղա Դավթյանը: Բաթումում անցկացվեց նաև բողոքի աննախադեպ ցույց:

Հանդիսապետությամբ Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդ Տ. Բաբգեն արեղա Սալբիյանի՝ Սուրբ և Անմահ Պատարագ մատուցվեց Ախալքալաքի Ս. Խաչ հայոց եկեղեցում, ինչպես նաև՝ Նինոծմինդայի Ս. Սարգիս և Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցիներում: Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան արարողություն:

Ախալցխայի հայությունը ծաղկեպսակներ դրեց և մոմեր վառեց Հայոց Մեծ Եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնող Խաչքարի առջև: Սգո միջոցառումներին մասնակցում էին շրջանային և վարչական իշխանությունների ներկայացուցիչներ:

Ապրիլի 24-ին Նինոծմինդայում անցկացվեց սգո հանրահավաք, որի ավարտին մասնակիցները ծաղկեպսակներով զարդարեցին Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Խաչքարը:

Թեմի Քվեմո-Քարթլիի նահանգի Ծալկայի շրջանում Եղեռնի նահատակների հոգու լուսավորությունը խորհրդանշող խարույկ վառվեց շրջանի Խաչգյուղ և Ղուշի գյուղերում:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ՂԻՎԱՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 92-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ապրիլ 23-ին, երեկոյան ժամը 21.00-ին, Հայոց Մեծ Եղեռնի 92-րդ տարելիցի նախօրեին, Մոսկվայի հայոց նորակառույց առաջնորդանիստ եկեղեցու շրջափակում տեղի ունեցավ Հսկման արարողություն: Արդեն ավանդույթ դարձած Հսկումն այս տարի միավորել էր Մոսկվայում գործող համարյա բոլոր երիտասարդական կազմակերպություններին:

Սգո հանդիսությունն սկսվեց «Հայր մեր»-ով, որից հետո հավաքվածներին իր խոսքն ուղղեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: Խոսք ասաց նաև Մոսկվայի «Նուռ» եկեղեցասիրաց երիտասարդական կազմակերպության հոգևոր պատասխանատու Ս. Գրիգոր քահանա Գրիգորյանը: Մշակութային բաժնին իրենց մասնակցությունը բերեցին Մոսկվայի «Օվսաննա» կամերային երգչախումբը, հանրահայտ ջութակահար Կարեն Շահգալյանը և ուրիշներ:

Ապրիլի 24-ին, ժամը 12.00-ին, Ռուսահայոց Տիրախնամ թեմի նորակառույց Մայր Տաճարի բակում էին հավաքվել մոսկվայաբնակ բազմաթիվ հայորդիք: Սգո հանդիսությանը իրենց ներկայությունն էին բերել Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանության ներկայացուցիչները, Մոսկվայում Երևանի Քաղաքապետարանի ներկայացուցչությունը, Ռուսաստանի Հայերի Միությունը, ինչպես նաև Մոսկվայում գործող բոլոր ազգային, հասարակական ու մշակութային կառույցները:

Ներկաները նախ ծաղկեպսակներ դրեցին եկեղեցու բակում կանգնեցված խաչքարին, որից հետո սկսվեց Հոգեհանգստյան հատուկ արարողությունը: Հանդիսադիր Սրբազան Հայրը Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու հոգևորականաց դասի առընթերակայությամբ հավաքական աղոթք վերառաքեց առ Աստված՝ Հայոց Մեծ Եղեռնին գոհ դարձած բյուրավոր հայ նահատակների հոգիների խաղաղության ու հանգստության համար: Հավարտ արարողության ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց Եզրաս Սրբազանը՝ մասնավորապես ասելով. «Համազգական վիշտն է, որ այսօր համախմբել է մեզ բոլորիս այստեղ՝ նվիրական այս վայրում, նորակերտ մեր Մայր Տաճարի բակում՝ միասին աղոթելու, միասին գլուխ խոնարհելու և հավատարմության մեր ուխտը նորոգելու մեր անմեղ նահատակների մշտավատ և սուրբ հիշատակի առջև: Թուրքական հայաջինջ հրեշտածին ծրագիրն ամեն ինչ նախատեսել էր իր մեջ. կազմակերպված սրի քաշել և բնաջնջել մի ողջ ժողովուրդ: Սակայն հաշվի չէին առել ամենակարևորը՝ հայ ժողովրդի ապրելու և իր Աստծուն պաշտելու արդար իրավունքը: Հաշվի չէին առել այն, որ Քրիստոսին հավատարիմ, Քրիստոսի հետ բազմիցս խաչված ու չարչարված մեր ժողովուրդը Քրիստոսակերպ Հարություն պետք է առնի: Եվ այսօրվա նորանկախ մեր Պետությունը, ապրող ու արարող մեր ժողովուրդն այդ հարության հավաստումն ու խոստուն վկայությունն է»:

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԿՎԱ ՂԵՎԱՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ապրիլի 1-ին՝ Ծաղկազարդի տոնի օրը, Տինգրայի Ս. Երրորդություն հայկական եկեղեցում, վերանորոգումից և վերածումից հետո, առաջին անգամ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Սրբազան արարողության ընթացքում Պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով օրվա խորհրդին, ինչպես նաև կատարվեց անդաստան, որի ընթացքում օրհնված արմավենու ճյուղեր բաժանվեցին ներկա գտնվող հավատացյալ ժողովրդին:

Արարողությանը ներկա էին Կալկաթայի Եկեղեցական խորհրդի անդամները, Մարդասիրական ճեմարանի սաները և Կալկաթայի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Նույն օրը, երեկոյան, Կալկաթայի եկեղեցական խորհրդի երկու անդամներին՝ մեծարգո տիար Սունիլ Սոբթիին և մեծագնիվ տիկին Սուզան Ռուբենին, մեծ հանդիսավորությամբ շնորհվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից տրված **Հայրապետական Օրհնության գիր:**

Գնահատանքի ջերմ խոսք ասաց Եկեղեցական վարչության ատենապետ պարոն Հայկ Սուքիաս կրտսերը, ապա Հոգեշնորհ Հայր Սուրբն իր խոսքում շնորհավորեց ներկաներին՝ իր գնահատանքը հայտնելով Եկեղեցական վարչության անդամներին՝ մեր սրբությունների նկատմամբ ունեցած նախանձախնդրության համար: Այնուհետև Հարություն սրկ. Համբարձումյանն ընթերցեց Օրհնության գիրը, որով Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատանքի էր արժանացնում նրանց ազգօգուտ ու եկեղեցաշեն ծառայությունները, իրենց ազնիվ ջանքերն ու եռանդը, որ իրենց որդիական անսակարկ սիրով և նվիրումով ի սպաս են դնում ի նպաստ Կալկաթայի հայ համայնքի և հայկական եկեղեցիների պայծառությանը՝ մեծ գոհունակություն հայտնելով, որ աստիճանաբար վերակենդանանում է հայ կյանքը Հնդկաստանում, վերանորոգվում են եկեղեցիները, և հաջողությամբ գործում է Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը՝ իր հարկի ներքո հայեցի կրթություն և դաստիարակություն ջամբելով տասնյակ հայորդիների:

ՆՇՎԵՑ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՕՐԸ

Ապրիլի 2-ին մեծ հանդիսավորությամբ նշվեց հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրման օրը: Ճեմարանի սաների ջանքերով կազմակերպվել էր գրական-գեղարվեստական ցերեկույթ, որը հազեցած էր երգ-պարով, ասմունքով և շնորհակալական ելույթներով: Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով:

Հանդիսության ընթացքում հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանի և Եկեղեցական խորհրդի ատենապետ տիար Հայկ Սուքիաս կրտսերի կողմից ուսման մեջ առավել առաջադիմություն ցուցաբերած սաներին շնորհվեցին մրցանակներ: Հատուկ մրցանակներ շնորհվեցին այս տարվա երեք շրջանավարտների, որոնք գերազանց գնահատականներով ավարտեցին Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի տասնամյա դասընթացը: Այնուհետև օրհնության խոսքով հանդես եկավ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, որն իր մաղթանքում բարձր գնահատեց ճեմարանի այժմյան կրթական մակարդակը և սաներին հորդորեց ուսման մեջ լինել ավելի նախանձախնդիր:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹԸ ԵՎ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ապրիլի 6-ին, Ավագ Ուրբաթ, երեկոյան, Հիսուս Քրիստոսի չարչարանաց, խաչելության, մահվան ու թաղման հիշատակության օրը, բազմամարդ էր Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին: Արարողությունը կատարեց հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը:

Արարողության ընթացքին Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը, զարդարված ծաղիկներով և ծառի ճյուղերով, պտտեցվեց եկեղեցու շուրջ՝ ի տես հավատավոր ժողովրդի, այնուհետև Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ մեկնելով ներկա հավատացյալներին օրվա խորհուրդը:

Արարողությանը իրենց մասնակցությունը բերեցին ինչպես Մարդասիրական ճեմարանի սաները, այնպես էլ Կալկաթահայ համայնքի հավատացյալ ժողովուրդը և Եկեղեցական վարչության անդամները:

Ապրիլի 7-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Օրվան պատշաճ սուրբգրային բոլոր ընթերցվածները կարդացին Մարդասիրական ճեմարանի սաները:

Ապրիլի 8-ին կրկին բազմամարդ էր Ս. Նազարեթ հայկական եկեղեցին: Փրկչի Հրաշափառ Հարության տոնի առիթով Ս. Պատարագ մատուցեց Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հընթացս Սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Ս. Հարության խորհրդի նշանակությանը քրիստոնյայի կյանքում: Նա ջերմորեն շնորհավորեց բոլորին Ս. Հարության տոնի առիթով՝ մաղթելով, որ Քրիստոսի հարության լույսն ու հույսը միշտ ուղեկից լինեն նրանց:

Արարողությանը ներկա էին երկօրյա այցով Կալկաթա ժամանած Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Աշոտ Քոչարյանը՝

տիկնոջ հետ, Կալկաթայի Եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր, Մարդասիրական ճեմարանի սաները, ինչպես նաև Հնդկաստանում Ռուսաստանի Դաշնության հյուպատոսության ներկայացուցիչները:

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ԿԱԼ ԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու բակում տեղադրված Հայոց Ցեղասպանության 50-ամյակին նվիրված հուշաքարի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն մեր բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար և ծաղկեպսակներ դրվեցին՝ գլխավորությամբ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Հարություն սրկ. Համբարձումյանի: Արարողության ավարտին բոլոր ներկաները գլուխ խոնարհեցին և ծաղիկներ դրեցին հուշաքարին:

Հոգեհանգստից հետո բոլոր ներկաներն ուղևորվեցին Մարդասիրական ճեմարան, որտեղ ներկա գտնվեցին ճեմարանի սաների կողմից կազմակերպած հուշ-ցերեկությին: Մասնակիցները հանդես եկան բանախոսություններով և ասմունքով ու երաժշտական կատարումներով: Միջոցառման ավարտին փակման խոսք ասաց Հարություն սրկ. Համբարձումյանը՝ ևս մեկ անգամ ոգեկոչելով ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը և բարձր գնահատելով ճեմարանի սաների ու հանդիսության կազմակերպիչների տքնաջան աշխատանքը:

Հանդիսությանը ներկա էին հնդկահայոց Եկեղեցական խորհրդի անդամներ, ճեմարանի դասախոսական ողջ կազմը, համայնքի ներկայացուցիչներ, հյուրեր և սաներ:

ԴԻՎԱՆ ԿԱԼ ԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ

Գերմանիոյ մէջ ՀՀ առաջին պետութիւնն է որ պատուոյ հիւպատոս մը կ'ունենայ յանձին տիար Կիւնթեր Փիլարսկիի: Տիար Փիլարսկին շուրջ տասնհինգ տարիներէ ի վեր սերտ յարաբերութեան մէջ է Հայաստանի հետ, ուր եւ մովբէրէնի արդիւնահանմամբ կը զբաղի:

Մեծայարգ գործարարի նուիրատուութեամբ անցեալ տարի ՀՀ նախագահ Րոպերտ Քոչարեանի ներկայութեամբ բացումը կատարուած էր Պէտլին ՀՀ փառայեղ դեսպանատան: Այս նուիրատուութիւնը կատարուած էր աշխոյժ ջանքերովը դեսպանուհի Կարինէ Ղազինեանի: Ազնիւ տիկինը նոյնպէս իր կարելին կատարեց, որպէսզի տիար Փիլարսկին կոչուի պատուոյ հիւպատոսութեան պաշտօնին, որուն գլխաւոր աշխատանքը պիտի ըլլա ՀՀ եւ Գերմանիոյ միջեւ ճարտարարուեստական ու մշակութային կապերու աշխուժացումը:

19 Ապրիլին տիար Փիլարսկիի պաշտօնի կոչման հանդիսութիւնն էր Քարլսրուիը քաղաքին մէջ, ուր եւ հիւպատոսութեան գրասենեակը պիտի գտնուի: Տիար Փիլարսկիի գլխաւորած ընկերութեան կեդրոնը եւս կը գտնուի այս քաղաքին մէջ:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան, Գերմանահայոց Կեդրոնական խորհուրդի նախագահ տիար Շաւարշ Յովսափեան, ՀՀ դեսպանուհի տիկին Կարինէ Ղազինեան, Երեւանի քաղաքապետ տիար Երուանդ Զախարեան, ինչպէս նաեւ գերմանական քաղաքական ու հասարակական կեանքի տարբեր բնագաւառներու ներկայացուցիչներ:

Հանդիսութեան ընթացքին ողջոյնի խօսք առին բացի տիար Փիլարսկիէն, տիկին Կարինէ Ղազինեան եւ Պատրն-Վիրթեմպերկի նահանգապետ տիար Կիւնթեր Էօթիսկեր:

Գերաշնորհ առաջնորդ Սրբազան Հայրը այս տարի եւս 21 Ապրիլին ներկայ գտնուեցաւ Թրիեր քաղաքը, ուր Քրիստոսի սրբազան զգեստը կը գտնուի եւ ամեն տարի տեղի կ'ունենայ միջեկեղեցական արարողութիւն մը:

Թրիերի եպիսկոպոս Րայնհարտ Մարքսի հրաւերով կատարուող հանդիսութիւնները վերջ գտան սիրոյ ճաշով մը, որու ընթացքին առաջնորդ Գարեգին Սրբազան արտասանեց իր սրտի խօսքը՝ շեշտը դնելով աւանդութիւններուն եւ սրբութիւններուն հաւատարմութեան ու յարգանքի սկզբունքներուն, ընդգծելով որ անոնք վառ կը պահեն մեր հաւատքը եւ մեզի կը յիշեցնեն մեր անցեալը:

21 Ապրիլին Պէտլինի հայ եկեղեցական համայնքը եւս հանդիսաւոր կերպով նշեց Հայոց Ցեղասպանութեան յուշատօնը: Երկու օրուան վրայ տարածուած հանդիսութիւնները սկսան Հսկումով: Ապա քաղաքապետարանի սրահին մէջ ելոյթ ունեցան համայնքի վարչութեան ատենապետուհի Սոնա Այբերն ու վտանգուած ժողովուրդներու կազմակերպութեան ներկայացուցիչ տոքթ. Թէսա Հոֆման: Երաժշտական բաժինը ստանձնած էին Րուսթամ Ղազարեան (տուտուք), Մարօ Ֆարմանեան (երգ), Պոնտոսի յույներէն Խրիստոս Մավիտիս ու Նիքոս Խենիտիս (երգ):

Նոյն օրը Վլլա Քուքսի ղեկավարութեամբ տեղի ունեցաւ հրապարակային ասուլիս մը, որուն մասնակցութիւն բերին Ֆէիի Ինան, տոքթ. Ժիրայր Քոչարեան, Ամիլ Կորկիս, Լամբրոս Մավիտիս, փրոֆ. Մանֆրէտ Րիխթեր ու Րէճէփ Մարաշլը: Հանդիսութիւնը վերջ գտաւ Ասորի Ուղղափառ համայնքի երգչախումբի երգերով եւ Հայ Տան մէջ կազմակերպուած հիւրասիրութեամբ:

Յաջորդ օրը՝ 22 Ապրիլին Լաիզըն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր Սուրբ Պատարագ, ձեռամբ տեղւոյն հովիւ Հոգշ. Տ. Խաչատուր աբղ. Կնեազեանի, ժողովուրդի հոծ բազմութեան մը ներկայութեան:

Գերմանիոյ մէջ 1915ի Հայոց Յեղասպանութեան յիշատակի կեդրոնական ձեռնարկը այս տարի եւս կազմակերպուած էր Ֆրանքֆուրթի Փաուլս եկեղեցւոյ մէջ: Ձեռնարկը կազմակերպուած էր Գերմանիոյ հայոց առաջնորդութեան ու գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի կողմէ:

Բազմահարիր ներկաներու առջեւ ելոյթ ունեցան գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի ատենապետ տիար Շաւարշ Յովասափեան, ՀՀ Գերմանիոյ դեսպանուհի տիկին Կարինէ Ղազինեան, Կանաչներու կուսակցութեան գերմանական խորհրդարանի խմբակի նախագահ Ֆրից Քուին, Էսէք քաղաքի մշակոյթի կաճառի նախագահ փրոֆ., տոքթ. Յորն Բիւսըն:

Հուսկ բանը արտասանեց առաջնորդ Սրբազան Հայրը, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ Յեղասպանութեան հետ առնչուած Գերմանիոյ եւ Թուրքիոյ մէջ պատահած վերջին իրադարձութիւններուն, ինչպէս նաեւ ոճիրներուն, զանոնք ներկայացնելով ցեղասպանութեան որպէս շարունակութիւնը, նաեւ որպէս բարոյական ցեղասպանութիւն: Սրբազանը իր խօսքը աւարտեց ըսելով, թէ «այս եղելութիւններուն դիմաց արար աշխարհ եթէ լռէ, քարերը պիտի աղաղակեն»: Մշակութային բաժինը կատարեց Գրիգոր Պըլըտեան (բանաստեղծութիւն՝ Ապրիլ) եւ Սէրկէյ Խաչատրեան (Ֆրանց Շուպերթէն ու Կոմիտասէն) ջութակով երկու-երկու կտորներ նուագելով:

Արտասանուած խօսքերէն ետք, հայ եւ օտար եկեղեցականներ կատարեցին հոգեհանգստեան աղօթքը Եղեռնի մէկուկէս միլիոն զոհերու հոգիներու խաղաղութեան համար:

Թեմիս առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Սերովբէ վրդ. Իսախանեանի 29 Ապրիլին Մակտէպուրկ քաղաքի Մայր տաճարին մէջ մասնակցեցաւ միջեկեղեցական հանդիսաւոր արարողութեան մը, որու ընթացքին Ուղղափառ, Կաթողիկէ եւ Աւետարանական Եկեղեցիներու բարձրաստիճան բոլոր ներկայացուցիչներու կողմէ ստորագրուեցաւ մկրտութեան խորհուրդի Փոխադարձ ճանաչման յայտարարութիւն մը: Այնուհետեւ վերոյիշեալ բոլոր եկեղեցիները, մկրտութեան խորհուրդին մէջ պահելով իրենց եկեղեցիներուն առանձնայատկութիւններն ու աւանդութիւնները, փոխադարձաբար պիտի ճանչնան զանոնք, քանի որ մկրտութեան խորհուրդը քրիստոնէական եկեղեցիներուն մէջ կը կատարուի միայն մէկ անգամ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 92-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՖՐԱՆՔՖՈՒՐԹ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

Գերմանիոյ Հայոց Առաջնորդութիւնը եւ Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդը, շարունակելով վերջին տարիներու գործնական եւ արդիւնաւետ համագործակցութիւնը, այս տարի եւս միասնականօրէն կազմակերպեցին Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի ոգեկոչման կեդրոնական ձեռնարկը, որը տեղի ունեցաւ Կիրակի, 22 Ապրիլին, Գերմանիոյ Ֆրանքֆուրթ քաղաքի Փաուլսքիրշէ կոչուած հանդիսասրահին մէջ: Հայերէնով «Մուրբ Պօղոսի Տաճար» անուանուող այս հանդիսասրահը խորհրդանշական իմաստ ու նշանակութիւն ունեցող վայր մըն է: Հոս է, որ 1848-ին Գերմանիոյ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով փորձ կատարուած է ընդունիլ մարդկային իրաւունքներու հիմնարար սկզբունքներու վրայ կազմուած Սահմանադրութիւն մը եւ իբր գերմանական միասնական ազգութիւն ստեղծել պետական ժողովրդավար կառոյց մը: Ներկայիս այս սրահին մէջ տեղի կ'ունենան համագերմանական նշանակութիւն ունեցող յուշ-երեկոներ եւ ոգեկոչման տարաբնոյթ ձեռնարկներ:

Ոգեկոչման ձեռնարկին բացումը կատարեց Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի ատենապետ տոքթ. Շաւարշ Յովասափեան: Յանուն կազմակերպիչներու ողջունելէ ետք քաղաքական, պետական եւ եկեղեցական ներկայացուցիչներն ու ձեռնարկին բանախօսները, տոքթ. Յովասափեան գոհունակութեամբ մատնանշեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչման նկատմամբ վերջին տարիներու գերմանական պետական-քաղաքական շրջանակներու հետաքրքրութիւնը եւ առ այդ կատարուած քայլերը: Տոքթ. Յովասափեան նշեց, որ գերմանահայութիւնը հակառակ չէ դէպի հաշտութիւն միտուած երկխօսութեան, բայց բացառեց, որ հաշտութիւն կարելի է գոյացնել ի հաշիւ յիշողութեան հրաժարման, պատմական դառն փորձառութեան անառարկելի իրականութեան մերժումի եւ ճշմարտութեան մոռացման: Այս ճանապարհով կարելի չէ հասնիլ հաշտութեան եւ այսպիսի փորձերուն հայութեան պատասխանը միանշանակ ոչ կ'ըլլայ:

«Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնը,- նշեց պրն Յովասափեան,- Թուրքիոյ համար դարձած է ուրացման պատմութիւն: Ուրացում, որ կը մերժէ ընդունիլ ոճիրը եւ խօսիլ ոճրագործի ու զոհերու մասին: Ուրացում մը, որ զանազան հրատարակութիւններու միջոցաւ փորձեր կ'ըլլայ տարածելու նաեւ Գերմանիոյ մէջ եւ այլուր: ...Ուրացման այս քաղաքականութիւնն էր, որ պատճառ դարձաւ նաեւ Հրանտ Տինգի սպանութեան:

...Ցեղասպանութեան ճանաչման պահանջը կը պահանջէ նաեւ նոր, աւելի մարդկային ու բաց Թուրքիա մը, ուր յիշողութիւնը եւ ինքնութիւններու ու մշակոյթներու զանազանութիւնը տեղ եւ ընդունելութիւն կը գտնեն հասարակութեան մէջ: Այս առնչութեամբ մենք չենք մոռնար թուրք կարգ մը մտաւորականներու վերջին

Ժամանակներու ջանքերը, որոնք միտուած են Թուրքիոյ ժողովրդավարական փոփոխութեան եւ պատմութեան բաց քննարկման: Մենք կը քաջալերենք այս ուժերը իրենց պայքարին մէջ», - ըսաւ տոքթ. Յովասափեան:

Այնուհետ տոքթ. Յովասափեան խօսքը փոխանցեց Հայաստանի Հանրապետութեան Գերմանիոյ դեսպանուհի, ազնուափայլ տիկին Կարինէ Ղազինեանին: Տիկին Դեսպանուհին խօսելով հայ-թրքական պետական շփումներու մասին՝ մատնանշեց, որ Հայաստանը վերջին տարիներուն միշտ ալ պատրաստ եղած է եւ հիմա ալ է, առանց նախապայմաններու կայուն դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել Թուրքիոյ հետ: Այս մասին կը վկայէ թէ՛ ՀՀ նախագահ պրն Ռոպէրթ Քոչարեանի եւ թէ՛ Արտաքին գործոց նախարար պրն Վարդան Օսկանեանի պաշտօնական յայտարարութիւնները: Տիկին Ղազինեան մասնատրապէս մէջբերեց ԱԳ նախարար պրն Վ. Օսկանեանին քանի մը օրեր առաջ արտասանած խօսքերը. *«Իմ կառավարութիւնը կը ցանկայ մեր դրացի Թուրքիոյ հետ իրական ու անկեղծ հաշտութիւն մը: Մենք կը սպասենք ոչ թէ խորհրդանշական քայլերու խաղ մը, որուն նպատակը հաշտութիւնը չէ, այլ ունի միմիայն քարոզչական նպատակաւոր դրութիւն՝ շեղելու համար միջազգային հանրութեան ուշադրութիւնը: Հայաստանը չի կրնար թոյլ տալ, որ նմանատիպ փորձերը ճեղք բանան Հայաստան-Սփիւոք փոխարաբերութիւններու մէջ:*

«Հայոց պատմութիւնը Հայաստանի սիրտն է», - եզրափակեց յարգարժան Դեսպանուհին:

Յաջորդ բանախօսը Գերմանիոյ Կանաչներու Կուսակցութեան Խորհրդարանական Խմբակցութեան ղեկավար պրն Ֆրից Քուինն էր, որ Գերմանիոյ քաղաքական կեանքի ծանօթ ղեմքերէն մէկն է, մանաւանդ Մարդկային Իրաւունքներու պաշտպանութեան ուղղուած իր գործունէութեամբ: Երկու տարի առաջ ան կարելորդ դերակատարութիւն ունեցած է նաեւ Գերմանիոյ Պունտեսթակի որոշման ընդունման ի նպաստ, որով Գերմանիոյ Խորհրդարանը պաշտօնապէս դատապարտեց հայութեան բնաջնջումը օսմանական կայսրութեան մէջ: Պրն Քուինն նշեց, որ իր անկեղծ համոզմամբ 90 եւ աւելի տարիներ առաջ կատարուածը կազմակերպուած Յեղապանութիւն է եւ գերման արխիւային փաստաթղթերն ալ անառարկելիօրէն կ'ապացուցեն ասիկա: Յարգարժան բանախօսը անդրադարձաւ նաեւ գերմանական պատասխանատւութեան՝ մէջբերելով այդ օրերու գերմանական քանցլէր Պէթման Հօլվէկի 1915-ին արտասանած յայտնի խօսքերը. *«Մեր միակ նպատակն է Թուրքիան մինչեւ պատերազմի աւարտը մեզի դաշնակից պահել, բացարձակապէս նկատի չառնելով, թէ հայութիւնը կ'ոչնչացուի կամ ոչ»:*

Այնուհետս պրն Քուինն աւելցուց. *«Ինծի համար խայտառակութիւն մըն է գիտնալ, որ գերմանական դպրոցական դասագիրքերը առ այսօր դեռ կը լռեն Հայոց Յեղապանութեան մասին»* եւ յոյս յայտնեց, որ մօտ ապագային գերմանական պատասխանատու մարմինները պիտի սրբագրեն այս սխալը:

Ծանօթ երաժիշտներ Լուսինէ եւ Սերկէյ Խաչատրեանի ելոյթէն ետք, որոնք հրաշալի կատարմամբ ներկայացուցին Ֆրանց Շուպերթէն եւ Սերկէյ Ռախմանինովէն

դաշնամուրի եւ ջութակի համար գրուած մէկական ստեղծագործութիւններ, Հայոց Յեղասպանութեան մասին գիտական բարձրամակարդակ բանախօսութեամբ մը հանդէս եկաւ գերման գիտական կեանքի յայտնի դէմքերէն փրոֆ. Եօրն Ռիւզէն: Ան ի մասնաւորի նշեց, որ Յեղասպանութեան ընդունումն ու ճանաչումը անհրաժեշտ է ոչ միայն հայերուն, այլ նաեւ թուրքերուն, որովհետեւ ներկայ թուրք սերունդը գերին է պատմական դառն անցեալի: Յեղասպանութիւն ու Բնաջնջում կը նշանակեն մերժում մարդկային հաւաքականութեան մը, այս պարագային հայութեան, մարդ ըլլալու իրողութեան: Եւ այս մերժումը յառաջ կը բերէ սպաննելու անբարոյութիւն մը, որուն համար դիմացինը կը դադրի մարդ ըլլալէ: Եւ ասիկա այլ բան չէ, եթէ ոչ Ոճրագործութիւն ընդդէմ մարդկութեան եւ մարդկայնութեան: Յեղասպանութեան մոռացման կամ իմաստափոխման, մերժման կամ ժխտման միջոցով կարելի չէ հասնիլ ներքին խաղաղութեան եւ թեթեւացման: Այս ձեռով կարելի չէ անցեալը չկատարուած դարձնել, ան կը մնայ իբր ծանր բեռ մը բարդուած ուսերուն վրայ յետագայ սերունդներու: Սպաննութիւնը ստուերի պէս կը հետապնդէ պատմական պատասխանատուութենէ խուսափողին: Զանգուածային սպաննութիւնը նաեւ սեփական մարդկայնութեան սպաննութիւնն է եւ կարելի չէ ժխտմամբ կամ մերժմամբ խոյս տալ պատասխանատուութենէ: Եւրոպական Միութիւնը իրաւունք չունի եւ չի կրնար մոռնալ իր պատմութեան նմանատիպ դրսեւորումները, պատմական պատասխանատուութեան գիտակցումը եւ հիմնարար ինքնաքննադատական մօտեցումները: Եթէ Եւրոպական Միութիւնը ինքզինք լուրջ կ'ընդունի, պարտաւոր է նկատի առնել այս հանգամանքը եւ նոյն ինքնաքննադատական մօտեցումը պահանջել իրեն անդամագրուելու ցանկութիւն յայտնող ամէն պետութեան:

Փրոֆ., տոքթ. Ռիւզէնի բանախօսութեան յաջորդեցին Յեղասպանութեան վերապրողներու յուշերէն հատուածներու ընթերցումներ՝ գերմաներէն թարգմանութեամբ, որմէ ետք Սերկէյ եւ Լուսինէ Խաչատրեան երկեակը դաշնամուրի եւ ջութակի վրայ հրամցուց Կոմիտասի «Ծիրանի ծառ» եւ «Կռունկ» ստեղծագործութիւնները:

Հանդիպութիւնը եզրափակուեցաւ Գերմանիոյ հայոց առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի խօսքով: Առաջնորդ Սրբազանը ի մասնաւորի նշեց. *«Անկարելի է քրիստոնէայ ըլլալ, առանց խաղաղութիւն ու հաշտութիւն քարոզելու եւ առանց գործնականօրէն անոնց իրականացման նպաստելու: ...Մակայն առանց ճշմարտութեան, առանց արդարութեան կարելի չէ պատկերացնել իրաւ հաշտութիւն, իրական ու տեւական խաղաղութիւն ո՛չ անձերու եւ ո՛չ ալ հաւաքականութիւններու եւ պետութիւններու միջեւ: ...Պէտք է իրատես ըլլալ եւ խոստովանիլ, թէ այնքան ատեն քանի ճշմարտութիւնը չի ընդունուիր ու արդարութիւնը չի վերականգնուիր, անկարելի կը մնայ հայ-թուրքական հաշտութիւնը: Կարելի՞ էր պատկերացնել գերման-հրեական հաշտութիւն, առանց ճշմարտութեան ու արդարութեան, առանց ներողութեան ու ներողամտութեան, առանց մեղքի ու պարտականութեան գիտակցութեան»:*

«Քրիստոնեայ ըլլալ, կը նշանակէ ըլլալ պաշտպան մարդկային կամքի ու տեսակետի ազատութեան: Մակայն տեսակետ բառը կ'ենթադրէ ներկայի կամ անցեալի վիճելի իրադրութիւն մը: ...Դեպք մը, գործողութիւն մը, ինչպիսին է Հայոց Ցեղասպանութիւնը, որուն տեղի ունեցած ըլլալը աներկբայելի իրականութիւն մըն է, որքան ալ տխուր ու ցաւալի ըլլան հետեւանքները, պէտք է ընդունիլ եւ ճանչնալ, ... որովհետեւ միայն այս ճանապարհով կարելի կ'ըլլայ հասնիլ փոխադարձ վստահութեան, որ ծնունդ կու տայ իրական ու տեւական հաշտութեան», - եզրափակեց իր խօսքը Գարեգին Սրբազան:

Ձեռնարկը իր լրումին հասաւ Հայոց Ցեղասպանութեան բիւրաւոր նահատակներու հոգիներու խաղաղութեան համար կատարուած Հոգեհանգստեան աղօթքով եւ միասնաբար արտասանուած Տերունական աղօթքով:

Ոգեկոչման կեդրոնական ձեռնարկին ներկայ էին պետական, քաղաքական, եկեղեցական հայ եւ օտար բազմահարիւր դէմքեր:

ՍԵՐՈՎԲԷ ՎՐԴ. ԻՍԱԽԱՆԵԱՆ

ԻՏՏՆԻՈՅ ՀԱՅՈՑ ՀՈՎՈՒՈՒԹԻՒՆ

Ի ՅԱՐԳԱՆՍ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Շաբաթ, 21 Ապրիլ 2007-ին, Հայկական Ցեղասպանության 92-ամեակին առիթով տեղի ունեցավ միջեկեղեցական բանախօսություն-երեկոյ: Ան կազմակերպուած էր Ի-տալիոյ հայոց Հոգեւոր Հովուութեան ու Միլանոյի Քրիստոնէական Եկեղեցիներու Խորհուրդի համագործակցութեամբ: Բանախօսութեան նիստը բացուեցաւ ատենապետութեամբ պրն Տիգրան Երեցիանի: Ան իր խօսքին մէջ ըսաւ, թէ Թուրքիոյ ներկայ պետութեան կողմէ եղած ժխտողական ամէն փորձ ու կեցուածք, այսօր եւս կրնանք համարել որպէս շարունակութիւն 1915 թուականին եղած ցեղասպանութեան:

Երեկոյի առաջին բանախօսն էր Միլանոյի Քրիստոնէական Եկեղեցիներու Խորհուրդի նախագահ Տ. Դրայեան Վալդմանը: Ան իր խօսքին մէջ ըսաւ, թէ ինչպէ՞ս կարելի է այսօր հաշտուիլ պատմութեան այդ էջերուն, որոնք կը փաստեն հայ ազգի դժկատարուած աղետները: Պետք է որ Թուրքիան սրբազրէ մարդկութեան դէմ իր գործած անցեալի անուրանալի ոճիրը: Ան իր խօսքին վերջաւորութեան եւս յիշեց Մեծ Եղեռնը եւ կոչ ուղղեց անոր արդար լուծում տալու հրամայականը միջազգայնօրէն ուշադրութեան առարկայ դարձնելու:

Երկրորդ բանախօսութիւնը նուիրուած էր Հայոց Ցեղասպանութեան պատճառներուն եւ ընթացքին: Բանախօսն էր Իտալիոյ հայոց հոգեւոր հովիւ Տ. Առէն վրդ. Շահինեանը: Ան ներկայացուց Ցեղասպանութիւնը սկսեալ 1878 թուականէն մինչեւ 1922 թուականը, ցոյց տալով որ Հայկական Ցեղասպանութեան գործընթացքը շարունակուած է աւելի քան չորս տասնամեակներ եւ գործադրուած է թուրքական տարբեր վարչակարգերու կողմէ, որոնք մէկը միւսին կը ժառանգէին հայասպանութեան գործը: Ապա, ան կոչ ուղղեց համայն մարդկութեան, որպէսզի պայքարին ժխտողական կեցուածքին դէմ:

Երրորդ բանախօսութիւնը նուիրուած էր Հայկական Ցեղասպանութեան հարցին եւ Հռոմեական Կաթողիկէ Եկեղեցւոյ կեցուածքին 1915 թուականին: Բանախօսն էր Սրբոց Առաքելոց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Տարչիզիոյ Բովէ: Ան իր խօսքին մէջ յիշեց որ թուրքերը, որոնք գործադրեցին Հայկական Ցեղասպանութիւնը սկսեալ 1878 թուականէն մինչեւ 1922 թուականը, Կաթողիկէ Եկեղեցին դէմ կանգնեցաւ 1915-1918 կատարուած ջարդին եւ դատապարտեց զայն, սակայն ինչպէս անցեալին այսօր եւս թուրքերը ամէն միջոց ի գործ կը դնեն ժխտելու անոր իրողութիւնը եւ մերժելու բոլոր փաստերը:

Նիստի աւարտին մասնակցողներուն առիթ տրուեցաւ իրենց կարծիքներն ու առաջարկները ներկայացնելու:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 23-ին Վատիկանում, Երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի՝ լուսահոգի Հովհաննես-Պողոս Բ Պապին նվիրած հայկական խաչքարի առջև, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Մեծ Եղեռնի բյուրավոր զոհերի:

Արարողությունը, որը կազմակերպվել էր Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Առեն վրդ. Շահինյանի և Վատիկանի Եկեղեցիների Միության գրասենյակի համակարգող Հ. Ջոն Բոնիի ջանքերով, կատարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Ս. Գեղարդ աբղ. Վահունին և Ս. Մուշեղ աբղ. Բաբայանը:

Նախքան հոգեհանգստյան պաշտոնը Հոգեշնորհ Հայրերը, ուղեկցությամբ Հռոմի հայ հավատացյալների, ծաղկեպսակ գետեղեցին խաչքարի առջև, հավարտ որի Հայր Գեղարդը իր խոսքը ուղղեց կաթոլիկ հոգևորականին և հանուն հոգևոր հովվի ողջունեց նրա ներկայությունը, իր սրտի գոհունակությունը արտահայտեց, որ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին այսօր զորավիգ է մեր Եկեղեցուն և Հռոմի հայ համայնքին Մեծ Եղեռնի ոգեկոչման օրը: Հոգեշնորհ Հայր Սուրբն իր կոչն ուղղելով ներկա հավատացյալներին՝ հորդորեց միասնաբար՝ մեկ հոգի, մեկ բռունցք գործելու, կարողանալու համար հասնել Հայոց Ցեղասպանության միջազգայնորեն ճանաչմանը:

Ի ՅԱՐԳԱՆՍ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Երեքշաբթի, 24 Ապրիլին, առաւօտեան ժամը 10.30-ին, Հայոց Ցեղասպանութեան 92-ամեակին առիթով, առաջնորդութեամբ Իտալահայոց հոգևոր հովիւ Հոգեշնորհ Ս. Առեն վրդ. Շահենեանի, Միլանի նշանաւոր Ս. Ամբրոսիոս հնամենի Մայր տաճարի մէջ մեծաշուք հանդիսաւորութեամբ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ՝ ի յիշատակ Ապրիլեան նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմին ծրագրեալ Մեծ Եղեռնի, այլ եւ Արցախեան գոյամարտին: Սուրբ եւ Անմահ Պատարագին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Ս. Գեղարդ աբղ. Վահունին:

Պատարագի սրբազան արարողութեան ներկայ էին Կարտինալ Տիոնիճի Թերէմանսի ներկայացուցիչը, Միլանի քաղաքապետի ներկայացուցիչը, տեղի Քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչները, Միլանի Եկեղեցական Խորհրդի անդամները, Միլանի մէջ հաստատուած Էկումենիկ Կենտրոնի ներկայացուցիչները, Իտալիոյ Հայոց Հովուութեան ազգային-եկեղեցական հոգաբարձոյան անդամները, Իտալիոյ Հայոց Միութենական վարչութիւններու ներկայացուցիչները, տեղաբնակ բազում հայորդիներ, ինչպէս նաեւ՝ իտալացիներ:

Իր պատգամին մէջ պատարագիչ Հայր Սուրբը կարեւորութեամբ ընդգծեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը, շեշտեց նաեւ, որ “Մեծ Եղեռնի նահատակներուն նուիրած յարգանքի այս յուշատօնին, մենք ոչ միայն մեր խոր յարգանքն է, որ

կը մատուցանենք մեր անշիքիմ մէկ ու կէս միլիոն նահատակներուն, այլեւ մենք իրենց նահատակութեան ճանապարհի ընդմէջէն պատգամ ունինք ըսելու համայն աշխարհին, որ Ապրիլ 24-ի նահատակաց մշտախօս պատուիրանը նոր սերունդին համար պէտք է ըլլայ չափանիշ գոհաբերութեան, հատկանիշ հայրենասիրութեան, տուրք յարգանաց հանդէպ մարդկային կեանքի բարոյական արժէքներուն եւ յանձնառութիւն Հայ ժողովուրդի իրաւանց հետապնդման մինչեւ ի կատարումն արդարութեան”:

Հայր Սուրբի քարոզէն ետք խօսք առաւ Հոգեշնորհ Տ. Ֆրանքոյ Պոթթոնի Միլանոյի Էկումենիք գրասենակի տնօրէնը որն իր խօսքը աւարտեց ըսելով. “Այսպիսով, 1915 թուականին կատարուած ողբերգութիւնը հայ ժողովուրդի դէմ կը համարենք որպէս քրիստոնէական ցեղասպանութիւն, վկայութիւն, որ քրիստոնէական հաւատքը ունի մարտիրոսութեան սուրբ կնիքը”:

Յաւարտ Սուրբ Պատարագի ներկայ բազմութիւնը, թափոր կազմած, մոմերով եւ ծաղիկներով ուղղութեան դէպի նոյն եկեղեցւոյ հարեանութեամբ գետեղուած՝ Հայոց Ցեղասպանութեան բիւրաւոր նահատակներու յիշատակը յաւերժացնող յուշակոթող-խաչքարը, որտեղ Միլանի հայոց Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ (Նորահրաշ) երգչախումբը, գլխաւորութեամբ Տիար Ժան Անսրլեանի, հնչեցուց “Անոնց համար, որ ինկան” երգը (խօսք՝ Վահան Թեքէեանի):

Արարողութիւնը աւարտին հասաւ Տէրունական “Հայր Մեր” աղօթքով:

Յաւիտենական հանգիստ հոգւոցն նահատակաց մերոց որք կատարեցան յընթացս Համաշխարհային Առաջին պատերազմի եւ Արցախեան գոյամարտի վասն մէկ, անբաժան ու անբաժանելի, Միացեալ Հայաստանի:

ԴԻԻՄՆ ԻՏԱԼԻՈՅ ՀԱՅՈՅ ՀՈՎՈՐՈՒԹԵԱՆ

**ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱԻԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
92-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻԻ**

**ՃԱՆԱԶՈՒՄ ԱՊՐԻԼԻ 24-Ի ԱՂԵՏԻ՝
ՀԻՄՔ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ**

(Ապրիլ 24, 2007 թ.)

*«Յիսուս ասէ. Հայր, թող դոցա, զի ոչ զիտեն
թէ զինչ գործեն»:*

*«Յիսուս ըսաւ. Հայր, ներէ անոնց, որովհե-
տեւ չեն զիտեր թէ ինչ կընեն»:*

(Ղուկ. ԻԳ. 34)

Գողգոթայի բարձունքին վրայ խաչեալ Փրկիչը մարդկութեան, զթալով իրեն խաչող խելագար ամբոխին, ներում շնորհեց շատերուն, որոնք չէին զիտեր թէ ինչ կընեն: Խաչելութեան մահաւճիռի գործադրման ընթացքին, ամենայն հաւանականութեամբ, այնտեղ չէին հրէայ ժողովուրդի կրօնական մեծաւորները, որոնք վստահաբար զիտէին թէ ինչ կընեն. զի անոնք՝ քահանայապետեր, սաղուկեցիներ, փարիսեցիներ ու դպիրներ, յաճախաբար կը լրտեսէին Յիսուսի Ձինք ծուղակելու միտումով որպէսզի յարմար առիթով մը սպանեն զայն (տես Յովհ. Է. 1) ինչ որ յաջողեցան գործադրել հրէական Պասեքի նախընթաց ուրբաթ օրը:

Թէեւ Յիսուս ներումի բարոյական կարեւորութիւնը շեշտեց ըստ աւետարանիչներու վկայութեան (տես Մատթ. ԺԸ. 21-22 եւ Ղուկ. ԺԷ. 3-4), այնուամենայնիւ Իր առաքելութեան էական մէկ պահուն, երբ պատուհասի փայտին վրայ Ան կը կիրառէր Աստուծոյ տնօրինութիւնը մարդկային ցեղի փրկութեան ի խնդիր,՝ ահա մարդ առաքածը բնորոշող յանցաւորութեան եւ մեղապարտութեան ծանր փոխհատուցման այդ տանջալի պահուն մեր Տէրը Իր ընծայած ներումը պայմանաւորեց զիտակցութեան եւ մտադրութեան հետ: Այսինքն, քրիստոնէական ըմբռնումով պէտք է ներել միայն այն մեղքերը կամ յանցանքները, որոնք կը կատարուին անգիտաբար եւ առանց կանխամտածումով: Ուստի, վերոյիշեալ տրամաբանութենէն մեկնելով, տրամաբանութիւն, որն իր վրայ կը կրէ Աստուածադիր պատգամի ստուգութիւնը, կարելի չէ ներում շնորհել անոր, որը ոճիր կը գործադրէ կանխամտածեալ սադայելական ծրագրումով:

Ազգովին դարձեալ Ապրիլ 24-ի չարաշուք յիշատակութեան առջեւ կը գտնուինք: Իննսուներկուերորդ այս տարելիցը մեզի մտածել կուտայ թէ մեր օրերու պատանի ու հազիւ երիտասարդացած անձինք արդէն հինգ սերունդներու հեռաւորութեամբ կը պատկերացնեն հայկական ցեղասպանութեան ահաւորութիւնը: Յարգելով բացառութիւնները, ոմանց համար Եղեռնը լոկ պատմուածք է դարձած՝ ինչքան սրտաճմլիկ ու գազանային եղած ըլլան անոր հայաջինջ դէպքերը, ինչքան ալ աւագ սերունդը ջանայ երիտասարդներու հոգիներու պաստառին վրայ վերաբարձրել ու

գծագրել ցեղասպանության պատճառած մարդկային, հողային, սրբութեանց եւ ազգային արժէքներու անկանգնելի կորուստները:

Իրաց սոյն վիճակը հայ երիտասարդութեան մէջ փաղանգ մը յառաջացուցած է, որը ակամայ կը մտածէ թէ մինչեւ ե՞րբ հարկ է դատապարտել թուրքերու այսօրուայ սերունդը: Ոմանք մեր զաւակներէն հարց կուտան թէ ժամանակը հասած չէ՞ ներում շնորհելու: Հովուական մեր կեանքի ընթացքին անձնապէս գտնուած ենք յար եւ նման հարցադրումներու դիմաց: Հոգեկան այս ապրումը ըմբռնելի է երկու իմաստով: Նախ՝ այն պարագան ուր մեր նոր սերունդը ինը տասնամեակներու հեռաւորութեամբ կը մօտենայ սոյն ազգային խնդրին: Այսօրուաններէն եւ ոչ մէկը իր ուրոյն աչքերով տեսած է կամ իր մոտքին վրայ կրած է եղեռնութեան արհաւիրքը, այլ միայն լսած է անոր մասին եկեղեցիներու եւ մշակութային տուններու բեմերէն կամ ալ կարդացած է Եղեռնի մասին: Երկրորդ՝ ընդհանրապէս մարդ արարածը կը ջանայ ձերբազատիլ հոգեյուզական ծանրութենէ, որը ակամայ կը ճնշէ իր հոգիին վրայ յառաջ բերելով հոգեբանական կաշկանդուածութիւն: Ուստի եւ հակազդեցութեան վիճակի դրսեւորում: Որով, դեկավար անձնաւորութիւնները մեր ազգին պարտին տրամաբանական պատասխաններով բացատրութիւն տալ սոյն նիւթի կապակցութեամբ եղած հարցապնդումներուն:

Ներում շնորհելը նախ եւ առաջ կենթադրէ ենթակային գիտակցիլ թէ իւր անձի դէմ կամ իւր ժողովուրդի նկատմամբ ծանր յանցանք ու պարսաւելի արարք գործադրուած է: Եթէ նկատի ունենանք վերջին երկու դարերու հայ ժողովուրդի պատմութիւնը պիտի նկատենք, որ մերազն զաւակունք յաճախապէս ենթարկուած են զանգուածային սովի ու սրածութեան, մանաւանդ Արեւմտեան Հայաստանի տարածքին վրայ: Ու գործադրողները սպաննութեան, կոտորածներու եւ տեղահանութեան եղած են թուրանական ցեղերը Օսմանեան հիւանդ Կայսրութեան հրեշային ծրագրումով ու իրագործմամբ:

Քիչ վերել մեր բնորոշած սթափանք ունենալը երեք կողմ ունի: Մին քաւութեան նոխագն է. երկրորդը՝ ոճրագործ հրեշը, իսկ երրորդ կողմը՝ դիտող աշխարհն է: Առաջին միաւորը պէտք է իմանայ թէ ինք ենթարկուած է եղեռնութեան, ոճիրի եւ իրաւագրկման: Երկրորդը քաջութիւն պարտի ցուցաբերել ընդունելով թէ ինք եղած է դատաւորն ու դահիճը, անողոք մարդասպանը առաջին միաւորին: Իսկ երրորդ միաւորի յանցապարտ կամ արդար ըլլալը կապ ունի թէ ինք որքանով իր լռութեամբ անտարբեր գտնուած է կամ իր քաջարի կեցուածքով դատապարտած է ոճիրին եղելութիւնը եւ ապա դիմած է քայլերու յատուցանելու իր բարոյական պարտաւորութիւնը, ինչպէս նաեւ միջոցներ որոնած է ամոքելու վերքերը եւ հաստատելու արդարութիւնը: Ուստի, առանց վերոնշեալ գիտակցումին երեք միաւորներու կողմէ՝ եղածը մտովին ընկալելու ունակութեան – այսինքն գործադրուած յանցանքին ու մեղաւորութեան նկատմամբ ունենալ առարկայական ընկալում եւ ըմբռնում – առանց այս բոլորին կարելի չէ ներումի բարոյական արժէքը իմացապէս ճշդել ու հոգեբանօրէն դրսեւորել:

Վերոյիշեալ նկարագրութեան մէջ առաջին միաւորը, այս պարագային հայ ժողովուրդը ի սկզբանէ ըմբռնած է թէ իր նկատմամբ որպէս ազգութիւն, մանաւանդ Արեւմտեան Հայաստանի ամբողջ տարածութեան վրայ, հարիւրաւոր տարիներու ընթացքին օսմանեան թուրք պետութիւնը գործադրած է ընկճում, սանձահարում եւ անողոք կոտորած - վիճակներ, որոնք իրենց գազաթնակէտին հասան 1915-ի ցե-

ղասպանության իրագործումով: Մերազն զուակունք քաջ գիտեն թե իրենց մօտաւոր նախնիները ենթարկուած են դաժան ոճիրներու եւ եղեռնանքի, որը ցոյց կուտայ սահմոկեցուցիչ չարիքը՝ հիմնապէս առկայ երիտթուրքերու գաղափարախօսութեան մէջ:

Ահա թէ ինչու ամէն մէկ հայ նախ պետք է իր ներսիդին ցնցում զգայ ի լուր իւր ազգի տառապանքին եւ ապա ինք անձնապէս ապրի ահաւորութիւնը իր ժողովուրդին նկատմամբ նիւթուած չարութեանց, սրբապղծումներուն եւ ողբերգութեան: Այս է դժոխային անդունդը անօրէնութեան այն իրադրութեան, որն ի գոյ է մեր ժողովուրդի հաւաքական հոգիին խորունկը: Ուստի, մեր բարոյական պարտականութիւնն է զգօնութեամբ գործելու այն ինչ որ կարող ենք իբր գիտակից ազգութիւն, որ պէսզի այլեւս եւ ոչ մէկ տեղ դարձեալ կրկնուի, եւ ոչ մէկ ժողովուրդի վրայ դարձեալ իրագործուի այն բարբարոսական տմարդութիւնը, որուն զոհերը եղան բիւրբիւրաւոր հայեր կորսնցնելով տիրատուր կեանք, տուն ու հայրենիք:

Ահաւասիկ, նման գիտակցութեան հիման վրայ է, որ մենք պիտի կամենանք ներում շնորհել մեր դարաւոր ոսոխին, եթէ ինք քաջութիւնը ունենայ ընդունելու իր յանցապարտութիւնը եւ միջոցներու դիմէ հատուցանելու հայ ժողովուրդի անչափելի կորուստները:

Երկրորդ միաւորը թուրք ժողովուրդն է, որը պարտի ըմբռնել թէ ամէն անգամ երբ ամբողջատիրական վարչակարգ մը, որպիսին էր ինքը՝ Օսմանեան Թուրքիան, սադայելական միջոցներ որոնէ ջախջախելու ունէ մարդ, ահա մարդկութիւնը իր հաւաքական ամբողջականութեամբ անպայմանօրէն կը տուժէ արձանագրելով բարոյական անկում: Զարմանալի է, որ այսօրուայ Թուրքիան տակաւին չի ուզեր ընդունիլ թէ որքան հրէշային էր երիտթուրքերու սատանայական քաղաքականութիւնը դիմացինին ստրկացնելու, ահաբեկելու, սպաննելու եւ ամբողջ ցեղ մը հիմնայատակ ջնջելու աշխարհի քարտէսի վրայէն:

Փաստ՝ այսօրուան թրքական կառավարութիւնը 28 Մեպտ. 2005-ին, մերժեց ընթացք տալ Եւրոպական Միութեան կոչին ընդունելու Հայկական կոտորածներու եղելութիւնը: Փաստ՝ թուրք լրագրող Օրհան Փամուքի դէմ եղած դատական հետապնդումները զի ան յանդգնութիւնը ունեցաւ հրաւեր կարդալու իր պետութեան եւ ազգակիցներուն ընդունելու հայութեան նկատմամբ որդեգրուած ցեղասպանական արարքները: Անհերքելի փաստ՝ «Ակօս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագրի՝ Հրանդ Տինքի քստմնելի սպանութիւնը 19 Յունուար 2007-ին Ստամպուլի մէջ, որով հետեւեւ ան հետապնդեց Հայկական Դատը աներկիւղօրէն:

Երրորդ միաւորը քսաներորդ դարու երկրորդ տասնամեակի աշխարհը կը հանդիսանայ, որը լուրթեամբ դիտեց Հայոց Յեղասպանութիւնը թէւ գտնուեցան անհատներ, որոնք իրենց ձայնը բարձրացուցին ու բարոյական ազդեցութիւն ի գործ դրին վասն ճշմարտութեան եւ ի նպաստ գթասրտութեան, խստօրէն դատապարտելով տեղի ունեցած ոճիրը: Քարասիրտ աշխարհին համար այդ վեհ անձանց բողոքները մնացին «ձայն բարբառոյ յանապատի» սակայն իրենց քրիստոնէական վսեմ դիրքորոշումը անջնջելի կը մնա հայերուս հաւաքական յիշողութեան մէջ:

Յետադարձ ակնարկով կարելի է կռահել թէ այն օրերու աշխարհը ինչու լուր մնաց ի տես գործադրուող ոճրագործութեան: Համաշխարհային Առաջին պատերազմի օրերու գահակալներն ու պետական բարձրաստիճան իշխանաւորներ միթէ չէին ըմբռնէր թէ ոչինչ պիտի բարեփոխէր աշխարհը եթէ ոչ չարին յաղթահարումը

մարդկային ցեղի հոգիին մեջ: Անձնապես մեզի համար պատասխանը յստակ է: Աշխարհի մեծամեծները, ինչպես այն օրեր, նաեւ այսօր կը մերժեն ընդունիլ թէ խաղաղութիւնը առաջին հերթին Աստուածային պարգեւ է, որն երբ բնակի մեր սրտերուն մէջ, այնտեղ կը սերմանէ սէր, համերաշխութիւն, հաշտութիւն եւ դիմացինին նկատմամբ կարեկցանքի առողջ հոգեբանութիւն: Այո, աշխարհի ղեկավարները պիտի չուզեն եւ չեն ուզեր ընդունիլ որ իրենք չեն կարող շնորհել իրաւ խաղաղութիւն: Մերօրեայ աշխարհի հիւանդագին վիճակը անառարկելի ապացոյց է ղեկավարաց խառնաշփոթ քաղաքականութեան, որն ընդհանրապէս կսկիծ, անյայտութիւն ու մեռելութիւն պատճառած է մարդկութեան:

Այժմ երբ ազգովին դարձեալ կը վերապրինք Ապրիլ 24-ով խորհրդանշուած դառն յիշողութիւնը Եղեռնի՝ անթիւ անհամար մեր արիւնակիցներու սպանդի, տեղահանութեան, աքսորի եւ հողային կորուստի, մեզի համար որպէս ազգութիւն ներում շնորհելու արարքը, ըլլայ այն հանդէպ ոճրագործին եւ կամ աշխարհի անտարբերութիւն դրսեւորելու անազնիւ կեցուածքին, հիմնուած պարտի ըլլալ այն դասերուն եւ փորձառութեանց վրայ, որոնք մենք այնքան տրտմութեամբ քաղեցինք մեր սրտաճմլիկ պատմութենէն:

Որպէս մէկ անդամը մարդկային ցեղին եւ ակամայ անցնելով ցեղասպանութեան եղեռնաբոյր աղետէն հայերս կը գիտակցինք, որ

ա) Ժամանակի անցումը չի ենթադրէր դառն յիշողութիւններու աղօտումը, որպիսին է Ապրիլ 24-ի պարգան.

բ) Ընդհակառակը, դառն յիշողութիւններն ու արիւնածոր դէպքերը այսօրուաններուն եւ գալիք սերունդներուն համար պէտք է ծառայեն որպէս խրատական հետեւութիւն նոյն անկար վիճակներու մէջ չգտնուելու, ինչպիսին եղաւ Համաշխարհային Առաջին պատերազմի սէւ տարիներուն:

գ) Պարտաւորութիւնը ունինք յիշեցնելու հայ նոր սերունդին ահաւորութիւնը իր տարողութեամբ այն աննախընթաց ոճրագործութեան, որուն հիմքը եղաւ արհամարհութիւնը մարդ արարածին եւ անոր Աստուածատու իրաւունքներուն.

դ) Վերոնշեալ խիստ ցաւալի պարագաները մեզի, որպէս հայ քրիստոնէայ հաւատացեալներ, կը հրաւիրեն ընդունելու թէ մենք պարտականութիւնը ունինք մարդկային ցեղին հետ շարունակելու մեր համերաշխ գոյակցութիւնը իբրեւ ազգութիւն.

ե) Մարդ էակի հոգեւոր աշխարհի հիմնական մէկ գրուածքը մարդկային յիշողութիւնն է, որուն շնորհիւ մենք հաստատաքայլ կ'ընթանանք կեանքի ուղիներուն վրայ: Ուստի, անկարելի է մոռնալ ինչ որ պատահեցաւ հայ ժողովուրդին իւր ազգային պատմութեան բարի եւ թէ չար ժամանակներուն.

զ) Ահա թէ ինչո՞ւ կը հաւատանք թէ մեր պարագային ներում շնորհելը չի նշանակէր մանաւանդ տխուր անցեալը մոռնալ.

է) Բայց, որպէս քրիստոնէաներ կ'ընդունինք թէ ներումը Աստուծոյ օգնականութեամբ կը դրսեւորուի մեր հոգիներուն ու սրտերուն խորունկը: Ներումը Քրիստոսի շնորհած պարգեւն է, որը հարկ է ճշմարտացնել մեր կեանքներուն մէջ.

թ) Ահա այսպէս է որ իրաւ ներումը հիմնուած է ճշմարտութեան, արդարութեան, սիրոյ եւ ներողամտութեան հիմնաքարերու վրայ, գաղափարներ որոնք հարկ է կիրառել որպէս խոհուն ապրելակերպ.

ժ) Այո, չարիքը միայն բարի գործերով, ընդ որում եւ ներումով կարելի է հիմնապէս յաղթահարել: Այս առումով, Նոր Ուխտը Պօղոս Առաքեալի բնորոշմամբ պիտի ըսէր.– «Մի պարտուիր չարէն, այլ՝ բարիով յաղթէ չարին» (Հռոմ. ԺԲ. 21):

Վերոյիշեալ խոհերն ու դատումները քաղաքական դիրքորոշումներ չեն: Որպէս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հոգեւորական մենք քաղաքականութեամբ զբաղող անձ չենք: Սակայն, հայ ազգի արդի իրականութեանց լոյսին ներքոյ կը հաւատանք, որ մեր Նահատակաց յիշատակը յարգել ու ոգեկոչել կը նշանակէ շինարար իրագործումներով մշտապէս զօրացնել ու ամրապնդելը երիտասարդ Հայաստանի պետականութեան ու հայ ժողովուրդի կեանքի կոչած բազմաճիւղ ազգային կառոյցները, որպէսզի հասարակական, քաղաքական եւ հոգեւոր բնոյթ ունեցող իրագործումներու շուրջ համախմբուին Հայրենիքի, Արցախի եւ Սփիւքի հայութիւնը աննահանջ կերպով ծաղկեցնելու մեր ազգային մշակոյթը, հայրենի հողը եւ Մայրենի Եկեղեցին իրենց հարուստ ժառանգութեամբ, խոյանքներով ու խիզախումներով:

Իր իմացական կարողութեամբ մարդ արարածը յաջողեցաւ նուաճել նիւթական տիեզերքը, հասնելով մինչեւ խորերը աստեղային համակարգին: Արդեօք ժամանակը հասած չէ՞, որ մարդկութեան բարոյական հանճարը նոյնպէս յաղթանակ արձանագրէ ի խրատ զանազան ազգութեանց խաղաղ գոյակցութեան եւ արդարասիրտութեան: Այս չէ՞ր միթէ միտք բանին իմաստուն սաղմոսերգուի աստուածային ներշնչմամբ հաստատեալ արտայայտութեան թէ «ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեցին: Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երեւեցաւ» (Մաղմուս ԶԴ. 11-12):

Հայ նահատակաց անշիրիմ ոսկորները Տէր Զօրի աւագներու ընդերքներէն անողորմ մարդկութենէն ճշմարտութեան յայտնագործումը կը պահանջեն, որպէսզի մերազն մարտիրոսներու բարեխօսութեամբ աշխարհի վրայ ծաթի արեգակն արդարութեան:

Թող նախախնամողն Աստուած երկինքի երանութեան մէջ բնակեցնէ արդար հոգիները հայ ազգի Նահատակ զաւակներուն:

Թող Պարգեւատուն Բարեաց յաջողութեամբ պսակէ մեր ազգի առաքելութիւնը ի խնդիր ճշմարտութեան եւ արդարութեան կենսագործման այս աշխարհի մէջ, միշտ ներշնչանքովը Սուրբ Հոգւոյ կենդանարար շնորհներու: Ամէն. Եղիցի եւ եղիցի:

Ամերիկայի Արևելեան թեմէն ներս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՀՈԳԻԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱ- ՄԱՐ ՄԱՍՆԱԽՈՐ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Անդրանիկ Մարգարեանի յանկարծական մահը հոգեպէս ցնցեց թէ՛ հայրենի եւ թէ՛ արտերկրի համայն հայութեանը:

Երբ մահուան լուրը Առաջնորդարան հասաւ, թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան մեծ յուզումով ըսաւ. «Վարչապետը հայրենասէր ու ազգասէր անձնաւորութիւն մըն էր. ան Հայ Եկեղեցւոյ հարազատ զաւակն էր: Որպէս նուիրեալ հասարակական գործիչ՝ ան հետապնդեց նորահաստատ Հանրապետութեան շահերը եւ ժողովուրդին բարօրութիւնը: Ան երիտասարդ էր: Հայաստանը, հայ ժողովուրդն ու իր ընտանիքը տակաւին մեծ ակնկալութիւններ ունէին իրմէ, սակայն, դժբախտաբար, անոր հիւանդութիւնը կեանքի ընթացքը կրճատեց»:

Առաջնորդ Սրբազան Հայրը յատուկ շրջաբերականով թեմի բոլոր եկեղեցիներուն հրահանգեց որպէսզի Կիրակի Ապրիլ 1-ին Հոգեհանգստեան Պաշտօն կատարեն վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հոգիին համար:

Հինգշաբթի, Մարտ 29, երեկոյեան ժամը 7.15-ին, առաջնորդանիստ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն՝ նախագահութեամբ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի եւ ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազօր դեսպան տիար Թաթուլ Մարգարեանի, ՄԱԿ-ի մօտ մնայուն եւ լիազօր դեսպան տիար Արմէն Մարտիրոսեանի, ինչպէս նաեւ շրջանի հոգեւորականներուն, եկեղեցական, ազգային եւ մշակութային կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ սգակիր հայրենակիցներու:

Հոգեհանգստեան արարողութեան երգեցողութիւնը կատարեցին Մայր Տաճարի դպրաց դասի անդամները՝ ղեկավարութեամբ Խորեն Մէլիսանճեանի եւ դանշամուրի ընկերակցութեամբ Ֆլորէնս Աւագեանի:

Իր դամբանական խօսքին մէջ առաջնորդ Սրբազան Հայրը ըսաւ.

«Համայն հայ ժողովուրդը, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, խորապէս կը սգայ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Անդրանիկ Մարգարեանի յանկարծական մահը:

Երէկ, Մարտ 28-ին, ազգային յուղարկաւորութեամբ Կոմիտաս Պանթեոնին մէջ, եկեղեցական, կառավարական, պետական եւ բազմաճառար թիւով հայրենակիցներու ներկայութեան հողին յանձնուեցաւ մեծ հայուն եւ հայրենասէր վարչապետին

մարմինը: Այն վարչապետին՝ որ ամբողջ հոգիով ապրեցաւ ու գործեց Մայր Հայրենիքի այսօրուան եւ պայծառ ու բարգաւաճ ապագային ի նպաստ: Ան սիրուած ու յարգուած քաղաքագէտ մըն էր, որ ազգային կեանքին մէջ մուտք գործած էր 1970-ական թուականներէն: Հայ ժողովուրդի արդար իրաւունքներու պաշտպանութեան համար նոյնիսկ բանտարկուեցաւ սովետական իշխանութեան շրջանին: Բայց այդ բանտարկութիւնը արգելք չհանդիսացաւ որպէս զի ան ոգի ի բոլոր շարունակէ իր գործունէութիւնը: Իսկ Ղարաբաղեան պատերազմի տարիներուն իր գործօն մասնակցութիւնը բերաւ կամաւորական ջոկատներու կազմութեան, զէնք ու զինամթերք եւ սննդամթերք դրկելու աշխատանքներուն, ինչպէս նաեւ անձնապէս մասնակցեցաւ պատերազմական գործողութիւններուն: Իսկ անկախ Հայաստանի Հանրապետութեան կերտման համար անխոնջ կերպով գործեց եւ իրագործման աշխատանքին բերաւ իր մեծ նպաստը:

Այսպիսի հայրենասնուէր ու ազգանուէր վարչապետ մըն է որ կորսնցուց հայ ազգը: Վարչապետ մը՝ որ միշտ մնաց իր սիրելի ժողովուրդի կողքին, անոր ցաւերն ու մտահոգութիւնները իր սեփական ցաւերուն եւ մտահոգութիւններուն վերածեց եւ ջանաց լուծումներ որոնել ու գտնել՝ բարելաւելու համար իր հայրենակիցներուն առօրեայ կեանքը:

Անդրանիկ Մարգարեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնը ստանձնեց 2000 թուականին: Անոր վարչապետութեան շրջանին Հայաստանի արձանագրած նուաճումներուն եւ յաջողութիւններուն մէջ մեծ բաժին ունեցաւ ան: Հայաստանի պետականութեան զօրացման, բարգաւաճման ու բարօրութեան ի նպաստ ան իր ամբողջական ուժերն ու միջոցները չխնայեց:

Ճարտարագէտ, քաղաքագէտ եւ դիւանագէտ Մարգարեան միշտ մնաց համեստ ու բարի նկարագիրով հայր եւ մարդկային արժանիքներու տէր հասարակական գործիչը:

Ան երիտասարդ էր, 56 տարեկան, եւ Մայր Հայրենիքն ու հայ ժողովուրդը մեծ ակնկալութեամբ տակաւին կարիքն ունէին իր խոհեմ առաջնորդութեան ու ղեկավարութեան:

Անդրանիկ Մարգարեան Հայ Եկեղեցւոյ հարազատ զաւակն էր. յարգանք ու պատիւ կը տածէր Հայ Եկեղեցւոյ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ: Իր անմիջական նախաձեռնութիւններուն շնորհիւ Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները աւելի սերտացան եւ աւելի արդիւնաւորուեցան՝ միշտ բարձր պահելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարկն ու պատիւը:

Հոգեկան գոհունակութիւն մը ունիմ որ Նիւ Եորքի մեր ժողովուրդը Առաջնորդարանիս հանդիսասրահին մէջ առիթը ունեցաւ հանդիպելու վարչապետ Մարգարեանին, ծանօթանալու անոր հետ եւ լսելու իր խօսքերն ու պատգամները: Շատերու համար բացառիկ պատեհութիւն մըն էր անձնապէս տեսնել Հայաստանի Հանրապետութեան վարչապետը եւ բարեկամաբար գրուցել անոր հետ:

Հայաստան այցելութիւններուս ընթացքին բախտը ունեցած եմ քանիցս հանդիպելու Վարչապետին հետ, որուն մէջ նկատած եմ հայրենասիրութեամբ ու ազգասիրու-

թեամբ բաբախող սիրտ մը, սիրտ մը՝ մտատանջ Հայրենի եւ Մփիւռքի իր հայրենակիցներու ցաւերով ու մտահոգութիւններով:


Վարչապետ Անդրանիկ Մարգարեանի յանկարծական մահուան առիթով Արեւելեան թեմին անունով ցաւակցական նամակներ գրուած են Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Ռոպէրթ Քոչարեանին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդին եւ Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարար Սերժ Մարգսեանին: Ինչպէս նաեւ հրահանգած ենք որ Կիրակի, Ապրիլ 1-ին, մեր թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն կատարուի Անդրանիկ Մարգարեանի հոգիի խաղաղութեան համար:

Աղօթենք որ Տէրը Իր երկնային լոյսերուն մէջ հանգեցնէ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հայրենասիրութեամբ տոգորուած հոգին, եւ Ս. Հոգիի մխիթարութեամբ զօրացնէ Հայաստանի Հանրապետութեան կառավարական, քաղաքական, կրօնական դեկավար դէմքերը, ինչպէս նաեւ հանգուցեալի հարազատները»:

Իսկ Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազօր դեսպան տիար Թաթուլ Մարգարեան նախ շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ Սրբազան Հօր, ինչպէս նաեւ ներկաներուն՝ որոնք եկած էին իրենց յարգանքի տուրքը տալու Հայաստանի Հանրապետութեան վարչապետին: Ապա ներկայացուց Անդրանիկ Մարգարեանի կենսագրական գիծերը՝ շեշտելով անոր հայրենասիրական եւ ազգասիրական գործունէութիւնը: Որպէս վարչապետ ան աշխատանք տարած է Մայր Հայրենիքի քաղաքական եւ ընկերային կեանքի բարելաւման, ան եղած է Հայ Եկեղեցւոյ պաշտպան եւ ընտանեկան սրբութիւններու պահպանութեան ջատագով: Դեսպան Մարգարեան հանգամանօրէն անդրադարձաւ հայ քաղաքագէտի դիւանագիտական բարեմասնութիւններուն եւ ցաւ յայտնեց անոր վաղաժամ մահուան առիթով:

Յաւարտ արարողութեան ներկաները հրաւիրուեցան Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսասրահը, ուր տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ Առաջնորդարանի Հայ Օգնութեան Ֆոնտի հիւրընկալութեամբ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովին և ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանին՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Ողջունելով ՌԴ ԱԳ նախարարի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությանը, երկու պետությունների միջև զարգացող ու ամրապնդվող հարաբերություններին ու գործակցությանը տարբեր մակարդակներում: «Վստահ ենք, որ հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը պիտի շարունակի բարի արդյունքներ բերել մեր երկու ժողովուրդներին, և մենք, որպես Եկեղեցի, մեր սիրեցյալ հոգևոր եղբոր՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի հետ միասին պիտի փորձենք մեր նպաստը բերել այդ հարաբերությունների առավել ընդլայնմանն ու ամրապնդմանը», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Լեոնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում Ռուսաստանի Դաշնության բերած կարևոր մասնակցության համար: Հայոց Հայրապետն ի դեմս պրն Լավրովի նաև իր գնահատանքը հայտնեց ՌԴ իշխանություններին՝ Ռուսաստանում հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի և ուշադրության համար:

Իր հերթին պրն Լավրովը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, կարևոր նկատեց Հայաստանյայց Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների գործակցությունը: «Մենք արժեվորում ենք մեր բարեկամությունը, գործընկերությունը և համագործակցությունը: Գնահատում ենք այն ուշադրությունը, որ Հայաստանում դարձվում է ռուս մշակույթին...», - իր խոսքում նշեց Արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը:

Հանդիպման ավարտին պրն Լավրովի գլխավորած պատվիրակությունն այցելեց նաև Վեհարանի թանգարան:

ՆՈՐԱՅՐ ՄԻՍԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐ- ՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ակադեմիկոս Նորայր Սիսակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Կենսաքիմիայի, մոլեկուլյար, ճառագայթային կենսաբանության և գենետիկայի հիմնահարցերը» թեմայով միջազգային գիտաժողովի մասնակիցներին: Գիտաժողովի աշխատանքները և մասնակիցներին ներկայացրեց ակադեմիկոս Ծովակ Ավագյանը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց հայ ժողովրդի արժանավոր զավակի և մեծանուն գիտնականի հիշատակին նվիրված գիտաժողովների կազմակերպիչներին՝ կարևորելով նման միջոցառումների անցկացումը, ինչը նպաստում է ժողովուրդների մերձեցմանը և փոխհամագործակցությանը: *«Հաճելի է տեսնել, որ այսպիսի առիթները նաև ծառայում են բարի ավանդույթների վերականգնմանը մեր երկու ժողովուրդների գիտական շրջանակներում տասնամյակների համագործակցության և նաև մեր բարեկամության ոգու վերահաստատմանը»*, - նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևոր նկատեց, որ մեծ գործիչների գիտական ձեռքբերումները վերարժեվորվեն և դրանց արդյունքները ծառայեցվեն հանուն մարդկության առաջընթացի և բարօրության:

Ներկաների անունից շնորհակալական խոսքով Նորին Սրբությանը դիմեց Նորայր Սիսակյանի որդին՝ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միջազգային ինստիտուտի տնօրեն Ալեքսեյ Սիսակյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄՆ ՀՈՎՆԱՆՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ ՀԵՏ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև ԱՄՆ Նյու Ջերզի նահանգի Հովնանյան միջնակարգ դպրոցի ավարտական լսարանի տասներեք սաներին: Հովնանյան դպրոցում արդեն ավանդույթ է դարձել շրջանավարտների ամենամյա այցի կազմակերպումը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Նորին Սրբությունը Հայրական իր օրհնությունն ու պատգամը փոխանցեց երիտասարդներին՝ հորդորելով մշտապես այցելել Մայր Հայրենիք: Վեհափառ Հայրապետը խորհրդանշական նկատեց դպրոցի սաների այցը Մայր Աթոռ Ավագ Շաբաթվա ընթացքին, անդրադարձավ աղոթքի կարևորությանը հոգևոր կյանքում: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը քաջալերեց երիտասարդներին՝ ուխտագնացության ընթացքում հայոց տարբեր սրբավայրեր այցելելիս իրենց աղոթքը միախառնել նախնյաց աղոթքներին:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, կիրակի. - Ծաղկազարդ: Պահք:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Օվսաննա ի բարձունս, ալիւնիա, օրհնեալ, եկեալ անուամբ Տեառն, ալիւնիա» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 23):

Երեկոյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ Դոնբացեքի արարողություն:

Ապրիլի 5-ին, հինգշաբթի.- Պահք: Յիշատակ ընթերցեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, առավոտյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Հովհաննես աբեղա Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը ընթերցեց Ս. Բարսեղ Հայրապետի խոսքը:

Ետմիջօրեին, երեկոյան ժամերգությունից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց Ոտնվայի կարգը:

Ուշ երեկոյան Մայր Տաճարում կատարվեց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Մատնության, Չարչարանքների և Խաչելության հիշատակության կարգը: Խորախորհուրդ այդ մթնոլորտում օրվա խորհուրդը մեկնաբանող քարոզ խոսեց Ս. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը:

Ապրիլի 7-ին, շաբաթ. - Պահք: Ճրագալոյց Զատկի եւ Աւետումն Սուրբ Աստուածածնի:

Այսօր, առավոտյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Գևորգ աբեղա Մարոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Երեկոյան Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ապրիլի 8-ին, կիրակի. - ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը «Քրիստոս յարեալ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 3):

Ս. Պատարագի վերջում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ապրիլի 15-ին, կիրակի. - Ը օր Զատիկի: Կրկնագատիկ (Նոր Կիրակի):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հոգի Տեառն ի վերա իմ, վասն որոյ եւ օծ իսկ Զիս, ավետարանել աղքատաց առաքեաց Զիս» (Ղուկ. Դ 18) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

Ապրիլի 22-ին, կիրակի. - Գ կիր. Աշխարհամատրան (Կանաչ կիրակի):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ապրիլի 24-ին, երեքշաբթի. - ԺԷ օր Յինանց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:

Ապրիլի 29-ին, կիրակի. - Դ կիր. (Կարմիր Կիրակի):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Апрель 2007 г.)

1. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, по случаю праздника Святого Воскресения, 8 апреля 2007 г. (с. 3-5).
2. Поздравительные письма и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян, с главами Церквей сестер, с иерархами Патриарших престолов Армянской Церкви и с официальными лицами по случаю Святого и Чудесного Воскресения Спасителя (с. 6-9).
3. Праздник Вербного Воскресенья в Первопрестольном Святом Эчмиадзине, 1 апреля 2007 г. (с. 10).
4. В Великий Четверг Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян, возглавил обряд Омовения ног, 5 апреля 2007 г. (с. 11).
5. Празднества по случаю Святого Воскресения в Первопрестольном Святом Эчмиадзине, 8 апреля 2007 г. (с. 12-13).
6. Ознаменованье памяти жертв Армянского геноцида 1915 г. в Цицернакаберде, 24 апреля 2007 г. (с. 14).
7. Церемония панихиды в Первопрестольном Святом Эчмиадзине (за упокой души покойного Премьер Министра РА Андраника Маркаряна), 1 апреля 2007 г. (с. 15).
8. Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, Его Святейшеству Папе Римскому Бенедикту XVI, 16 апреля 2007 г. (с. 16).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

9. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, Джиму и Сандре Лайтнерам по случаю их награждения орденом “Святой Григорий Просветитель”, 20 апреля 2007 г., № 382 (с. 17-18).
10. Патриаршие награды (пожалование в апреле 2007 г. энциклик, орденов “Святой Нерсес Шнорали” и благословений Его Святейшеством Гарегин II, Католикосом Всех Армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) - (с. 19).
11. Поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, армянским женщинам по случаю Праздника Благовещения и Дня Материнства и Красоты, 7 апреля 2007 г. (с. 20).
12. Стартовала домостроительная программа 2007 г. – “Его Святейшество Гарегин II. Построим с верой”, 10 апреля 2007 г. (с. 21-22).

ПРОПОВЕДИ

13. Проповедь Его Преосвященства епископа Арарата Галтагчяна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина на Литургию Вербного Воскресенья, 1 апреля 2007 г. (с. 23-24).
14. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Овнана Тертеряна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина на Литургию по случаю возведения в сан священника, 15 апреля 2007 г. (с. 25-26).

ДУХОВНО-РЕЛИГИОЗНОЕ ИССЛЕДОВАНИЕ

15. **АРХИМАНДРИТ ЗАРЕ КАБАГЯН** – Из патриарших заветов Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян (с. 27-35).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Посвящается памяти жертв Армянского геноцида

16. **САМВЕЛ АНДРАНИКОВИЧ ПОГОСЯН** – Программы самоуправления Армении накануне конференции Сан Стефано и Берлина (историковедческое исследование) - (с. 36-48).
17. **АРАМАИС БАЛОЯН** – Армянская Апостольская Церковь и программы армянских реформ 1913-1914 гг. по итальянским дипломатическим документам (историковедческое исследование) – (с. 49-58).
18. **АВЕТИС АМАЯКОВИЧ АРУТЮНЯН** – Распределение и организация помощи армянским беженцам в Западной Армении в годы Первой мировой войны (историковедческое исследование) – (с. 59-77).
19. **ГРАНУШ БАГУМЯН** – Участие армянских добровольческих отрядов в военных действиях кавказского фронта (историковедческое исследование) – (с. 78-96).

РЕЦЕНЗИЯ

20. **ВАРУЖАН ПОГОСЯН** – Новый важный первоисточник, посвященный Армянскому геноциду (о книге “Г. Моргентау – Дипломатия Соединенных Штатов на Босфоре, дневники посла Моргентау, 1913-1916 гг., подготовка текста Ара Сафаряна”) – (с. 97-105).
21. **АРТУР АНДРАНИКЯН** – Духовное потрясение как следствие геноцида (о книге Мелине Гарагашян “Духовное потрясение геноцида и национальная самобытность”) – (с. 106-110).
22. **ТИРАН ЛОКМАГЕОЗЯН** – Новая книга, посвященная творческому наследию Комитаса (о первом томе статей и исследований архимандрита Комитаса, выпущенном издательством “Саргис Хаченц”) – (с. 111-112).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

23. Церемония возведения в сан священника в Первопрестольном Святом Эчмиадзине, 15 апреля 2007 г. (помещены также биографии иеромонаха Арутюна Киракосяна, иеромонаха Магакии Амиряна, священника Жирайра Хачатряна, священника Аракела Амиряна, священника Ефрема Арутюняна, священника Овела Оганяна, священника Вигена Манукяна, священника Согомона Минасяна, священника Сипана Григоряна, священника Армаша Погосяна, священника Арама Мирзояна и священника Манука Зейналяна) – (с. 113-120).
24. Полонничество детей в Первопрестольный Святой Эчмиадзин, 15 апреля 2007 г. (с. 121).
25. Молодежное собрание в Первопрестольном Святом Эчмиадзине, 16 апреля 2007 г. (с. 122).
26. Образование - права человека, общество. проблемы и перспективы (международный симпозиум), 5 апреля 2007 г. (помещен также текст доклада архимандрита Вазгена Наняна “Задачи образования в контексте воинствующей глобализации”) – (с. 123-127).
27. Освящена церковь Св. Геворк села Каначут (Аракатский регион), 14 апреля 2007 г. (с. 128).
28. Освящение церкви села Дарпас (Сюникский регион), 26 апреля 2007 г. (с. 129).
29. Праздник Святого Воскресения в Гугаркской епархии, 8 апреля 2007 г. (с. 130).
30. **АСТХИК АСРЯН** – Полонничество к могиле Св. Ованна Одзнеци (Гугаркская епархия), 17 апреля 2007 г. (с. 131).
31. Ознаменованіе памяти жертв армянского геноцида в армянской епархии Грузии, 23-24 апреля 2007 г. (с. 132-133).
32. Ознаменованіе 92-ой годовщины Армянского геноцида в Москве, 23-24 апреля 2007 г. (с. 134).

В армянской общине Калькутты

33. Вербное Воскресенье в армянской общине Калькутты, 1 апреля 2007 г. (с. 135).
34. Ознаменованіе дня основания армянской Филантропической семинарии Калькутты, 2 апреля 2007 г. (с. 135-136).
35. Великая Пятница и праздник Св. Воскресения в армянской общине Калькутты, 6-8 апреля 2007 г. (с. 136).
36. Мероприятие, посвященное памяти жертв геноцида в армянской Филантропической семинарии Калькутты, 24 апреля 2007 г. (с. 137).
37. Новости из армянской епархии Германии (с. 138-139).
38. **АРХИМАНДРИТ СЕРОВБЕ ИСАХАНЯН** – Ознаменованіе 92-ой годовщины геноцида армян в городе Франкфурте Германии, 22 апреля 2007 г. (с. 140-143).

Армянское пастырство Италии

39. Дань уважения памяти апрельских жертв (межцерковный вечер-доклад), 21 апреля 2007 г. (с. 144).
40. Церемония панихиды в Ватикане, 23 апреля 2007 г. (с. 144-145).
41. В дань уважения памяти апрельских жертв (в церкви Св. Амбросий Милана отслужена Св. Литургия), 24 апреля 2007 г. (с. 145-146).
42. Слово предводителя армянской епархии Ирака, Его Высокопреосвященства архиепископа Авака Асатурыана по случаю 92-ой годовщины Армянского геноцида, 24 апреля 2007 г. (с. 147-151).

В армянской Восточной епархии Америки

43. Церемония панихиды за упокой души покойного Премьер Министра РА Андраника Маркаряна в Кафедральном Соборе Св. Вардан (Нью Йорк), 29 апреля 2007 г. (с. 152-154).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

44. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, министра иностранных дел РФ Сергея Лаврова, 4 апреля 2007 г. (с. 156).
45. Участники симпозиума, посвященного 100-летию со дня рождения Норайра Сисакяна посетили Первопрестольный Святой Эчмиадзин, 4 апреля 2007 г. (с. 156).
46. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, учащихся школы Овнанян США, 4 апреля 2007 г. (с. 156).
47. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном Соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение апреля 2007 г. (с. 157-158).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(April 2007)

1. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Holy Resurrection, April 8, 2007 (p. 3-5).
2. Letters of Greeting and Telegrams on the occasion of the Holy and Miraculous Feast of Resurrection of the Savior, exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians and the Heads of Sister Churches, the Incumbents of the Hierarchal Sees of the Armenian Church and State Officials, (p. 6-9).
3. The Feast of Palm Sunday in the Mother See of Holy Etchmiadzin, April 1, 2007 (p. 10).
4. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians presided over the celebration of the Washing of the Feet on Holy Thursday, April 5, 2007 (p. 11).
5. Festivities in the Mother See on the occasion of the Feast of Holy Resurrection, April 8, 2007 (p. 12-13).
6. The Commemoration of the Armenian Genocide at the Tsitsernakaberd Memorial, April 24, 2007 (p. 14).
7. Requiem Service in the Mother See of Holy Etchmiadzin (for the repose of the soul of Andranik Margarian, the late Prime Minister of the Republic of Armenia), April 1, 2007 (p. 15).
8. Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians to His Holiness Pope Benedict XVI, April 16, 2007 (p. 16).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

9. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. and Mrs. James and Sandra Leitner, on the occasion of their decoration with the Medal of “Saint Gregory the Illuminator”, April 20, 2007, no. 382 (p. 17-18).
10. Pontifical Awards (Order of “St. Nerses the Graceful” and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during April 2007 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church,) (p. 19).
11. Message of Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians addressed to Armenian Women on the occasion of the Feast of Annunciation and the Day of Motherhood, April 7, 2007 (p. 20).
12. Commencement of “His Holiness Karekin II: Build on Faith” house-building project in 2007, April 10, 2007 (p. 21-22).

SERMONS

13. Sermon delivered by His Grace Bishop Ararat Kaltakjian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Feast of Palm Sunday, April 1, 2007 (p. 23-24).
14. Sermon delivered by His Eminence Archbishop Hovnan Derderian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy and the ordination of priests, April 15, 2007 (p. 25-26).

RELIGIOUS AND ECCLESIOLOGICAL STUDY

15. **REV. FR. ZAREH KABAGHIAN** – From the Pontifical Messages of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians – (p. 27-35).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES**Dedicated To The Memory Of The Victims Of The Armenian Genocide**

16. **SAMVEL ANDRANIK POGHOSIAN** – Plans of Armenian Sovereignty on the Eve of the Conferences of San Stefano and Berlin (historical research) – (p. 36-48).
17. **ARAMAYIS BALOYAN** – The Armenian Apostolic Church and the Plan of Armenian Reforms according to Italian Diplomatic Documents (historical research) – (p.49-58).
18. **AVETIS HMayak HARUTIUNIAN** – The Allocation of the Armenian Immigrants and the Organization of Aid in the Occupied Territories of Western Armenia during the Years of the Armenian Genocide – (p. 58-63).
19. **HRANUSH BAGHUMIAN** – Participation of the Armenian Volunteer Groups in the Battles of the Caucasus Battlefield (historical research) – (p. 78-96).

LITERARY REVIEW

20. **VARUZHAN POGHOSIAN** – A New and Important Source Dedicated to the Armenian Genocide (On the book “H. Morgenthau, United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913-1916. Compiled with an introduction by Ara Sarafian) - (p. 97-105).
21. **ARTHUR ANDRANIKIAN** – The Consequences of the Shock of Genocide (On the essay “Genocide Shock and National Identity” by Meline Karakashian) – (p. 106-110).

22. **TIRAN LOKMAGYOZIAN** – A New Book Dedicated to the Heritage of Komitas (On the Volume of Articles and Studies of Komitas Vardapet published by “Sarkis Khachents” publishing house) – (p. 111-112).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

23. Ordination of Priests in the Cathedral of Holy Etchmiadzin, April 15, 2007. (Biographies of Rev. Fr. Harutjun Kirakosian, Rev. Fr. Maghakia Amirian, Fr. Zhirayr Khachatryan, Fr. Arakel Amirian, Fr. Ephrem Harutiunian, Fr. Hovel Ohanian, Fr. Vicken Manukian, Fr. Soghomon Minasian, Fr. Sipan Grigorian, Fr. Armash Poghosian, Fr. Aram Mirzoyan and Fr. Manuk Zeinalian (p. 113-120).
24. Children's Pilgrimage to the Mother See of Holy Etchmiadzin, April 15, 2007 (p. 121).
25. Youth Meeting in the Mother See of Holy Etchmiadzin, April 16, 2007 (p. 122).
26. International Conference “Education – Human Rights, Society, Problems and Perspectives”, April 5, 2007 (Report of Very Rev. Fr. Vasken Nanian entitled “Educational Problems in the Challenging Context of Globalization”) (p. 123-127).
27. Consecration of St. Gevork Church in the village of Kanachut, April 14, 2007 (p. 128).
28. Blessing of the foundation of the church of the village of Darpas (region of Syunik), April 26, 2007 (p. 129).
29. The Feast of Holy Resurrection in the Diocese of Gougark, April 8, 2007 (p. 130).
30. **ASTGHIK ASRIAN** – Pilgrimage to the grave of St. Hovhan of Odzun (Diocese of Gougark), April 17, 2007 (p. 131).
31. Commemoration of the Armenian Genocide in the Armenian Diocese of Georgia, April 23-24, 2007 (p. 132-133).
32. Commemoration of the 92nd anniversary of the Armenian Genocide in Moscow, April 23-24, 2007 (p. 134).
33. The Feast of Palm Sunday in the Armenian Community of Calcutta, April 1, 2007 (p. 135).
34. Celebration of the Foundation Day of the Armenian College and Philanthropic Academy of Calcutta, April 2, 2007.
35. Good Friday and the Feast of Holy Resurrection in the Armenian Community of Calcutta, April 6-8, 2007 (p. 136).
36. Commemoration event in the Armenian College and Philanthropic Academy dedicated to the memory of the victims of the Armenian Genocide, April 24, 2007 (p. 137).
37. News from the Armenian Diocese of Germany (p. 138-139).
38. **VERY REV. FR. SEROVBE ISAKHANIAN** - Commemoration of the 92nd anniversary of the Armenian Genocide in Frankfurt, Germany, April 22, 2007 (p. 140-143).

In the Armenian Community of Italy

39. In Homage to the Victims of the Armenian Genocide (Inter-Church Conference) April 21, 2007 (p. 144).
40. Requiem Service in the Vatican, April 23, 2007 (p. 144-145).
41. In Homage to the Victims of the Armenian Genocide (celebration of Divine Liturgy in S. Ambrosius Church of Milan), April 24, 2007 (p. 145-146).
42. Message of His Eminence Archbishop Avak Asadourian on the occasion of the 92nd anniversary of the Armenian Genocide, April 24, 2007 (p. 147-151).

In the Eastern Diocese of the Armenian Church of North America

43. A Special Requiem Service for the repose of the soul of Andranik Margarian, the late Prime Minister of the Republic of Armenia, in St. Vartan Cathedral, New York, March 29, 2007 (p. 152-154).

AUDIENCES AT THE MOTHER SEE

44. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Sergey Lavrov, Minister of Foreign Affairs of Russian Federation, April 4, 2007 (p.155).
45. Participants of the Conference dedicated to the 100th anniversary of the birth of Norayr Sisakian visited the Mother See of Holy Etchmiadzin, April 4, 2007 (p. 156).
46. Audience granted by His Holiness Karekin II to the students of the Hovnanian School of New Jersey, USA, April 4, 2007 (p.156).
47. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during April 2007 (p.157-158).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սուրբ Յարութեան տօնի Հայրապետական պատգամը	3
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը	6
Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	10
Ավագ Հինգշաբթի Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ոսնկվայի արարողությանը	11
Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	12
Հայոց Մեծ Եղեռնի ոգեկոչումը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում	14
Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	15
Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորանքի գիրը Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապին	16

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տեր և տիկին Զիմ և Սանդրա Լայթներներին 7777777Ս. Գրիգոր Լուսավորիչ 888888 շքանշանով պարգևատրելու մասին	17
Հայրապետական գնահատություն	19
Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել հայ կանանց՝ Ավետման և Մայրության տոների առիթով	20
Մեկնարկեց 2007 թվականի 7777777Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կառուցենք հավատով 888888 տնաշինական ծրագիրը	21

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

S. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ծաղկազարդի տոնին մատուցված Ս. Պատարագին	23
S. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Պատարագի ընթացքում կատարված քահանայական ձեռնադրության ժամանակ	25

Հոգևոր-կրոնական

S. ԶԱՐԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԲԱՂՅԱՆ - Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական պատգամներից.....	27
---	----

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Նվիրվում է Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին

ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ - Հայաստանի ինքնավարության ծրագրերը Սան Ստեֆանոյի և Բեռլինի կոնֆերանսների նախօրեին ..	36
ԱՐԱՄՍՅԻՍ ԲԱԼՈՅԱՆ - Հայ Առաքելական Եկեղեցին և 1913-1914 թվականների հայկական բարեփոխումների ծրագիրն ըստ իտալական դիվանագիտական փաստաթղթերի	49
ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի շրջաններում Մեծ Եղեռնի տարիներին	59
ՀՐԱՆՈՒՇ ԲԱՐՈՒՍՅԱՆ - Հայկական կամավորական խմբերի մասնակցությունը կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններին	78

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ - Մեծ Եղեռնին նվիրված մի նոր կարևոր սկզբնաղբյուր	97
ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ - Ցեղասպանության հոգեցնցման հետևանքները	106
ՏԻՐԱՆ ԼՈՔՄԱԳՅՈՉՅԱՆ - Նոր գիրք՝ նվիրված Կոմիտասի ստեղծագործական վաստակին	111

ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	113
S. Հարություն աբեղա Կիրակոսյան	115
S. Մաղաքիա աբեղա Ամիրյան	115
S. Ժիրայր քահանա Խաչատրյան	116
S. Առաքել քահանա Ամիրյան	116
S. Եփրեմ քահանա Հարությունյան	117
S. Հովել քահանա Օհանյան	117
S. Վիգեն քահանա Մանուկյան	118
S. Սողոմոն քահանա Մինասյան	118
S. Միփան քահանա Գրիգորյան	119
S. Արմաշ քահանա Պողոսյան	119
S. Արամ քահանա Միրզոյան	120
S. Մանուկ քահանա Զեյնալյան	120
Մանուկների ուխտագնացություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	121
Երիտասարդական հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	122
7777777 Կրթություն-մարդու իրավունքներ. հասարակություն. հիմնախնդիրներ և հեռանկարներ 888888 թեմայով գիտաժողով Երևանում	123
Օծվեց Կանաչուտ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին	128
Դարպաս գյուղի եկեղեցու հիմնարկերը	129
Ս. Հարության տոնը Գուգարաց թեմում	130
ԱՍՏԳԻԿ ԱՍՐՅԱՆ - Ուխտագնացություն Ս. Հովհան Օձնեցու շիրիմին	131
Հայոց Մեծ Եղեռնի ոգեկոչումը Վիրահայոց թեմում	132

Հայոց Մեծ Եղեռնի 92-րդ տարելիցի ոգեկոչումը Մոսկվայում	134
Ծաղկազարդի տոնը կալկաթահայ համայնքում	135
Նշվեց Կալկաթայի հայոց Մարդասիրական Ճեմարանի հիմնադրման օրը	135
Ավագ Ուրբաթը և Ս. Հարության տոնը Կալկաթայի հայ համայնքում	136
Հուշ-ցերեկույթ Կալկաթայի հայոց Մարդասիրական Ճեմարանում` նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին	137
Լուրեր Գերմանիոյ հայոց թեմէն	138
ՍԵՐՈՎԲԷ ՎՐԴ. ԻՍԱԽԱՆԵԱՆ - Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի ոգեկոչումը Գերմանիոյ Ֆրանքֆուրթ քաղաքին մէջ	140

Իտալիոյ հայոց հովուութիւն

Ի յարգանս Ապրիլեան նահատակաց	144
Հոգեհանգստյան պաշտոն Վատիկանում	144
Ի յարգանս Ապրիլեան նահատակաց	145

Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ս. Աւագ արքեպիսկոպոս Ասատուրեանի խօսքը Հայկական Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի առթիւ	147
--	-----

Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հոգիի խաղաղութեան համար մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Սուրբ Վարդան Մայր Տաճարին մէջ	152
---	-----

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Արտաքին գործերի նախարարին	155
Նորայր Սիսակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցները այցելեցին Սուրբ Էջմիածին	156
Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց ԱՄՆ Հովնանյան դպրոցի սաների հետ	156
Եկեղեցական բեմ. լուրեր	157
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	159
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	163